323.1
Հ-84

Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԻՐԱՔՈՒՄ

3-

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР

СЕКТОР ВОСТОКОВЕДЕНИЯ

Н. О. ОГАНЕСЯН

# НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНАЯ БОРЬБА В ИРАКЕ

1945—1963

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР

ЕРЕВАН 1964

323.1

№ 389

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՍԵԿՏՈՐ

Ն. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԻՐԱՔՈՒՄ

1945—1963

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1964

Աշխատության մեջ արաբական, անգլիական, հայկական և ռուսական աղբյուրների հիման վրա լուսաբանվում են Իրաքի սոցիալ-տնտեսական վիճակը, տնտեսական հետամնացության պատճառները և օտարերկրյա իմպերիալիզմի տիրապետության հետևանքները երկրում։ Հանգամանորեն շարադրված է Իրաքի հետպատերազմյան շրջանի ազգային-ազատագրական պայքարի պատմությունը։ Զգալի տեղ է հատկացված ազգային փոքրամասնությունների՝ հայերի և քրդերի մասնակցությանը ազգային-ազատագրական պայքարին և համառոտ տեղեկություններ են տրվում Իրաքի հայ գաղութի մասին։

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո նոր փուլ է սկսվում ազգային-ազատագրական շարժումների պատմության մեջ։ Ասիայի և Աֆրիկայի մի շարք երկրներում հաղթանակում են ազգային, հակաիմպերիալիստական ռևոլյուցիաները։ Գործնականորեն սկսում է լուծվել իմպերիալիզմի գաղութային սիստեմի վերացման հարցը։

Գաղութատիրությունը լուրջ պարտություն կրեց Արաբական Արևելքում։ Եգիպտոսում, Սիրիայում, Լիբանանում, Իրաքում և արաբական մյուս երկրներում ծավալված հուժկու ժողովրդական շարժումների ճնշման տակ գաղութատիրական պետությունները մեկը մյուսի հետևից կորցրին իրենց դիրքերը։

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ազգային-ազատագրական շարժումների ուժեղացումը և հաջողությունները գաղութային ու կախյալ երկրներում, այդ թվում նաև Իրաքում, հիմնականում պայմանավորված էին երկու հանգամանքով։ Նախ տեղի ունեցավ բանվոր դասակարգի, գյուղացիության, ինտելիգենցիայի և ազգային բուրժուազիայի և հայրենասիրական այլ տարրերի նշանակալի աճ։ Պրոլետարիատը, հարստացած նախորդ շրջանի պայքարի փորձով, այժմ հանդես էր գալիս ավելի կազմակերպված։ Նա դարձավ Իրաքի ազգային-ազատագրական պայքարի ա-

առաջատար ուժը: Պրոլետարիատը, որի դասակարգային շահերը համընկնում էին համազգային շահերի հետ, հանդես էր գալիս հանուն ներքին բարեփոխումների և իմպերիալիզմի ու գաղութատիրության կապանքների վերացման: Այս հողի վրա տեղի ունեցավ հակաիմպերիալիստական բոլոր ուժերի միավորում և նրանց հետագա ամրապնդում: Դրանով իսկ երկրի ներսում նպաստավոր նախադրյալներ ստեղծվեցին ազգային-ազատագրական շարժման ծավալման համար:

Մյուս կարևոր հանգամանքը դա սոցիալիզմի համաշխարհային սիստեմի ձևավորումն էր:

Սոցիալիզմի հզոր լագերի ձևավորումով իմպերիալիստական տերությունները զրկվեցին ազատորեն և բռնի իրենց ցանկության տնօրինել այս կամ այն ժողովրդի բախտը: Իմպերիալիստական պետությունները այժմ հարկադրված են հաշվի առնել սոցիալիստական լագերի դիրքն ու ուժը:

Սոցիալիստական լագերը փաստորեն հանդիսանում է գաղութատիրության ու իմպերիալիզմի դեմ պայքարող ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների գլխավոր դաշնակիցը: Սոցիալիզմի համաշխարհային սիստեմը միջազգային նպաստավոր պայմաններ ստեղծեց այդ շարժումների հետագա ծավալման ու հաղթանակի համար: Դրանով իսկ լրիվ կերպով հաստատվեց Վ. Ի. Լենինի դեռևս 1919 թվականին կատարած հանճարեղ կանխատեսումն այն մասին, որ «Արևելքի ժողովուրդների ռևոլյուցիոն շարժումը կարող է այժմ հաջող զարգացում ստանալ, կարող է այն լուծում ստանալ ոչ այլ կերպ, քան անմիջականորեն կապվելով մեր Սովետական ռեսպուբլիկայի ռևոլյուցիոն պայքարի հետ՝ ընդդեմ միջազգային իմպերիալիզմի»[1]:

* * *

Իրաքի հետպատերազմյան շրջանը՝ 1945—1963 թվականները, հարուստ է իրադարձություններով, որոնց պարզաբանումը լույս կսփռի Իրաքի պատմության, ազգային-ազատագրական շարժումների շատ հարցերի վրա: Սույն աշխատության

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 30, էջ 174:



մեջ մենք կփորձենք քննության ենթարկել մի քանի, մեր կարծիքով, գլխավոր հարցեր կապված հատկապես Իրաքի սոցիալ-տնտեսական դրության, օտարերկրյա իմպերիալիզմի տիրապետության, աշխատավորների վիճակի և ազգային-ազատագրական շարժման հետ: Աշխատության մեջ կշոշափվեն նաև ազգային-ազատագրական շարժման մեջ տարբեր դասակարգերի մասնակցությունը, սոցիալական ուժերի և քաղաքական պարտիաների վերաբերմունքը Իրաքի դեմոկրատական ու ազգային խնդիրների լուծման նկատմամբ և այլ հարցեր: Այդ ամենը հնարավորություն կընձեռի բացահայտել 1958 թվականի հուլիսի 14-ի ռևոլյուցիայի ծնող պատճառները և նրա բնույթը: Դրա հետ միասին կբացահայտվի Կասեմի կառավարության քաղաքականության բնույթը և 1963 թվականի փետրվարի 8-ի կոնտրռևոլյուցիոն հեղաշրջման պատճառները: Իրաքի հետպատերազմյան շրջանի պատմությունը գրավել է ինչպես սովետական, այնպես էլ արտասահմանյան բազմաթիվ պատմաբանների և տնտեսագետների ուշադրությունը: Արտասահմանում լույս են տեսել մի շարք ուսումնասիրություններ, մենագրություններ, բրոշյուրներ և այլ բնույթի գրականություն, որտեղ հիմնականում բուրժուական պատմագրության դիրքերից լուսաբանվում են Իրաքի պատմության, էկոնոմիկայի և ազգային-ազատագրական շարժումների բազմաթիվ հարցեր, շատ հաճախ ուղղակի խեղաթյուրելով իրական փաստերը:

Հարկ ենք համարում համառոտակի կանգ առնել նրանցից մի քանիսի վրա:

1958 թվականին Լոնդոնում լույս տեսավ Ս. Լոնգրիգի և Ֆ. Ստոուքսի «Իրաք» մեծածավալ աշխատությունը[1]: Նրա հեղինակները փորձել են տալ Իրաքի համընդհանուր պատմությունը: Աշխատության մեջ արծարծվում են նաև Իրաքի էկոնոմիկայի հետ կապված հարցերը: Հեղինակները մատնանշում են նրա տնտեսական հետամնացությունը, ժողովրդի աղքատ վիճակը և այլն: Իրաքի հետամնացությունը և աշխատավորների թշվառ վիճակը մի այնպիսի փաստ է, որ բուրժուա-

[1] S. Longrigg and F. Stoakes, Iraq, London, 1958.

կան պատմաբաններն անգամ ի վիճակի չեն ժխտել։ Սակայն փորձելով բացատրել Իրաքի տնտեսական հետամնացության պատճառները, նրանք հարցին մոտենում են միակողմանիորեն։ Այսպես, վերոհիշյալ հեղինակները քննարկելով Իրաքի արդյունաբերության թույլ զարգացած լինելու պատճառները, նշում են հումքի սահմանափակ լինելու, կապիտալներ ներդնելու տրադիցիաների բացակայության, էներգիայի անբավարար լինելու, որակյալ աշխատուժի բացակայության մասին և այլն։ Այդ բոլորը, անշուշտ, արգելակում էին Իրաքի արդյունաբերության զարգացումը։ Բայց մի՞թե դրանք էին գլխավոր պատճառները։ Ս. Լոնգրիգը և Ֆ. Ստոուքսը ոչ մի խոսք չեն ասում օտարերկրյա իմպերիալիզմի և հատկապես բրիտանական իմպերիալիզմի տիրապետության մասին, որը խեղդում էր Իրաքի առանց այն էլ թույլ արդյունաբերությունը, նվաճել էր ողջ ներքին շուկան և արգելակում էր Իրաքի տնտեսական զարգացումը։ Վերոհիշյալ աշխատության էջերից այն տպավորությունն է ստացվում, թե իմպերիալիզմ ընդհանրապես գոյություն չունի։ Նրանք նույնիսկ փորձում են հարցն այնպես ներկայացնել, որ իբր անգլիացիները մտահոգված չէին բարձրացնելու երկրի էկոնոմիկան և աշխատավորների կյանքի կենսամակարդակը։

«Իրաք» աշխատության հեղինակները անդրադարձել են նաև ժողովրդական ելույթներին ու հուզումներին, թեև դրանց շատ քիչ տեղ են հատկացրել։ Լոնգրիգը և Ստոուքսը Իրաքում ծավալված ազգային-ազատագրական շարժումները չեն դիտում որպես աշխատավորական լայն մասսաների շարժում։ Նրանք դա դիտում են որպես խռովություն։ Այսպես, օրինակ, նրանք Իրաքի հետպատերազմյան շրջանի հակաիմպերիալիստական ամենախոշոր ու ամենամասսայական ելույթները՝ 1948 և 1952 թվականների ապստամբությունները դիտում են որպես ժողովրդական լայն բազայից զուրկ ընդվզումներ, ուսանողական ցույցեր, որոնք, իբր, օպոզիցիոն պարտիաները և հատկապես կոմունիստները օգտագործում և վեր էին ածում հակակառավարական խռովության[1]։

[1] S. Longrigg... pp. 103, 105.



Իմպերիալիզմի գիշատիչ բնույթի քողարկումը, նրա դերի անտեսումը և ազգային-ազատագրական շարժումները որպես դավադրություն ու խռովություն ներկայացնելը հանդիսանում է ժամանակակից բուրժուական պատմագրության բնորոշ կողմերից մեկը։

Իմպերիալիզմի դերի անտեսումը նկատվում է նաև Դորիս Ադամսի «Իրաքի ժողովուրդը և ռեսուրսները»[1] աշխատության մեջ։ Սակայն Դ. Ադամսի աշխատությունը վերը նշված աշխատության համեմատությամբ ունի մի կարևոր առավելություն. նա հարուստ է փաստական նյութերով, որոնց օգնությամբ հեղինակը ջանացել է ցույց տալ երկրի տնտեսության պատկերը, հետամնաց վիճակը և աշխատավորների նյութական ծանր պայմանները։

Արժեքավոր ուսումնասիրություն է անգլիական տնտեսագետ Դորին Ուորինների «Հողային ռեֆորմները Մերձավոր Արևելքի երկրներում (Եգիպտոս, Սիրիա, Իրաք)» աշխատությունը[2]։ Հեղինակը մանրամասն քննարկում է ագրարային հարաբերությունների բնույթը այդ երկրներում, անում մի շարք ճիշտ դիտողություններ Իրաքում այդ ժամանակ գոյություն ունեցող հողօգտագործման ձևերի, ֆեոդալիզմի, առհամատրիական որոշ հարաբերությունների պահպանման վերաբերյալ և այլն։ Աշխատության մեջ բավականին լայն կերպով է ցույց տրված Իրաքի հետամնաց ու աղքատ վիճակը։

Սակայն աշխատության առանձին մասերում արտահայտված մի շարք մտքեր ու եզրակացություններ լուրջ առարկությունների տեղիք են տալիս։ Դ. Ուորինների ուսումնասիրությունը կոչվում է «Հողային ռեֆորմները Մերձավոր Արևելքի երկրներում (Եգիպտոս, Սիրիա, Իրաք)»։ Եթե Եգիպտոսի և Սիրիայի վերաբերյալ ռեֆորմներ հասկացողությունը կարելի է կիրառել, ապա Իրաքի նկատմամբ մինչ 1958 թվականը այն ընդունելի չէ, որովհետև հետպատերազմյան շրջանում Իրաքում երբեք առաջ չի քաշվել և հետևաբար չի կիրառվել

[1] D. G. Adams, Iraq's People and Resources, Los Angeles, 1958.

[2] Д. Уоринер, Земельные реформы в странах Ближнего Востока (Египет, Сирия, Ирак), перевод с английского, М., 1958.

որևէ ռեֆորմ գյուղատնտեսության բնագավառում։ Իրաքում ընդունվել են միայն առանձին օրենքներ որոշ քանակի հողեր յուրացնելու և այնտեղ գյուղացիներին վերաբնակեցնելու մա- սին։ Սակայն այդ օրենքները ունեցել են բացառապես տեղա- կան բնույթ և երբեք չեն շոշափել գոյություն ունեցող ագրա- րային հարաբերությունները։

Դ. Ուորիները փորձել է տալ Իրաքի հետամնացության, ժողովրդի աղքատ վիճակի պատճառները։ Նա գլխավոր պատ- ճառը համարում է այն, որ Իրաքի սոցիալական կառուցվածքը հարմարված չէ տնտեսության ըստ լայնության զարգացմանը, որ դրան խանգարում է հողատիրության գոյություն ունեցող սիստեմը։ Դ. Ուորիներն այստեղ մեղանչում է ճշմարտության դեմ։ Նա, ինչպես և վերևում արդեն նշված հեղինակները, «մոռացության» են մատնում իմպերիալիզմի դերը։ Սա կա- րևոր հարց է, որովհետև ագրարային ռեֆորմի հարցը սերտո- րեն կապված է իմպերիալիզմի, նրանից ազատագրվելու հար- ցի հետ։ Չի կարելի գյուղատնտեսության բնագավառում, ագ- րարային հարաբերություններում խոշոր վերափոխումներ կա- տարել առանց թոթափելու իմպերիալիզմի գաղութատիրու- թյան լուծը, որովհետև իմպերիալիզմը հենվում է այս կամ այն գաղութային ու կախյալ երկրում գոյություն ունեցող ագ- րարային հարաբերությունների, ֆեոդալների ու շեյխերի վրա, իսկ վերջիններս իրենց տիրապետությունը պահպանում են օտարերկրյա իմպերիալիզմի օգնությամբ։

Դ. Ուորիների աշխատության լուրջ թերություններից պետք է համարել նաև նրա այն տեսակետը, որ իբր Իրաքում գոյություն ունի «սոցիալական վակուում»։ «Երկրում,— գրում է նա,— գոյություն չունի ոչ մի սոցիալական և քաղաքական ուժ, որ կարողանար մարտահրավեր նետել շեյխերի իշխա- նությանը»[1]։ «Սոցիալական վակուումի» տեսությունը բա- վականին լայն տարածում ունի բուրժուական պատմաբաննե- րի և տնտեսագետների շրջանում։ Այդ «տեսության» կողմնա- կիցները փաստորեն չեն հավատում կամ չեն ուզում հավա- տալ աշխատավոր մասսաների ուժերին։ Դա ակնհայտ երևում

[1] Д. Уоринер... стр. 257.



է հենց Դ. Ուորիներից, որը քաջ ծանոթ է Իրաքի պատմու- թյանը և տեղյակ այն բազմաթիվ ժողովրդական ելույթներին, որոնք տեղի են ունեցել Իրաքում հետպատերազմյան ժամա- նակաշրջանում։ Եվ վերջապես այդ սխալ տեսակետի լավա- գույն ժխտումը հանդիսանում է 1958 թվականի հուլիսի 14-ի ռևոլյուցիան։

Հետաքրքրական է նշել, որ մի շարք հրատարակություն- ներում ոչ միայն քողարկվում է օտարերկրյա իմպերիալիզմի կողմից Իրաքի էկոնոմիկան խեղդելու, Իրաքը իմպերիալիս- տական տերությունների հումքային կցորդի վերածելու փաս- տը, այլև փորձ է արվում ապացուցելու, որ Իրաքի ինդուս- տրացման ոչ մի անհրաժեշտություն չկա։ Այսպես, օրինակ, Լոնդոնում լույս տեսած մի ուսումնասիրության մեջ պարզո- րեն ասված է, որ Իրաքը արագ և լայն մասշտաբի ինդուստրիա- լիզացիայի ոչ մի պատճառ չունի[1]։ Նկատենք, որ սա ասվում է մի երկրի նկատմամբ, որի ազգաբնակչության մոտ 80 % զբաղված է գյուղատնտեսության մեջ և որը չունի ժամանա- կակից ինդուստրիալ արդյունաբերության և ոչ մի ճյուղ։ Այս կարգի տեսակետներ արտահայտողների նպատակն է թույլ չտալ, որ Իրաքը ագրարային երկրից վերածվի արդյունաբե- րական երկրի, որովհետև դա անխուսափելիորեն կհանգեցնի նրան, որ Անգլիան, ԱՄՆ-ը և մյուս կապիտալիստական եր- կրները կզրկվեին այդ կարևոր շուկայից։

Ամերիկյան պատմաբան Խալիլ Տոտահ իր «Դինամիտը Միջին Արևելքում» աշխատության մեջ քննարկելով Իրաքի տնտեսական վիճակը և գտնելով, որ այն վերին աստիճանի ծանր է, ջանում է պատասխանել այն հարցին թե, ինչ տեսք կունենար Իրաքը, եթե յանկիները իրենց ձեռքերը դնեին նրա վրա»[2]։ Նրա կարծիքով Իրաքը կնմանվեր Տեխասին և Կալի- ֆորնիային։ Հեղինակը Իրաքի տնտեսական հետամնացությու- նը լիկվիդացնելու և աշխատավորների կենսամակարդակը

[1] „The Middle East. A Survey and Directory of the countries of the Middle East". London, 1961, p. 128.

[2] **Khalil Totah**, Dynamite in the Middle East, New York, 1955, p. 85.

բարձրացնելու ներքին ուղիներ չի տեսնում և այն կապում է օտարերկրյա կապիտալի հետ։

Մի շարք հետաքրքիր հարցեր են քննարկվում Կարակտուսի «Ռեվոլյուցիան Իրաքում» ուսումնասիրության մեջ[1]։ Հեղինակը մատնանշում է, որ հին ռեժիմը Իրաքի ժողովրդի մոտ հեղինակություն չէր վայելում, որ նա երկրում ճնշել էր դեմոկրատական ազատությունները և այլն։ Սակայն Կարակտուսը ոչ մի խոսք չի ասում այն մասին, որ Իրաքում մոտ 40 տարի գոյություն ունեցած այդ հակաժողովրդական ռեժիմը ստեղծվել ու սնվել էր բրիտանական իմպերիալիզմի կողմից, առանց որի ակտիվ պաշտպանության նա չէր կարող երկար գոյություն ունենալ։

Կարակտուսը սխալ պատկերացում ունի Իրաքի սոցիալ-դասակարգային կառուցվածքի մասին։ Նա գրում է, որ Իրաքն իր սոցիալ-դասակարգային կառուցվածքով ավելի նման է Շոտլանդիային, քան թե Անգլիային, որ Անգլիան բաժանված է դասակարգերի, իսկ Շոտլանդիայում ամբողջ հասարակությունը միատեսակ է, շերտավորումը համեմատաբար քիչ, մարդիկ շատ ընդհանուր բան ունեն և ավելի հեշտ է սոցիալական մեկ աստիճանից անցնել մի այլ աստիճանի։ Այդպես է նաև արաբների մոտ. տարբերությունը հնի և նորի, հարուստի և աղքատի, նույնիսկ քաղաքացու և գյուղացու միջև կամրջված է ընդհանուր կուլտուրայի մակարդակով[2]։ Մենք այստեղ չենք քննարկի հեղինակի դատողությունները Անգլիայի և Շոտլանդիայի հարցում, սակայն անկասկած է, որ նրա տեսակետը Իրաքի հասարակական կառուցվածքի մասին միանգամայն սխալ է։ Իրաքում գոյություն ունեն միանգամայն որոշակիորեն ձևավորված դասակարգեր՝ ֆեոդալ-կալվածատերեր, բուրժուազիա, պրոլետարիատ և գյուղացիություն, որոնցից յուրաքանչյուրը Իրաքի արտադրական հարաբերություններում ունի իր որոշակի տեղը։ Կարող է պատահել, որ ֆեոդալ-շեյխի կուլտուրական մակարդակը բարձր չէ ֆելլահի մակարդակից, բայց արդյո՞ք դրա հիման վրա կարելի

[1] Caractus, Revolution in Iraq, London, 1959.

[2] Նույն տեղում, էջ 41։



լի է պնդել, թե ամբողջ «հասարակությունը միատեսակ է» և հեշտությամբ կարելի է սոցիալական մի աստիճանից անցնել մյուսին, անենք հողազուրկ ֆելլահները դառնան ֆեոդալներ։ Ակնհայտ է, որ սոցիալ-դասակարգային հարցերը չի կարելի շփոթել կուլտուրայի զարգացման աստիճանի հետ և առավել ևս փոխարինել նրանով։

Կարակտուսն իր գրքում անդրադարձել է նաև ազգային-ազատագրական ելույթներին։ Սակայն նա այդ ելույթների մեջ չափազանց մեծ տեղ է հատկացնում ուսանողներին և դրանով փորձում նսեմացնել բանվորների ու գյուղացիների առաջատար դերը։ Պատմական իրողություն է, որ Իրաքի ուսանողությունն ակտիվորեն հանդես է եկել ներքին ռեակցիոներների և օտարերկրյա իմպերիալիստների դեմ և տվել է բազմաթիվ զոհեր իր հայրենիքի ազատագրության համար։ Սակայն ուսանողական ցույցերն արժեք են ներկայացրել և իրենց նպատակին են հասել այնքանով, որքանով որ նրանք կապվել են ազգային-ազատագրական շարժման հիմնական ուժերի՝ բանվորների և գյուղացիների պայքարի հետ։

«Ռեվոլյուցիան Իրաքում» ուսումնասիրության մեջ տրված է նաև հուլիսի 14-ի ռևոլյուցիայի գնահատականը։ Հեղինակը ճիշտ կերպով նշում է, որ դա ոչ թե պետական հեղաշրջում էր, այլ ժողովրդական ռևոլյուցիա, որի ժամանակ ժողովուրդն ու բանակը միևնույն նպատակն էին հետապնդում, չնայած որ իրադարձությունների ընթացքում տարբեր էր նրանց դերը։ Այսպիսի օբյեկտիվ և ճիշտ գնահատական բուրժուական պատմաբանների մոտ հազվադեպ են։ Վերցնենք թեկուզ արդեն վերևում հիշատակված Ս. Լոնգրիգին և Ֆ. Ստոուքսին, որոնք այդ ռևոլյուցիան համարում են ոչ թե ժողովրդական, այլ՝ զինվորական հեղաշրջում։

Կարակտուսը քննելով ռևոլյուցիայի առաջացման պատճառները, գրում է. «Բաղդադի պակտից, Էյզենհաուերի դոկտրինայից և Աբդուլ Իլլահի ամբիցիայից (նա ուզում էր դառնալ Սիրիայի թագավոր—Ն. Հ.) առաջացավ մի իրադրություն, որն ուղղակիորեն տարավ դեպի հուլիսի 14-ի ռևոլյուցիան Իրաքում»[1]։ Այս բնութագրումը թերի է։ Ինչ խոսք, որ

[1] Caractus... p. 112.

վերևում նշված մոմենտները մեծ դեր խաղացին ռևոլյուցիայի նախապատրաստման գործում։ Սակայն սխալ կլիներ միայն դրանք տեսնել հիմքում։ Այստեղ հաշվի չի առնված երկրի տնտեսական վիճակը, աշխատավորների ծանր նյութական պայմանները, դեմոկրատական ազատությունների բացակայությունը և ընդհանրապես Իրաքում արմատական փոփոխություններ մտցնելու անհրաժեշտությունը։ Այդ բոլորը միասին վերցրած ծնեցին հուլիսի 14-ի ռևոլյուցիան։

Իրաքում ամերիկյան իմպերիալիզմի քաղաքականությունը կեղծ լույսի տակ է մեկնաբանված ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի կողմից հրատարակված «Իրաք» գրքում, որի մեջ Իրաքի էկոնոմիկայում ամերիկյան կապիտալի դիրքերի ուժեղացումը դիտվում է որպես տնտեսական օգնություն։ Իմպերիալիստական դիրքերից է գնահատված նաև «էյզենհաուերի դոկտրինան»։ Այդ գրքի հեղինակները խեղաթյուրելով իրականությունը գրում են. «էյզենհաուերի դոկտրինայի» գլխավոր նպատակն է օգնել Միջին Արևելքի երկրներին պահպանելու իրենց ազատությունը և ազգային անկախությունը[1]։ Բնականաբար հարց է ծագում, որ եթե իրոք դա էր իմպերիալիստական այդ դոկտրինայի իսկական նպատակը, ապա ինչո՞ւ արաբական ժողովուրդներն այն չընդունեցին և միահամուռ կերպով նրա դեմ դուրս եկան։ Ակնհայտ է, որ արաբական ժողովուրդները հասկացան, որ այդ «դոկտրինայի» օգնությամբ ԱՄՆ-ը ցանկանում էր փոխարինել պարտություն կրած Անգլիային և Ֆրանսիային, իր տիրապետությունը հաստատել Մերձավոր և Միջին Արևելքում և ճնշել այնտեղ ծավալվող ազգային-ազատագրական շարժումները։

Բուրժուական որոշ պատմաբաններ՝ Ս. Լոնգրիգ, Ֆ. Սառուգա, Բ. Լյուիս, Թ. Լիթթլ, Ժ. Մարուն, Ա. Հումբարաջի և ուրիշներ խեղաթյուրում են սովետական կառավարության քաղաքականությունը արաբական երկրների նկատմամբ։ Նրանք փորձում են ապացուցել, որ Սովետական Միությունը ագրեսիվ նպատակներ է հետապնդում այդ շրջանում, որ իբր դա էլ Բաղդադի ագրեսիվ պակտի ստեղծման պատճառ հանդիսա-

[1] „Iraq", Public Services Division, Department of State, Washington, 1957.



ցավ։ Պրոֆ. Բ. Լյուիսը փաստերը կեղծելու մեջ հասնում է այն աստիճանի, որ հավասարության նշան է դնում ցարական և սովետական կառավարությունների քաղաքականության միջև[1]։

Սակայն վերոհիշյալ հեղինակները իրենց այդ «ենթադրությունները» հիմնավորելու համար չեն կարողանում թեկուզ և ամենաաննշան փաստը բերել և սահմանափակվում են միայն մերկ հայտարարությամբ։ Եվ դա պատահական չէ։ Իրականության մեջ չկա ոչ մի փաստ, որը գար ապացուցելու, թե Սովետական Միությունը սպառնում է Արաբական Արևելքին կամ որևէ այլ երկրի։ Հայտնի է, որ Սովետական Միությունն իր հարաբերությունները արաբական երկրների հետ հիմնել է իրավահավասարության սկզբունքների վրա, և օգնության ձեռք մեկնել նրանց ամենադժվարին մոմենտներին։ Այժմ էլ նա ամենայն տնտեսական օգնությունն է ցույց տալիս այդ երկրներին՝ տնտեսական անկախության և գաղութատիրության ժառանգած հետամնացությունը լիկվիդացնելու համար մղվող պայքարում։

Իսկ վերաբերում է Բաղդադի պակտին, ապա հայտնի է, որ դա գաղութային պետությունների շահերին ծառայող մի բլոկ էր, որը նպատակ ուներ զենքի օգնությամբ պահպանել նրանց տիրապետությունը և ճնշել ազգային-ազատագրական շարժումները Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում։ Մյուս կողմից, ինչպես ՆԱՏՕ-ն, դա ռազմական մի խմբավորում էր՝ ուղղված Սովետական Միության դեմ։ Եթե Արևմուտքի բուրժուական պատմաբանները լռում են այդ մասին, ապա արաբներին դա քաջ հայտնի է։ Ահա թե ինչ է գրում իրաքցի մեծ հայրենասեր Ղաիբ Ֆարմանը։ «Բաղդադի պակտը հանդիսացավ սոցիալիստական լագերի դեմ ուղղված ագրեսիվ պակտի շղթայի մի օղակը։ Այդ տեսակետից նա նույնն է, ինչ որ ՆԱՏՕ-ն ու ՍԵԱՏՕ-ն, այսինքն՝ բազայի ստեղծում Սովետական Միության վրա հարձակվելու համար»[2]։

[1] „The Middle East Journal", Washington, 1956, vol. 10, № 2.

[2] Гаиб Фарман, Ирак в годы черного режима, перевод с арабского, М., 1958, стр. 81.

Արտաքին երկրների, այդ թվում և Իրաքի էկոնոմիկան ուսումնասիրողի համար որոշակի արժեք են ներկայացնում Միավորված ազգերի կազմակերպության նյութերը։ Նրանք պարունակում են անհրաժեշտ վիճակագրական տվյալներ արդյունաբերության, գյուղատնտեսության, արտաքին առևտրի, կենսամակարդակի և աշխատավորների վիճակի վերաբերյալ։ Նրանց նշանակությունն է՛լ ավելի է մեծանում, եթե ի նկատի ունենանք, որ վիճակագրության գործը Իրաքում շատ վատ է կազմակերպված և հաճախ բացակայում են ամենաանհրաժեշտ տվյալները։ Սակայն նրանք միակողմանի են և բավարար չափով տվյալներ չեն պարունակում այնպիսի էական բնագավառների մասին, ինչպես, օրինակ, աշխատավորների եկամուտները, սոցիալական ապահովագրությունը և այլն։ ՄԱԿ-ի նյութերում երբեմն անհիմն և ոչ ճիշտ կերպով գնահատվում են Իրաքի կառավարության այս կամ այն տնտեսական միջոցառումները։ Չեն բացահայտվում օտարերկրյա կապիտալի կողմից, ինչպես մյուս թույլ զարգացած երկրների, այնպես էլ Իրաքի էկոնոմիկան թալանելու և շահագործելու փաստերը և այլն։

* * *

Իրաքի պատմությանը վերաբերող գրականության մեջ առանձնահատուկ արժեք են ներկայացնում արաբ հեղինակներին պատկանող ուսումնասիրությունները, որտեղ փաստորեն շարադրված են արաբների տեսակետները իրենց պատմության վերաբերյալ։ Այդ գրականությունը մեծ չափով ստեղծվեց երկրորդ համաշխարհային պատերազմից հետո և հատկապես վերջին ժամանակներս։

Ծանոթությունը արաբ հեղինակների ուսումնասիրությունների հետ ցույց է տալիս, որ նրանց մեծ մասին բնորոշ է մեկ ընդհանուր գիծ. դա ընդգծված հակաիմպերիալիզմն է։ Նրանք Իրաքի դեմոկրատացման և տնտեսական բարգավաճման խնդիրներն ուղղակիորեն կապում են իմպերիալիզմի լծից ազատագրվելու հետ։

Հայրենասիրական վեհ շնչով և իմպերիալիզմի ու նրա



կամակատար Իրաքի կառավարող կլիկի դեմ խոր ատելությամբ է գրված Ղարիբ Ֆարմանի՝ «Իրաքը սև ռեժիմի տարիներին»[1] գիրքը։ Հեղինակը ցույց է տալիս, որ Իրաքը շնչահեղձ էր լինում «սև ռեժիմի» ճիրաններում։ Ղ. Ֆարմանը մերկացնում է Նուրի Սաիդին, նշելով, որ նրա քաղաքականությունը համապատասխանում էր բրիտանական իմպերիալիզմի շահերին և հակասում Իրաքի ազգային շահերին։ Գրքում բավականին տեղ է հատկացված ժողովրդական ելույթներին։ Սակայն պետք է նշել, որ Ղ. Ֆարմանի գրքում համարյա անտեսված է օրըստօրե Իրաքում իր դիրքերն ուժեղացնող և բրիտանական իմպերիալիզմին դուրս մղող ամերիկյան իմպերիալիզմի դերը։ Բացի այդ, բանվորների, գյուղացիների և ուսանողների ելույթները մեծ մասամբ դուրս են բերված որպես անկազմակերպ, տարերայնորեն բռնկված ելույթներ։ Վերոհիշյալ երկու մոմենտներն այս կամ այն չափով հատուկ են արաբ հեղինակների մեծ մասի, ինչպես, օրինակ, Կասըմ Հասանի, Հուսեյն Ջամիլի, Մաջիդ Կը·դուրի և մյուսների աշխատություններին։ Ինչպես այս հեղինակների աշխատություններում, այնպես էլ մի շարք այլ հրատարակություններում[2] մերկացվում է կառավարող կլիկի ներքին և արտաքին քաղաքականությունը, ցույց տրվում գոյություն ունեցող ռեժիմի նեխվածությունը և ոչ պիտանի լինելը՝ Իրաքի ազգային խնդիրները լուծելու գործում։ Սակայն Իրաքի պրոգրեսիվ հեղինակների մեծ մասը, այնուամենայնիվ պարզ պատկերացում չունեն դասակարգային ուժերի փոխհարաբերությունների, ազգային խնդիրները լուծելու ուղիների, քաղաքական պարտիաների դերի մասին և այլն։ Այդ բանը առանձնապես ցայտուն կերպով է երևում Ջաֆար Հայյաթի «Իրաքյան գյուղը» գրքում։ Այսպես, օրինակ, նա գրում է ավագների, քաղաքից դուրս եկած կալվածատերերի, առևտրականների և նրանց

[1] Г. Фарман, Ирак в годы черного режима, М., 1958.

[2] Տե՛ս „The Republic of Iraq. Basic Information" New York, 1960, "The Republic of Iraq", Baghdad, 1958; "The Iraqi Revolution", Baghdad, 1958 և այլն։

նաանների դասակարգի (ընդգծումը մերն է—Ն. Հ.) մասին[1]։ Հեղինակը դասակարգերը, դասերը, միջնախավերը և նրանց սպասարկող անձնակազմը շփոթում է միմյանց հետ։

Ջ. Հայյաթն իր գրքում վառ կերպով պատկերելով գյուղացիների տնտեսական ծանր պայմանները, ոչ մի տեղ չի հատկացրել գյուղացիական ելույթներին։ Եվ դա պատահական չէ։ Նա ելնում է նրանից, որ Իրաքի հասարակարգի մեջ չկան այնպիսի ուժեր, որոնք կարողանային իրականացնել սոցիալական վերափոխումներ[2]։ Մաջիդ Կադդուրին իր «Անկախ Իրաքը» գրքում կանգ առնելով Իրաքում քաղաքական պարտիաների ձևավորման խնդրի վրա, չի տեսնում քաղաքական պարտիաների և դասակարգերի միջև եղած կապը, որ պարտիաները հանդիսանում են որոշակի դասակարգերի շահերի արտահայտիչներն ու պաշտպանները։ Նա գրում է, թե «ձախ և աջ պարտիաների միջև հավասարակշռությունը պահպանելու համար գեներալ Նուրին (Նուրի Սաիդը— Ն. Հ.) 1949 թվականին կազմակերպեց Իթթիհադ աս-Դուստուրի (Կոնստիտուցիոն Միություն) պարտիան»[3]։ Սա միանգամայն ոչ ճիշտ բնութագրում է, քանի որ «Կոնստիտուցիոն Միություն» պարտիան եղել է ամենառեակցիոն շեյխերի ու կալվածատերերի կազմակերպությունը։ Նա երկար ժամանակ հանդիսացել է կառավարող պարտիա և ոչ թե հավասարակշռություն է պահպանել ձախ և աջ պարտիաների ու ուժերի միջև, այլ ճնշել է դեմոկրատական, ձախ ուժերին և Իրաքի ազգային շահերը ենթարկել օտարերկրյա իմպերիալիստներին։

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Ալի Զարկայի «Իրաքի ազգային էկոնոմիկան» գիրքը[4]։ Հեղինակը մարքսիստական դիրքերից վերլուծելով երկրի էկոնոմիկայի զարգացման հարցերը նշում է, որ Իրաքի տնտեսական հետամնացության գլխավոր պատճառներից մեկը իմպերիալիստա-

[1] Джафар Хайят, Иракская деревня, перевод с арабского М., 1953, стр. 54.

[2] Նույն տեղում, стр. 55.

[3] Majid Khadduri, „Independent Iraq", London, 1951, p. 218—219.

[4] Али Зарка, Национальная экономика Ирака, перевод с арабского, см. ЦГАОР СССР, ф. 4459, оп. 2, ед. хр. 1190.



կան պետությունների և մոնոպոլիստական միությունների քաղաքականությունն է։ Նրանք թալանում էին երկրի ազգային հարստությունը, արգելակում տնտեսության և առևտրի զարգացումը, թույլ չէին տալիս, որ Իրաքը մուտք գործի համաշխարհային շուկա և այլն։ Ալի Զարկան գտնում է, որ բնակչության կենսամակարդակի բարձրացումը, գյուղատնտեսության և արդյունաբերության զարգացումը ուժեղ հարված կլիներ իմպերիալիստներին։ Դա միաժամանակ կհանդիսանար մի քայլ առաջ Իրաքի ազգային անկախությունը ամրապնդելու ուղղությամբ։

Մի շարք կարևոր հարցեր են քննարկվում Ազիզ-ալ-Հաջի «Ազգությունն ու դեմոկրատիան» արժեքավոր աշխատության մեջ։ Հեղինակը մարքսիստական տեսանկյունով բացահայտել է այն կապը, որ գոյություն ունի իմպերիալիզմի տիրապետության և Իրաքի տնտեսական հետամնացության ու դեմոկրատական ազատությունների բացակայության միջև։ Նա գրում է. «Ազատագրված ժողովուրդներն իրենց գլխավոր հարվածներն ուղղում են իմպերիալիզմի դեմ, որպես իրենց վերածննդի և առաջադիմության գլխավոր և ամենաուժեղ արգելքի։ Բայց իմպերիալիզմի տիրապետության տապալումը միաժամանակ նշանակում է ֆեոդալիզմի փլուզման սկիզբ և հսկայական հնարավորություն ընձեռում տնտեսական և կուլտուրական ծաղկման և առողջ դեմոկրատական իշխանության հաստատման համար»[1]։

Ազիզ ալ-Հաջը իր գրքում հակահարված տալիս նրանց, ովքեր փորձում են ժխտել բանվոր դասակարգի ինքնուրույն պարտիայի գոյության անհրաժեշտությունը Իրաքում։ Հետաքրքիր հարցեր են առաջ քաշված Իրաքի խաղաղության կողմնակիցների շարժման աչքի ընկնող ղեկավարներից մեկի՝ Թաուֆիկ Մունիրի «Խաղաղության շարժման էությունը Իրաքում» գրքույկում[2]։ Հեղինակը ցույց է տալիս, որ խաղաղու-

[1] عزيز الحاج، القومية العربية والدمقراطية، بغداد، ص ١٥

[2] توفيق منير، انصار السلام في العراق، القاهرة، ١٩٥٦

թյան պահպանումը կապված է հակաիմպերիալիստական պայքարի հետ։ Նա նշում է, որ Իրաքի խաղաղության կողմնակիցները պայքարում են իմպերիալիզմի լծից երկիրը ազատագրելու, ազգային տնտեսության զարգացման, դեմոկրատական ազատությունների հաստատման, ռեֆորմների կիրառման և ազգային անկախությունը ծառայող կառավարության ստեղծման համար[1]։

* * *

Իրաքի հետպատերազմյան շրջանի պատմությունը գրավել է նաև սովետական արևելագետների՝ պատմաբանների և տնտեսագետների ուշադրությունը։ Ուսումնասիրության առարկա են դարձել հատկապես ազգային-ազատագրական շարժման, էկոնոմիկայի և օտարերկրյա իմպերիալիզմի տիրապետության, Մերձավոր և Միջին Արևելքում ագրեսիվ ռազմական դաշինքների ստեղծման հարցերը։ Սակայն պետք է նշել, որ Իրաքի վերաբերյալ շատ քիչ են առանձին մենագրական ուսումնասիրությունները։ Վերևում թվարկած խնդիրները հիմնականում քննարկվել են ամսագրերում և առանձին ժողովածուներում հրատարակած հոդվածներում, որը և բնականաբար հնարավորություն չի տվել հարցերը քննարկել առավել խորը և բազմակողմանի կերպով։

Ուշագրավ է Բ. Մ. Դանցիգի՝ «Իրաքը անցյալում և այժմ»[2] աշխատությունը, որտեղ հեղինակը քննարկում է Իրաքի պատմության, տնտեսության և ազգային-ազատագրական շարժման հարցերը և այլն։ Սակայն աշխատության մեջ ոչ բոլոր հարցերն են բավարար չափով լուսաբանված։ Եթե էկոնոմիկայի, օտարերկրյա կապիտալի ներթափանցման հարցերին հեղինակը մեծ ուշադրություն և մեծ տեղ է հատկացրել, ապա նույնը չի կարելի ասել ժողովրդական ելույթների, երկրում քաղաքական իրադրության, ինչպես նաև պարտիաների վերաբերյալ։ Այդ հարցերը վերոհիշյալ աշխա-

[1] توفيق منير... ص ٣٩

[2] Б. М. Данциг, Ирак в прошлом и настоящем. М., 1960.



տության մեջ բավարար և բազմակողմանի լուսաբանում չեն գտել։

1963 թվականի վերջերին լույս տեսավ Ս. Գ. Գորելիկովի «Իրաք» աշխատությունը, որը, որոշ առումով, նման է Բ. Դանցիգի «Իրաքը անցյալում և այժմ» աշխատությանը։ Այդ նմանությունը կամ ավելի ճիշտ ընդհանրությունը կայանում է նրանում, որ երկուսն էլ հիմնականում նվիրված են Իրաքի ներքին տնտեսական հարցերի լուսաբանմանը։ Ս. Գորելիկովն իր աշխատության մեջ լուսաբանում է արդյունաբերության ու գյուղատնտեսության զարգացման խնդիրները, Իրաքի արտաքին տնտեսական կապերը և այլն։ Հեղինակը իրավացիորեն նշում է, թե Իրաքը հանդիսանում է լավագույն օրինակն այն բանի, թե ինչպես մի երկիր կարող է ունենալ հարուստ բնական հարստություններ, սակայն օտարերկրյա կապիտալի տիրապետության պատճառով տասնյակ տարիներ տնտեսական տեսակետից մնում է ծայրահեղ հետամնաց երկիր[1]։ Ի հաստատումն այդ մտքի հեղինակը բերում է բազմաթիվ փաստական և թվական տվյալներ։ Սակայն դրա հետ մեկտեղ աշխատության մեջ թույլ է լուսաբանված Իրաքի աշխատավորական մասսաների՝ բանվորների և գյուղացիների տնտեսական վիճակը։ Մինչդեռ այդ հարցի լուսաբանումը կօգներ հեղինակին մերկացնելու օտարերկրյա իմպերիալիզմի և Իրաքի կառավարող վերնախավի թալանչիական ու հակաժողովրդական քաղաքականությունը։ Աշխատության 139—140 էջերում Ս. Գորելիկովը խոսում է 1952 թվականի նավթային նոր համաձայնագրի մասին, որը, համեմատած մինչ այդ գոյություն ունեցող համաձայնագրի հետ, ավելի ձեռնտու էր Իրաքին։ Սակայն նա ոչ մի խոսք չի ասում այն մասին, թե ինչը ստիպեց նավթային մոնոպոլիաներին զիջել այդ հարցում, այլ կերպ ասած նա անտեսել է Իրաքի ժողովրդի և դեմոկրատական ուժերի պայքարը, որոնք հանդես էին գալիս նավթարդյունաբերության ազգայնացման և օտար-

[1] С. Г. Гореликов, Ирак, М., 1963, стр. 210.

*երկրյա նավթային ընկերությունները Իրաքից արտաքսելու պահանջով։*

*Հետաքրքիր ուսումնասիրություն է Օ. Է. Տուգանովայի «ԱՄՆ-ի և Անգլիայի քաղաքականությունը Մերձավոր և Միջին Արևելքում» աշխատությունը*[1]*։ Օգտագործելով հարուստ փաստական նյութ հեղինակը մերկացնում է ամերիկյան և անգլիական իմպերիալիստների գործունեությունը արաբական երկրներում։*

*Օ. Է. Տուգանովան իր աշխատության մեջ անդրադարձել է նաև ազգային-ազատագրական շարժումներին արաբական երկրներում և Իրաքում, սակայն այդ հարցը լուսաբանվել է ընդհանուր ձևով և թռուցիկ։*

*Մենք համառոտակի կանգ առանք մեր ուսումնասիրման առարկա թեմայի վերաբերյալ օտարերկրյա և սովետական գրականության գլխավոր աշխատությունների վրա, որոնք բազմաթիվ այլ նյութերի հետ միասին աղբյուր են հանդիսացել առանձին հարցերի լուսաբանման համար։*

[1] О. Э. Туганова, Политика США и Англии на Ближнем и Среднем Востоке, М., 1960.

## ԻՐԱՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

### 1945—1958

*Իրաքը Օսմանյան կայսրությունից ժառանգեց հետամնաց տնտեսություն՝ արհեստավորական-տնայնագործական արտադրությամբ։ Մանդատային և ապա հետմանդատային տարիները այդ բնագավառում էական փոփոխություններ առաջ չբերեցին։ Որոշ տեղաշարժեր տեղի ունեցան երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, երբ զգալի չափով աշխուժացավ տեղական արդյունաբերությունը՝ գլխավորապես սննդի և տեքստիլ։ Սակայն դա Իրաքի տնտեսական զարգացման և տնտեսության գաղութային ստրուկտուրայի մեջ նշանակալի փոփոխության չառաջացրեց։ Իրաքը շարունակում էր մնալ տնտեսապես թույլ զարգացած երկրների շարքը։*

*Ժամանակակից իմաստով արդյունաբերությունը Իրաքում բացակայում էր։ Իրաքը չուներ մետալուրգիական, մեքենաշինական և քիմիական արդյունաբերություն, թեև երկրում կան օգտակար հանածոների՝ նավթի, գազի, ասֆալտի, քարաղի, ծծումբի, պղնձի և երկաթի զգալի պաշարներ։*

*1956 թվականի վիճակագրության տվյալներով Իրաքում կար 22460 արդյունաբերական ձեռնարկություն*[1]*։*

[1] „Government of Iraq. Statistical Abstract“, Baghdad, 1956, p. 119.

Սակայն դրանց մեծ մասը չի կարելի արդյունաբերական ձեռնարկություն համարել։ 10157 ձեռնարկություններում, որը կազմում էր ամբողջ արդյունաբերության մոտ 45 տոկոսը, աշխատում էին մեկական բանվոր, 5651-ում՝ 2-ական, 2.805-ում՝ 3-ական, 1383-ում՝ 4-ական և 804-ում՝ 5-ական բանվոր։ 20 և ավելի բանվորներ աշխատում էին 271 ձեռնարկություններում։ Ողջ Իրաքում միայն չորս արդյունաբերական ձեռնարկություններում էին աշխատում 1000-ից ավելի բանվորներ։ Այս թվերը խոսում են այն մասին, որ վիճակագրության մեջ ցույց տրված արդյունաբերական ձեռնարկությունների ճնշող մասը փոքրիկ տնայնագործական արհեստանոցներ էին։

Ըստ պաշտոնական տվյալների Իրաքի արդյունաբերության և տրանսպորտի մեջ մինչև ռևոլյուցիան զբաղված էր 185 հազար մարդ, որից 90291-ը տեղական արդյունաբերության մեջ, 15837-ը՝ նավթային արդյունաբերության, 15 հազարը՝ երկաթուղային տրանսպորտում և այլն[1]։ Համաձայն այդ նույն աղբյուրների գյուղատնտեսության մեջ զբաղված էր բնակչության 80 տոկոսը, իսկ առևտրի և զանազան ծառայությունների մեջ՝ 11 տոկոսը։

Իրաքի արդյունաբերության մեջ շատ ցածր էր մեքենայացումը և լայնորեն կիրառվում էր ձեռքի աշխատանքը։ Աշխատանքի մեթոդները տարիներով անփոփոխ էին մնում։

Վերևում նշված 22460 ձեռնարկությունների 91 տոկոսը առանձին անհատների սեփականություն էր, 7 տոկոսը երկու պարտնյորների և միայն 97 ձեռնարկություններ պատկանում էին մասնավոր ընկերություններին։ Բացի դրանից կային 116 արդյունաբերական ձեռնարկություններ, որոնք պատկանում էին պետությանը[2]։ Այս թվերը ցույց են տալիս, որ Իրաքում գերակշռում էին մասնավոր-կապիտալիստական ձեռնարկությունները։ Սակայն ինչպես երևում է բերված թվերից պետական-կապիտալիստականը նույնպես սկսել էր զարգանալ,

[1] „Statistical Abstract", 1956, p. 119, 193, „The Iraq Times Annual", Baghdad, 1957, p. 75.

[2] D. Adams, Iraq's People and Resources, Los Angeles, 1958, p. 101.



հատկապես 1952 թվականից հետո, երբ մեծացավ Իրաքի բաժինը նավթից ստացվող եկամուտներից։

Իրաքում կային տեքստիլ, կաշվի-կոշկեղենի, հրուշակեղենի, ծխախոտի, պահածոների, օճառի, գարեջրի և արդյունաբերության այլ ճյուղեր, բայց և դրանցից ոչ բոլորն էին, որ բավարարում էին ներքին շուկայի պահանջները։ Արդյունաբերական ձեռնարկությունները երկրում տեղաբաշխված էին վերին աստիճանի անհամաչափ։ Նրանք գլխավորապես գտնվում էին Բաղդադ, Բասրա, Մոսուլ և Կիրկուկ քաղաքներում։ Բաղդադում մինչև ռևոլյուցիան տեղադրված էին Իրաքի արդյունաբերական բոլոր ձեռնարկությունների 29 տոկոսը, որոնցում զբաղված էր երկրի ողջ աշխատուժի 37 տոկոսը։

Արդյունաբերության միակ ճյուղը, որը համեմատաբար արագ էր զարգանում, ցեմենտի արտադրությունն էր։ Իրաքի ազգային կապիտալը, օտարերկրյա կապիտալի մրցակցության հետևանքով, արդյունաբերության մեջ մուտք գործելու մեծ հնարավորություններ չուներ, ուստի և նա հոսում էր գլխավորապես շինարարության և գյուղատնտեսության մեջ։ Շինարարության բնագավառն այնքան հրապուրիչ էր և այնպիսի բարձր շահույթներ էր բերում, որ Իրաքի կառավարությունը ևս կառուցեց ցեմենտի երկու գործարան։ Այդ բանը խիստ դժգոհությամբ ընդունեցին մասնավոր ձեռնարկատերերը, որոնք բավարարում էին երկրի պահանջները ցեմենտի բնագավառում։ Պետական այդ ձեռնարկությունները սկըսեցին մրցել մասնավոր ձեռնարկությունների հետ. Տարեկան կուտակվում էր 250.000 տոնն ավելցուկ ցեմենտ[1]։ Դա իր հետևից բերեց ցեմենտի արտադրության կրճատում, որն իր հերթին հանգեցրեց գործազրկության աճին։

Իրաքում ցածր էր պողպատի սպառման մակարդակը։ Պողպատ սպառվել էր 1950—1952 թ. 121, 1953—1955 թվականներին՝ 144, 1956 թվականին՝ 149 և 1957 թվականին 170 հազար տոնն[2]։ Այսպիսով, յուրաքանչյուր շնչին 1957 թվականին ընկնում էր 26 կգ պողպատ, որը համեմատած

[1] „The Iraqi Revolution", Baghdad, 1958, p. 32.

[2] „UN Statistical Yearbook", New York, 1958, p. 289.

այլ երկրների հետ շատ ցածր մակարդակ էր կազմում։ Նշենք թեկուզ, որ այդ նույն թվականին Ալժիրում յուրաքանչյուր շնչին ընկնում էր 28 կգ, Մեքսիկայում՝ 43, Մալայայում՝ 44, Լիբանանում՝ 95, Ճապոնիայում՝ 139, Կանադայում՝ 403, իսկ ԱՄՆ-ում՝ 568 կգ[1]։ Պողպատի սպառման ցածր մակարդակը նորից ցույց է տալիս Իրաքի էկոնոմիկայի չափազանց թույլ զարգացած լինելը։

Այժմ կանգ առնենք այն հարցի վրա, թե ինչ գործոններ էին խանգարում Իրաքի ինդուստրացմանը և ինչ դեր էին խաղում Իրաքի կառավարությունն ու օտարերկրյա կապիտալն այդ գործում։

Այս հարցը որոշ առումով շոշափվել է նաև արտասահմանյան և արևմտյան գրականության մեջ։ Դորիս Ադամսը նշում է, թե Իրաքում կապիտալ ներդրումների համար նորմալ պայմաններ չկային, որ եկամուտների չափազանց ցածր տոկոսները չէին հրապուրում դրամատերերին, իսկ հասարակ մարդիկ, որոնք ծանոթ չէին բանկային սիստեմի հետ և անվստահությամբ էին վերաբերվում կառավարությանը, գերադասում էին իրենց դրամը պահել թանկարժեք մետաղների, ոսկու և արծաթի ձևով[2]։ Դ. Ադամսը, անշուշտ, ճիշտ է այն հարցում, որ Իրաքում, իսկապես նպաստավոր պայմաններ չկային արդյունաբերության մեջ ազգային կապիտալի ներդրման համար։ Սակայն նա չի խորացել կամ թերևս չի ցանկացել խորանալ հարցի էության մեջ և ցույց տալ այդ դրության իսկական պատճառները։ Նա փորձում է հարցը խճողել՝ առաջ քաշելով Իրաքում բանկային սիստեմի հետ ծանոթ չլինելու փաստը, որը, գուցե, որոշ չափով, ունեցել է իր դերը։ Սակայն պարզ է, որ դա գլխավոր պատճառը լինել չէր կարող։ Հարցի էության մեջ խորանալու դեպքում Դ. Ադամսը անպայման կհասներ Իրաքի էկոնոմիկայում օտարերկրյա կապիտալի, իմպերիալիստական պետությունների տիրապետության հարցին, որից նա այդպես խուսափում է։

Այս խնդիրը քննարկվում է նաև Աբդուլ Կանի ալ-Դալի

[1] „UN Statistical Yearbook", New York, 1958, p. 289.
[2] D. Adams... p. 122.



«Արդյունաբերական զարգացման պրոբլեմները Իրաքում» հոդվածում[1]։ Հեղինակը եղել է Իրաքի Արդյունաբերական բանկի գլխավոր դիրեկտորը և Գյուղատնտեսության մինիստրը։

Ընդունելով Իրաքի արդյունաբերության թույլ զարգացած լինելու փաստը ալ-Դալին նշում է, որ նրա զարգացմանը խանգարել է երկու պատճառ. նախ, որ դժվար էր անկախ ֆինանսական միջոցները ներգրավել արդյունաբերության մեջ ներդնելու համար։ Նա նշում է, որ այդ դժվարությունը կարելի էր հաղթահարել արդյունաբերության մեջ կապիտալ ներդրումը ավելի գրավիչ դարձնելու միջոցով։ Քանի այդ չի արվել, տեղական կապիտալը կշարունակի հիմնականում ներդրվել առևտրի, գյուղատնտեսության և շինարարության մեջ։ Սակայն ալ-Դալին ոչինչ չի ասում այն մասին, թե արդյունաբերության մեջ տեղական բուրժուազիայի համար կապիտալ ներդրումը ինչո՞ւ է դժվար և ի՞նչ պետք է անել այդ խնդիրը լուծելու համար։ Նա, ինչպես և Դ. Ադամսը, բոլորովին անտեսում է անգլիական և ամերիկյան կապիտալի տիրապետության փաստը, այն, որ թույլ զարգացած Իրաքի արդյունաբերությունն ի վիճակի չէր մրցակցել իմպերիալիստական պետությունների զարգացած արդյունաբերության հետ։ Այդ պատճառով էլ ազգային կապիտալը ներդրվում էր այնպիսի բնագավառներում՝ ներքին առևտուր, գյուղատնտեսություն, հողերի սպեկուլյացիա և այլն, որոնք համարյա չէին հետաքրքրում օտարերկրյա կապիտալին։

Մյուս պատճառը ալ-Դալին համարում է Իրաքի ներքին շուկայի նեղ լինելը։ Նա նշում է, որ Իրաքի շուկան չէր կարող մեծ հնարավորություններ ընձեռել լայն մասշտաբի արդյունաբերության համար, քանի որ Իրաքի բնակչությունը փոքրաթիվ էր և նրա եկամուտները ցածր։ Եթե մի կողմ թողնենք բնակչության թիվը, որը վճռական պատճառ չի կարող հանդիսանալ (օրինակ, Շվեյցարիան, Բելգիան, Հոլանդիան զարգացած կապիտալիստական արդյունաբերական երկրներ են, չնայած, որ մեծ ազգաբնակչություն չունեն), ապա բա

[1] „Middle East Economic Papers", Beirut, 1954.

ալ-Դայիի, շուկայի նեղության մյուս պատճառը՝ բնակչության ցածր եկամուտն է։ Սա իրոք ճիշտ փաստարկ է։ Հայտնի է, որ աշխատավորության բարձր գնողունակությունը հանդիսանում է շուկայի լայն լինելու կարևոր տարրերից մեկը։ Սակայն բարձր գնողունակությունը կախված է նաև արտադրողական ուժերի զարգացման բարձր մակարդակից։ Իրաքի արտադրողական ուժերն այդպիսի մակարդակ չունեին։ Բայց Իրաքում կար մեկ կարևոր հանգամանք ևս, որով պայմանավորված էր շուկայի նեղ լինելը։ Դա ֆեոդալական հարաբերությունների պահպանումն էր, որի մասին չի նշում ալ-Դայիին։ Չնայած սկսվել էր կապիտալիզմի զարգացման պրոցեսը, գյուղում ֆեոդալիզմը դեռևս պահպանում էր ուժեղ դիրքեր։ Կային նաև ստրկատիրական նահապետական հարաբերությունների մնացուկներ։ Մինչդեռ հայտնի է, որ ոչ մի երկիր չի կարող շուկայի հարցը, արդյունաբերության լայն զարգացման հարցը լուծել, առանց լուծելու ֆեոդալիզմի հարցը։ Ֆեոդալական հարաբերությունները կաշկանդում են արտադրողական ուժերի զարգացումը, չեն ապահովում անհրաժեշտ հումք արդյունաբերության համար և չեն ստեղծում արդյունաբերական արտադրանքի սպառման լայն հնարավորություններ։

Իրաքում արդյունաբերության զարգացմանը խանգարում էին դեռևս պահպանվող ֆեոդալական հարաբերությունները, բնակչության ցածր գնողունակությունը և օտարերկրյա կապիտալի տիրապետությունն ու մրցակցությունը։ Սրան պետք է ավելացնել Իրաքի կառավարության քաղաքականությունը, որը չէր արտահայտում երկրի ազգային շահերը և գործիք էր իմպերիալիստական տերությունների ձեռքում։

Ինչպես իրավացիորեն նշել է Իրաքի կոմունիստական պարտիայի գլխավոր քարտուղար Յուսուֆ Սալմանը՝ «կես դարի ընթացքում օտար ապրանքների հեղեղը կործանեց Իրաքի արդյունաբերությունն ու արհեստները։

Իրաքի արդյունաբերական հետամնացությունը արդյունք է Իրաքը կախյալ երկրի վիճակում թողնելու իշխանությունների քաղաքականության, դրան ավելացրած օտար ֆինանսական տիրապետությունը ու ներքին պատճառները, ինչպես գյուղատնտեսության մեջ հին հարաբերությունների գոյությու-



նը և երկրի ինդուստրացմանը թշնամի քաղաքականությունը»[1]։

Հայտնի է, որ Իրաքի կառավարությունը ազգային արդյունաբերություն ստեղծելու, նրա համար բազա և անհրաժեշտ տեխնիկական կադրեր պատրաստելու, երկրի ֆինանսական միջոցները գլխավորապես արդյունաբերության մեջ ներդնելու, ինդուստրիա ստեղծելու և այն օտարերկրյա մոնոպոլիստական միությունների մրցակցությունից պաշտպանելու ուղղությամբ ոչ մի քայլի չէր դիմում։

Այսպես, օրինակ. սկսած 1947 թվականից Իրաքում քըննարկվում էր շաքարի գործարան կառուցելու հարցը։ Սակայն նա անընդհատ հետաձգվում էր, քանի որ չէր լուծվում անհրաժեշտ հումքի բազա ստեղծելու հարցը[2]։ Գոյություն ունեցող ագրարային հարաբերությունների և կառավարության քաղաքականության հետևանքով այդ հարցը դարձել էր պրոբլեմատիկ, որի հետևանքով տուժում էր երկրի էկոնոմիկան։ Բերենք մեկ ուրիշ օրինակ. ինչպես նշվեց, Իրաքում կար տեքստիլ արդյունաբերություն, այդ թվում նաև բրդի։ Սակայն բրդի արդյունաբերության համար բարձրորակ հումքի հարցը չէր լուծվում։ Իրաքի բուրդն իր որակով ավելի ցածր էր և յուրաքանչյուր տարի ստիպված էին Ավստրալիայից ներմուծել մեծ քանակի բուրդ[3]։ Իսկ դա ձեռնտու էր օտարերկրյա մոնոպոլիաներին, որոնք Իրաքի շուկան ողողում էին բրդյա ապրանքներով, մեծ վնաս հասցնելով Իրաքի տեքստիլ արդյունաբերությանը։ Իրաքում արդյունաբերության ոչ մի ճյուղ նպաստավոր պայմանների մեջ չէր գտնվում և օտարերկրյա մրցակցությունից չէր երաշխավորված։ Այսպես, Իրաքում մշակվում էր բամբակ, որի բերքը 1957 թվականին կազմել էր 14 հազար տոնն։ Սակայն բամբակի հումքը երկրում չէր մշակվում, այլ արտահանվում էր արտասահման, գլխավորապես Անգլիա։ Մյուս կողմից Իրաքը Անգլիայից ներմուծում էր բամբակյա կտորեղեն և այդպիսով, փակուղու

[1] يوسف سلمان يوسف (فهد)، قضيتنا الوطنية، بغداد، ١٩٤٥، ص ٢٨

[2] „Middle East Economic Papers“ Beirut, 1954, p. 46.

[3] Նույն տեղում։

առջև կանգնեցնում տեղական արդյունաբերությունը, ինչպես նաև անասնապահական-արհեստավորական ձեռնարկությունները։ Այդ ձեռնարկությունները շատ հաճախ քայքայվում էին և մանր արհեստագործները զրկվում էին ապրուստի միջոցից։

Ներքին շուկայի նեղության և օտարերկրյա կապիտալի մրցակցության հետևանքով Իրաքում փակվեցին նաև այնպիսի ձեռնարկություններ, ինչպես ծղոտից ստացվող թղթի և ստվարաթղթի, արհեստական մետաքսաթելի և մի քանի տեքստիլ ձեռնարկություններ։ Իրաքի շուկան իրենց ապրանքներով ողողել էին ոչ միայն անգլիական, այլև ամերիկյան և օտարերկրյա այլ ընկերություններ։ Ըստ որում, քանի գնում ուժեղանում էին ամերիկյան կապիտալի դիրքերը։ ԱՄՆ-ը տարեցտարի ավելացնում էր իր ապրանքների ներմուծումը Իրաք, և 1948 թվականից սկսած այդ ասպարեզում գրավում էր երկրորդ տեղը՝ Անգլիայից հետո։ Իրաքի շուկայում ուժեղ դիրքեր էին նվաճել ամերիկյան «Ունդերվուդ կորպորեյշն», «Պարկեր Պեն կոմպանի», «Կոլլոգ», «Կոդակ» և այլ ընկերությունները։

Իրաքի շուկան նվաճելու համար օտարերկրյա մոնոպոլիաները ոչնչի առջև կանգ չէին առնում։ Այսպես, օրինակ, երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ամերիկացիները Իրաքում սկսեցին վաճառել կոկա-կոլա և պեպսի-կոլա զովացուցիչ խմիչքները։ Տեղական արտադրողներին դուրս մղելու և իրենց խմիչքը ռեկլամելու նպատակով ամերիկյան ընկերությունները որոշ ժամանակ վերոհիշյալ խմիչքները սկսեցին տարածել անվճար[1]։ Դրա հետևանքով տեղական արդյունաբերողների մեծ մասը սնանկացավ և ամերիկացիներին հաջողվեց նրանց լրիվ կերպով դուրս մղել Իրաքի ներքին շուկայից։ Ինչպես իրավացիորեն նշված է «Իրաքի ռեսպուբլիկան» գրքում, արդյունաբերության բնագավառում կիրառվում էր ահավոր քաղաքականություն, որը ուղղակի վնասակար էր ժողովրդի շահերին և բավարարում էր իմպերիալիզմի շահերը։ «Դրա նպատակն էր,— ասված է գրքում,— խեղդել Իրաքի արդյունաբերությունը, արգելել նրա զարգացումը և հո-

[1] „Новое Время“, № 39, 1952, стр. 29.



գում օտարերկրյա մոնոպոլիստական ընկերությունների լայն ուղի բացել Իրաքի շուկան օտարերկրյա ապրանքներով լցնելու համար»[1]։

Երկրի օպոզիցիոն ուժերը կառավարությունից պահանջում էին վճռական միջոցներ ձեռք առնել ազգային արդյունաբերությունը փրկելու համար։ «Ալ-Իզզա» թերթը նշելով, որ օտարերկրյա ուժեղ մրցակցության պայմաններում երկրի օրենքները չեն խրախուսում տեղական արդյունաբերության զարգացումը, գրում էր. «Ազգային արդյունաբերությունը փրկելու միակ ուղին արդյունաբերողներին համապատասխան հովանավորությամբ ապահովելն էր»[2]։ Հովանավորության հարցը ազգային բուրժուազիայի առաջնահերթ պահանջներից մեկն էր։

Երկրի դեմոկրատական ուժերի պահանջած մյուս կարևոր միջոցառումը հարկերի կրճատումն էր։ Դա կնպաստեր ներքին շուկայի ընդլայնմանը և կապիտալի կուտակմանը։

Սակայն իմպերիալիստական պետությունների կողմից Իրաքի ազգային հարստությունը թալանելու, երկրի էկոնոմիկայի զարգացումն արգելակելու և տեղական կառավարության կողմից պրոիմպերիալիստական քաղաքականություն վարելու փաստն ամենաակնառու կերպով դրսևորվում է նավթի հարցում, և այսպես կոչված Զարգացման խորհրդի գործունեության մեջ։

Նավթն Իրաքի գլխավոր հարստությունն է։ Նրա գոյության մասին բնակչությանը հայտնի էր դեռևս անհիշելի ժամանակներից։ Սակայն նավթը, որպես կարևոր հումք մեծ նշանակություն ձեռք բերեց XIX դարի վերջից և XX դարի սկզբից։ Հենց այդ ժամանակվանից էլ պայքար է ծավալվում իմպերիալիստական պետությունների միջև արաբական, այդ թվում նաև Իրաքի նավթը ձեռք բերելու համար։

1927 թվականին խոշոր նավթային մոնոպոլիաների միջև պայմանագիր կնքվեց Իրաքի նավթը բաժանելու մասին։ Ըստ

[1] „The Republic of Iraq“, Baghdad, 1958, p. 6.
[2] Տե՛ս „The Iraq Times“, Baghdad, October 17, 1952.

այդ համաձայնագրի, «Թըրքիշ Պետրոլիումի»[1] ակցիաները բաժանվեցին հետևյալ կերպ. ակցիաների 23,75 տոկոսը ըստացավ «Անգլո-իրանական» նավթային ընկերությունը, 23,75 տոկոսը՝ անգլո-հոլանդական «Ռոյալ դաչ շելլ»-ը, 23,75 տոկոսը՝ ամերիկյան «Ստանդարտ Օյլ օֆ Նյու Ջերսի» և «Սոկոնի վակուում Օյլ» (հետագայում «Սոկոնի մոբայլ») ընկերությունները, 23,75 տոկոսը՝ ֆրանսիական «Ֆրանսեզ դը Պետրոլ» նավթային ընկերությունը, իսկ մնացած 5 տոկոսը՝ Գ. Գյուլբենկյանը, որը կապված էր անգլիական կապիտալի հետ։ Ինչպես ցույց են տալիս թվերը, Իրաքի նավթի մեջ տիրապետողը անգլիական կապիտալն էր։ Անգլիական նավթային մագնատներն իրենց ձեռքում էին պահում արժեթղթերի վերահսկիչ ծրարը։

«Թըրքիշ Պետրոլիումը» 1929 թվականից սկսեց կոչվել «Իրաք պետրոլիում»։

Բացի «Իրաք Պետրոլիում»-ից հետագայում ստեղծվեցին «Մոսուլ Պետրոլիում», «Բասրա Պետրոլիում» և «Խանեկին Օյլ»[2] ընկերությունները։ Այդ ընկերությունների և Իրաքի կառավարության միջև կաբալային հիմունքներով կնքվեցին կոնցեսիոն պայմանագրեր Իրաքի նավթն օգտագործելու վերաբերյալ։ Պայմանագրերը կնքվեցին 75 տարի ժամանակով և, այսպիսով, «Իրաք Պետրոլիումի» ժամկետն ավարտվում էր 2000 թվականին, «Մոսուլ Պետրոլիումինը»՝ 2007 և «Բասրա Պետրոլիումինը»՝ 2013 թվականին։

Իրաքի հիմնական նավթաբեր շրջաններն են. Կիրկուկը, Մոսուլը, Բասրան և ավելի քիչ քանակությամբ Խանեկինը՝ Նաֆտ-խանան։

Կիրկուկում և Մոսուլում արդյունահանված նավթը նավթամուղ խողովակներով հոսում է դեպի Թրիպոլի (Տրիպոլի)՝ Լիբանան և Բանիաս՝ Սիրիա, իսկ Բասրայինը՝ մինչև Ֆաո նավահանգիստը, որտեղից տանկերներով տեղափոխվում է եվրոպական երկրները, գլխավորապես Անգլիա, Ֆրանսիա և

[1] «Թըրքիշ Պետրոլիումը», որի փաստական տերը Անգլիան էր, ստեղծվել էր դեռևս մինչև առաջին համաշխարհային պատերազմը Իրաքի նավթը շահագործելու համար։

[2] Սա Անգլո-իրանական նավթային ընկերության ֆիլիալն էր։



Հոլանդիա։ Բացի դրանից կա նավթամուղ մինչև Հայֆա՝ Իսրայել, սակայն այն 1948 թվականից՝ արաբա-իսրայելական պատերազմից հետո չի գործում։

Նավթարդյունաբերությունը Իրաքում միակ ճյուղն էր, որ իրոք զարգանում էր արագ թափով։ Դրա պատճառն այն էր, որ նավթարդյունաբերության զարգացումով շահագրգռված էին օտարերկրյա մոնոպոլիաները, քանի որ նավթից նրանք խոշոր եկամուտներ էին ստանում։ Եթե մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը նավթի հանույթը չանցավ 4 մլն 395 հազ. տոննից, ապա երկրորդ համաշխարհային պատերազմից հետո նրա հանույթն ավելանում է արագ թափով։ Նավթ արդյունահանվել է 1945 թվականին 4 մլն 607 հազար տոնն, 1950 թվականին՝ 6 մլն 584 հազար, 1953 թվականին՝ 28 մլն 186 հազար, 1954 թվականին 30 մլն 625 հազար, 1955 թվականին 32 մլն 705 հազար, 1956 թվականին՝ 31 մլն 322 հազար, 1957 թվականին՝ 21 մլն 980 հազար, 1958 թվականին 34 մլն 930 հազար տոնն[1]։

Իրաքի կառավարության և վերոհիշյալ նավթային ընկերությունների միջև կնքված պայմանագրի համաձայն, Իրաքը յուրաքանչյուր տոնն նավթի դիմաց ստանում էր մի չնչին գումար՝ 4 շիլլինգ, մինչդեռ իմպերիալիստները նավթի յուրաքանչյուր վաճառված տոննից ստանում էին 10 և ավելի ֆունտ շահույթ[2]։ Սա բացարձակ թալան էր։ Օտարերկրյա մոնոպոլիաները փաստորեն կողոպտում էին երկրի հարստությունը, պատճառելով նրան աղքատություն ու հետամնացություն։

Նավթից ստացվող Իրաքի եկամուտները կազմել են. 1948 թվականին՝ 2 մլն, 1949 թվականին՝ 3,3 մլն, 1950 թվականին՝ 5,3 մլն 1951 թվականին՝ 13,3 մլն դինար[3]։ Այս թվերն ավելի պարզ լինելու համար նշենք, որ օտարերկրյա մոնոպոլիաները միայն 1949 թվականին ստացել են 48 մլն 600

[1] „UN Statistical Yearbook", New York, 1958, p. 122.

[2] Տե՛ս Б. Данциг, Ирак в прошлом и настоящем, М., 1960, стр. 188.

[3] „United Nations, Quarterly Bulletin of Economic Development", № 13, 1956, p. 47.

հազ. դոլլարի կամ մոտ 17 մլն դինարի շահույթ, որը մեկուկես անգամ ավելի է 1948—1950 թվականների Իրաքի ստացած շահույթներից միասին վերցրած։

1951 թվականին Իրանում տեղի ունեցած իրադարձությունների և Իրաքում ծավալված ժողովրդական շարժումների ճնշման տակ, որոնց մասին կխոսենք աշխատության հաջորդ գլխում, Իրաքի կառավարության և օտարերկրյա մոնոպոլիաների միջև կնքվեց նոր համաձայնագիր, որը Իրաքի պառլամենտը վավերացրեց 1952 թվականի փետրվարի 3-ին։ Այդ պայմանագիրը նավթային ընկերությունների կոնցեսիոն իրավունքները չէր շոշափում։ Նրանք պահպանում էին իրենց իրավունքները և մենաշնորհները։ Պայմանագիրը հիմնականում վերաբերում էր շահույթների և նավթի հանույթի չափերին։ Ըստ նոր պայմանագրի շահույթների բաշխման հիմքում դրըվում էր 50/50-ի սկզբունքը։ Իրաքն ըստ իր հայեցողության կարող էր օգտագործել յուրաքանչյուր տարի երկրում արդյունահանվող նավթի 12,5 տոկոսը, սակայն դա մտնում էր ստացվող շահույթների 50 տոկոսի մեջ։ Համաձայնություն ձեռք բերվեց նաև նավթի արդյունահանման մինիմումի մասին։ Սկսած 1954 թվականից, «Իրաք պետրոլեում»-ը և «Մոսուլ պետրոլեում»-ը պարտավոր էին արդյունահանել ոչ պակաս, քան 22 մլն տոնն նավթ, իսկ «Բասրա պետրոլեում»-ը՝ սկսած 1955 թվականից ոչ պակաս քան 8 մլն տոնն[1]։ Համառոտակի սա է 1952 թվականի պայմանագրի բովանդակությունը, որը թեև նախորդ ժամանակաշրջանի համեմատությամբ որոշ չափով բարելավում էր վճարումների վիճակը, սակայն չէր փոխում Իրաքի նավթի օգտագործման թալանչիական, գաղութային բնույթը, և շարունակում էր ձեռնտու մնալ օտարերկրյա մոնոպոլիաներին։ Գիբսոնը, որը Բաղդադում բանակցությունների ժամանակ ղեկավարում էր անգլիական պատվիրակությունը, հայտարարեց, թե «Իրաքի հետ կնքած համաձայնագիրն, անշուշտ, շահավետ է Անգլիային»[2]։ Նա միաժամանակ ավելացրեց, որ եթե Իրաքում չլինեին անգ-

---

[1] „The Iraq Times", August 14, 1951.

[2] ЦГАОР, ф. 4459, оп. 24. ед. хр. 913, л. 47.



լիական զորքեր, ապա այդ համաձայնագիրը կնքել անհնար կլիներ։

Սակայն այդ պայմանագիրը շահավետ էր ոչ միայն Անգլիային, այլ նաև ԱՄՆ-ին, Ֆրանսիային և Հոլանդիային, որոնք մասնակցում էին Իրաքի նավթի շահագործմանը։ Բանը նրանումն է, որ շահույթների 50 տոկոսը Իրաքը ստանում էր ոչ թե համաշխարհային շուկայում վաճառված նավթի գնի հաշվով, այլ հում, դեռևս չմշակված նավթի գնով, երբ նա դուրս էր տարվում Իրաքի տերիտորիայից։ Հետևաբար նրա արժեքը հիմնվում էր ոչ թե ընթացիկ գների վրա, այլ այսպես ասած տեսական «վաճառման գնի» վրա[1]։ Իսկ այդ, այսպես ասած, ներքին վերացական գինը ավելի ցածր էր լինում համաշխարհայինից։ Բացի այդ, Իրաքը ոչինչ չէր ստանում նրա երկրից դուրս կատարվող նավթային զանազան օպերացիաներից՝ վերամշակումից, տեղափոխումից և նրանցից ստացվող եկամուտներից։ Մինչդեռ դրանք կազմում էին խոշոր գումարներ։ Այս բոլորը, ինչպես, հայտնի էր Իրաքի հասարակայնությանը։ Ինչպես նշել է Իրաքի արդյունաբերության նախկին մինիստր Աբդուլ Ալի Մահմուդ ալ-Շեյխ Ալին «համաձայնագրի փաստերը կազմված էին ճարպկորեն, քանի որ դրանք մարդկանց տալիս էին կարծել, թե Իրաքի բաժինը կազմում է նավթային ընկերությունների շահույթների 50 տոկոսը, մինչդեռ իրականում այդպես չէր»[2]։ Այս բանը հայտնի էր նաև Իրաքի կառավարությանը։ Սակայն նրա ստորագրությունը դրվեց [illegible] անիրավահավասար պայմանագրի տակ, որովհետև այդ կառավարության գլուխ կանգնած էին այնպիսի մարդիկ, որոնք իրենց բախտը կապել էին օտարերկրյա իմպերիալիզմի հետ։ Ռևոլյուցիայից հետո հրապարակված որոշ նյութեր է՛լ ավելի պարզ դարձրին նավթային ընկերությունների կողմից կատարված թալանը։ Ինչպես նշեց Իրաքի ռեսպուբլիկայի ֆինանսների նախկին մինիստր Մուհամմեդ Հադիդը, Իրաքը օտարերկրյա ընկերությունների զանազան

---

[1] Տե՛ս A. Humbaraci, Middle East Indictment, London, 1958, p. 246.

[2] „The Iraq Times", August 16, 1951.

մեքենայությունների ու կեղծումների հետևանքով ստացել է շահույթների ոչ թե 50, այլ 30—35 տոկոսը։

Նավթի հարցում օտարերկրյա ընկերությունների գաղութային քաղաքականությունը դրսևորվում էր ոչ միայն շահույթների բաժանման հարցում։

Հայտնի է, որ նավթը լավ հումք է հանդիսանում քիմիական արդյունաբերության համար։ Սակայն նավթային ընկերություններն նավթն արտահանում էին անմշակ վիճակում և արգելակում էին քիմիական որևէ ձեռնարկության ստեղծումը։ Նրանք չէին թողնում ստեղծել նաև նավթային մեքենաշինական արդյունաբերություն և նավթարդյունաբերական անհրաժեշտ բոլոր սարքավորումը ու պահեստամասերը ներմուծում էին արտասահմանից։ Այսպիսի քաղաքականությունը բնորոշ է իմպերիալիստական պետություններին, որոնք ձգտում էին պահպանել հետամնաց երկրների էկոնոմիկայի գաղութային կառուցվածքը և նրանց վերածել իրենց հումքային կցորդի։

Այդ քաղաքականության դրսևորումն է նաև այն փաստը, որ Իրաքը մինչև 1956 թվականը չուներ ոչ մի նավթաթոր գործարան։ Մի փոքրիկ նավթաթոր գործարան կար Ալվենդում, սակայն նա պատկանում էր անգլո-իրանական ընկերությանը և հիմնականում բավարարում նրա կարիքները և իրեն անհրաժեշտ նավթամթերքները ներմուծում էր արտասահմանից։ 1956 թվականին նավթաթոր գործարան կառուցվեց Դորայում, Բաղդադի մոտ, սակայն դրանից հետո էլ Իրաքը շարունակում էր ներմուծել այդ մթերքները։

Նավթային ընկերությունները Իրաքում գտնվում էին արտոնյալ վիճակում։ Համաձայն կոնցեսիոն պայմանագրերի, նրանք Իրաքի կառավարությանը ոչ մի հարկ չէին վճարում։ Բացի այդ, արտահանվող նավթի և ներմուծվող բոլոր նյութերի և սարքավորումների համար նրանք չէին վճարում ոչ մի մաքսային տուրք։ Դա մեծ վնաս էր հասցնում Իրաքի էկոնոմիկային։ Իրաքը դրանից յուրաքանչյուր տարի կորցնում էր 5 մլն դինար[1]։

[1] „Бюллетень Иностранной Коммерческой Информации" Научно-исследовательского коньюктурного института Министерства внешней торговли СССР, № 41, приложение 20, 1951, стр. 4. (հետագայում կոչվի БИКИ).



Օտարերկրյա իմպերիալիստները ձախողում էին տեղացիներից տեխնիկական կադրեր պատրաստելու գործը, չնայած 1952 թվականի պայմանագրով նրանք այդպիսի պարտավորություն ստանձնել էին։ Այդ արվում էր երկրի նավթային արդյունաբերության մեջ անբաժան տիրապետության պահպանման նպատակով։ Դորայի գործարանում մինչև ռևոլյուցիան աշխատում էին 157 ամերիկացի ու անգլիացի և 90 իրաքցի ինժեներներ։ Իրաքցի ինժեներներն ունեին բարձրագույն կրթություն և նրանք, ըստ պայմանավորվածության անհրաժեշտ փորձ ձեռք բերելուց հետո պետք է փոխարինեին օտարերկրացի ինժեներներին։ Սակայն նավթային ընկերության ղեկավարները իրաքցի ինժեներներին գիտավորյալ կերպով տալիս էին ոչ կարևոր, երկրորդական աշխատանքներ և զրկում նրանց անհրաժեշտ փորձ ու հմտություն ձեռք բերելու հնարավորությունից։

Օտարերկրացի տեխնիկական անձնակազմը շատ թանկ էր նստում երկրի վրա։ Այդ 157 ինժեներների տարեկան աշխատավարձը կազմում էր 1 մլն 500 հազար դինար[1]։ Ինչպես մենք վերևում նշեցինք, Իրաքի շահույթները նավթից 1948 թվականին կազմել են մոտ 2 մլն դինար։ Հետևաբար այդ 157 ինժեներների տարեկան աշխատավարձը մի փոքր էր պակաս նավթից ստացած Իրաքի մեկ տարվա ամբողջ շահույթի գումարից։ Բացի այդ, ինչպես նշել է Իրաքի ռևոլյուցիայի նախկին պրեմիեր-մինիստր Կասեմը, այդ ինժեներների մեծ մասը Իրաք էր գալիս առանց մի պեննիի և վերադառնում մեծ հարստություններ դիզած՝ կանգ չառնելով կաշառակերության ու խարդախության առջև[2]։

1952 թվականի փետրվարին Իրաքի պառլամենտն ընդունեց օրենք, որի համաձայն նավթից ստացվող շահույթների 30 տոկոսը դրվում էր կառավարության տրամադրության

[1] Abdul Karim Qassim, Objectives of Iraq's Revolution, Baghdad, 1959, p. 54.

[2] Նույն տեղում, էջ 55։

տակ, իսկ 70 տոկոսը տրվում էր Զարգացման խորհրդին[1]։ Զարգացման խորհուրդը ստեղծվել էր 1950 թվականի մայիսին՝ Վադի Թարթարի հիդրոտեխնիկական կառուցվածքի համար վերակառուցման միջազգային բանկի կողմից տրված փոխառության կիրառմանը հետևելու և Իրաքի զարգացման տնտեսական ու ֆինանսական պլաններ նախապատրաստելու նպատակով։ Այդ խորհուրդը կազմված էր անգլիական և ամերիկյան մասնագետներից և փաստորեն Իրաքի կառավարությունից անկախ էր։

Զարգացման խորհուրդը դարձավ այն հիմնական օղակներից մեկը, որի օգնությամբ անգլիական և ամերիկյան իմպերիալիստները արգելակում էին Իրաքի տնտեսական զարգացումը և գլխավորապես նրա ինդուստրացումը։ Մինչև հուլիսի 14-ի ռևոլյուցիան Զարգացման խորհուրդը կազմեց Իրաքի տնտեսական զարգացման երկու պլան. առաջին հնգամյա (1951—1955) և երկրորդ հնգամյա (1955—1960)։ Այս վերջինը հետագայում վերածվեց վեցամյա պլանի՝ (1955—1961)։

Առաջին պլանով նախատեսված էր հինգ տարվա ընթացքում ծախսել 155 մլն դինար։ Այդ գումարը հիմնականում հատկացվում էր ոռոգման սիստեմի ընդլայնման, կամուրջների, պալատների և այլ պլանների կատարման վրա։ Իսկ արդյունաբերության զարգացմանը, կրթական և բուժհիմնարկներին անհրաժեշտ ուշադրություն չէր դարձվում, նրանք մղված էին երկրորդական պլան։

1951—1955 թվականներին Իրաքի արդյունաբերության զարգացման վրա ծախսվեց միայն 2 մլն 587 հազար դինար, որը կազմում է այդ տարիներին կատարված ներդրումների ընդհանուր գումարի 3 տոկոսից էլ պակաս, մինչդեռ այդ նույն ժամանակաշրջանում ճանապարհների և կամուրջների վրա ծախսվեց 7 մլն 89 հազար, շինարարության վրա՝ 6 մլն 113 հազար դինար[2]։ Ընդ որում արդյունաբերության համար նախատեսված այդ գումարը հիմնականում ծախսվեց ուսում-

[1] „The Iraq Times", February 6, 1952.

[2] „Революция в Ираке", перевод с английского, М., 1959, стр. 15.



նասիրությունների և հետազոտությունների վրա և ինժեներներին տրվեց որպես աշխատավարձ։ Առաջին հնգամյա պլանի ընթացքում արդյունաբերական ոչ մի նախագիծ կյանքում չիրագործվեց։

Ֆինանսների բաշխման և նախագծերի կազմման այս նույն սկզբունքը պահպանվեց երկրորդ պլանի՝ 1956—1961 թվականների ժամանակ։ Այդ պլանով նախատեսված էր ծախսել մոտ 500 մլն դինար, հիմնականում ոռոգման, հեղեղումների դեմ պայքարելու, կոմունիկացիաների, կամուրջների, օդանավակայանի կառուցման համար։ Այս վերջին երեք միջոցառումներին հատկացված գումարը կազմում էր Զարգացման խորհրդի ողջ բյուջեի 51 տոկոսը։ Արդյունաբերությանը, լեռնագործությանը և էլեկտրիֆիկացիային հատկացվեց բյուջեի 14 տոկոսը, բնակարանների կառուցմանը՝ 5 տոկոսը, բժշկական հիմնարկներին՝ 2 տոկոսը, դպրոցական շենքերի կառուցմանը՝ 1 տոկոսը[1]։

Ինչպես նշվեց, Զարգացման խորհրդի միջոցների մի խոշոր մասը հատկացվում էր ոռոգման և հեղեղումների դեմ պայքարելուն։ Սակայն Իրաքում գոյություն ունեցող ագրարային հարաբերությունների հետևանքով, դրանից օգտվում էին ոչ թե գյուղացիները, այլ ֆեոդալ շեյխերը, որոնց պատկանում էին հողերի մեծ մասը, ոռոգման սիստեմները և այլն։ Ոռոգման նոր սիստեմների կառուցումը բարձրացնում էր հողի գինը և դա էլ ավելի էր նպաստում Իրաքում առանց այն էլ լայն տարածում գտած հողի սպեկուլյացիային։ Այսպիսով, նավթից ստացվող եկամուտները, որոնք պատկանում էին Իրաքի ամբողջ ժողովրդին, Զարգացման խորհրդի միջոցով հոսում էին ֆեոդալ-շեյխերի և հողերի սպեկուլյացիայով զբաղվող բուրժուազիայի գրպանը։ Կառավարող կլիկը իր հերթին Զարգացման խորհրդի միջոցները օգտագործում էր իր տնտեսական հարստացման համար։

Առաջին պլանով նախատեսված 155 մլն դինարից իրացվեց $1/5$-ը, իսկ երկրորդ պլանով նախատեսված 500 մլն դինարից՝ $1/3$-ը։ Սա արդյունք էր այն բանի, որ նախագծերը լուրջ ուսումնասիրությունների հիման վրա չէին կազմված,

[1] D. Adams... p. 105.

շինարարական աշխատանքները ընթանում էին վերին աստի-
ճանի դանդաղ և այլն։ Այդ ամենի հետևանքով հատկապես ձախողվում էր արդյունաբերական ձեռնարկների կառուցումը, գյուղական, առողջապահական և բնակարանային շինարարությունը։ Բայց, այնուհանդերձ, Զարգացման խորհրդի փողերը հոսում էին։ Խոշոր հոնորարներ և վճարումներ էին տրվում խորհրդատու շինարարական ընկերություններին։ Դրամի շոշափելի մասը գնում էր Զարգացման խորհրդի աշխատանքները հսկող պաշտոնյաների և հին ռեժիմի ազդեցիկ մարդկանց գրպանը[1]։ Դրամական այդպիսի մեծ գումարների շրջանառության մեջ մտնելը չուղեկցվելով համապատասխան չափով ապրանքների ավելացման հետ երկրում առաջանում էր ինֆլյացիա, որը ծանր էր անդրադառնում Իրաքի թույլ զարգացած էկոնոմիկայի և աշխատավորների վիճակի վրա։

Զարգացման խորհրդի գործունեությունը լուրջ դժգոհություն առաջացրեց ժողովրդի մոտ։ Երկրի առաջադեմ ուժերը նշում էին, որ հսկայական գումարները հոսում են, սակայն ոչ մի զարգացում չկա, որ այն միայն թղթի վրա է։ «Միացյալ ժողովրդական ճակատ» պարտիայի օրգան «Ալ-Ջաբհա ալ Շաաբիյա»-ն Զարգացման խորհրդի քաղաքականությունը համարում էր արմատապես սխալ։ Նա նշում էր, որ մի քանի նախագծերի կենսագործումը չի արդարացնում այդ խորհրդի կողմից կատարված ծախսերը։ Սակայն թերթը Զարգացման խորհրդի գլխավոր հանցանքը համարում էր այն, որ նա ձախողման մատնեց երկրի ինդուստրացումը։ Իրաքյան մի այլ թերթ՝ «Ալ-Հուրրիյան» նշում էր, որ երբ ուզում ես տեսնել Զարգացման խորհրդի կողմից ծախսված հսկայական գումարների արդյունքը, ապա դառնորեն հիասթափվում ես[2]։ Վերլուծելով Զարգացման խորհրդի գործունեությունը Իրաքի դեմոկրատական ուժերը հանգում էին այն եզրակացության, որ նրա քաղաքականությունը համապատասխանում էր իմպերիալիստական պետությունների շահերին, որ նա «մոռանալով» երկրի տնտեսական զարգացման կարևոր խնդիրները, իր տրամադրության տակ եղած ֆինանսական միջոցները փո-

[1] „The Iraqi Revolution", p. 80.

[2] Տե՛ս „The Iraq Times", August 25, 1955.



շխացնում էր, ծախսում երկրորդական օբյեկտների վրա։ Օրինակ, արքայական պալատի, հյուրանոցների, պառլամենտի շենքի և բանտի կառուցման վրա ծախսվեց մոտ 40 մլն դոլլար կամ մոտ 14 մլն դինար, իսկ դա մոտ վեց անգամ գերազանցում էր արդյունաբերության վրա 1951—1955 թվականներին ծախսված գումարը։

Իմպերիալիստները ոչ միայն շահագործում ու թալանում էին Իրաքի բնական հարստությունները, այլև ստիպում, որ նա իր միջոցներից ֆինանսավորի այնպիսի օբյեկտների կառուցումը, որով ամենից առաջ շահագրգռված էին իրենք՝ օտարերկրյա իմպերիալիստները։ Պատկերավոր օրինակ կարող է հանդիսանալ հետևյալ փաստը։ Բաղդադ—Շարգաթ ճանապարհի կառուցման համար Զարգացման խորհուրդը բաց թողեց 3.450.000 դինար, չնայած, որ ինչպես նշում է «Ալ-Ախբար» թերթը, Շարգաթը «որևէ բանի ոչ սկիզբն է և ոչ էլ վերջը»[1]։ Նշենք նաև, որ այդ ճանապարհով գնացող ավտոմեքենաների թիվը օրական չէր անցնում 17-ից։ Հապա ինչո՞ւմն էր գաղտնիքը։ «Ճշմարտությունը կայանում է նրանում,— գրում էր «Ալ-Ախբար»-ը, որ այս ճանապարհը ծառայելու է նավթային ընկերության կարիքներին խաղաղ տարիներին և արևմտյան բանակներին՝ պատերազմի ժամանակ[2]»։

Իր պրես-կոնֆերանսներից մեկում, Իրաքի ռեսպուբլիկայի նախկին պրեմիեր-մինիստր Կասեմը անդրադառնալով Զարգացման խորհրդի գործունեությանը, նշել է, որ իրականում նրա միջոցների միայն 10 տոկոսն է ծախսվել երկրի էկոնոմիկայի վրա, իսկ մնացածը դուրս է տարվել երկրից՝ հօգուտ օտար պետությունների։ «Երկրի հարստությունը,— նշում է Կասեմը,— գողացվում էր»[3]։

Այսպիսով, օտարերկրյա կապիտալը իր տիրապետությունը հաստատելով Իրաքի էկոնոմիկայում, թալանում էր երկրի հարստությունը և խեղդում ազգային արդյունաբերությունը, իսկ կառավարող կլիկը, սերտորեն կապված լինելով

[1] Տե՛ս „The Iraq Times", October 20, 1952.

[2] Նույն տեղում։

[3] „Press interviews, granted by Major-General Abdul Karim Qassim", Baghdad, 1959, p. 4.

իմպերիալիստական տերությունների հետ, վարում էր այնպիսի քաղաքականություն, որը չէր համապատասխանում Իրաքի ազգային շահերին։

Երկրի էկոնոմիկան օտարերկրյա կապիտալի ճիրաններից ազատելը և ազգային արդյունաբերության ստեղծումը Իրաքի ազգային-ազատագրական շարժման կարևոր շարժառիթներից մեկն էր։

* * *

Գյուղատնտեսությունն Իրաքի էկոնոմիկայի հիմնական ճյուղն է։ Նրանում զբաղված է երկրի բնակչության մոտ 80 տոկոսը և նա տալիս է Իրաքի ազգային եկամտի մոտ մեկ քառորդը։

Սակայն, գյուղատնտեսությունը ևս գտնվում է հետամնաց վիճակում, որի պատճառը մինչև ռևոլյուցիան երկրում գոյություն ունեցող ագրարային հարաբերությունները և Իրաքի կառավարության ու իմպերիալիստական պետությունների կողմից վարվող քաղաքականությունն էր։

Մինչև 1958 թվականի ռևոլյուցիան Իրաքի մշակելի հողերի տարածությունը հաշվվում էր մոտ 50 մլն դոնում[1] կամ 12 մլն հեկտար։ Սակայն դրանից փաստորեն մշակվում էր միայն 23 մլն դոնումը կամ 6 մլն հեկտարը։ Իրաքի գյուղատնտեսության մեջ կիրառվող «ան-նիսֆ վա-նիսֆո» սիստեմի համաձայն յուրաքանչյուր տարի ցանվում էր մշակվող հողերի միայն կեսը, իսկ մնացած կեսը թողնվում էր հարաս։ Այսպիսով, յուրաքանչյուր տարի մշակվող հողերի չափը չէր անցնում 3 մլն հեկտարից, որը կազմում էր Իրաքի ընդհանուր տերիտորիայի 3 տոկոսը։

Հողօգտագործման այս ձևը հանդիսանում էր Իրաքի աղքատության ու հետամնացության պատճառներից մեկը, քանի որ գյուղացին հողագուրկ էր և աղքատ, իսկ հողերի կեսը յուրաքանչյուր տարի մնում էր անմշակ։ Իրաքի կառավարությունը մինչև ռևոլյուցիան ոչինչ չէր անում այդ վիճակը փոփոխելու ուղղությամբ։

---

[1] 1 դոնումը հավասար է 0,25 հեկտարի։



Իրաքում գյուղատնտեսության զարգացումը կրում էր էքստենսիվ բնույթ։ Նա ընթանում էր նորանոր հողային տարածություններ յուրացնելու ուղղությամբ։ Սկսած 1918 թվականից մինչև 1958 թվականը մշակելի հողային տարածությունները Իրաքում ընդարձակվեցին մոտ 4 անգամ։ Իսկ բերքատվության աճը շատ աննշան էր։ Զարգացման այդ բնույթը պետք է բացատրել նախ ազատ հողերի առկայությամբ։ Շեյխերը և խոշոր հողատերերը, որոնց ձեռքում էր կենտրոնացված քաղաքական իշխանությունը, ամեն տարի կառավարության կողմից իրավունք էին «ստանում» նոր հողակտորներ մշակելու։ Դա ֆեոդալ-կալվածատերերի հարստությունն ավելացնելու և գոյություն ունեցող կարգերի ու օտարերկրյա իմպերիալիզմի սոցիալական հենարանն ամրապնդելու միջոցներից մեկն էր։ Երկրորդ, Իրաքի գյուղատնտեսության մեջ տիրապետող վարձակալման սիստեմը ֆեոդալներին ապահովում էր բարձր շահույթներ, ուստի և նրանք շահագրգռվածություն հանդես չէին բերում գյուղատնտեսության ինտենսիվ զարգացման համար, որը պահանջում է լրացուցիչ կապիտալներ, մեքենայացում, պարարտանյութերի կիրառում և այլն։

Իրաքի գյուղատնտեսության գլխավոր կուլտուրաներն են ցորենը, գարին, արմավը (Իրաքը տալիս է համաշխարհային արտադրանքի 80 տոկոսը), բրինձը, բամբակը և այլն։ Նրանց բերքատվությունն ընդհանրապես ցածր էր։ Դա բացատրվում է հողօգտագործման մեթոդների հետամնացությամբ, մեքենայացման ցածր աստիճանով, պարարտանյութերի վերին աստիճանի աննշան օգտագործմամբ, որոնք իրենց հերթին հետևանք էին գյուղատնտեսության մեջ տիրապետող ագրարային հարաբերությունների, ֆեոդալական կիսաբարբարային սիստեմի կիրառման։ Վերականգնման և զարգացման միջազգային բանկի միսիան, որը եղել էր Իրաքում և ուսումնասիրել էկոնոմիկայի վիճակը իր զեկուցագրում նշում էր. «բերքատվությունն ընդհանրապես ցածր է։ Ջրի մատակարարումը սովորաբար անհավասար է։ Գյուղատնտեսական մեթոդները ամբողջությամբ վերցրած դարերով մնացել են անփո-

փոխ։ Քիչ կամ համարյա ոչ մի գումար ու պարարտանյութ չի տրվում հողին»[1]։

Գյուղատնտեսական հիմնական գործիքը շարունակում էր մնալ պապենական արորը և ինչպես նշել Իրաքի կոմպարտիայի գլխավոր քարտուղար Յուսուֆ Սալմանը, Բաբելոնի և Նինվեի ժամանակներից եկող արտադրության միջոցները[2]։ Սերմացուի ընտրություն և մաքրում չկար։ Ագրոտեխնիկան ընդհանրապես անծանոթ էր Իրաքի գյուղատնտեսությանը։

Ճիշտ է վերջին ժամանակներս Իրաքի գյուղատնտեսության մեջ սկսել էին մուտք գործել գյուղատնտեսական մեքենաները, սակայն դրանց թիվը դեռևս անբավարար էր։ Ամբողջ Իրաքի գյուղատնտեսության մեջ 1940 թվականին եղել է 450, 1954 թվականին՝ 1462, 1955 թվականին՝ 1715, 1956 թվականին՝ 2096, 1957 թվականին՝ 2188 տրակտոր[3]։

Տրակտորների օգտագործումն ըստ լիվաների համամասնաչափ չէր։ Այսպես, 1956 թվականին Հիլլայում եղել է 3, Քերբելայում՝ 3, Ամարայում՝ 3, Մունթաֆիքում՝ 5, Բասրայում՝ 5, Դուլայմայում՝ 13 տրակտոր[4]։ Բացի տրակտորներից Իրաքի գյուղատնտեսության մեջ օգտագործվում էին կոմբայններ, ջրապոմպեր և այլն։ Տրակտորների մի մասը ֆեոդալների սեփականությունն էր, իսկ մյուս մասը պատկանում էր գյուղատնտեսական մեքենաների դեպարտամենտին, որը վարձով էր տալիս այդ մեքենաները։ Այն գյուղացիները, որոնք ունեին հողակտորներ, ընդհանրապես ի վիճակի չէին վարձով օգտվելու այդ մեքենաներից։ Մեքենաներից չէր օգտվում նաև ֆեոդալ-հողատերերի մի մասը, որը գերադասում էր տնտեսությունը վարել ոչ թե կապիտալիստական հիմունքներով, այլ նախկին ձևով, որը վարձակալման գործող սիստեմով բարձր շահույթներ էր ապահովում։

[1] „The Economic Development of Iraq", Washington, 1952, p. 5.

[2] يوسف سلمان يوسف... ص ٢٨

[3] „UN, Economic Developments in the Middle East", 1958—1959, New York, 1960, p. 59.

[4] „Statistical Abstract", 1956, p. 106.



Գյուղատնտեսության հետամնացության և բարձիթողի վիճակի մասին է վկայում ոռոգման սիստեմի դրությունը երկրում։ Իրաքի հողերի մեծ մասը արհեստական ոռոգման կարիք էր զգում, սակայն այդ ուղղությամբ կառավարությունը շատ քիչ բան էր անում։ Ոռոգման սիստեմը Իրաքում թույլ է զարգացած, որի հետևանքով հարյուր հազարավոր հեկտարներ մնում են անմշակ։

Իրաքի գյուղատնտեսության մեջ չէին կատարվում մելիորատիվ աշխատանքներ, օրինակ, դրենաժ։ Դրա հետևանքով ոռոգվող հողերի զգալի մասը վեր էր ածվում աղուտների։ Իրաքի գլխավոր խորհրդի հանձնաժողովի տվյալներով ոռոգվող հողերի մոտ 60 տոկոսը լրջորեն վնասվել էր աղից, իսկ վերջին տասնամյակում մշակվող հողերի 20—30 տոկոսը այդ պատճառով լքվել էր[1]։ Սա, անշուշտ, լրացուցիչ դժվարություններ էր ստեղծում Իրաքի գյուղատնտեսության զարգացման համար։

Իրաքում ոչինչ չէր արվում գյուղացիների վիճակը բարելավելու, նրա իրավունքները պաշտպանելու և գյուղատնտեսության մեջ փոփոխություն մտցնելու ուղղությամբ։ Գյուղատնտեսության համար կատարվող հատկացումները քիչ էին, իսկ եղածն էլ հաճախ ավելի էր կրճատվում։ Այսպես, գյուղատնտեսության և անասնապահության դեպարտամենտի 1948—1949 թվականների բյուջեն կազմում էր 1 մլն 600 հազար դինար, իսկ 1950—1951 թվականներին այն իջավ մինչև 540.000 դինարի, որը կազմում էր ընդհանուր բյուջեի 1,8 տոկոսը[2]։ Ռևոլյուցիայի նախօրյակին, 1957 թվականին հողագործության մինիստրության բյուջեն կազմում էր ամբողջ պետական բյուջեի 3,4 տոկոսը, իսկ ոստիկանությանը՝ 9,2 տոկոսը։ Գյուղատնտեսության և գլխավորապես ոռոգման սիստեմի զարգացման համար հատկացումներ կատարում էր նաև Զարգացման խորհուրդը։ Սակայն նրա հատկացումների մի խոշոր մասը տրվում էր զանազան էքսպերտների և հանձնա-

[1] „The Economic Development of Iraq", Washington, 1952, p. 17.

[2] Նույն տեղում, էջ 7։

ժողովների անդամների՝ որպես աշխատավարձ, հոնորար և այլն։ Եվ բացի այդ պետք է ի նկատի ունենալ, որ Զարգացման խորհրդի կազմած առաջին պլանի հատկացումները իրացվեցին 1/3-ով, իսկ երկրորդ պլանինը՝ միայն կիսով չափ։ Այդ պատճառով էլ մինչև ռևոլյուցիան Իրաքի ոռոգման սիստեմը էական փոփոխության չենթարկվեց։

Մինչ 1958 թվականի ռևոլյուցիան Իրաքում գոյություն ունեցած ագրարային հարաբերությունները հիմնականում ձևավորվել էին վերջին 40 տարիների (1918—1958) ընթացքում, բրիտանական իմպերիալիզմի տիրապետության ժամանակ։

Իրաքում, ինչպես նաև Մերձավոր Արևելքի մի շարք երկրներում, շարիաթի օրենքների համաձայն, հողը իրավական տեսակետից պատկանում է պետությանը և այդ իմաստով ձևականորեն իբր հողի մասնավոր սեփականություն չկար։ Մինչև առաջին համաշխարհային պատերազմը հողը օգտագործում էին ցեղերը, ըստ որում գյուղացիները հողօգտագործման նույնպիսի իրավունքներ ունեին, ինչպես շեյխը և հողօգտագործումը մասամբ կրում էր համայնական բնույթ։ Շեյխը հանդիսանում էր քաղաքական իշխանության մարմնացումը և նրա հիմնական ֆունկցիաներից մեկը գանձարանի օգտին հողերից հարկ հավաքելն էր, որի համար որպես բաժին նա վերցնում էր հարկված հողերից ստացվող շահույթների 12,5 տոկոսը։

Սակայն արդեն դարասկզբին նկատվում էր ցեղերին պատկանող հողերի՝ շեյխերի ձեռքում կենտրոնացնելու ձգտում, որն ուժեղ կերպով դրսևորվեց առաջին համաշխարհային պատերազմից հետո, երբ կործանվեց Օսմանյան կայսրությունը և ստեղծվեց Իրաքի պետությունը։

Դա բացատրվում է ապրանքային հարաբերությունների զարգացմամբ։ Մինչ այդ Իրաքում տիրապետում էր փակ, նատուրալ տնտեսությունը, երբ տեղի էր ունենում մթերափոխանակություն կամ գյուղատնտեսական մթերքների փոխանակում տնայնագործական արդյունաբերության արտադրանքների հետ։ Ապրանքային և դրամա-շուկայական հարաբերությունների զարգացմամբ շեյխերը ձգտեցին ինչքան



հնարավոր է շատ ապրանքներ ձեռք բերել ներքին և արտաքին շուկաներում վաճառելու համար։ Իսկ դա հնարավոր էր ցեղերին պատկանող հողերը շեյխերի ձեռքում կենտրոնացնելու, հողը փաստորեն շեյխ-ֆեոդալների մասնավոր սեփականությունը դարձնելու դեպքում։ Դա համապատասխանում էր նաև բրիտանական իմպերիալիզմի շահերին, որովհետև անգլիական տիրապետության առաջին տարիները ցույց տվեցին, որ գաղութարարները իրենց տիրապետությունը չեն կարող Իրաքում պահպանել առանց մի այնպիսի սոցիալական շերտի ստեղծման, որը նրանց պաշտպաներ և որի վրա նրանք կարողանային հենվել։ Այդպիսի սոցիալական շերտ հանդիսացան շեյխերը, որոնց հնարավորություն տրվեց պետական մեքենան ծառայեցնել իրենց շահերին և հողազրկել գյուղացիներին։ 1918-ից մինչև 1958 թվականը ընկած ժամանակաշրջանում ընդունվեցին մի շարք կառավարական օրենքներ, որոնց շնորհիվ ցեղերին պատկանող հողերը անցան շեյխերին։ Շեյխը վերածվեց հողատեր-ֆեոդալի։ Տեղի ունեցավ գյուղացիության էքսպրոպրիացիա և գյուղացին հողագործից վերածվեց ֆելլահ-վարձակալի։ 1932 թվականին Իրաքում օրենքով սահմանվեց հողօգտագործման երեք ձև. միրի-թափու, միրի-լյազմա և միրի-սիրֆ։ Դրանցից առաջին երկուսը հանդիսանում են հողի մասնավոր սեփականության ձևեր, որոնք լայն տարածում գտան Իրաքում։

Միրի-թափուն այն հողերն են, որոնք կառավարության կողմից շնորհվում են շեյխերին, բուրժուազիայի առանձին ներկայացուցիչներին և այլն։ Այդ տիտուլը ստանալու համար պետք է ապացուցել, որ տվյալ հողամասը նախորդ 10 տարիներին օգտագործվել է արդյունավետ կերպով։ Թափու ունեցող ֆեոդալը կարող է իր հողամասը վաճառել, գրավ դնել և կտակել ուրիշներին։

Միրի-լյազմայի ինստիտուտը Օսմանյան կայսրության ժամանակ գոյություն չի ունեցել, այն առաջին անգամ մտցվեց 1932 թվականի օրենքով։ Լյազմայի տիտուլ ստանալու համար անհրաժեշտ էր ապացուցել, որ այդ հողակտորը նախորդ 15 տարիների ընթացքում արդյունավետ կերպով է օգտագործվել։ Միրի-թափուի և միրի-լյազմայի միջև մեծ տար-

քերություն չկա։ Դրանց տարբերությունը կայանում է նրանում, որ միրի-լյազմայի հողերը չէր կարելի վաճառել կամ կտակել ուրիշ ցեղի պատկանող մարդու։ Ինչպես ճիշտ կերպով նկատել է Դ. Ուորրիները «Հողօգտագործման նոր ձևի մտցնելը նպատակ ուներ սեփականության իրավունք տալ առանձին անձանց, միաժամանակ պահպանելով ցեղային համերաշխությունը»[1]։ Մնացած հողերը, որոնց վրա չէին տարածվում վերոհիշյալ երկու տիտուլները, համարվում էին միրի-սիրֆ, այսինքն՝ պետական։ Այս կատեգորիայի մեջ մտնում էին նաև չմշակվող բոլոր հողերը։

1955 թվականի տվյալներով հողերը ըստ սեփականության ձևերի բաժանվում էին հետևյալ կերպ.

Մուլք—234,748 դոնում

Մատրուքա (հասարակական հողօգտագործում)—4,397, 999 դոնում։

Վակֆ—796,754 դոնում

Միրի-թափու—11,971,828 դոնում

Միրի-լյազմա—11,315,824 դոնում

Միրի-սիրֆ—44,261,504 դոնում

Ընդամենը՝ 72,978,657 դոնում[2]։

Այս թվերը ցույց են տալիս, որ հողերի ճնշող մասը՝ 67 մլն 549 հազ. 156 դոնումը իրավական տեսակետից պատկանում էր պետությանը, թեև միրի-թափու և միրի-լյազմա տիտուլ ունեցողները հողը փաստորեն օգտագործում էին որպես իրենց սեփականությունը։

Մեր կողմից քննարկվող ժամանակաշրջանում Իրաքի գյուղատնտեսության մեջ գերիշխող էին ֆեոդալական հարաբերությունները։ Դրա մասին են վկայում խոշոր կալվածատերերի առկայությունը և ռենտայի գանձման ձևերը։ Պաշտոնական վիճակագրության տվյալներով Իրաքում կար 12545 հողատեր, որոնց միջին չափը կազմում էր 51 հեկտար։ Սակայն տարբեր լիվաներում այդ չափը տարբեր էր։ Այսպես, օրինակ, Բասրայի լիվայում այն հավասար էր 6 հեկտարի՝

[1] Д. Уоринер... стр. 233.

[2] „The Middle East. A Survey and Directory of countries of the Middle East", London, 1961, p. 127.



(ամենափոքրը Իրաքում), իսկ Ամարայի լիվայում՝ 1721 հեկտարի[1]։ Առանձին ֆեոդալների ձեռքում կենտրոնացված էին մի քանի հարյուր հազար դոնումի հասնող հողային տարածություններ։ «3619 հողատերեր մոնոպոլ սեփականություն էին դարձրել 18 մլն դոնումի մշակելի հող. միայն 272 սեփականատերեր ունեին 6 միլիոն դոնում։ Առանձին շեյխերի հողերը հաշվվում էին ավելի քան մեկ միլիոն դոնում»[2]։ Ամարայի հողերի մեծ մասը պատկանում էր չորս ֆեոդալների։ Խոշոր հողատերերը, որոնք կազմում էին գյուղական բնակչության 1 տոկոսը, իրենց ձեռքում էին կենտրոնացրել Իրաքի ողջ մշակելի հողատարածության 75 տոկոսը։ Դա նշանակում է, որ գյուղական բնակչության մնացած 99 տոկոսին պատկանում էր մշակելի հողերի 25 տոկոսը։ Ըստ որում, նրանց հողակտորները շատ մանր էին։ Իրաքի գյուղացիության 2/3-ից ավելին հողազուրկ էր։ Նրանք ստիպված հողը վարձակալում էին ֆեոդալ-շեյխից։ Վարձակալումը և եկամուտների բաժանումը կատարվում էր ֆեոդալական սկզբունքներով։ Որպես կանոն հողատերը բերքի մեծ մասը վերցնում էր իրեն։ Եկամուտների բաժանման որոշակի եղանակ փաստորեն գոյություն չուներ. նա կախված էր զանազան հանգամանքներից։ Եթե հողերը ջրվում էին գետով, ապա հողատերը վերցնում էր բերքի 3/5, իսկ եթե նա գյուղացուն տալիս էր սերմացու, ապա վերցնում էր բերքի 2/3-ը։ Արհեստական ոռոգվող հողերից ֆեոդալը վերցնում էր բերքի 5/7-ը[3]։ Հասկանալի է, որ այսպիսի բաժանումից հետո գյուղացուն շատ քիչ բան էր մնում, ուստի վարձակալման սիստեմը հանդիսանում էր Իրաքի գյուղացիության աղքատության պատճառներից մեկը։ Ճիշտ է, 1954 թվականին որոշվեց, որ գյուղացու բաժինը 50 տոկոսից պակաս չպիտի կազմի, բայց ֆեոդալները հաշվի չառան այդ որոշումը և եկամուտների բաժանումը մինչև ռևոլյուցիան կատարվում էր վերը նշված համամասնությամբ, որը ֆեոդալներին հնարավորություն էր տալիս յուրացնել

[1] „Statistical Abstract", 1956, p. 82.

[2] „The Republic of Iraq", Baghdad, 1958, p. 6.

[3] „Революция в Ираке„ М., 1959, стр. 9.

ֆեոդալի աշխատանքի արդյունքի մեծ մասը, թողնելով այնքան, որքան անհրաժեշտ է նրա գոյությունը քարշ տալու համար։ Զաքի Խայրիի գլխավորած հանձնաժողովը Իրաքի կոմունիստական պարտիայի Կենտրոնական կոմիտեի համար կազմած «Ագրարային ռեֆորմի մասին» զեկուցագրում նշում է. «Ֆեոդալական շահագործումը շահագործման գլխավոր ձևն է գավառում, նա հիմնված է խոշոր հողատիրության վրա, որը հնարավորություն է ընձեռում հողատերերին գյուղացու աշխատանքից կորզելու իրենց ռենտան։ Ռենտան իր ներկա ձևով գյուղացու արտադրանքի ավելցուկն է, այսինքն գյուղացու արտադրանքի այն մասը, որը գերազանցում է նրա և իր ընտանիքի կյանքը պահպանելու անհրաժեշտ քանակը»[1]։

Ինչպես Միջնադար Արևելքի մյուս երկրներում, այնպես էլ Իրաքում ռենտան գանձում էին երեք ձևով. դրամական, նատուրալ և աշխատանքային։ Դժբախտաբար վիճակագրական տվյալներ չկան ռենտայի այդ ձևերի կիրառման չափերի մասին, սակայն կասկածից վեր է, որ տիրապետողը դեռևս նատուրալ ռենտան էր, թեև դրամականը վերջին ժամանակներս ավելի ու ավելի լայն տարածում էր գտնում։

Իրաքի գյուղատնտեսության մեջ իշխում է ֆեոդալական վարձակալման, կիսարարային սիստեմը, որին համապատասխանում է գյուղատնտեսության վարման անհատական մեթոդը, երբ վարձակալող գյուղացին իրեն հողաբաժնի վրա կատարում է գյուղատնտեսական բոլոր աշխատանքները։ Իրաքի գյուղատնտեսության մեջ աշխատանքի բաժանում և մասնագիտացում գոյություն չունի, որը և բացասաբար է անդրադառնում գյուղատնտեսության զարգացման և բերքատվության վրա։

Նատուրալ տնտեսության քայքայումը և ցեղերին պատկանող հողերի յուրացումը շեյխերի կողմից փոփոխություններ մտցրին գյուղացու և շեյխերի փոխհարաբերություններում։ Այդ հարաբերություններն այլևս հիմնված չէին նահապետական ավանդույթների վրա, որոնք պահանջում էին հարգել շեյխին։ Գյուղացիները այժմ ենթարկվում էին շեյխին, որը դարձել էր խոշոր հողատեր։ Գյուղացին հարկադրված էր ենթարկվել, որովհետև շեյխի կողմն էին իշխանությունը, դատարանը, ոստիկանությունը և ռազմական ուժերը։ Գյուղացին այժմ «հարգում էր» շեյխին միայն վախից դրդված։

Գյուղացիների էքսպրոպրիացիան և ցեղերին պատկանող հողերի անցումը շեյխերին ու վերջիններիս վերածումը ֆեոդալների, քայքայեց ցեղային հարաբերությունները։ Սակայն Իրաքի կառավարությունը և անգլիական իմպերիալիստները ջանքեր չխնայեցին օգտագործելու այդ հարաբերությունները նոր հիմքի վրա։ Իրաքի կառավարությունն ընդունեց, այսպես կոչված, «Օրենք ցեղերի վերաբերյալ»։ Այդ օրենքը շեյխի և նրա ցեղին պատկանող գյուղացիների հարաբերությունը դնում էր այնպիսի հիմքի վրա, որն ապահովում էր շեյխի բացարձակ տիրապետությունը գյուղացիների վրա։ Շեյխը օրենքի ուժով դառնում էր ֆելլահի բախտի լրիվ տնօրենը։ Նա կարող էր ուզած ժամանակ գյուղացուն օգտագործել իր կալվածքում այս կամ այն աշխատանքը կատարելու, ճանապարհների և ջրանցքների վրա աշխատելու և այլն։ Բացի այդ, գյուղացին պարտավոր էր մշակել միայն թույլատրված կուլտուրաները։ Դրա ընտրության մեջ նա ազատ չէր։ Նա պարտավոր էր կատարել շեյխի բոլոր կարգադրությունները և հրամանները։ Շեյխն ուներ իր դատարանը, որտեղ նա կարող էր դատել գյուղացուն և այլն[1]։ Այդ օրենքը ուժի մեջ էր մինչև 1958 թվականի հուլիսի 14-ի ռևոլյուցիան։

Հողազրկելով գյուղացիներին և գրավելով ցեղին պատկանող հողերը, շեյխերը փաստորեն գյուղացուն զրկեցին նաև անձնական ազատությունից։ Շեյխերի և խոշոր հողատերերի շահերը արտահայտող Իրաքի կառավարությունը օրենք ընդունեց գյուղացիների իրավունքների և պարտականությունների մասին, որի համաձայն գյուղացին չէր կարող թողնել և հեռանալ հողատիրոջից կամ ջրապոմպի տիրոջից, քանի դեռ նա չէր մարել պարտքը։ Այսպիսով, այդ օրենքը գյուղացուն լրիվ զրկում էր անձնական ազատությունից։

---

[1] „Iraqi Review", vol. 1, № 27, Baghdad, 1960, p. 16.



[1] „Iraqi Review", vol. 1, № 27, 1960, p. 15; С. Забелин, В Иракской деревне, „Новое Время", № 38, 1953, стр. 24.

1918—1958 թվականների ընթացքում Իրաքի կառավարության վարած ագրարային քաղաքականության հետևանքով գյուղացին զրկվեց ոչ միայն վարելահողից, այլև արոտավայրից։ Արոտավայրից օգտվելու համար նա պետք է հատուկ հարկ վճարեր ֆեոդալին։ Անհրաժեշտ է նշել, որ արոտավայրերը անհիշելի ժամանակներից եղել են համայնական, նրանք պատկանել են ցեղին և օգտագործվել ցեղի բոլոր անդամների կողմից։ Արոտավայրերից օգտվելու համար հատուկ հարկ մտցնելը ծանրացրեց գյուղացիության վիճակը, դժվարացրեց անասուններ պահելը։ Գյուղացիության վիճակը ծանրացնում էր նաև այն հանգամանքը, որ շատ հողատերեր իրենց մոտ աշխատողների չէին վերցնում անասուններ ունեցող գյուղացիներին։

Շեյխերը և խոշոր հողատերերը Իրաքում գյուղացիներից գանձում էին բազմաթիվ ֆեոդալական հարկեր, որոնք գալիս էին դեռ միջնադարից։ Այսպես, օրինակ, գյուղացիները հարկ էին վճարում ձուկ և թռչուն որսալու համար. բացի այդ կար կոֆեի հարկ, հյուրասիրության հարկ, ամուսնության հարկ և այլն։ Ֆեոդալական հարկերի թիվն անցնում էր տասից[1]։

Վերը շարադրածից երևում է, որ Իրաքի գյուղատնտեսության մեջ դեռևս ուժեղ էին ֆեոդալական հարաբերությունները։ Սակայն առաջին և հատկապես երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, Իրաքի գյուղատնտեսության մեջ սկսում են բավականին արագ թափով զարգանալ կապիտալիստական հարաբերությունները։ Դա արտահայտվում էր գլխավորապես ապրանքային հարաբերությունների զարգացման մեջ։ Ֆեոդալ-շեյխերը, բուրժուականացած հողատերերը և ազգային բուրժուազիայի այն մասը, որն իր կապիտալները ներդրել էր գյուղատնտեսության մեջ, ավելի ու ավելի էին կապվում ներքին և արտաքին շուկայի հետ, ձգտում էին որքան հնարավոր է շատ գյուղատնտեսական մթերքներ նետել շուկա։ Հարստությունը մթերքների ձևով կուտակելը իր տեղը զիջում է դրամականին։ Բացի այդ հողատերերը սկսում են կիրառել գյուղատնտեսական մեքենաներ, տրակտորներ, կոմ-

[1] „Iraqi Review", vol. 1, № 27, p. 15.



բայններ և այլն, թեև դա տեղի էր ունենում սահմանափակ չափերով և դանդաղ։ Իրաքի գյուղատնտեսության մեջ սկսում էր կիրառվել նաև վարձու աշխատանքը, հատկապես մեխանիկական ջրապոմպերի տերերի կողմից։ Իհարկե, դա դեռևս շատ սահմանափակ բնույթ էր կրում, սակայն այդ տենդենցը գնալով զարգանում էր։

1945 և 1951 թվականներին Իրաքի կառավարությունն ընդունեց օրենք՝ պետական հողերի մի մասի վրա գյուղացիներին վերաբնակեցնելու վերաբերյալ։ Դրանցից առաջինը, որն ընդունվեց 1945 թվականին, կոչվում էր «Օրենք Դուջայլայի հողերի զարգացման և մշակման մասին»։ (Դուջայլան գտնվում է Քութ-ալ-Ամարայից հարավ-արևելք)։ Այդ օրենքով պետությանը պատկանող 75000 ակր հողերը բաժանվեցին 1200 ընտանիքների միջև, յուրաքանչյուրին՝ տալով 62,5 ակր։ Դուջայլայում հող ձեռք բերելու համար դիմում էին ավելի 50000 գյուղացիներ։ Հող ստանալու համար պահանջվում էր, որ գյուղացին լիներ այդ շրջանից, 18 տարեկանից ոչ պակաս և 50 տարեկանից ոչ ավել, լիներ ամուսնացած և ունենար առնվազն մեկ երեխա[1]։ Հող ստացող յուրաքանչյուր գյուղացի պայմանագիր էր կնքում պետության հետ, որով նա պարտավորվում էր տուն կառուցել, մշակել տրված հողը և կողմնակի ոչ մի աշխատանք չկատարել։ Պայմանագրում նշվում էր, թե գյուղացին ինչ պետք է ցանի և ինչ քանակությամբ։ Նա պարտավոր էր մտնել կոոպերատիվի մեջ և իր մթերքները վաճառել նրա միջոցով։ Կոոպերատիվ մտնելու համար նա երկու տարվա ընթացքում պետք է վճարեր 70 դոլլար։ Այդ բոլոր պարտականությունները 10 տարվա ընթացքում բարեխիղճ կատարելուց հետո, պետությունը նրան տալիս էր շնորհելու այդ 62½ ակր հողի վերաբերյալ, սակայն մի պայմանով, որ հետագա 10 տարիների ընթացքում գյուղացին չվաճառեր կամ չմասնատեր իր հողակտորը։ Այս պայմանները խախտելու դեպքում գյուղացին զրկվում էր իրեն տրված հողակտորից և կորցնում բոլոր իրավունքները։

[1] „Community Development Bulletin", vol. 3, № 1, London, 1951, p. 15.

Դուջայլայի նախագիծը հաջողություն չունեցավ։ Նախ, փաստորեն ձախողվեց, որովհետև մելիորատիվ աշխատանքների բացակայության հետևանքով մեծացավ աղի նստվածքը, որի հետևանքով Դուջայլայի 8 հողակտորներից մեկը լրիվ շարքից դուրս եկավ և իշխանությունները հարկադրված եղան մոտ 300 հողագործների տեղափոխել այլ հողակտորների վրա։ Նույնպիսի վտանգի էին ենթարկված նաև մնացած հողերը։ Խիստ կերպով ընկավ բերքատվությունը։ Շուտով անհաջողության մատնվեց և քայքայվեց նաև կոոպերատիվը։

1951 թվականին ընդունվեց «Օրենք (№ 43) Միրի-սիրֆ հողերի զարգացման մասին», որի հիմքում ընկած էին Դուջայլայի նախագծի սկզբունքները։ Այդ օրենքով նոր բնակավայրեր ստեղծվեցին Հավիջայում (Կիրկուկի լիվա), Շահրազորում (Սուլեյմանիայի լիվա), Ջադիրա ալ-Սադահում (Հիլլայի լիվա), Լաթիֆիայում (Բաղդադի մոտ) և Մախմուրի քաղաքում։

1951 թվականի օրենքը մատնանշում էր, որ հողը տրվելու է նաև քաղաքացիական և զինվորական թոշակառուներին, պետական պաշտոնյաներին, պաշտոնաթող սպաներին և զինվորներին[1]։

Սա պարզ է դարձնում Իրաքի կառավարության ագրարային քաղաքականության էությունը։ Նա ձգտում էր հողը տալ ոչ թե հողազուրկ գյուղացիներին, այլ պաշտոնաթող զինվորականներին, սպաներին ու պաշտոնյաներին։ Դրանով իսկ նա աշխատում էր իրեն համար հուսալի հենարան ստեղծել։

Մինչև 1957 թվականի վերջը այդ երկու օրենքներով հող ստացավ մոտ 20000 հոգի[2]։ Դա վկայում է նրանց կիրառման սահմանափակ բնույթի մասին և ցույց տալիս, որ նրանք էական փոփոխություն չմացրին և չէին էլ կարող մտցնել Իրաքի ագրարային հարաբերություններում և գյուղացիության վիճակի մեջ։

[1] „UNESCO, International Social Sciences Bulletin", vol. 5, № 4, Paris, 1953, p. 716.

[2] „UN, Economic Development in the Middle East 1957—1958", New York, 1959, p. 10.



Այսպիսով, կարելի է ասել, որ մինչ 1958 թվականի ռևոլյուցիան Իրաքում կառավարությունը ոչ մի քայլի չդիմեց ագրարային ռեֆորմ անցկացնելու ուղղությամբ։ Կառավարությունը նորանոր պետական հողեր էր շնորհում շեյխերին, բուրժուազիայի առանձին ներկայացուցիչներին և ազդեցիկ մարդկանց։ «Պետական հողերը,— նշում է «Ալ-Շաաբ» թերթը,— վերջին 30 տարիների ընթացքում եղել են անսպառելի գանձ նրանց համար, ովքեր ազդեցություն ունեին»[1]։ Մինչդեռ ագրարային ռեֆորմի կարիքը խիստ էր զգացվում։ Այդ էին պահանջում Իրաքի տնտեսական և քաղաքական զարգացման շահերը։ Այդ էին պահանջում երկրի բոլոր օպոզիցիոն ուժերը։ Նրանք գտնում էին, որ ագրարային ռեֆորմը երկրի ներսում բարեփոխումներ կատարելու անկյունաքարն է։ Իրաքում ագրարային ռեֆորմի անցկացումը և ֆեոդալների տնտեսական ու քաղաքական հզորության վերացումը կոմունիստական պարտիայի կարևոր պահանջներից էր։ Ազգային-դեմոկրատական պարտիայի օրգան «Ալ-Ահալի»-ն նշում էր, որ բոլոր չարիքների արմատը ֆեոդալիզմն է, որն անհնար է դարձնում արդյունաբերության ծաղկումը և առևտրի զարգացումը։ Ալ-իսթիքլյալ պարտիայի օրգան «Լիվա-ալ-իսթիքլյալ» թերթը նշում էր, որ ֆեոդալները ոտնակոխ են արել բոլոր օրենքներն ու կարգը և բացահայտորեն հափշտակել են ժողովրդի իրավունքները և երբ որևէ մեկը հանդես է գալիս նրանց դեմ, ապա նրան մեղադրում են կոմունիստական սաբոտաժի կամ կոմունիստներին պաշտպանելու մեջ, որը մի ահավոր մեղադրանք էր թագավորական Իրաքում։ Թերթը, արտահայտելով ալ-իսթիքլյալ պարտիայի տեսակետը, իրավացիորեն գտնում էր, որ ֆեոդալիզմի բացարձակ տիրապետությունը և բնակչության աղքատ վիճակը շատ ծանր կացություն կարող է ստեղծել երկրի համար։

Իրաքի դեմոկրատական ուժերը ֆեոդալական սիստեմի և երկրում ստեղծված դրության համար մեղադրում էին նաև իմպերիալիզմին։ «Միացյալ Ազգային ճակատ» պարտիայի օրգան «Ալ-Ջարհա ալ-Շաաբիյա»-ն նշում էր, որ «իմպերիա-

[1] Տե՛ս „The Iraq Times", December 10, 1952.

լիզմը երկրում պաշտպանում է ոչ միայն ֆեոդալիզմը գյուղատնտեսության մեջ, այլև ստեղծել է քաղաքական և ֆինանսական ֆեոդալիզմ»[1]։ Նա պահանջում էր կիրառել ագրարային ռեֆորմ, նշելով, որ ժողովուրդը արդեն հոգնել է։

Իրաքի օպոզիցիոն ուժերը ագրարային ռեֆորմի պահանջի տակ հասկանում էին ֆեոդալական խոշոր հողատիրության վերացում, ֆեոդալներից խլված կալվածքների բաժանում մանր հողատերերի և նրանց հանձնումը հողազուրկ գյուղացիներին։ Դա անշուշտ առաջադիմական էր և համապատասխանում էր Իրաքի տնտեսական զարգացման և ազգային-ազատագրական շարժման տվյալ մակարդակին։

Այսպիսով, ագրարային հարաբերությունների հարցը, հողազուրկ գյուղացիներին հողակտորով ապահովելու և նրանց աղքատության ճիրաններից ազատելու հարցը այն մյուս կարևոր պրոբլեմն էր, որ կանգնած էր Իրաքի դեմոկրատական ուժերի առջև։ Ֆեոդալիզմի և նրա հետ կապված գյուղատնտեսության հետամնացության և գյուղացիության հողազրկության վերացումը Իրաքի ազգային-ազատագրական շարժման կարևոր շարժառիթներից մեկն էր։

* * *

Իրաքի հետամնաց գյուղատնտեսությունը և թույլ զարգացած արդյունաբերությունը չէին կարող փոքր ինչ բարձր կենսամակարդակ ապահովել աշխատավորների համար։ Իրաքում սոսկալի աղքատություն էր տիրում։ Ժողովրդական մասսաների եկամուտները խիստ ցածր էին, նրանք սնվում էին ու հագնվում վատ և գտնվում անտանելի բնակարանային ու սանիտարական պայմաններում։ Կյանքի արժեքն անընդհատ բարձրանում էր և նախապատերազմյան տարիների համեմատ այն թանկացել էր 5—6 անգամ։ Այդ բանը պարզ երևում է հետևյալ պաշտոնական աղյուսակից[2]։

[1] Տե՛ս „The Iraq Times", October 2, 1952.

[2] „Statistical Abstract" Baghdad, 1956, p. 158.



| Տարին | Սննդամթերք | Հագուստ | Վառելանյութ և էլեկտրաէներգիա | Բնակարանի վարձ | Այլ հոդվածներ | Ընդհանուր ինդեքսը |
|---|---|---|---|---|---|---|
| 1939 | 100 | 100 | 100 | 100 | 100 | 100 |
| 1945 | 655.4 | 790,8 | 456.0 | 333,0 | 449,5 | 590,3 |
| 1950 | 548.5 | 646.9 | 413.5 | 298,0 | 332,4 | 490,8 |
| 1955 | 572,9 | 512,7 | 402,1 | 300,0 | 336,6 | 494,7 |
| 1956 | 616.2 | 513,2 | 418,0 | 300,0 | 367,5 | 526,8 |

Ինչպես տեսնում ենք, ռևոլյուցիայից առաջ կյանքի արժեքը նախապատերազմյան 1939 թվականի համեմատությամբ բարձրացել էր 5 անգամից ավելի, իսկ սննդամթերքների գինը՝ 6 անգամից ավելի։

Բանվորների ու գյուղացիների եկամուտները չափազանց ցածր էին։ Նրանց վերաբերյալ չկան ամբողջական տվյալներ, սակայն եղածը հնարավորություն է տալիս մոտավոր պատկեր կազմելու մասին։

Մենք արդեն նշել ենք, որ արդյունաբերության մեջ զբաղված էր 90,291 մարդ։ Նրանց աշխատավարձի տարեկան ֆոնդը պաշտոնական տվյալներով կազմում էր 5 մլն 756 հազար դինար[1]։ Նշանակում է, յուրաքանչյուր բանվորի տարեկան աշխատավարձը կազմում էր մոտ 63 դինար, իսկ ամսականը՝ 5 դինարից կամ 14 դոլլարից մի քիչ ավելի։ Սա դեռ համեմատաբար բարձր թիվն է, որովհետև այս բանվորների մեծ մասը համարվում էր որակյալ, ուստի և ավելի բարձր էր վարձատրվում։ Որակավորում չունեցող բանվորների ամսական աշխատավարձը կազմում էր 3—4 դինար։

Էլ ավելի ցածր էին գյուղացիների եկամուտները։ Մինչև ռևոլյուցիան նրանց տարեկան միջին եկամուտը կազմում էր 20 դինար կամ 56 դոլլար[2]։ Սակայն այդ թիվը տիպիկ չէ Իրաքի բոլոր շրջանների գյուղացիների եկամուտների համար։ Իրաքի հյուսիսային շրջաններում այն կազմում էր 6-ից 10

[1] „Statistical Abstract", 1956, p. 117.

[2] „Middle Eastern Affairs", vol. 7, № 4, New York, 1956, p. 140.

դինար, իսկ հարավում կային շրջաններ, որտեղ գյուղացինե-
րը տարեկան ստանում էին 3 դինար, կամ 8,4 դոլլար[1]: Իրա-
քի գյուղում աղքատությունը զարհուրելի պատկեր էր ներկա-
յացնում: «Գյուղացիների ճնշող մեծամասնությունը,— գրում
է Ջ. Հայյաթը,— ապրում է կարիքի և զրկանքների մեջ, այն
ժամանակ, երբ ավագների և քաղաքի ազդեցիկ մարդկանցից,
առևտրականներից և նրանց նմաններից առաջացած նոր կալ-
վածատերերի դասակարգը հարստանում է ապրելով ճոխու-
թյան մեջ և անձնատուր լինելով վայելքներին...Իրաքի բնակ-
չության աղքատ գոյությունը ամենաահավոր և կորստյան
մատնող պժգախառնությունն է: Իր ողորմելի եկամտի 70% Իրա-
քի գյուղացին ծախսում է հացի վրա, սակայն դա էլ նրան
չի փրկում սովից: Մնացած 30% նա պետք է ծախսի հագուս-
տի, բնակարանի և մյուս կենսականորեն անհրաժեշտ կա-
րիքների վրա»[2]:

Աշխատավորների եկամուտների մասին պատկերացում
ունենալու համար դրանք համեմատենք գոյություն ունեցող
գների հետ: 1951 թվականին ցորենի տոնն արժեր 37 դի-
նար, մսի կիլոն 250 ֆիլս (1000 ֆիլսը=1 դինարի), կարագ-
յուղի կիլոն՝ 800—900 ֆիլս, ոսպի տոնը՝ 70 դինար, բրին-
ձի կիլոն՝ 66 ֆիլս, շաքարինը՝ 104 ֆիլս, արմավը՝ 42 ֆիլս,
պոպլինի մետրը՝ 350 ֆիլս[3]: Այս գները հիմնականում պահ-
պանվեցին մինչև ռևոլյուցիան: Լինում էին տարիներ, հատ-
կապես երաշտի և հեղեղումների ժամանակ, երբ մթերքների
գները խիստ բարձրանում էին: Այդպիսի դրություն ստեղծ-
վեց 1947—1948 թվականներին, երբ երաշտի հետևանքով
բերքը քիչ ստացվեց: Թվում էր, թե այդպիսի պայմաններում
կառավարությունը միջոցներ ձեռք կառներ դրությունը փրկե-
լու համար: Սակայն այդպես չեղավ: Հացահատիկի արտա-
հանմանյան մենաշնորհը պատկանում էր անգլիական ֆիր-
մաներին և նրանք, հաշվի չառնելով Իրաքի ժողովրդի ծանր
տնտեսական վիճակը, Իրաքի կառավարող կլիկի աջակցու-

[1] „ Middle Eastern Affairs“, Vol. 7, № 4, New York, 1956, p. 140.
[2] Дж. Хайят, Иракская деревня, М., 1953, стр. 54—55.
[3] Տե՛ս „The Iraq Times“, January 15, November 27, 1951, „Новое Время“, № 39, 1952, стр. 29.



թյամբ գաղտնի կերպով Իրաքից արտահանեցին 170 հազար
տոնն գարի: Ժողովրդից ծածուկ արտահանվեց նաև ցորեն[1]:
Փաստորեն երկրում սով սկսվեց: Հացահատիկի գինը բարձ-
րացավ ռեկորդային աստիճանի: Այսպես, ցորենի գինը բարձ-
րացավ տոնը 140 դինարի, իսկ գարու գինը 100 դինարի: Ի-
րաքի կառավարող կլիկը և բրիտանական իմպերիալիստները
դիմեցին այդ քայլին, չնայած գիտեին, որ 1947 թվականին ըս-
տացված բերքը կազմում էր նախորդ տարիներին ստացվածի
կեսը միայն, իսկ որոշ շրջաններում նույնիսկ 20 տոկոսը: Իմ-
պերիալիստների կողմից Իրաքի ժողովրդի այսպիսի բացարձակ
թալանի և աղքատության մատնելու դեպքերը եզակի չէին:
Բերենք մի օրինակ ևս: Արմավի արտահանումը լրիվ կերպով
գտնվում էր անգլիական «Անդրու Վեյր» ընկերության ձեռ-
քում: 1950 թվականին արմավի լավ բերք չէր սպասվում: Ի
նկատի ունենալով այդ հանգամանքը «Անդրու Վեյր» ընկերու-
թյունը վաղօրոք գնեց երկրում առկա արմավի բոլոր պաշար-
ները, որպեսզի իր արտահանման ծավալը չկրճատվի և չպա-
կասեն արմավի արտահանումից ստացվող շահույթները: Անգ-
լիական ընկերության այդ քայլի հետևանքով Իրաքում խիստ
պակասեց արմավի քանակը, որի հետևանքը եղավ նրա գնե-
րի բարձրացումը մոտ 30 տոկոսով[2]: Իսկ դա չափազանց ծա-
նըր անդրադարձավ աշխատավորի բյուջեի վրա, որովհետև
արմավը նրա հիմնական և ամենօրյա սննդի տարրերից
մեկն էր:

Իրաքի բնակչության 70 տոկոսը սիստեմատիկ կերպով
թերսնվում էր[3]: Իրաքում լինում էին քաղցից մահանալու
դեպքեր: «Ալ-Շաաբ» թերթը 1951 թվականին հաղորդում
տալով այն մասին, որ քաղցից մարդ է մահացել, նկատում
է, որ «դա ոչ առաջինն է և ոչ էլ վերջինը կլինի, քանի դեռ այս
ազգի մասսաները տարիներ ի վեր կշարունակեն աշխատել,
որպեսզի մի բուռն մարդկանց համար ապահովեն «երազային
աշխարհիկ կյանք»[4]:

[1] ЦГАОР, ф. 4459, оп. 2, ед. хр. 1079, л. 23.
[2] БИКИ, № 41, 1951, стр. 4.
[3] ЦГАОР, ф. 4459, оп. 24, ед. хр. 751, л. 211.
[4] Տե՛ս „The Iraq Times“, February 26, 1951.

1952 թվականին Իրաք այցելեց Միավորված ազգերի կազմակերպության պարենային և գյուղացիության կազմակերպության մասնագետը, որն ուսումնասիրեց Իրաքի ազգաբնակչության կյանքի պայմանները և նման վիճակը։ Իր ներկայացրած զեկուցագրում նա ստիպված եղավ հավաստել, որ «Թերսնումը համընդհանուր է»։ Բացի վերին դասակարգերից, որոնք տառապում են գերսնվելուց, բնակչության 75—80 տոկոսը չի ստանում կարգին և բավարար սնունդ։ Երեխաների մեծ մասը թե հասակի և թե քաշի տեսակետից թերզարգացած է»[1]։ Կյանքի թանկության և եկամուտների ցածր լինելու հետևանքով Իրաքի աշխատավորները չէին ստանում իրենց օրգանիզմի համար անհրաժեշտ կալորիա։ Իրաքում յուրաքանչյուր շնչին ընկնող օրական միջին կալորիան 1930 էր։ Մինչդեռ ԱՄՆ-ում, որն ուներ անհամեմատ բարձր մեքենայացում, առողջական լավ վիճակ պահպանելու համար բանվորներին խորհուրդ էր տրվում ընդունել 2400 կալորիա՝ կանանց համար և 4500 կալորիա՝ տղամարդկանց համար[2]։ Ինչպես տեսնում ենք, Իրաքում աշխատավորի կողմից ընդունվող կալորիայի քանակը մոտ 2,5 անգամ պակաս էր այն նորմայից, որ խորհուրդ էր տրվում բարձր մեքենայացում ունեցող Ամերիկայի բանվորի համար։ Պետք է ի նկատի ունենալ մի այլ հանգամանք ևս։ Իրաքում սպառվող կալորիայի այդ քանակը համարվում է միջին։ Բնակչության բարձր սպառողություն ունեցող մասը հանելուց հետո, իրականում աշխատավորների ստացած կալորիան անհամեմատ ավելի ցածր էր։

Հայտնի է, որ միջին թվերը, անշուշտ, անհրաժեշտ են արտագրության, սպառման և առհասարակ զարգացման ընդհանուր մակարդակի մասին պատկերացում կազմելու համար։ Սակայն մնալ միջին թվերի սահմաններում և չփորձել փակագծերը բացել, նշանակում է հարցը լուսաբանել միակողմանիորեն և թերի։ Այդպես է վարվում Իրաքի Տնտեսության մինիստրության վիճակագրության էքսպերտ դ-ր Կ. Ֆեննելոնը։

1 D. Adams... p. 76.

2 Նույն տեղում։



նա Իրաքի 1957 թվականի ազգային եկամուտը՝ 292 մլն 400 հազար դինար՝ բաժանելով բնակչության թվի վրա՝ մոտ 6 մլն, նշում է, որ Իրաքում յուրաքանչյուր շնչի եկամուտը կազմում էր 49 դինար կամ 136 դոլլար։ Հարցի այդպիսի դրվածքի դեպքում անհնար է պարզել, թե հասարակական-դասակարգային խմբերը ազգային եկամուտը ինչ համամասնությամբ են սպառել, թե որ դասակարգին նրա որ մասն է բաժին ընկել, իսկ ճնշված և շահագործվող դասակարգին, որ մասը։ Մենք վերևում նշել ենք, որ գյուղացու եկամուտը կազմում էր 20 դինար։ Հետևաբար այդ թիվն արդեն 2,5 անգամ փոքր է Կ. Ֆեննելոնի ցույց տված միջին թվից։ Հասկանալի է, որ էլ ավելի ցածր էին որակավորում չունեցող բանվորների եկամուտները։

Սակայն անհամեմատ բարձր էին ֆեոդալ-շեյխերի, բուրժուազիայի, առևտրականների և բարձր աստիճանավորների եկամուտները։ Բաղդադի բժշկական կոլեջի պրոֆեսոր Մայքլ Քրիտչլիի հաշվումներով Բաղդադի հարուստների շաբաթական ծախսումները միայն սննդի վրա կազմել են 3461 ֆիլս կամ 10 դոլլար, որը նրանց ընդհանուր բյուջեի միայն 18 տոկոսն էր կազմում, իսկ աղքատները իրենց սննդի վրա շաբաթական ծախսում էին 277 ֆիլս կամ 77 ցենտ, որը կազմում էր նրանց բյուջեի 57 տոկոսը[1]։ Այդ թվերի համեմատությունից պարզ է դառնում, որ հարուստները իրենց սննդի վրա ծախսում էին 13 անգամ ավելի, քան աղքատները։ Այդ հաշվումներից երևում է, որ Բաղդադի հարուստների տարեկան եկամուտը կազմել է մոտ 2650 դոլլար, իսկ աղքատներինը՝ մոտ 100 դոլլար։ Սակայն այդ թվից երևում է նաև որ դրանք ոչ թե հարուստներ են, ինչպես նշում է Մ. Քրիտչլին, այլ միջին ունևորներ, որովհետև հարուստների եկամուտները հասնում էին մի քանի տասնյակ, նույնիսկ հարյուր հազար դինարի։ Օրինակ, բազմաթիվ խոշոր հողատերեր կային, որոնց տարեկան եկամուտն անցնում էր 300—350 հազար դինարից կամ 840—940 հազար դոլլարից[2]։

1 Տե՛ս „Революция в Ираке", стр. 11.

2 „Международная жизнь", № 1, М., 1959, стр. 125.

Մի շարք տնտեսագետների հաշվումներով կին և երկու երեխա ունեցող բանվորը յուրաքանչյուր ամիս պետք է ստանար մինիմում 10 դինար կամ 28 դոլլար, որպեսզի կարողանար իր ընտանիքի սոսկ գոյությունը պահպանել, իսկ 4 և 5 հոգուց բաղկացած ընտանիքի համար անհրաժեշտ էր 12-ից 15 դինար[1]։ Դա նշանակում էր աշխատավորների եկամուտները ավելացնել 3-ից 8 անգամ, որը թագավորական Իրաքում գոյություն ունեցող տնտեսական և քաղաքական հարաբերությունների պայմաններում անհնար էր։

Իրաքի աշխատավորության համար մեծ չարիք էր մշտական գործազրկությունը։ «Գործազրկությունը,— նշում էր «Ալ-Իգդամ» թերթը,— ինքնին ազգային պրոբլեմ է»[2]։ Դա իրոք, որ ազգային մեծ ու լուրջ պրոբլեմ էր Իրաքի համար, քանի որ նրանից տառապում էին և բանվորները, և գյուղացիները և ծառայողները։ Գործազրկության հիմնական պատճառը Իրաքի տնտեսաձևն էր։ Բացի այդ, օտարերկրյա կապիտալը խեղդել էր երկրի էկոնոմիկան և հնարավորություն չէր տալիս ազգային արդյունաբերության զարգացմանը։ Երկրի էկոնոմիկան գտնվում էր լճացման վիճակում։ «Լիվա-ալ-իսթիքլյալ» թերթն իրավացիորեն հարց էր տալիս, թե ո՞ւր են այն նախագծերը և գործարանները, որ խոստացել էր կառավարությունը, ի՞նչ պատահեց նրանց հետ։ Եվ նա ճիշտ պատասխանում էր, որ բավական է նայել հազարավոր գործազուրկների, որպեսզի համոզվել, որ Իրաքի տնտեսական զարգացումը և առաջխաղացումը տեղի է ունենում միայն թղթի վրա։

Գործազրկության վերաբերյալ ճշգրիտ տվյալներ չկան։ Կառավարական օրգանները հասկանալի պատճառներով լռում էին այդ մասին։ Սակայն որոշ աղբյուրներ արժեքավոր տվյալներ են պարունակում գործազուրկների թվի վերաբերյալ։ Բեյրութում լույս տեսնող առաջադիմական «Արարատ» թերթը նշում էր, որ 1949 թվականին Իրաքում կար ավելի քան 20,000 գործազուրկ։

[1] „Economic and commercial conditions in Iraq", London, 1953, p. 26. և „Middle Eastern Affairs", vol. 7, № 4, New York, 1956, p. 142.

[2] Տե՛ս „The Iraq Times", December 12, 1951.



«Հակառակ իր ունեցած հարուստ հանքերուն,— գրում էր թերթը,— Իրաքի տնտեսությունը քայքայված է և 4 միլիոն մարդ կատարյալ թշվառության, տրված ըլլալով, որ անգլիացիները կշահագործեն երկրի հարստությունները։ Բնակչության աղետալի վիճակը ալ ավելի ծանրացած է կառավարության կողմե դրված տուրքերով։ Ավելի քան 20000 բանվորներ այժմ անգործ են»[1]։

Այս թիվը, որը չպակասեց մինչև ռևոլյուցիան, փոքր չէ Իրաքի նման մի երկրի համար, որի արդյունաբերության և տրանսպորտի մեջ զբաղված էր ընդամենը 185 հազար մարդ։ Գործազրկությունը (լրիվ, մասնակի և սեզոնային) մեծ չափերի էր հասնում գյուղատնտեսության մեջ։ Հողատիրության ֆեոդալական-կալվածատիրական սիստեմը, մշակելի հողի հիմնական մասի կենտրոնացումը խոշոր հողատերերի ձեռքում և խոշոր լատիֆունդիաների առկայությունը գյուղացիության զգալի մասին դատապարտում էր գործազրկության։ Նախառևոլյուցիոն Իրաքի գյուղական բնակչության մոտ 40 տոկոսը գործազուրկ էր[2]։

Գործազրկությունը ընդգրկել էր նաև ավարտած ուսանողությանը։ Ուսանողները, ինչպես նշում է ժամանակի մամուլը, բոլորովին հույս չունեին ավարտելուց հետո աշխատանք գտնել։ Եվ այդ հարցը տարեցտարի սուր բնույթ էր ընդունում։ Բացի երկրի տնտեսության հետամնացությունից, այս խնդրի լուծմանը խանգարում էր նաև օտարերկրյա իմպերիալիզմը։ Նրանք չէին ուզում, որ Իրաքի ազգային կադրերը աշխատանքի պրոցեսում փորձ ու ունակություն ձեռք բերեն և փոխարինեն օտարերկրյա մասնագետներին։ Քննարկելով այդ հարցը «Ալ-Իգդամ»-ն նշում է, որ «իմպերիալիզմը միշտ էլ փորձել է կասեցնել ամեն մի կոնստրուկտիվ շարժում երկրում՝ թույլ չտալով իրաքցի մասնագետներին և կրթված մարդկանց աշխատելու ըստ իրենց մասնագիտության»[3]։

Գործազրկությունը և կյանքի ծանր պայմանները հարկա-

[1] «Արարատ», Բեյրութ, 1949, 27 մարտի

[2] „The Iraqi Revolution", Baghdad, 1958, p. 20.

[3] Տե՛ս „The Iraq Times" December 12, 1951.

գրում էին աշխատավորների մի մասին իրենց հայացքը հառել ուրիշ շրջանների վրա։ Բազմաթիվ բանվորներ և գյուղացիներ մեկնում էին արտասահման, հատկապես Քուվեյթ և վարձվում նավթահանքերում որպես սևագործ բանվորներ։ Արտասահման մեկնում էին ոչ միայն գործազուրկները, այլև աշխատանք ունեցողները։ Այսպես, օրինակ, Իրաքի տեքստիլ արդյունաբերության աշխատողների մոտ 20 տոկոսը մեկնեց Քուվեյթ և Պարսից ծոցի այլ վայրերը[1]։

Հատկապես մեծ չափեր ընդունեց ներքին միգրացիան։ Գյուղացիները լքում էին գյուղը և փախչում քաղաք, հույս ունենալով այնտեղ գտնել կյանքի ավելի լավ պայմաններ։ Այդ շարժումը ուժեղացավ ռևոլյուցիային նախորդող տարիներին։ Գյուղացիները գլխավորապես գալիս էին Բաղդադ, ինչպես նաև Բասրա, Մոսուլ և Կիրկուկ քաղաքները։ Բաղդադի ազգաբնակչության 22 տոկոսը, իսկ Բասրայի ազգաբնակչության 17 տոկոսը գյուղական վայրերից եկածներն էին։ Գյուղացիները գլխավորապես փախչում էին Ամարա, Կութ և Դիվանիա լիվաներից, որտեղ առանձնապես ուժեղ էր ֆեոդալական շահագործումը։ Ամարայի լիվայի ազգաբնակչության 26 տոկոսը 1947—1957 թվականներին հեռացել էր լիվայից։ Դա մի ավելորդ անգամ ապացուցում է թե ինչպիսի ծանր պայմաններում էր գտնվում Իրաքի էկոնոմիկան և հատկապես գյուղատնտեսությունը, որը չէր կարողանում անհրաժեշտ աշխատանքով և մի կտոր հացով ապահովել աշխատավորներին։

Չպետք է կարծել, թե քաղաքում բնակություն հաստատած գյուղացիները ավելի լավ պայմաններում էին գտնվում։ Նրանք շատ շուտով համոզվում էին, որ քաղաքում ապրելը նույնպես շատ դժվար է։ Դ. Ուորիները, որը 1955 թվականին այցելել էր Իրաք, հետևյալ կերպ է նկարագրում նրանց կյանքի պայմանները։ Քաղաքների մերձակայքում, գրում է նա, առաջանում են մղձավանջային հետնախորշեր, որոնք իրենցից խղճուկ լաբիրինթոս են ներկայացնում։ Այդպիսի

[1] Middle East Economic Papers, Beirut. 1954, p. 49.



մի հետնախորշ էր առաջացել Շեյխ-Օմարում, որտեղ կավե հյուղակներում տեղավորվել էր մոտ 40 հազար մարդ։ Նրանց մոտ տարածված են բազմաթիվ հիվանդություններ, հատկապես տրախոման և դիզենտերիան։ Այդ հետնախորշերում չկա սոցիալական ծառայություններից ոչ մի տեսակ։ Նրա բնակիչները օրական վաստակում են 100 ֆիլս։ Նրանք հավաքում են զանազան կերակուրների մնացորդներ և վաճառում որպես պարարտանյութ։ Փոքրիկ երեխաները ամբողջ օրը քրքրում են աղբարկղները։ Ուստի պատահական չէ, որ այստեղ երեխաների մեծ մասը մահանում է երկու տարեկան հասակում[1]։ Մոտավորապես նույն պատկերն էին ներկայացնում նաև մյուս հետնախորշերը։ Այսպիսի ահավոր աղքատությունը մի իսկական ողբերգություն էր այդ երկրի համար, որը ուներ հսկայական արգավանդ հողային տարածություններ։ Իրաքի հողի և բնական հարստությունների ճիշտ օգտագործման դեպքում հնարավոր էր բավարար չափով կերակրել մի քանի անգամ ավելի բնակչություն, քան թե կար երկրում։ Դրա համար անհրաժեշտ էին այլ սոցիալ-տնտեսական հարաբերություններ։

Աշխատավորների վիճակը ծանրանում էր նաև նրանով, որ երկրում չկար աշխատանքային այնպիսի օրենսդրություն, որը պաշտպաներ նրանց շահերը։ Իրաքում գործում էր 1936 թվականին ընդունված № 72 աշխատանքային օրենքը, որն այնուհետև լրացվեց 1942 թվականի № 36 օրենքով։ Այդ օրենքը հրապարակվեց 1936 թվականին Իրաքում տեղի ունեցած պետական հեղաշրջումից հետո, որի հետևանքով տապալվեց Հաշիմի կառավարությունը և իշխանության գլուխ եկավ Հիքմեթ Սուլեյմանը։ Վերջինս դեմոկրատական մի շարք բարեփոխումներ մտցնելու խոստումներ տվեց։ Հիքմեթ Սուլեյմանի կառավարությունը բանվորական մի շարք գործադուլների ճնշման տակ հարկադրված եղավ ընդունել վերոհիշյալ օրենքը։ Այդ օրենքը սահմանում էր շաբաթական 6 աշխատանքային օր։ Սակայն աշխատանքային օրվա տևողությունը չէր նշվում, այն թողնվում էր կառավարության հայեցողությանը և

[1] Տե՛ս Д. Уоринер... стр. 269.

նրան իրավունք էր վերապահվում աշխատանքային օրը սահմանել այնպես, ինչպես ինքը նպատակահարմար կգտնի։ Համենայն դեպս, նախառևոլյուցիոն Իրաքում շատ արդյունաբերական ձեռնարկությունների բանվորական օրը հասնում էր 12—14 ժամի։ 1936 թվականի օրենքը սահմանում էր տարեկան 10 օր վճարովի արձակուրդ։ Բանվորներին վճարելու էին նաև հիվանդության (երկու շաբաթվա աշխատավարձ) և արտադրության մեջ վնասվածքներ ստանալու դեպքում։ Սահմանափակվում էր երեխաների աշխատուժի օգտագործումը։ 12—15 տարեկան հասակի երեխաներին չէր թույլատրվում աշխատանքի ընդունել։ Սակայն այդ օրենքում այս հարցի վերաբերյալ կար մի կետ, որը փաստորեն ի չիք էր դարձնում երեխաների աշխատանքի օգտագործման վերաբերյալ սահմանափակումը։ Նա նշում էր, որ երեխաներին կարելի էր աշխատեցնել օրական 4—5 ժամ, այսպես կոչված, այն տեխնիկական դպրոցներում և ձեռնարկություններում, որոնք տալիս են «մասնագիտական հմտություններ»։ Դա փաստորեն մի ստղանք էր, որ ձեռնարկատերերին հնարավորություն էր տալիս լայնորեն օգտագործել երեխաների աշխատանքը, որը մեծահասակների աշխատանքի հետ համեմատած ավելի ցածր էր վարձատրվում։

1936 թվականի օրենքը սահմանափակում էր գիշերային աշխատանքները, սակայն 1942 թվականի օրենքով այն նորից ընդլայնվեց։ 1942 թվականի լրացուցիչ օրենքի նորամուծություններից մեկն էլ այն էր, որ բանվորների և ձեռնարկատերերի միջև ծագող կոնֆլիկտը լուծելու համար թույլ էր տրվում ստեղծել բանվորներից և պետական ասդիճանավորներից կազմված խառը հանձնաժողով։ Թույլատրվում էր ստեղծել նաև արհմիություններ, սակայն նրանք պետք է լինեին չեզոք և քաղաքականությամբ չզբաղվեին[1]։

Թե՛ 1936 թվականի և թե՛ 1942 թվականի Աշխատանքային օրենքները ունեին մեծ թերություններ։ Աշխատանքային շաբաթի, վճարովի արձակուրդի, հիվանդանալու դեպքում փոխհատուցում ստանալը և այլ հոդվածներ տարածվում էին

[1] „Economic and commercial conditions in Iraq", London, 1953, p. 27.



միայն այն արդյունաբերական ձեռնարկությունների վրա, որտեղ աշխատում էին ոչ պակաս քան 10 բանվոր։ Մենք արդեն վերևում նշել ենք, որ Իրաքում մինչև ռևոլյուցիան եղած արդյունաբերական ձեռնարկությունների թիվը հասնում էր 22460։ Դրանից 21733 արդյունաբերական ձեռնարկություններում աշխատում էին 10 բանվորից պակաս։ Հետևաբար, Իրաքի արդյունաբերական ձեռնարկությունների ճնշող մասը դուրս էր մնում այդ օրենքի գործունեության շրջանակներից։ Նա տարածվում էր միայն 727 ձեռնարկությունների վրա։ Բայց արդյո՞ք այդ ձեռնարկություններում Աշխատանքային օրենքը կիրառվում էր և բանվորների իրավունքները թեկուզ այդ թերի օրենքների սահմաններում պաշտպանվում էին։ 1949—1950 թվականներին կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Աշխատանքային օրենքը այս կամ այն չափով կիրառվել է միայն 136 ձեռնարկություններում։ Սակայն հետագա տարիներին, ռեակցիայի ուժեղացմանը զուգընթաց, այդ թիվն էլ ավելի է պակասել։ Դրա մասին են վկայում բանվորական մի շարք գործադուլները, որի ժամանակ առաջադրվող պահանջների մեջ կարևոր տեղ էր գրավում 1936 թվականի Աշխատանքային օրենքի կիրառումը։ Ինչպես նշում է Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միսիան, այդ օրենքը Իրաքում նշանակալից հաջողություն չունեցավ։

Աշխատանքային օրենքի մյուս կարևոր թերությունն այն էր, որ նա տարածվում էր միայն արդյունաբերական բանվորների վրա։ Իսկ բոլոր շինարարական բանվորները, ողջ աշխատավոր գյուղացիությունը ինչպես նաև հյուրանոցների, ճաշարանների, սրճարանների աշխատողները դուրս էին մնում նրա գործունեության շրջանակներից։ Այդ օրենքից դուրս էին մնում նաև օտարերկրյա ընկերություններում (նավթային) զբաղված բանվորները։ Վերջիններս ենթարկվում էին տվյալ ընկերության վարչության կողմից սահմանված օրենքներին։

Իրաքում գոյություն ուներ պետական կամ կառավարական բանվորների խումբ, որոնք ոչ թե մասնավոր և օտարերկրյա ձեռնարկություններում չէին աշխատում, այլ կառավարությու-

նք նրանց օգտագործում էր ցածր վարձատրվող աշխատանք-ներում։ 1936 թվականի օրենքի 1 հոդվածը նրանց նույնպի-սի իրավունքներ էր վերապահում, ինչպես արդյունաբերա-կան բանվորներին։ Սակայն կառավարությունը նրանց համա-րում էր որպես անցողային՝ մի ամբոխ, մեկ շաբաթվա և նույնիսկ միօրյա աշխատողներ և այդ հիման վրա նրանց «բանվոր» կատեգորիայից դուրս էր հանում[1]։ Եվ քանի որ նրանք բանվորներ չէին համարվում, ուստի և չէին օգտվում թեկուզ այն կիսատ-պռատ, խիստ սահմանափակ իրավունք-ներից, որ տալիս էր 1936 թվականի Աշխատանքային օրենքը։

Իրաքի աշխատավորները ոչ միայն ցածր էին վարձատրը-վում, այլ նաև երաշխիք չունեին, թե կարող են պահպանել իրենց այդ աշխատանքը և փողոց չեն շպրտվի։ Աշխատան-քային օրենքը Իրաքի բանվորներին այդ հարցում ոչ մի երաշ-խիք չէր տալիս։ Նա չէր պաշտպանում բանվորների իրա-վունքները։

Բանվորների իրավունքների ոտնահարումը և այսպիսի սահմանափակ օրենքի ընդունումը պատահականություն չէր։ Իրաքի տիրապետող կլիկին, շեյխ-ֆեոդալներին, բուրժուա-զիայի ներկայացուցիչներին, ինչպես նաև օտարերկրյա իմ-պերիալիստներին ձեռնտու չէր աշխատավորների իրավունք-ների որևէ ընդլայնում, ընդհակառակը, նրանք աշխատում էին ամեն կերպ բռնության ու ճնշման տակ պահել աշխատա-վորական մասսաներին։

Իրաքում փաստորեն չկար սոցիալական ապահովագրու-թյան սիստեմ։ Քաղաքացիների շատ աննշան մասն էր, որ հիվանդության և ծերության դեպքում ստանում էր կենսաթո-շակ։ Սակայն դրանք գլխավորապես պետական պաշտոնյա-ներ ու պաշտոնաթող զինվորականներ էին։ Ռևոլյուցիայից առաջ, 1955—1956 թվականներին, ինչպես ցույց են տալիս պաշտոնական վիճակագրական տվյալները, Իրաքում եղել են 9151 քաղաքացիական և 11,490 զինվորական կենսաթոշա-կառու[2]։ Բացի այդ կային նաև, այսպես կոչված, արտակարգ

[1] **Mahmud al-Habib**, The Labour Movement in Iraq. „Middle Eastern Affairs", vol. 7, № 4, New York, 1956.

[2] „Statistical Abstract", Baghdad, 1956, p. 138.



կենսաթոշակներ, որ դարձյալ տրվում էին պետական ու զին-վորական պաշտոնյաներին։ Իսկ աշխատավորական լայն մասսաները, և հատկապես բանվորներն ու գյուղացիները, հի-վանդության և ծերության դեպքում ոչ մի օգնություն չէին ստանում պետությունից։ Ջ. Հայյաթը իր «Իրաքի գյուղը» գրքում անդրադառնալով այդ հարցին վերին աստիճանի հե-տաքրքիր տեղեկություններ է հաղորդում։ Նա գրում է. «Ա-ռանձնապես ծանր պայմաններում են գտնվում զառամյալ-ները, գործազուրկները և հիվանդները, հատկապես կանայք։ Եթե չլիներ այդ մարդկանց կապը ընտանիքի հետ և ընտա-նիքի հոգատարությունը նրանց նկատմամբ, ինչպես որ դա ընդունված է Իրաքում, նրանք քաղցից կկոտորվեին։ Սակայն այժմ, ինչպես դա երևում է մի շարք նահանգներում տիրող դրությունից, ընտանիքի հետ այդ կապերը ևս քայքայվում են։ Գործազուրկներին և հիվանդներին պահելու անհրաժեշ-տությունը ծանր բեռի նման ընկած է ընտանիքի ուսերի վրա, իջեցնում է նրա առանց այն էլ ցածր կենսամակարդակը»[1]։

Աշխատանքային սահմանափակ օրենքը և սոցիալական ապահովագրության բացակայությունը ձեռնարկատերերին մեծ ազատություն էր ընձեռում և նրանց դարձնում ավելի անձնարձակ։ Գիտենալով, որ ոչ մի օրենք չի պաշտպանում բանվորին և աշխատանքից զրկվելու դեպքում նա չի ստանա-լու ոչ մի նպաստ և դատապարտված է քաղցի, ձեռնարկատե-րերը ավելի էին ուժեղացնում շահագործումը և բանվորին զրկում նույնիսկ Աշխատանքային օրենքով տրված տարրական իրավունքներից։ «Այս պայմանները,—գրում էր «Սաութ-ալ-Ահալի»-ն,— ֆաբրիկանտները օգտագործում են ամենամեծ չափով։ Նրանք զրկում են բանվորներին իրենց հանգստյան իրա-վունքներից, ինչպես, օրինակ, կարգավորված բանվորական օրվանից և տոն օրերից»[2]։ Սոցիալական ապահովագրության սիստեմի բացակայությունը, զառամյալների ու հիվանդների անօգնական վիճակը խորը տագնապ էր առաջացնում Իրաքի առաջավոր հասարակայնության մոտ։ Դեմոկրատական ուժե-

[1] Дж. Хайят... стр. 55.

[2] Տե՛ս „The Iraq Times", July 26, 1951.

րը պահանջում էին երկրում մտցնել սոցիալական ապահովագրության սիստեմ։ Նրանք կարծում էին, որ դա կլուծի աղքատության հարցը, ինչպես նաև դժբախտ պատահարների և ծերության դեպքում օգնություն ստանալու խնդիրը։ Այդ տեսակետին էր, օրինակ, Ազգային-դեմոկրատական պարտիան։

1958 թվականի բյուջեում սոցիալական ծառայությունների գծով հատկացումները եղել են 343 հազար 240 դինար, իսկ բանտերինը՝ 479 հազար 730 դինար[1]։ Դրանից պարզ երևում է, թե հին ռեժիմը նախապատվությունը ինչին էր տալիս։

Այժմ կանգ առնենք Իրաքի կառավարության հարկային քաղաքականության վրա։ Հարկերն իրենց ողջ ծանրությամբ ընկած էին աշխատավորների՝ բանվորների, գյուղացիների և ծառայողների ուսերին։ Հարկի հիմնական ձևը անուղղակի հարկն էր։ Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի տվյալներով Իրաքում անուղղակի հարկերը կազմում էին ողջ հարկերի 82 տոկոսը և բյուջետային եկամուտների 71,5 տոկոսը, մինչդեռ ուղղակի հարկերը կազմել են միայն ընդհանուր հարկերի մոտ 18 տոկոսը և բյուջետային եկամուտների 13 տոկոսը[2]։

Անուղղակի հարկերի մեջ գլխավորը, այսպես կոչված, սպառողական՝ իսթիհլաք հարկն էր, որը Իրաքում մտցվել էր 1931 թվականից։ Նա չէր տարածվում հողերի և եկամուտների վրա, այլ գանձվում էր այն մթերքներից, որոնք շուկա էին բերվում վաճառելու համար։ Հողը և արդյունաբերողների սեփականությունը չէր հարկվում։ Նրանք պետական գանձարկղը ոչ մի ֆիլս չէին մուծում։ Եթե այդ հարկը դրվեր հողից և անասուններից ստացվող բոլոր մթերքների վրա, այդ դեպքում հողատերերը ստիպված կլինեին վճարվող հարկերի մեծ մասը իրենց վրա վերցնել, քանի որ նրանց ձեռքում էր կենտրոնացած հողերի հիմնական և անասունների գլխաքանակի մեծ մասը։

[1] „The Iraqi Revolution", Baghdad, 1958, p. 118.

[2] „The Economic Development of Iraq. Report of a Mission organized by the International Bank of Reconstruction and Development", Washington, 1952, p. 95.



Բացի այդ, իսթիհլաքը տարածվում էր միայն սննդամթերքների վրա, իսկ պերճանքի և այլ ապրանքների վրա նա չէր տարածվում։ Աշխատավորական մասսաների համար այդ ապրանքները որպես կանոն անմատչելի էին, դրանից օգտվում էին միայն հարուստները։

Իրաքի ռեսպուբլիկայի ֆինանսների մինիստրը իր բացատրական մի հուշագրում նշում է. «Չնայած որ Իրաքի արդյունաբերությունը կախված է նախ և առաջ նավթից և գյուղատնտեսությունից, որոնք միասին տալիս են ազգային եկամտի կեսից ավելին, գյուղատնտեսությունը տալիս է ազգային եկամտից կառավարական ծախսերի մոտավորապես 0,8 տոկոսը, որը հավասար է գյուղատնտեսական եկամտի 4 տոկոսին։ Դրա պատճառն այն է, որ հողը և գյուղատնտեսական ապրանքները համապատասխան հարկման օբյեկտներ չեն հանդիսանում»[1]։

Բացի իսթիհլաք հարկից Իրաքում կար նաև եկամտահարկ, որը նույնպես ամբողջ ծանրությամբ ընկած էր աշխատավորների և մանր արտադրողների ուսերին։ Եկամտահարկ տալիս էին բոլոր նրանք, ովքեր աշխատավարձ էին ստանում, ինչպես նաև առևտրականները։ Նա չէր տարածվում ո՛չ հողի և ո՛չ էլ քաղաքի արդյունաբերողների սեփականության վրա[2]։ Բոլոր ազդեցիկ և իշխանություն ունեցող մարդիկ ազատված էին եկամտահարկից։ «Եկամտահարկը,— գրում էր «Ալ-Զարհա ալ-Ճադիդա» թերթը,— գանձվում է գլխավորապես առևտրականներից և վարձու աշխատողներից (բանվորներից և ծառայողներից — Ն. Հ.), մինչդեռ բարձր եկամուտներ ունեցող մարդիկ ազատված էին այն պատճառով, որ նրանք պաշտպանում են կառավարող կլիկը կամ, որովհետև հաճախ հենց իրենք են հանդիսանում կառավարող դասակարգը»[3]։

Աշխատավորներից գանձվող եկամտահարկը տարեցտարի ավելանում էր և էլ ավելի վատացնում բանվորների և ծառայողների տնտեսական վիճակը։ Այսպես, եկամտահարկ

[1] „The Iraqi Revolution", Baghdad, 1958, p. 63.

[2] „Report of a mission organized by the International Bank of Reconstruction and Development", Washington, 1952, p. 95.

[3] Տե՛ս „The Iraq Times", January 4, 1952.

գանձվել է 1939 թվականին 0,45 մլն դինար, 1955 թվականին՝ 2,55 մլն դինար, իսկ 1958 թվականին՝ 4,31 մլն դինար[1]։ Ինֆլյացիայից առաջ հաշվարկված եկամտահարկը մոտ 10 անգամ գերազանցում էր նախապատերազմյան 1939 թվականի մակարդակը։

Հարկային սիստեմի մեջ ցայտուն կերպով երևում է հին ռեժիմի հակաժողովրդական քաղաքականության ողջ էությունը։

* * *

Իրաքում չափազանց վատ էր առողջապահության դրվածքը։ Երկրում քիչ էին բժիշկների և բուժհիմնարկների թիվը, շատ էին տարածված զանազան հիվանդությունները, բարձր էր մահացության տոկոսը, կարճ էր կյանքի միջին տևողությունը։

1956 թվականի տվյալներով ամբողջ երկրում կար 1126 բժիշկ, 89 ատամնաբույժ, 726 մանկաբարձուհի և 329 դեղագործ[2], այն դեպքում, երբ բնակչության թիվը հասնում էր 6,5 միլիոնի։ Ստացվում է, որ 5773 հոգուն ընկնում էր մեկ բժիշկ։ Բժիշկների վերը նշված թվի կեսից ավելին, մոտ 65 տոկոսը գտնվում էր Բաղդադում, մի զգալի մասը մյուս քաղաքներում և շատ աննշան մասը լիվաներում և գյուղական վայրերում։ Օրինակ, Սամարայում և Թիքրիթում կային միայն 4 բժիշկ, Ամարայում 20000 բնակչին ընկնում էր մեկ բժիշկ, Մունթաֆիքում՝ 26000-ին՝ մեկ բժիշկ, Դիվանիյայում՝ 27000-ին՝ մեկ բժիշկ։ Կային շրջաններ, որտեղ 36 հազար բնակչին ընկնում էր մեկ բժիշկ, 30 հազար հոգուն մեկ հիվանդանոցային մահճակալ և 76 հազարին մեկ դեղատուն[3]։ Գյուղական վայրերի ճնշող մասում չկար առողջապահական որևէ սպասարկում։

Առողջապահական վատ դրվածքի և սանիտարական անտանելի պայմանների հետևանքով Իրաքի բնակչության զգալի մասը տառապում էր զանազան ծանր հիվանդություններով՝ թոքախտ, տրախոմա, դիզենտերիա, մալարիա, բիլհարցիոզ, զանազան մանկական հիվանդություններ, որովայնային տիֆ և այլն։ 1957 թվականին Իրաքում կար թոքախտով հիվանդ՝ 500 հազար, տրախոմայով՝ 405 հազար, մալարիայով 320 հազար մարդ և այլն[1]։ Յուրաքանչյուր տարի մալարիայից մահանում էր 50 հազար մարդ։ ՄԱԿ-ի Առողջապահական կազմակերպության տվյալներով Իրաքում բնակչության 100 հազար հոգուն ընկնում էր 200 հոգի թոքախտից մահացած, մինչդեռ Դանիայում այն հասնում էր 10-ի, այսինքն 20 անգամ պակաս։ Գուզայլայի բնակչության 80 տոկոսը տառապում էր տրախոմայից։ Բացի այս հիվանդություններից, Իրաքում արձանագրվել են նաև խոլերայի և չումայի դեպքեր։ 1947 թվականին խոլերայով հիվանդանալու դեպք արձանագրվեց Բասրայում։ «Արարատ» թերթը «խոլերայի դեպք Իրաքի մեջ» հոդվածում գրում էր. «Իրաքի առողջապահական իշխանությունները քոլերային վարակումի դեպք մը արձանագրած են Պասրայի մեջ»[2]։ Իսկ Ամարայում 1954 թվականին տեղի ունեցավ չումայի էպիդեմիա։

Իրաքում բարձր էր մահացության տոկոսը՝ հատկապես երեխաների։ ՄԱԿ-ի պարենային և գյուղատնտեսական կազմակերպության աշխատակից պրոֆ. Դունելի վկայությամբ Իրաքի բնակչության 80 տոկոսի օրգանիզմը հյուծված էր, թեև Բեյրութում լույս տեսած «Ինդուստրիան Իրաքում» գրքույկի հեղինակները գտնում են, որ այդ թիվը պակասեցված է։ Եթե դրան ավելացնենք նաև առողջապահական վատ դրվածքը, ապա հասկանալի կդառնա, թե ինչու մահացության աստիճանը այդքան բարձր էր Իրաքում։ Այն հասնում էր 1000-ին 30-ի, մինչդեռ եվրոպական և հյուսիս-ամերիկյան երկրներում՝ 1000-ին ընկնում է 8-ից 12 մարդ[3]։ Տարբերությունը, ինչպես տեսնում ենք, հսկայական է՝ 2,5-ից 4 ան-

¹ „UN Statistical Yearbook", 1958, New York, p. 486.

² Նույն տեղում, էջ 542.

³ „The Iraq Times", April 10, 1951; „Арабы в борьбе за независимость", М., 1957, стр. 356.



¹ Б. М. Данциг, Ирак в прошлом и настоящем, М., 1960, стр. 120.

² «Արարատ», 1947, 8 նոյեմբերի։

³ „The Middle East Journal", Washington, vol. 10, № 2, p. 159.

գամ։ Ավելի բարձր էր երեխաների մահացության թիվը։ Իրաքում միջին թվով, յուրաքանչյուր 1000 նորածին երեխայից մահանում էր 300-ը, իսկ Անգլիայում՝ 25-ը։ Որոշ շրջաններում 1000-ից մահանում էր 500-ը[1], չհասնելով մինչև իսկ մեկ տարեկան հասակի։

Կյանքի նյութական ծանր պայմանների և մահացության բարձր տոկոսի հետևանքով Իրաքում ցածր էր կյանքի միջին տևողությունը՝ 28—30 տարի։ Մինչդեռ Անգլիայում այն հասնում էր 68 տարվա[2]։

Այս վիճակը քիչ էր անհանգստացնում Իրաքի կառավարողներին։ Մի՞թե դրա մասին չի վկայում այն փաստը, որ 1957 թվականի բյուջեում առողջապահության գծով կատարված հատկացումները կազմում էին ողջ բյուջեի 7,6 տոկոսը, իսկ ներքին գործերի մինիստրությանը և ոստիկանությանը՝ 14,4 տոկոսը։

Աշխատավորների տնտեսական և առողջապահական վիճակն ավելի էր ծանրանում բնակարանային վատ պայմանների հետևանքով։ Բնակարանները գտնվում էին ապրելու համար անհարմար պայմաններում, բնակչության մեծ մասը ապրում էր հետնախորշերում։

Պաշտոնական տվյալներով 1956 թվականին Իրաքում կար 741,106 տուն, դրանից.

աղյուսե տներ—111,871, քարե տներ՝ 46,127, կավե տներ՝ 304,296, սարիֆներ՝ 194,629, պալատկաներ՝ 15,282, այլ տներ՝ 68,901[3]։ Ինչպես տեսնում ենք տների մեծ մասը կավե տներ, սարիֆներ՝ հետնախորշեր էին։

Գ. Ադամսը նշում է, որ Իրաքի բնակչության 45 տոկոսը ապրում էր այնպիսի կառույցներում, որոնց չի կարելի որակել որպես բնակարան։ Այդտեղ ապրողները հիմնականում գյուղացիները, քաղաքային չքավորությունը և բեդվիններն էին։ Բասրայում բնակչության 40 տոկոսը ապրում էր քողտիկներում[4]։ Նույնպիսի պայմաններում էին գտնվում Բաղդադի Ասի-

[1] „The Middle East Journal", 1956, vol. 10, № 2, p. 159.

[2] „Революции в Ираке", стр. 12.

[3] „Statistical Abstract", 1956, p. 120.

[4] „The Middle East Journal", 1956, vol. 10, № 2, p. 157.



մա կոչվող մասի բնակիչները, որոնք մեծ մասամբ գաղթել էին գյուղական վայրերից և հաստատվել Բաղդադում։ Նրանք, մոտ 200 հազար մարդ, մի կերպ, արկղի փայտից և կավից պատրաստում էին տներ», այսպես կոչված, սարիֆները, որոնց քարշ էին տալիս իրենց գոյությունը։

Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ 1957 թվականին Իրաքում կար 1 մլն 644 հազար 90 սենյակ։ 6,5 միլիոն բնակչության վրա բաժանելով ստացվում է, որ յուրաքանչյուր 4,5 մարդուն ընկնում էր մեկ սենյակ։ Սակայն դա միջին թիվն է։ Իրականում որոշ վայրերում յուրաքանչյուր 8—10 մարդուն ընկնում էր մեկ սենյակ։

Իրաքում ոչ բոլոր տներն էին, որ ունեին ջուր, էլեկտրականություն, կոյուղի և կոմունալ այլ հարմարություններ։ Դա կարելի է տեսնել հետևյալ աղյուսակից[1].

| Տներ | Թիվը | Տոկոսը |
|---|---|---|
| Տներ բաղնիքով . . . . . . | 75840 | 10,2 |
| Տներ կոյուղով . . . . . . | 247638 | 33,4 |
| Տներ էլեկտրական լուսավորությամբ . . . . . . . | 125672 | 16,9 |

Ինչպես տեսնում ենք, Իրաքում բնակարաններն հիմնականում զուրկ էին կոմունալ հարմարություններից։ Իրաքի տների կեսից ավելին խմելու ջուր ստանում էր գետերից և գետակներից, այդ պատճառով էլ այդքան շատ էին տարածված աղիքա-ստամոքսային հիվանդությունները։ Մի հանգամանքի վրա ևս պետք է ուշադրություն դարձնել։ Վերևում նշված աղյուսակում հաշվառման չեն վերցված գյուղական այն վայրերը, որտեղ կան 15 և ավելի պակաս տներ։ Իսկ Իրաքում դրանք զգալի թիվ էին կազմում։ Այդ տները նույնպես գտնվում էին անմխիթար և հակասանիտարական վիճակում։ Եթե հաշվի առնենք նաև այդ տները, ապա կոմունալ հարմարություն ունեցող տների տեսակարար կշիռը Իրաքի ընդհանուր բնակարանային ֆոնդի մեջ ավելի կպակասի։

[1] „Statistical Abstract", 1956, p. 122.

Իրաքում բարձր էր բնակարանային վարձը և վարձով ապրողները գտնվում էին շատ նեղ կացության մեջ։ 1952 թվականին «Իրաք Թայմս» լրագրին ուղարկեց նամակ, որի հեղինակը դանգատվում էր բնակարանային բարձր վարձից, մեղադրելով տան տերերին ագահության մեջ։ Վերջիններս օգտվելով օտարերկրացիների հոսքի ուժեղացումից տան վարձը կրկնապատկել էին, որը քայքայում էր տեղացիներին։ Նամակի հեղինակը նշում էր, որ դրա հետևանքով սահմանափակ եկամուտներ ունեցողների (աշխատավարձ ստացողները), սեփական տուն չունեցողների համար, անտանելի վիճակ է ստեղծվել[1]։

Այս բնագավառում ևս Իրաքի կառավարությունը ոչ մի քայլ չէր դիմում։ Դա երևում է հետևյալ փաստերից։ 1955 թվականին ֆինանսների մինիստրությունը Բաղդադում պետությանը պատկանող 500 դոնում տարածությունը հատկացրեց բնակարանային շինարարության համար։ Սակայն այն լրիվ կերպով հանձնվեց ասոցիացիաներին՝ նրա պաշտոնյաների բավարարելու համար։ Դրանից առաջ ֆինանսների մինիստրությունը բնակարանային շինարարության համար հատկացրել էր 1000 դոնում հող, այս անգամ արդեն ռազմական ուժերին[2]։ Հետաքրքիր է նաև հետևյալ փաստը։ Զարգացման խորհրդի բնակարանային կոմիտեն նախատեսել էր, որ խորհրդի կազմած հնգամյա պլանով անհրաժեշտ էր կառուցել մոտ 100.000 բնակարան։ Սակայն հնգամյա պլանով բնակարանների կառուցման համար նախատեսված կապիտալ ներդրումները 6 մլն դինար էր, որը բավարար չէր նախատեսված բնակարանների մեկ հինգերորդի կառուցման համար[3]։ Եվ եթե ի նկատի ունենանք, որ պլանով նախատեսված կապիտալների միայն մեկ երրորդից մինչև մեկ երկրորդն էր իրացվում, ապա հասկանալի կդառնա, որ բնակարանների կառուցման համար շատ քիչ բան էր արվում Իրաքում։

Պետության կողմից կառուցվող բնակարանների գնումը աշխատավորների համար ձեռնտու չէր, որովհետև շատ թանկ

[1] „The Iraq Times", September 4, 1952.

[2] Նույն տեղում, November 10, 1955.

[3] „The Iraq Times", August 8, 1955.



էր վաճառվում։ Իրաքի սոցիալական գործերի մինիստր Սեյիդ Մեջիդ Մուստաֆան իր մի ինտերվյուի ժամանակ նշեց, որ կառուցվում է 180 տուն, յուրաքանչյուրը 258 դինար արժողությամբ[1]։

Բայց արդյո՞ք աշխատավորը ի վիճակի էր գնել այդ տները։ Մենք արդեն նշել ենք, որ Իրաքում տարեկան միջին եկամուտը կազմում էր մոտ 49 դինար, կային բանվորներ, որոնց տարեկան եկամուտը կազմում էր 35—40 դինար, իսկ գյուղացիներինը 15—20 դինար։ Հետևաբար այդ տները գնելու համար գյուղացիները պետք է վճարեին իրենց 12 տարվա, իսկ բանվորները 7—5 տարվա լրիվ եկամուտը։ Իրաքի բնակչության ճնշող մեծամասնության համար պրակտիկորեն անհնար էր այդպիսի բնակարաններ ձեռք բերելը։

Միապետական Իրաքում ժողովրդական մասսաները ապրում էին մթության ու տգիտության մեջ։ Պաշտոնական տվյալներով Իրաքի բնակչության 90 տոկոսից ավելին անգրագետ էր[2]։ Անգրագիտության տոկոսը առանձնապես բարձր էր կանանց մոտ։ Իրաքի կանանց միայն 3,3 տոկոսն էր գրագետ։

Պետք է նշել, որ կառավարությունը անգրագիտության տոկոսը իջեցնելու նպատակով «գրագետ» հասկացողության մեջ մտցնում էր նաև նրանց, ովքեր միայն իրենց անունը ստորագրել գիտեին։ Հաճախ դպրոցներում սովորողները, որոնք իրականում կարդալ չգիտեին, այլ մոլլաներից սովորել էին կորանը և անգիր «կարդում» էին, նույնպես համարվում էին գրագետ։ Գրագետների թվում էին դասում նաև 5 տարեկանից բարձր այն երեխաներին, որոնք սովորում էին տարրական դպրոցների առաջին դասարանում։

Իրաքում կրթության վիճակի մասին հետաքրքիր փաստեր է հաղորդում Բաղդադի «Ալ-Բիլադ» թերթը։ Ճիշտ է, այդ հաղորդումը վերաբերում է 1946 թվականի վերջերին, բայց հիմնականում, շատ աննշան փոփոխությամբ, այդ վիճակը շարունակվում էր նաև հետագա տարիներին։ Թերթը գրում է, որ 1917 թվականից մինչև 1946 թվականը Իրաքում տարրական կրթություն ստացել է ընդամենը 75 հազար մարդ։ Եթե

[1] „The Iraq Times", January 10, 1951.

[2] „The Iraq Times Annual", 1957, p. 60.

այդ թվին ավելացվի նաև օսմանյան տիրապետության ժամանակ կրթություն ստացած 25,000 հոգին, ապա կստացվի, որ 1946 թվականին Իրաքում կրթություն ուներ 100,000 մարդ, կամ երկրի բնակչության 2 տոկոսը։ «Ալ-Բիլադ»-ը նշում էր, որ Իրաքում յուրաքանչյուր տարի ծնվում է 200 հազար երեխա, որից 100 հազարը մահանում է։ Մնացած 100 հազարից դպրոց են ընդունվում միայն 5 հազարը։ Զարգացման այդպիսի պայմաններում նույնիսկ 50 տարի հետո բնակչության 95 տոկոսը դարձյալ մնալու էր անգրագետ[1]։ Եվ իսկապես, 1958 թվականի ռևոլյուցիային նախորդած 12 տարիները հաստատում են զարգացման տեմպերի վերաբերյալ Բաղդադի վերոհիշյալ լրագրի կանխագուշակումը։

Իրաքում քիչ էին դպրոցները։ Յուրաքանչյուր 42 հազար երեխային ընկնում էր մեկ տարրական, իսկ 80 հազարին՝ մեկ միջնակարգ դպրոց։ Դպրոցական տարիքի երեխաների միայն մեկ երրորդն էր սովորում։ 1956 թվականին Իրաքում կար 1919 տարրական և 217 միջնակարգ դպրոց, որտեղ սովորում էին 450.842 աշակերտ[2]։ Տարրական դպրոցներն ընդունված երեխաների միայն կեսն էր, որ ավարտում էր, մյուսները նյութական ծանր պայմանների հետևանքով հարկադրված էին թողնել դպրոցը։ Բաղդադում կար նաև համալսարան, բաղկացած մի քանի ֆակուլտետներից և քոլեջներից՝ անտեսագիտական, բժշկական, իրավաբանական, քիմիական, գեղարվեստական, գյուղատնտեսական, ինժեներական և այլն։ Մինչև ռևոլյուցիան բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորում էր 5445 ուսանող ու մեծ մասամբ, իհարկե, հարուստների երեխաները։ Բարձրագույն կրթությունը աշխատավորների զավակների համար անմատչելի էր։

Գոյություն ուներ նաև գիտությունների ակադեմիա, որը հիմնադրվել էր 1940 թվականին։

Իրաքի կառավարությունը ոչինչ չէր անում կրթության բնագավառում բարեփոխումներ մտցնելու, դպրոցների թիվն ավելացնելու և անգրագիտությունը երկրում վերացնելու համար։

[1] ЦГАОР, ф. 4459, оп. 2, ед. хр. 892, л. 9.

[2] „UN Statistical Yearbook", 1958, p. 554.



1957 թվականին պետական բյուջեում ֆինանսական միջոցները հետևյալ կերպ էին բաշխվել.

Ֆինանսների մինիստրություն—2,6 տոկոս, առողջապահության մինիստրություն—7,6 տոկոս, պաշտպանության մինիստրություն—30 տոկոս, լուսավորության մինիստրություն—6,4 տոկոս, սոցապ մինիստրություն—6,2 տոկոս, արդարադատության մինիստրություն—2,3 տոկոս, հաղորդության մինիստրություն—3,4 տոկոս, տնտեսության մինիստրություն—2 տոկոս, ներքին գործերի մինիստրություն—5,2 տոկոս, ոստիկանություն—9,2 տոկոս, կարիքներ և մունիցիպալիտետ—12,6 տոկոս[1]։ Ինչպես երևում է այս թվերից, բյուջեի 46,7 տոկոսը ուղղակիորեն գնում էր ռազմական ծախսերի և վարչական ապարատի վրա, իսկ եթե սրան ավելացնենք նաև կարիքների և տեղական իշխանությունների համար կատարված հատկացումները, ապա կստացվի բյուջեի 59,3 տոկոսը։

Մինչռևոլյուցիոն Իրաքում թույլ էին զարգացած նաև կուլտուր-լուսավորական հիմնարկները։ ՅՈՒՆԵՍԿՕ-ի տվյալներով 1956 թվականին ամբողջ Իրաքում կար 23 գրադարան՝ 199 հազար գրքով։ Դա շատ փոքր թիվ էր մինչև իսկ Մերձավոր և Միջին Արևելքի մյուս երկրների համեմատ։ Այդ նույն թվականին Եգիպտոսում կար 80, Իրանում՝ 70, Իսրայելում 758 գրադարան։ Չափազանց քիչ էր նաև լույս տեսնող գրքերի քանակը։ Նույն տվյալներով 1956 թվականին Իրաքում լույս է տեսել 166 անուն գիրք, Իրանում՝ 391, Լիբանանում՝ 396, Եգիպտոսում՝ 697, Իսրայելում՝ 822 անուն գիրք։ Ինչպես տեսնում ենք, այս հարցում նույնպես Իրաքը շատ էր հետ մնում իր հարևան երկրներից։ 1954 թվականին Իրաքում յուրաքանչյուր 1000 հոգուց միայն 66-ը ուներ ռադիո, իսկ հեռուստացույց՝ միայն 2-ը[2]։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք Իրաքի ժողովուրդը խարխափում էր տգիտության ու խավարի մեջ։ Այդպիսի դրությունը ձեռնտու էր թե Իրաքի կառավարող կլիկին և թե օտարերկրյա իմպերիալիզմին։ Իրաքի կառավարությունը վախե-

[1] „Революция в Ираке", стр. 8.

[2] „UN Statistical Yearbook", 1958, pp. 577, 580.

նում էր լուսավորել ժողովրդին, գտնելով, որ նա բաց կանի ժողովրդի աչքերը, կբարձրացնի աշխատավոր մասսաների գիտակցությունը։ Իսկ դրա մեջ կառավարող կլիկը մեծ վտանգ էր տեսնում իր իշխանության պահպանման։

Իրենց տիրապետությունը կորցնելուց վախենում էին նաև իմպերիալիստները։ Այդ պատճառով էլ նրանք նույնպես ամեն կերպ խանգարում էին ժողովրդական կրթության զարգացմանը։ «Բրիտանական իմպերիալիզմին,— գրում էր «Ալ-Վաթան»-ը,—որը ձգտում էր ամրապնդել իր դիրքերը Իրաքում, անհրաժեշտ էր ժողովրդական կրթության բոլոր գործերի վրա հսկողություն սահմանել, որպեսզի այլասերի աճող սերնդին և նրան դարձնի հլու գործիք կամ, ծայրահեղ դեպքում, ոչ պիտանի իմպերիալիզմի դեմ մղվող պայքարի համար»[1]։

Ինչպես տեսնում ենք, այս հարցում նույնպես օտարերկրյա իմպերիալիզմի և Իրաքի շահագործող դասակարգերի շահերը համընկնում էին և նրանք միասնաբար հանդես էին գալիս ընդդեմ Իրաքի աշխատավորական մասսաների կենսական շահերի։

* * *

Իրաքում իշխանությունը կենտրոնացված էր ֆեոդալ-շեյխերի ձեռքում, սակայն երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ավելի ու ավելի էր ուժեղանում ազգային բուրժուազիայի ձգտումը մասնակցելու երկրի քաղաքական կառավարմանը։ Այդ հողի վրա պայքար էր գնում ֆեոդալ-շեյխերի և բուրժուազիայի միջև։ Իսկ ինչ վերաբերում է գյուղացիությանը և պրոլետարիատին, ապա նրանք գտնվում էին իրավազուրկ վիճակում և ոչ մի մասնակցություն չունեին երկրի կառավարմանը։

Իրաքը մինչև 1958 թվականի հուլիսի 14-ը սահմանադրական միապետություն էր։ Երկրում գործում էր 1924 թվականին ընդունված սահմանադրությունը, որը լայն լիազորություններ էր վերապահում թագավորին։ Թագավորը համարվում էր պետության գլուխը և զինված ուժերի հրամանատարը։ Նա պառլամենտի հետ միասին իրականացնում էր օրենսդիր իշխանությունը, հաստատում օրենքները, արձակում հրամաններ, նա էր հաստատում պրեմիեր-մինիստրին և կառավարության կազմը, իրավունք ուներ հրավիրել և արձակել պառլամենտը, պատերազմ հայտարարել, երկրում մտցնել պաշարողական դրություն և այլն։ Իրաքի թագավորին այսպիսի լայն լիազորություններ տալը պատահականություն չէր։ Այդ եղանակով Իրաքի տիրապետող վերնախավը և անգլիական իմպերիալիստները ցանկանում էին կանխել որևէ օպոզիցիոն ելույթ և ավելի հուսալի դարձնել իրենց տիրապետությունը։

Իրաքի պառլամենտը բաղկացած էր դեպուտատների պալատից և սենատից։ Սենատի կազմը լրիվ կերպով նշանակվում էր թագավորի կողմից։ Դրանք գլխավորապես ցեղերի շեյխերը ու խոշոր հողատերերն էին, ռեակցիոներների մի խումբ, որի վրա հենվում էր թագավորական պալատը։ Դեպուտատների պալատը ընտրվում էր 4 տարի ժամանակով։ Ընտրությունները մինչև 1953 թվականը երկաստիճան էին։ Կանայք ընտրական իրավունքից զուրկ էին։ Ընտրելու իրավունք ունեին 20 տարեկանից բարձր տղամարդիկ, իսկ ընտրվելու՝ 30 տարեկանից։ Գոյություն ունեցող ոստիկանական ռեժիմի պայմաններում աշխատավորական մասսաներին դժվար էր ազդել ընտրությունների ելքի վրա և իրենց ներկայացուցիչներին ուղարկել պառլամենտ։ Դեպուտատների պալատի 145 տեղերից 80—95-ը միշտ էլ պատկանում էր շեյխերին ու խոշոր հողատերերին, մնացածը բուրժուազիայի որոշ ներկայացուցիչներին և պրոֆեսիոնալ քաղաքագետներին, որոնք պաշտպանում էին տիրապետող վերնախավի շահերը։

Դեպուտատության յուրաքանչյուր թեկնածու պարտավոր էր 100 դինար կանխավճար տալ[1]։ Իրաքում ոչ մի աշխատավոր, եթե նրան քաղաքական իշխանությունները նույնիսկ իրավունք տային իր թեկնածությունն առաջադրելու, չէր կարող մի այդպիսի գումար կանխավճար տալ։

Իրաքում օրենքն ընդունված էր համարվում, եթե նա հաստատված էր երկու պալատների և թագավորի կողմից։

[1] ЦГАОР, ф. 4459, оп. 2, ед. хр. 892, л. 9.

[1] «Ժողովուրդի Ձայն», Բեյրութ, 1947, 17 ապրիլի։

Այսպիսի կարգը մտցվել էր այն նկատառումով, որ եթե դեպուտատների պալատում ստեղծվի ուժերի այնպիսի փոխհարաբերություն, որ հանկարծ հնարավոր լինի անցկացնել որևէ անցանկալի օրենք, թագավորի կողմից նշանակված սենատը և ինքը՝ թագավորը, միշտ էլ հնարավորություն կունենային մերժել այդ օրինագծերը։

Իրաքի պառլամենտի դերը նսեմացած էր։ Նրանում նստած էին այնպիսի մարդիկ, որոնք միայն կատարում էին արքունիքի հրամանները։ Իրաքում դեմոկրատական ընտրություններ տեղի չէին ունենում և աշխատավորները զրկված էին այս կամ այն դեպուտատի օգտին ազատ կերպով իրենց կարծիքն արտահայտելու իրավունքից։ Դեպուտատների ցուցակը նախօրոք կազմում ու հաստատում էին պրեմիեր-մինիստրը ու ներքին գործերի մինիստրը, որից հետո այն ներկայացնում էին պալատ։ Վերջինիս կողմից հավանության արժանանալու դեպքում այն ուղարկվում էր մութասարիֆներին՝ նահանգապետներին, որոնք պարտավոր էին ամեն գնով անցկացնել այդ դեպուտատներին։ 1947 թվականին «Ալ-Իթիադ» թերթը ընտրություններից 20 օր առաջ հրապարակեց դեպուտատների ցուցակը, որը կառավարությունը հանձնել էր մութասարիֆներին։ Եվ երբ «ընտրությունները» տեղի ունեցան ու կառավարությունը հրապարակեց ընտրված դեպուտատների ցուցակը, նա լրիվ կերպով համընկավ «Ալ-Իթիադ» թերթում տպագրված ցուցակի հետ[1]։ Ընտրություններից առաջ, ինչպես կանոն, նախընտրական կամպանիա տեղի չէր ունենում, պարտիաները և դեմոկրատական կազմակերպությունները զրկված էին նախընտրական ագիտացիա մղելու հնարավորությունից։ Քիչ չէին դեպքերը, երբ քվեարկողների ցուցակների մեջ մտցվում էին այնպիսի մարդկանց անուններ, որոնք կամ մահացած էին, կամ ընդհանրապես գոյություն չունեին։ Իշխանությունները բացարձակորեն միջամտում էին ընտրությունների ընթացքին, սպառնում ու ահաբեկում ընտրողներին։ Այսպես, օրինակ, 1947 թվականին պաշտպանության մինիստր Շաքի ալ-Վադին մոտ հազար զինված զին-

¹ ЦГАОР, ф. 4459, оп. 2, ед. хр. 981, л. 13.



վորներ ուղարկեց Բաղդադի այն ընտրական օկրուգը, որտեղ դրված էր նրա թեկնածությունը[1]։

Այսքանով չբավարարվելով Իրաքի ռեակցիոն կլիկը 1954 թվականին ավելի հեռուն գնաց. նա մտցրեց նոր ընտրական սիստեմ, որը կոչվում էր Թազքիյա։ Համաձայն այդ սիստեմի դեպուտատության թեկնածուն ավտոմատ կերպով, առանց քվեարկության ընտրված էր համարվում, եթե տվյալ օկրուգում չկար ուրիշ թեկնածություն[2]։ Այդ օրենքը լայն հնարավորություններ էր տալիս ռեակցիոն կլիկին անցկացնելու իր թեկնածուներին։ Այսպիսի ուղիներով Իրաքի կառավարող վերնախավին հաջողվում էր ստեղծել մի այնպիսի պառլամենտ, որը զուրկ էր իր կամքը դրսևորելուց և անտրտունջ կատարում էր պալատի ու կառավարության հրամանները։ Իրաքի կառավարությունը, որպես գործադիր իշխանության իրականացնող մարմին, փաստորեն հաշվետու չէր պառլամենտի առջև։ Իրաքի պառլամենտում երբեք չի դրվել կառավարությանը վստահության քվե տալու հարցը։ Եվ դա պատահական չէ։ Դեպուտատներն իրենք էին կախման մեջ գտնվում մինիստրներից և պալատի ազդեցիկ մարդկանցից, որոնք որոշում էին տվյալ անձնավորության դեպուտատ մնալու կամ չմնալու հարցը։ Ուստի և կառավարությունը գործում էր համարձակորեն, չմտահոգվելով, թե նրա գործողությունները ինչպես կգնահատվեն պառլամենտի կողմից։ Ի դեպ նշենք, որ անկախություն ստանալուց հետո Իրաքի պառլամենտն արձակվել է 15 անգամ և միայն մեկ անգամ է գործել լրիվ նստաշրջանով[3]։

Իրաքում անսահմանափակ իշխանություն ուներ արքունիքը։ Ոչինչ չէր կատարվում առանց նրա գիտության։ Նա երբ ցանկանար կարող էր ստիպել կառավարությանը հրաժարական տալու և կազմելու նորը։ Պաշտոնյաների, նույնիսկ ցածր աստիճանավորների աշխատանքի նշանակելը և ազատելը կատարվում էր նրա գիտությամբ։ Պետական պաշտոնյա-

¹ ЦГАОР, ф. 4459, оп 2, ед. хр. 981, л. 7.
² Տե՛ս „Арабы в борьбе за независимость", стр. 403.
³ **Г. Фарман,** Ирак в годы черного режима, стр. 58.

ները չարաշահում էին իրենց դիրքը։ Ինչպես նշում էր «Ալ-Զաման»-ը Իրաքի պետական մեքենայում ամեն ինչ սխալ էր։

Իրաքի կառավարման սիստեմի նեխվածության մասին է վկայում կաշառակերության լայն տարածումը։ Կաշառք վերցնում էին բոլորը, և՛ մինիստրները, և՛ պալատականները, և՛ դեպուտատները և մեծ ու փոքր պաշտոնյաները։ Այսպես, օրինակ, Իրաքի պրեմիեր-մինիստրի տեղակալը 10 հազար ֆունտ ստեռլինգ էր «ստացել» մի ընկերությունից, որը իրավունք էր ձեռք բերել Բաղդադում կառուցելու երկու կամուրջ[1]։

Այդպիսի օրինակները շատ էին։ 1952 թվականին Իրաքի չորս քաղաքական պարտիաները՝ Միացյալ ժողովրդական ճակատ, ազգային դեմոկրատական, անկախության և Ումմա իրենց պահանջները ներկայացրին գահի խնամակալ Աբդուլ Իլլահին։ Նրանք պահանջում էին կիրառել ուղղակի ընտրական սիստեմ, փոփոխություններ մտցնել սահմանադրության մեջ, վերջ տալ «պալատի միջամտությանը», կաշառակերությանը և ապահովել քաղաքացիների սահմանադրական ազատությունները[2]։

Իր պատասխանում խնամակալը գովերգում էր Իրաքի կառավարման սիստեմը, նշելով, որ նա շատ լավ կողմեր ունի, որոնք պետք է պահպանել։ Նա դեմ էր սահմանադրության մեջ փոփոխություններ մտցնելուն, գտնելով, որ դրա կարիքը չկա։ Իսկ ինչ վերաբերվում է կաշառակերությանը, ապա խնամակալը փաստորեն արդարացնում էր այն, նշելով, որ ոչ մի երկիր չկա առանց կաշառակերության։

Իրաքում հաստատված կառավարման սիստեմը դեմոկրատական սկզբունքների վրա չէր հիմնված։ Դա մի բռնատիրական ռեժիմ էր, որը ոտնահարում էր աշխատավորների ամենատարրական իրավունքները և ամեն տեսակի թույլատրելի ու անթույլատրելի միջոցներով ձգտում պահպանել ֆեոդալական վերնախավի իշխանությունը և բրիտանական իմպերիալիզմի տիրապետող դիրքերը։

«Իրաքը,— նշել է Իրաքի կոմունիստական պարտիայի

[1] ЦГАОР, ф. 4459, оп. 24, ед. хр. 912, л. 181.

[2] „The Iraq Times", October 30, 1952.



ղեկավար քարտուղար Յուսուֆ Սալմանը (Ֆահդ),— կոնստիտուցիոն թագավորություն է, բայց նրա կոնստիտուցիան անգործության է մատնված այն ամենում, ինչ վերաբերում է ժողովրդի շահերին ու իրավունքներին... պառլամենտի երկու պալատների անդամների ընտրության մեջ ժողովրդական ներկայացուցչությունը ոչ մի ազդեցություն չունի»[1]։

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, 1946 թվականին Իրաքի կառավարությունը ազգային-ազատագրական շարժման ճնշման տակ թույլատրեց քաղաքական պարտիաների գործունեությունը։ Կազմակերպվեցին հինգ պարտիաներ՝ այդ թվում ազգային-դեմոկրատական, անկախության և ազգային-սոցիալիստական բուրժուական պարտիաները։

Այդ պարտիաներից ամենամեծ հեղինակությունը վայելում էր ազգային-դեմոկրատական պարտիան, որը արտահայտում էր Իրաքի ազգային բուրժուազիայի շահերը։ Ինչպես այս, այնպես էլ մյուս բուրժուական և մանրբուրժուական պարտիաները չունեին հստակ ծրագիր։ Սակայն ազգային-դեմոկրատական պարտիայի կողմից առաջադրված պահանջների ուսումնասիրումը ցույց է տալիս, որ նա ձգտում էր հասնել ներքին բարեփոխումների՝ հատկապես ընտրական սիստեմի դեմոկրատացման։ Նա քննադատում էր գյուղատնտեսության մեջ տիրապետող ֆեոդալական կարգերը և պահանջում փոփոխություններ մտցնել ագրարային հարաբերություններում։ Դրա հետ միասին այս պարտիան հանդես էր գալիս բրիտանական տիրապետության դեմ, պահանջելով չեղյալ հայտարարել 1930 թվականի անգլո-իրաքյան անհավասար պայմանագիրը և վարել չեզոք քաղաքականություն։

Այս բոլոր պահանջները հիմնականում արտահայտում էին նոր զարգացող և դեռևս թույլ ազգային բուրժուազիայի շահերը, որը ձգտում էր իր զարգացման և տիրապետության հաստատման համար ստեղծել ներքին ու արտաքին բարենպաստ պայմաններ։

[1] يوسف سلمان يوسف... ص ٢٦

Ազգային-դեմոկրատական պարտիայի ղեկավարներն էին Քամիլ Չադըրչին, Մոհամմեդ Հադիդը և Քամիլ Ղազանչին, որոնք Իրաքի ազգային-ազատագրական շարժման խոշոր գործիչներից էին։

Իրաքում գործող մյուս աչքի ընկնող պարտիան՝ ալ-Իսթիքլալ պարտիան էր, որն ավելի աջ էր։ Նա ներկայացնում էր բուրժուազիայի ավելի ռեակցիոն թևի շահերը։ Ալ-Իսթիքլալը նույնպես հանդես էր գալիս ներքին ռեֆորմների և ռազմական բլոկներին չմասնակցելու պահանջով։ Դրա հետ միասին նա քարոզում էր պանարաբիզմ։ Պարտիայի լիդերներն էին Մահդի Քուբբան, Սադք Շանշալը, Սամմարան Ֆաիքը և ուրիշներ։

Ծայրահեղ ռեակցիոն ուղղություն ուներ արաբական վերածննդի սոցիալիստական պարտիան։ Նրա ծրագրում առանձնահատուկ տեղ էր գրավում արաբական ազգային ավանդույթների պահպանման պահանջը[1]։ Նա փաստորեն դեմ էր Իրաքի ներքին կյանքում հեղափոխական բարեփոխումներ անցկացնելուն։

Պարտիայի լիդերն էր դ-ր Շեվքեթը։

Մյուս պարտիաներից պետք է նշել՝ լիբերալ պարտիան, որը կազմված էր ֆեոդալներից, կապիտալիստներից ու աստիճանավորներից և որի գլխավոր խնդիրը պանարաբիզմն ու պանիսլամիզմն էր[2], քրդական ռիզգարի պարտիան, որը հանդես էր գալիս ընդդեմ բրիտանական իմպերիալիզմի տիրապետության, և միացյալ ժողովրդական ճակատ պարտիան։ Այս վերջինն առաջացավ ժողովրդական և ժողովրդական միավորում պարտիաների միաձուլումից։ Իրաքի դեմոկրատական ուժերը ողջունեցին այդ պարտիայի հանդես գալը, քանի որ նա իր բնույթով պրոգրեսիվ էր։ Միացյալ ժողովրդական ճակատ պարտիան պահանջում էր ռեսպուբլիկայի հաստատում, դեմոկրատական ռեֆորմների կիրառում և լրիվ անկախ ու ինքնուրույն Իրաքի ստեղծում։ Այս պարտիայի կազմում կային բանվորներ, գյուղացիներ, ինտելիգենցիայի ու մանր բուրժուազիայի ներկայացուցիչներ։ Պարտիայի լի-

[1] ЦГАОР, ф. 4459, оп. 26, ед. хр. 10, л. 164.

[2] Նույն տեղում, թ. 163.



դերներն էին Ազիզ Շերիֆը, որը Իրաքի հասարակական-քաղաքական խոշոր դեմքերից էր և Աբդուլ Ֆաթթահը։

1949 թվականին քաղաքական ասպարեզ եկավ Կոնստիտուցիոն միություն պարտիան, որի լիդերը Նուրի Սաիդն էր։ Այդ պարտիան Իրաքի կառավարող խմբի, ամենառեակցիոն շրջանների, հողատերերի և բարձրաստիճան պաշտոնյաների պարտիան էր։ Նա պաշտպանում էր բրիտանական իմպերիալիզմի շահերը, հանդես էր գալիս հօգուտ Իրաքի և Անգլիայի ամենասերտ դաշինքի, դեմ էր երկրի ներքին կյանքում որևէ փոփոխություններ մտցնելուն և ամեն կերպ ձգտում էր պահպանել ֆեոդալ-շեյխերի իշխանությունը։ Երկար ժամանակ լինելով կառավարող պարտիա, կոնստիտուցիոն միությունը վարում էր ամենառեակցիոն, ծայրահեղ հակադեմոկրատական քաղաքականություն։

1946 թվականի օրենքը՝ պարտիաների գործունեության ազատության մասին չտարածվեց կոմունիստական պարտիայի և նրան շատ մոտ կանգնած ազգային ազատագրության պարտիայի վրա։

Ազգային ազատագրական պարտիան որպես հիմնական ծրագրային պահանջներ առաջադրում էր Իրաքի լիակատար անկախության նվաճումը, երկրի դեմոկրատացումը, արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացումը և աշխատավորական մասսաների դրության բարելավումը[1]։ Պարտիան հանդես էր գալիս հանուն Իրաքի բոլոր հայրենասեր ու հակաիմպերիալիստական ուժերի միավորման և ազգային ճակատի ստեղծման, գտնելով, որ «միակ ուղին, որին պետք է հետևենք, դա ազգային միասնական ճակատի ուղին է, որ պետք է միավորի և ներդաշնակի հայրենասեր դեմոկրատների պայքարը»[2]։

Կոմունիստական պարտիան՝ Իրաքի բանվոր դասակարգի և աշխատավորական մասսաների ավանգարդը, կազմակերպվել է 1934 թվականին[3]։ Նա իր գոյության առաջին օրվանից

[1] حسين محمد الشبيبي، الاستقلال والسيادة الوطنية، بغداد، ص ٣٢، ٢٩

[2] Նույն տեղում, էջ 51։

[3] يوسف سلمان يوسف... ص ٣١

բարձրացրել է հակաիմպերիալիստական պայքարի դրոշը և պաշտպանել աշխատավորական մասսաների իրավունքները։ 1938 թվականին Իրաքի կառավարությունը արգելեց կոմպարտիան և նա անցավ ընդհատակ։ Չնայած դրան կոմունիստական պարտիան երբեք չհրաժարվեց մարքսիզմ-լենինիզմի ռևոլյուցիոն գաղափարներից և չդադարեցրեց պայքարը հակաժողովրդական ուժերի դեմ։ Նա արդեն 1946—1947 թվականներին դառնում է մասսայական ուժ և վճռական գործոն Իրաքի ռևոլյուցիոն շարժման մեջ, կազմակերպում ու ղեկավարում է աշխատավորների գործադուլային պայքարը, քաղաքական ելույթները, հրատարակում և տարածում անլեգալ ռևոլյուցիոն գրականություն և այլն։

1945 թվականի ապրիլին տեղի ունեցավ Իրաքի կոմունիստական պարտիայի առաջին համագումարը, որն ընդունեց պարտիայի ծրագիրը։ Ծրագիրը կանխագծեց կոմունիստական պարտիայի գործունեությունը հետագա տարիների համար և որոշեց նրա խնդիրները ազգային-ազատագրական պայքարում։

Ծրագրի առաջին կետում ասված էր, որ պարտիան «պայքարում է հանուն մեր ազգային սուվերենիտետի, մեր երկրի անկախությունը դարձնելու իրականություն և ոչ խոսք»[1]։ Պարտիան առաջադրում էր երկրի ներքին կյանքի լրիվ դեմոկրատականացում։ Դրա համար, ինչպես նշված էր ծրագրում, պետք էր ստեղծել մի կառավարություն, որ աշխատեր հօգուտ ժողովրդի, ստեղծել ժողովրդի կողմից ընտրված և նրան իսկապես ներկայացնող պառլամենտ, կիրառել կոնստիտուցիայի ժողովրդի դեմոկրատական իրավունքներին վերաբերող հոդվածները և չեղյալ հայտարարել կոնստիտուցիայի ոգուն չհամապատասխանող բոլոր օրենքներն ու հրամանագրերը[2]։

Ծրագրի այն բաժնում, որը նվիրված էր երկրի տնտեսու-

[1] يوسف سلمان يوسف... ص ١ٸ
[2] Նույն տեղում։



թյան զարգացմանը, ասված էր, որ կոմպարտիան պայքարում է ազգային տնտեսության և հատկապես արդյունաբերության զարգացման համար։ Որպես այդ խնդրի իրագործման կարևորագույն միջոցներից մեկը կոմպարտիան գտնում էր, որ պետք է երկիրը լրիվ կերպով ազատագրել օտարերկրյա մոնոպոլիստական կապիտալի, օտար մոնոպոլիստական ընկերությունների ու բանկերի ազդեցությունից և պայքարել օտար ազդեցությունը երկրում որևէ կերպ հաստատելու դեմ[1]։ Կոմպարտիան հանդես էր գալիս հանուն ագրարային ռեֆորմի կիրառման, պահանջելով խոշոր լատիֆունդիաները, ինչպես նաև ազատ պետական հողերը մանր հողաբաժիններով առանց փոխհատուցման գյուղացիներին հանձնել և վերջիններիս անհրաժեշտ ֆինանսական օգնություն ցույց տալ։

Կարևոր ծրագրային պահանջներից էին նաև աշխատավոր մասսաների տնտեսական դրության բարելավման, հարկերի կրճատման, կնոջը տղամարդկանց հետ հավասար իրավունքներ տալու և այլ պահանջներ[2]։

Այս պահանջները համապատասխանում էին ազգային-ազատագրական պայքարի տվյալ էտապի խնդիրներին և հենց նրանցով էլ կանխորոշված էին։ Համագումարն ընտրեց կենտրոնական կոմիտե, որի կազմի մեջ մտան Յուսուֆ Սալմանը (Ֆահդ), Զաքի Բասիմը, Հուսեյն Մուհամմեդ աշ-Շաբիբին, Աբդ Թամիրը, Մալիք Սաիֆը, Մուլլա Շարիֆը, Սամի Նադիրը և ուրիշներ։

Հետագայում, 1952 թվականին Իրաքի կոմպարտիան առաջ քաշեց ազգային դեմոկրատական կառավարության լոզունգը, իսկ 1953 թվականին ընդունված նոր ծրագրում մտցրվեց կետ՝ ժողովրդական Դեմոկրատական Ռեսպուբլիկայի

[1] يوسف سلمان يوسف... ص ١٩
[2] Նույն տեղում, էջ 18։

վերաբերյալ[1]։ Ռեսպուբլիկան պետք է ստեղծվեր ռևոլյուցիայի հաղթանակից հետո։ Սակայն Իրաքի կոմպարտիան ժողովրդական Դեմոկրատական Ռեսպուբլիկայի ստեղծումը չէր համարում որպես անհապաղ պահանջ և նրա համար անմիջական պայքար դեռևս չէր սկսում։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք Իրաքի բոլոր պարտիաներից կոմունիստական պարտիան միակն էր, որն ուներ մշակված, բոլոր հարցերն ընդգրկող ծրագիր, միակ պարտիան էր, որ առաջ էր քաշում Իրաքի ամենահետևողական դեմոկրատացման պահանջը և պայքարում նրա կենսագործման համար։ Ի դեմս Իրաքի կոմունիստական պարտիայի աշխատավորական մասսաները տեսնում էին իրենց շահերի ամենաանձնուրաց մարտիկի։

Իրաքի կոմունիստական պարտիան մեծ նշանակություն էր տալիս ազգային փոքրամասնությունների՝ քրդերի, հայերի, թուրքմենների և ասորիների շրջանում տարվող աշխատանքին։ Ինչպես նշված է ծրագրում, կոմպարտիան պայքարում էր «ստեղծելու համար քուրդ ազգային փոքրամասնության իրավունքների իսկական հավասարություն, հարգելով նաև փոքր ազգային ու ցեղային խմբերի, ինչպիսիք են թուրքմենների, հայերի և եզիդիների իրավունքները»[2]։ Իրաքի ազգային-ազատագրական շարժման շահերը պահանջում էին բոլոր ազգությունների դեմոկրատական ուժերի համախմբում և բոլոր ազգությունների աշխատավորական մասսաների համատեղ պայքար։ Ելնելով այդ, ինչպես նաև քուրդ և հայ աշխատավորական մասսաների շրջանում մարքսիստական, ռևոլյուցիոն գաղափարները տարածելու խնդիրներից, Իրաքի կոմունիստական պարտիայի I համագումարը 1945 թվականին որոշեց ստեղծել Քրդական և Հայկական բաժիններ։ Հե-

[1] „Report of the Iraqi Communist Party to the Conference of Communist and workers' Parties within the Sphere of British Imperialism, held in London, April, 21—24, 1954", „World News", vol. 1, № 20, May 15, 1954, p. 389.

[2] يوسف سلمان يوسف.... ص ١٨



տագայում պետք է ստեղծվեին նաև Թուրքմենական և Ասորական բաժիններ[1]։

Պետք է նշել, որ ազգային փոքրամասնությունները մեծ դեր են խաղացել Իրաքի կոմունիստական շարժման պատմության մեջ։

Հայկական բաժինը Իրաքի կոմպարտիայի Կենտկոմի ղեկավարության ներքո, զգալի աշխատանք կատարեց հայ մասսաների շրջանում։ Նա հրատարակում էր «Հիմք» թերթ, որի էջերում լուսաբանվում էին Իրաքի ազգային-ազատագրական շարժման, հայ և արաբ աշխատավորական մասսաների համատեղ պայքարի կարևոր հարցերը։ Թերթը պրոպագանդում էր արաբ և հայ ժողովուրդների բարեկամության ամրապնդման գաղափարը։

Կոմունիստները հայ մասսաների շրջանում ունեին որոշակի ազդեցություն։ Այդ հանգամանքի վրա ուշադրություն է դարձրել նաև բուրժուական «Մոնիտոր»-ը՝ «Ընդհատակյա կոմունիստական աշխատանքն Իրաքում՝ չնայած արգելմանը» հոդվածում։ Այնտեղ ասված է. «Կոմունիստական ձայների համոզչականությունը ցույց է տալիս հայկական համայնքը, որը բաղկացած է 15000 մարդուց և որը Իրաքում գոյություն ունի դարերից ի վեր»[2]։ Հայերը Իրաքում հաստատվել են գլխավորապես առաջին համաշխարհային պատերազմից հետո, երբ թուրք բարբարոսների յաթաղանից ազատված հայ ժողովրդի արևմտյան մի բեկորը հանգրվան գտավ արաբական երկրներում, այդ թվում նաև Իրաքում։ Արաբ ժողովուրդը, որը տառապում էր նույն օսմանյան բռնապետական լծից, չվարանեց հյուրընկալության դռները բացել հայ տարաբախտ ժողովրդի առջև,— նրան տվեց օթևան, ապրելու և աշխատելու հնարավորություն։ Եվ արդեն մոտ կես դար է, ինչ արաբն ու հայը հաշտ ու համերաշխ ապրում ու պայքարում են կողք-կողքի, մարտնչում արաբական երկրների ազգային անկախության համար։

Մեծ չէ հայերի թիվը Իրաքում։ Տարբեր հաշվումներով

[1] Տե՛ս W. Laqueur,... p. 188.

[2] „Monitor", April 5, 1948.

այն կազմում է 15000—20000 հազար։ Հայերը հիմնականում քաղաքաբնակ են և ապրում են Բաղդադում, Բասրայում, Կիրկուկում, Մոսուլում և այլ վայրերում։ Նրանց հիմնական մասը աշխատավորներն ու արհեստավորներն են։ Իրաքում հայերն ունեն իրենց ազգային մարմինները, դպրոցները, եկեղեցիները և այլն։

Ինչպես մյուս ազգային փոքրամասնությունների՝ քրդերի, ասորիների, հրեաների, այնպես էլ հայերի վիճակը շատ ծանր էր միապետական Իրաքում։ Իրաքի ռեակցիոն ռեժիմը ճնշում էր և՛ արաբներին, և՛ ազգային փոքրամասնություններին, սահմանափակում նրանց իրավունքներն ու ազատությունները։ Այդ ռեժիմը վարում էր ասիմիլյատորական քաղաքականություն և, ինչպես նշում է արաբ պատմաբան Ա. Հուրանին, նրանք՝ ազգային փոքրամասնության պատկանողները, չէին համարվում լիիրավ քաղաքացիներ[1]։

Սակայն հայ աշխատավորական մասսաները տառապում էին ոչ միայն Իրաքի կառավարող շրջանների քաղաքականությունից, այլ նաև դաշնակցություն կոչված հայրենադավ խմբակի քաղաքականությունից։ «Որուն անհայտ է,— գրում է «Արարատ» թերթը,— թե Իրաքի հայությունը միշտ ապրել է և կապրի կրկնակ ճնշման քունցքներու միջև, մին՝ մեծպետական, մյուսը՝ ազգային։ Երկու քունցքները, սակայն, կմիանան մեկ կետի վրա և կիջնեն արգելաշղթան դնելու հայ յառաջդիմության և հայրենադարձի լուսաշող պողոտային»[2]։

Վայելելով Իրաքի ռեակցիոն շրջանների հովանավորությունն ու օժանդակությունը, ահաբեկելով առաջադեմ գործիչներին և աշխատավորական մասսաներին, դաշնակները ոչնչի առջև կանգ չէին առնում Իրաքի հայ գաղութի ազգային մարմինները՝ քաղաքական և գավառական ժողովները, ուսումնական հաստատությունները և այլն իրենց ձեռքը գցելու համար։ Դրա մասին է վկայում թեկուզ հետևյալ փաստը։ 1946 թվականին տեղի ունեցան Իրաքի գավառական ժողովի

[1] A. Hourani, Minorities in the Arab world, London, 1947, p. 94.

[2] «Արարատ», Բեյրութ, 1947, 23 հոկտեմբերի։



ընտրությունները։ Ընտրություններին «հաղթանակն» ապահովելու համար դաշնակները իրենց քաղաքական հակառակորդների դռների վրա սպառնագրեր փակցրին, կազմեցին գոփաճիների խմբեր, որոնք զինված ներկայացան ընտրություններին։ Չբավարարվելով դրանով, դաշնակները շարքային ընտրողներին վախեցնելու նպատակով ասում էին, որ հակառակ ցուցակին պատկանողները կոմունիստներն են և ոստիկանությունը արձանագրում է բոլոր նրանց, ովքեր իրենց ձայնը կտան այդ ցուցակին[1]։ Իրենց այս արարքներով նրանք Իրաքի հայ գաղութի ներսում ստեղծում էին աննորմալ վիճակ։ Դաշնակները մի կողմից աշխատում էին հայ աշխատավորական մասսաներին հեռու պահել արաբական ազատագրական շարժումներից, իսկ մյուս կողմից՝ փորձում էին նրանց մեջ ատելություն առաջացնել Սովետական Հայաստանի նկատմամբ, աղավաղված ու ծուռ հայելու մեջ էին ներկայացնում սովետական իրականությունը։ Նրանց այդ ազգադավ գործունեությունը առանձնապես ցցուն կերպով երևաց հայրենադարձության օրերին։

Սովետական կառավարության որոշումը հայերի հայրենադարձության մասին չտեսնված ուրախություն և խանդավառություն առաջացրեց սփյուռքահայության մեջ։ Սփյուռքի բոլոր առաջադեմ ուժերը գործի անցան նպաստելու հայրենադարձության մեծ գործին։ Սակայն սովետական կառավարության այդ մարդասիրական որոշումը թշնամանքով ընդունեցին դաշնակները։ Նրանք արաբական բոլոր երկրներում, այդ թվում նաև Իրաքում ամեն ինչ անում էին հայրենադարձությունը խափանելու համար։ Բայց նրանց մտադրությունները լիովին ձախողվեցին։ Սփյուռքահայ աշխատավորության համար Սովետական Հայաստանը՝ իրենց մայր հայրենիքը, բոլոր իղձերի ու լավագույն երազների մարմնացումն էր։ Արաբ պատմաբան Ա. Հուրանին գրում էր. «Հայերի մեծամասնությունն այժմ նայում է Սովետական Հայաստանին, որտեղ նրանց ազգակիցները վայելում են մի այնպիսի աստիճանի անհատական և ազգային ազատություն, որը նրանց վերջին

[1] «Ժողովրդի Ձայն», Բեյրութ, 1946, 3 մարտի։

սերունդը չի իմացել»[1]։ Այն, ինչ որ ակնհայտ ու հասկանալի էր արաբ պատմաբանին, չէին «ցանկանում» հասկանալ դաշնակները։

Իրաքի հայությունը մեծ ոգևորությամբ ընդունեց հայրենադարձության լուրը։ Չնայած դաշնակների բոլոր մեքենայությունների, հազարավոր մարդիկ ցանկություն հայտնեցին մեկնել հայրենիք։ 1947 թվականին Իրաքից Սովետական Հայաստան մեկնեց երկու քարավան՝ շուրջ 1000 մարդ։ Անդրադառնալով այդ հարցին և դաշնակների քաղաքականությանը, Իրաքի հայրենադարձներից մեկը շատ պատկերավոր կերպով նշել է. «Անոնք (դաշնակները— Ն. Հ.), ոչ միայն չկրցան մեզ հեռացնել Հայաստանի գաղափարեն, այլ նետեցին մեզ Երևանի փողոցին մեջտեղը»[2]։

Իրաքից մեկնելով մայր հայրենիք, հայերն իրենց հետ տանում էին երախտապարտության խորը զգացմունքներ հանդեպ արաբ ժողովուրդը։ Այդ տեսակետից հետաքրքիր է Մոսուլի ներգաղթի կոմիտեի անդամ Մարտիրոս Դավուդճյանի ելույթը ներգաղթի առթիվ կազմակերպված հավաքույթին. «Թիւր հարցվի—նշում է նա,— թե ինչո՞ւ կերթա հայ ժողովուրդը, արդյոք հայը դժգո՞հ է արաբ ժողովուրդեն... Հաստատ շեշտով պիտի ըսենք ո՛չ։ Հայը ոչ թե միայն դժգոհ չէ, այլ երախտապարտության և եղբայրության զգացումներով է լցված արաբ ազնիվ ժողովուրդներու հանդեպ, որոնք իրենց տուները բացին մեզի այնպիսի ատեն մը, երբ տակավին իրենք իսկ չէին թոթափած օսմանյան և օտար իմպերիալիզմի տաժանելի դարավոր լուծը։ Պիտի ըսվի, թե քանի որ այդպես է, հայերը ինչո՞ւ կերթան։ Պատասխանը շատ պարզ է. հայը կերթա, որովհետև հայը հայ է և անոր հայրենիքը՝ Հայաստան։

Ամբողջ աշխարհը գիտե թե մեր ազատ կամքով չէր, որ դուրս ելած ենք մեր հայրենիքեն»[3]։

Մ. Դավուդճյանը միանգամայն ճիշտ է. հայերը և արաբ-

[1] A. Hourani... p. 118.
[2] «Արարատ», 1947, 23 նոյեմբերի։
[3] «Ժողովրդի Ձայն», 1947, 21 մարտի։



ները կապված են եղբայրական կապերով։ Իրաքում հայ դեմոկրատները կանգնած են արաբ դեմոկրատների կողքին և արաբ ու հայ աշխատավորական մասսաները միասին պայքարել ու պայքարում են օտարերկրյա իմպերիալիզմի և ներքին ռեակցիոն ուժերի դեմ։

Իրաքի աշխատավորական մասսաների շահերի պաշտպանության գործում որոշակի դեր են խաղացել արհմիությունները։ Առաջին արհմիությունները Իրաքում ձևավորվել են 1929 թվականին։ Դրանից հետո նրանք անցել են Իրաքի բանվոր դասակարգի շահերը պաշտպանելու շատ բարդ ու դժվարին ուղի։

Արհմիութենական կյանքը Իրաքում որոշ չափով աշխուժացավ և արհմիությունները երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդող տարիներին սկսեցին ավելի ակտիվ գործել։ Այդ ժամանակ կազմակերպվեցին մի շարք նոր միություններ։ Իրաքի արհմիությունների մեջ ամենախոշորը և ամենակազմակերպվածը դա երկաթուղային, նավթարդյունաբերական (ընդհատակյա) և Բասրայի նավահանգստի բանվորների միություններն էին։ Բացի դրանից կային նաև մեխանիկական, շինարարական, էլեկտրակայանների բանվորների, փոստի և հեռագրի աշխատողների, դերձակների, հյուսների, իրավաբանների և այլ արհմիություններ։ Արհմիությունների աշխատանքին ակտիվորեն մասնակցում էին կոմունիստները։ Մի շարք արհմիություններ գտնվում էին կոմունիստական պարտիայի ղեկավարման ներքո։ Իրաքի արհմիությունները կապ էին պահպանում արհմիութենական միջազգային կազմակերպությունների հետ, մասնակցում նրանց աշխատանքներին։ Նրանք հարում էին Արհմիությունների համաշխարհային ֆեդերացիային։ Իրաքի արհմիությունների աշխատանքը ղեկավարելու և կազմակերպելու գործում զգալի դեր խաղաց 1951 թվականին հիմնված Իրաքի արհմիությունների ֆեդերացիայի խորհուրդը։

Արհմիությունների կարևոր խնդիրներից մեկը Իրաքում եղել է բանվորների և ծառայողների տնտեսական շահերի պաշտպանումը։ Նրանք պահանջում էին աշխատանքային օրվա կրճատում, աշխատավարձի բարձրացում, սոցիալական

տպահովագրություն և այլն։ Մի շարք արհմիություններ իրենց ձեռքն չէին վերցրել բանվորներին կրթելու գործը։ Նրանք կազմակերպում էին գիշերային դասընթացներ, դասախոսություններ սոցիալական և քաղաքական թեմաների շուրջը, հիմնում գրադարաններ ու ընթերցարաններ և այլն։ Նրանց խնդիրների մեջ էր մտնում նաև բանվորներին նյութական օգնություն ցույց տալու հարցը[1]։

Սակայն արհմիությունների գործունեության համար նպաստավոր պայմաններ չկային։ Ինչպես նշում է Արհմիությունների համաշխարհային ֆեդերացիայի Գործադիր կոմիտեի անդամ Մուստաֆա Արիսը «Իրաքի սենատորները ենթակա են երկրին մեջ տեր և տիրական եղող անգլիացիներուն և անոնց կամակատար հասարակական ուժերու բուռն ճնշումին»[2]։ Ռեակցիայի յուրաքանչյուր հարձակման ժամանակ փակվում էին բազմաթիվ արհմիություններ, իսկ նրանց ղեկավարները ձերբակալվում էին և նետվում բանտ։ Թեև օրենքը թույլ էր տալիս բանվորներին միավորվելու արհմիությունների մեջ, բայց նա միաժամանակ Մինիստրների խորհրդին արհմիությունները փակելու իրավունք էր վերապահում, դրանով իսկ ի չիք դարձնելով բանվորների արհմիութենական իրավունքները[3]։ Իսկ օտարերկրյա մոնոպոլիաներին պատկանող նավթարդյունաբերությունում, բանվորներն իրավունք չունեին ստեղծելու իրենց միությունը։ Դա մի ավելորդ անգամ ցույց է տալիս, որ օտարերկրյա իմպերիալիստները իրենց տիրապետությունը հաստատելով թույլ երկրներում, չէին ենթարկվում այդ երկրի օրենքներին և այնտեղ հաստատում էին իրենց սեփական օրենքները։

Կառավարությունը մի կողմից փակում էր ակտիվ գործող, բանվորների շահերը պաշտպանող արհմիությունները, բազմաթիվ խոչընդոտներ ստեղծում նրանց համար, մյուս կողմից, ինքն էր կազմակերպում արհմիություններ, ըստ որում նրա ղեկավարները «ընտրվում» էին ոչ բանվորներից[4]։ Դրա նպա-

[1] „Middle Eastern Affairs", vol. 7. № 4. New York, 1956, p. 139.

[2] «Ժողովրդի ձայն», 1946, 7 օգոստոսի։

[3] Տե՛ս „The Iraq Times", April 25, 1951.

[4] Նույն տեղում, October 30, 1952.



տակն էր բանվորական շարժումը ջլատել ու թուլացնել և թույլ չտալ, որ նա այնպիսի ուղղություն ու ծավալ ընդունի, որ սպառնա տիրող վերնախավի շահերին։

Կառավարության և ոստիկանության կողմից կիրառվող ռեպրեսիաների ու հետապնդումների հետևանքով Իրաքում ստեղծվել էին ընդհատակյա արհմիություններ։ Կիրկուկի արհմիությունների խորհրդի գործադիր կոմիտեի անդամ Նիխադ Սաադուլլա Կիրզարը նշում է, որ «միապետական ռեժիմի ժամանակ Իրաքի բանվորները ստեղծեցին ընդհատակյա արհմիություններ։ Ո՛չ տեռորը, ո՛չ պրովոկացիաները չկարողացան նրանց խեղդել։ Ընդհատակի պայմաններում մեր արհմիութենական շարժումը լավ կոփվածություն ձեռք բերեց»[1]։ Ընդհատակում ստեղծված արհմիություններից ամենախոշորը նավթարդյունաբերության բանվորների միությունն էր, որը իր շարքերում հաշվում էր մոտ 5000 բանվոր։ «Դրան հասնելը,— գրում է Կիրզարը,— հեշտ չէր։ Նուրի Սաիդի գործակալները և «Իրաք պետրոլեում» սեփական գաղտնի ոստիկանությունը շրջում էին ամենուրեք»[2]։

Արհմիությունների աշխատանքը կազմակերպելու գործում զգալի դեր է խաղացել ընդհատակում լույս տեսնող արհմիութենական «Բանվորների Միություն» թերթը։ Նա կոչ էր անում բանվորներին մտնել ընդհատակյա արհմիութենական կազմակերպությունները, օգնում բանվորներին կողմնորոշվելու սոցիալական և քաղաքական բարդ հարցերում և այլն։

Նախահեղափոխական շրջանի արհմիութենական շարժումը Իրաքի պրոլետարիատի դասակարգային պայքարի լավագույն էջերից է։

Իրաքի ազգային-ազատագրական շարժումների մեջ նշանակալից դեր է խաղացել երիտասարդությունը և հատկապես ուսանողությունը։ Երիտասարդությունը հանդես էր գալիս հանուն երկրի դեմոկրատացման և Իրաքը օտարերկրյա իմպերիալիստներից ազատագրելու։

Ուսանողությունը միավորված էր Իրաքի ուսանողների

[1] „Новое время", № 19, 1959, стр. 11.

[2] Նույն տեղում։

Գլխավոր Միության մեջ, որը հիմնվել էր 1948 թվականին։ Այդ թվականի ապրիլի 14-ին տեղի ունեցավ ուսանողների այսպես կոչված, «Առյուծի հրապարակի» կոնգրեսը, որը որոշեց, որ ուսանողների գլխավոր նպատակներից պետք է լինի պայքարը աշխատանքի, միասնության և գիտության համար[1]։ Միությունն ուներ իր ամսագիրը՝ «Քիֆահ ալ-Թալաբահ»՝ «Ուսանողների պայքարը»։ Ուսանողական միությունը մեծ հեղինակություն էր վայելում ուսանող երիտասարդության շրջանում։ Նրա մեջ միավորված էր ուսանողների մոտ 85 տոկոսը։ Նրա կազմի մեջ մտավ նաև քուրդ ուսանողների ընդհանուր միությունը։ Իրաքի ուսանողության Գլխավոր Միությունը մտնում էր Միջազգային ուսանողական միության մեջ։ Բացի ուսանողական միությունից կար նաև Դեմոկրատական երիտասարդության միությունը։ Նա ձևավորվեց 1950 թվականին և մտնում էր Դեմոկրատական երիտասարդության համաշխարհային ֆեդերացիայի կազմի մեջ։

Չափազանց ծանր ու իրավազուրկ վիճակում էր գտնվում իրաքցի կինը։ Նա ընտրական իրավունքից զուրկ էր, տղամարդու հետ համեմատած ցածր էր վարձատրվում և ընտանիքում իր ամուսնու ստրուկն էր։

Սակայն երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Իրաքում սկսված ընդհանուր դեմոկրատական շարժումն իր մեջ ընդգրկեց նաև կանանց, որոնք սկսեցին գիտակցել, որ պետք է պայքարել կանանց իրավահավասարության համար, մասնակցել երկրի քաղաքական կյանքին։ Այդ հողի վրա երկրում ծնունդ առավ կանանց կազմակերպված շարժում, ստեղծվեց կանանց ազատագրության համար պայքարող կոմիտե, որի ղեկավարը Իրաքի կոմունիստական պարտիայի անդամ, մեծ հայրենասեր, դոկտոր Ազավիա Մահմուդ Ադիբն էր։ Կանանց միությունն ուներ իր տպագիր օրգանը՝ «Կանանց իրավունքը» ամսագիրը[2]։ Այդ կազմակերպությունը ղեկավարում էր Իրաքի կանանց պայքարը իրենց իրավունքների, խաղաղության պաշտպանության, մասսայական ոչնչացման զենքի արգելման համար։ Կանանց ազատագրության համար պայքարող կոմիտեն զգալի դեր խաղաց Իրաքի կանանց ինքնագիտակցությունը զարգացնելու և նրանց պայքարը կազմակերպելու ուղղությամբ։

Սակայն Իրաքում պարտիաների և դեմոկրատական կազմակերպությունների գործունեության համար նպաստավոր պայմաններ չկային։ Կառավարությունը ժողովրդական ելույթների ճնշման տակ հարկադրված լինելով ժամանակ առ ժամանակ թույլատրել նրանց գոյությունը, այնուհետև, ռեակցիայի ուժեղացմանը զուգընթաց, սաստկացնում էր ռեպրեսիաները և ոտնահարում աշխատավորների դեմոկրատական իրավունքները։ Այդ ռեպրեսիաները, ինչպես նաև ահաբեկումն ու ձերբակալությունները իրենց գագաթնակետին հասան 1954 թվականին, երբ ընդունվեցին մի ամբողջ շարք ռեակցիոն օրենքներ։ 1954 թվականի օգոստոսի 22-ին Նուրի Սաիդի կառավարությունն ընդունեց «Դեկրետ Իրաքի քաղաքացիությունից զրկելու մասին»։ Համաձայն այդ դեկրետի բոլոր կոմունիստները զրկվում էին քաղաքացիությունից և իշխանությունները կարող էին նրանց արտաքսել երկրից, չնայած, որ դա հակասում էր Իրաքի սահմանադրության 7 հոդվածին։ Օրենքը «հնարավորություն» էր տալիս ձերբակալված կոմունիստներին պահպանել իրենց քաղաքացիությունը, եթե նրանք իրենց պատիժը կրելուց հետո ներկայանային ոստիկանություն և հայտարարեին իրենց լոյալության մասին[1]։

Կոմունիստներին քաղաքացիությունից զրկելը խոր զայրույթ առաջացրեց երկրի ներսում և ողջ արաբական աշխարհում։ Լիբանանի իրավաբանների մի խումբ բողոք ուղարկեց Իրաքի կառավարությանը։ Այդ բողոքում ասված էր. «Իրաքի քաղաքացիների մի մասին քաղաքացիությունից զրկելը հանդիսանում է տեռորիստական ակտ, որը հակասում է մարդու օրինական իրավունքներին, Իրաքի կոնստիտուցիային և միջազգային իրավունքին։ Այդպիսի օրենսդրական ակտեր չեն իմացել նույնիսկ միջին դարերը»[2]։

[1] „Всемирные студенческие новости", № 10, Прага, 1954, стр. 21.
[2] „Советская женщина", № 9, М., 1954, стр. 31.



[1] ЦГАОР, ф. 4459, оп. 24, ед. хр. 1182, 1954, л. 114.
[2] Նույն տեղում, թ. 133.

Ընդունվեց նաև օրենք, որը խաղաղության կողմնակիցներին և երիտասարդության դեմոկրատական միությանը դասում էր կոմունիստական կազմակերպությունների շարքը, նրանց վրա տարածելով 1954 թվականի օգոստոսի 22-ի վերոհիշյալ օրենքը։ Բացի դրանից ընդունվեց նաև մեկ այլ որոշում, որը ցմահ բանտարկություն և մահապատիժ էր նախատեսում խաղաղության շարժման մասնակիցներին և երիտասարդական դեմոկրատական կազմակերպությունների անդամներին[1]։

1954 թվականի օգոստոսի 22-ին ընդունվեց նաև «Դեկրետ արհմիությունների մասին»։ Բոլոր արհմիությունները արգելվեցին։ Ներքին գործերի մինիստրությանը իրավունք տրվեց թույլատրել այն արհմիությունները, որը նա կգտներ նպատակահարմար։ Այդ դեկրետից հետո ստեղծվեցին մի շարք արհմիություններ, որոնց ղեկավարները բանվորական շարժմանը խորթ մարդիկ էին։ Գաղտնի ոստիկանությունն ուժեղացրեց իր հսկողությունը նրանց վրա։ Բազմաթիվ արհմիություններ հարկադրված եղան անցնել ընդհատակ։

1954 թվականի սեպտեմբերի 22-ին ընդունվեց մեկ այլ ռեակցիոն, Իրաքի դեմոկրատական ազատությունները սահմանափակող օրենք։ Դա ասոցիացիաների վերաբերյալ դեկրետն էր։ Այդ դեկրետով արգելվեցին բոլոր քաղաքական պարտիաները, հասարակական, գրական, կրոնական, գեղարվեստական և սպորտային բոլոր ընկերություններն ու ակումբները։ Փակվեցին մոտ 465 այդպիսի կազմակերպություններ։ Երկրում լռեց քաղաքական ու հասարակական կյանքը դադարեց։ Դրա փոխարեն մոլեգնում էր ռեակցիան։

Չբավարարվելով վերոհիշյալ օրենքներով, Իրաքի կառավարող կլիկը 1954 թվականի նոյեմբերի 10-ի՝ մամուլի վերաբերյալ դեկրետով փակեց 225 քաղաքական, գիտական ու կրոնական թերթեր ու ամսագրեր։ Թողնվեց միայն 7 լրագիր, որը լրիվ հսկողության էր ենթարկվում կառավարության կողմից[2]։ Դեմոկրատական ուժերը զրկվեցին իրենց խոսքն ասե-

[1] Г. Фарман... стр. 73—74.

[2] „The Iraqi Revolution", Baghdad, 1958, p. 94.



լու, իրենց օրգանները հրատարակելու հնարավորությունից։ Նրանք դրվեցին վերին աստիճանի ծանր կացության մեջ։

Իրաքի կառավարությունը արգելեց նաև դեմոնստրացիաները։ 1954 թվականի նոյեմբերի 12-ի ցույցերի և ժողովների մասին դեկրետով սահմանվում էր, որ միայն ներքին գործերի մինիստրը իրավունք ուներ թույլատրել ժողովներ ու ցույցեր։ Տիրող վերնախավն այնքան էր վախեցած ժողովրդական շարժումներից, որ ներքին գործերի մինիստրին իրավունք տրվեց որոշել շարասյուների երկարությունն ու լայնությունը, ցույցերի լոզունգները և այլն։ Բացի դրանից ներքին գործերի մինիստրն իրավունք ուներ գնդակոծել ցույցերը[1]։

Այս ոստիկանական միջոցառումներով Իրաքի կառավարությունը փորձում էր ճնշել երկրում ծավալվող ազատագրական շարժումը և փակել բոլոր դեմոկրատական ուժերի բերանը՝ Բաղդադի ագրեսիվ ռազմական խմբավորմանը միանալու նախօրյակին։

Դեմոկրատական ազատություններին փոխարինելու եկան ոստիկանական դաժան միջոցառումները։ Ձերբակալվեցին բազմաթիվ առաջադեմ գործիչներ։ Կասկածում էին ամենքին։ Ինչպես նշում է Գ. Ֆարմանը մարդկանց բռնում էին ուղղակի փողոցում։ «Արարատ» թերթը հաղորդում է, որ 1949 թվականի մի քանի ամիսների ընթացքում միայն բանակում ձերբակալվեցին մոտ 7 հազար մարդ, որոնց մեղադրում էին կոմունիստներին պատկանելու կամ համակրելու մեջ։ Բանը հասավ այնտեղ, որ մի շարք վայրերում քաղաքացիներին արգելեցին շուն պահել, «նկատելով, որ երբ ոստիկանությունը մեկը ձերբակալելու համար տուն մը կպաշարե, շունին հաչոցը կհասկցնե հետապնդումի առարկա անձին, թե վտանգված է և որը փախուստ կուտա ոստիկաններու մուտքեն առաջ»[2]։ 1955 թվականին երկրում կար մոտ 50000 քաղաքական բանտարկյալ։ Նրանց թիվը հետագա տարիներին ավելի մեծացավ։ Բանտերը լեփ-լեցուն էին։ Միայն Բաղդադի կենտրոնական բանտում 1956 թվականին կար 7400 մարդ, որոնք գտնվում էին անասելի ծանր պայմաններում։ «Ալ-Ջումհուրիա»-ն

[1] Տե՛ս Г. Фарман... стр. 76.

[2] «Արարատ», 1949, 7 հուլիսի։

1956 թվականին նշում էր, որ Իրաքի բանտերը այնքան լիքն են, որ կառավարությունը որոշել է Բաղդադում կառուցել մի նոր բանտ ևս՝ 6 հազար հոգու համար։

Բացի ընդհանուր ոստիկանությունից, Իրաքի կառավարության թույլտվությամբ Կիրկուկում, Բասրայում, Զուբեյրում և Ֆաոյում, այսինքն օտարերկրյա մոնոպոլիաների պատկանող նավթաբեր շրջաններում, ստեղծվեցին հատուկ ոստիկանական ուժեր, որոնք փաստորեն ենթակա էին օտարերկրյա նավթային ընկերությանը և ոչ թե կառավարությանը[1]։ Դա Իրաքի սուվերենության սահմանափակող փաստերից մեկն է։

Երկիրը պատված էր լրտեսների ու պրովոկատորների լայն ցանցով։ Լրտեսներ կային հասարակական բոլոր շերտերից, նույնիսկ մինիստրներից։ Լրտեսների թիվը ռևոլյուցիայից առաջ հասնում էր 24000-ի[2], թեև, ինչպես Կարակտուսն է նշում, այդ թիվը շատ է փոքրացված։ Լրտեսները վխտում էին ամենուրեք։ Նրանք հետևում էին մարդկանց կինոներում, թատրոններում, սրճարաններում, ձեռնարկություններում և նրանց ասած կարծիքը կարող էր կործանարար լինել յուրաքանչյուր մարդու համար։ Ուսանողների անվան տակ ուսումնական հաստատություններն էին խծկվում ոստիկանական գործակալներ։ Շատ ուսանողների կաշառելու և ահաբեկելու միջոցով դարձնում էին գործակալներ[3]։ Ոստիկանությունը լսում էր հեռախոսային խոսակցությունները, կարդում նամակները և այլն։ Նա դարձավ ամենազոր։ Նույնիսկ արդյունաբերական և առևտրական գործարքները հաստատելու և օրինականացնելու համար գործարք կնքողները պետք է ոստիկանությունից վկայական ունենային, որը հաստատեր նրանց քաղաքական բարեհուսությունը։ Արգելվեցին առաջադեմ գործիչների ստեղծագործությունները, խիստ սահմանափակվեց հասարակական և քաղաքական գրականության տարածումը։ Դրա փոխարեն գրական շուկան ողողել էին խայտ-

[1] „The Iraq Times", February 15, 1954.

[2] Caractus,... p. 53.

[3] „Всемирные студенческие новости", № 8, Прага, 1956, стр. 26.



բիալիստական գաղութատիրական գաղափարները քարոզող գրքերը։ Երկրում ճնշվում էր ազատ խոսքն ու ազատ կարծիքը, ստեղծվել էր ծանր ու հեղձուցիչ մթնոլորտ։ Ոստիկանական սանձարձակ ռեժիմի հաստատումը խոսում էր Իրաքի կառավարման սիստեմի անանկության մասին։ Կառավարող ուժերն ու օտարերկրյա իմպերիալիստները այլևս ընդունակ չէին սովորական մեթոդներով պահպանելու իրենց տիրապետությունը, ուստի դիմում էին ամենածայրահեղ միջոցների։

Իրաքում ստեղծված ներքաղաքական իրադրության հարցի առթիվ 1956 թվականին հայտարարությամբ հանդես եկավ Իրաքի կոմունիստական պարտիայի Կենտրոնական կոմիտեն։ Նա պահանջում էր Իրաքի ժողովրդին տալ կոնստիտուցիոն իրավունքներ, չեղյալ հայտարարել Նուրի Սաիդի բոլոր հակաժողովրդական և հակազգային դեկրետները, արձակել պառլամենտը, որը չէր ներկայացնում Իրաքի ժողովրդին, անցկացնել ազատ ընտրություններ և ժողովրդին տալ դեմոկրատական ազատություններ[1]։ Դա կենսական պահանջ էր, առանց որի անհնար էր պատկերացնել Իրաքի դեմոկրատական զարգացումը։

Աշխատավորների տնտեսական ծանր պայմանները, դեմոկրատական ազատությունների բացակայությունն ու ոստիկանական տեռորիստական ռեժիմի հաստատումը էլ ավելի ուժեղացրեց երկրում ծավալվող ազգային-ազատագրական շարժումը, որը գնալով ավելի ու ավելի մեծ թափ էր ստանում։

[1] ЦГАОР, ф. 4459, оп. "4, ед. хр. 1182, 1956, л. 71.

# ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԻՐԱՔՈՒՄ

## 1945—1958

*Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ ներքին և միջազգային մասշտաբով ուժերի նոր փոխհարաբերություն ստեղծվեց, ուժեղ թափ առացան ազգային ազատագրական շարժումները արաբական երկրներում։*

*Իրաքը դուրս չմնաց այդ ընդհանուր շարժումից։ Իրաքում ծավալված ազգային-ազատագրական պայքարը ընդհանուր արաբական ազատագրական շարժման անբաժանելի մասն է կազմում։ Սակայն, դա իհարկե, չի բացառում, որ արաբական երկրներից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները, խնդիրների լուծման և պայքարի մեթոդների յուրօրինակությունները։*

*Ազգային-ազատագրական շարժումները բոլոր գաղութային և թույլ զարգացած երկրներում, այդ թվում և Իրաքում, ունեն երկու կողմ, արտաքին և ներքին։ Արտաքինը դա պայքարն է իմպերիալիզմի դեմ՝ օտարերկրյա լծից ազատվելու և քաղաքական ինքնուրույնություն ձեռք բերելու համար, որն անհամեմատ ավելի նպաստավոր պայմաններ է ստեղծում յուրաքանչյուր երկրի տնտեսական և քաղաքական զարգացման համար։*



*Ինչ վերաբերում է ազգային-ազատագրական շարժումների ներքին կողմին, ապա դա աշխատավորական մասսաների պայքարն է տիրապետող կլիկի և շահագործողական դասակարգերի դեմ։ Պայքարելով իրենց երկրի քաղաքական ազատագրության համար և այդ խնդրում միասին ընթանալով ազգային-բուրժուազիայի հետ, նրանք միաժամանակ պայքարում են իրենց տնտեսական վիճակի բարելավման, քաղաքական-դեմոկրատական իրավունքների ընդլայնման և, ընդհանրապես, ներքին բարեփոխումների համար։ Այդ պայքարի սրությունը կախված է աշխատավորական ուժերի հասունության, կազմակերպվածության և նրանց կողմից իրենց շահերը գիտակցելու աստիճանից, ինչպես նաև այն բանից, թե ազգային-ազատագրական շարժումը տվյալ մոմենտում զարգացման ինչ փուլում է գտնվում և ինչ խնդիրներ է լուծում։*

*Այդ պատճառով էլ սխալ կլինի ազգային-ազատագրական շարժումը հանգեցնել միայն իմպերիալիզմի դեմ մղվող պայքարին, գաղութային լծից ազատագրվելու խնդրին։ Իրավացի է իրաքցի առաջավոր գործիչ Ազիզ ալ-Հաջը, որն իր «Ազգությունն ու դեմոկրատիան» գրքում գրում է. «Գիտակից արաբական մասսաները ամենուրեք ազգային ազատագրության նպատակները չեն բաժանում տնտեսական ու կուլտուրական մակարդակի բարձրացման, ինդուստրացման ու ագրարային ռեֆորմի, քաղաքական դեմոկրատական իրավունքների իրագործման և բոլոր ժողովուրդների ինքնորոշման իրավունքի նպատակներից»[1]։*

*Իրաքի ազգային-ազատագրական շարժման հիմնական ուժերն էին բանվոր դասակարգը, որին ղեկավարում էր կոմունիստական պարտիան, և գյուղացիությունը։ Իմպերիալիզմի և ֆեոդալական ռեժիմի դեմ մղվող պայքարում նրանց հետ, թեև որոշ տատանումներով, ընթանում էր ազգային հակաիմպերիալիստական բուրժուազիան։ Այդ պայքարում ակտիվորեն հանդես էին գալիս նաև մտավորականությունը և*

---

[1] عزيز الحاج...، ص ٧

տատանողությունը։ Չնայած Իրաքի բանվոր դասակարգը փոքրաքանակ էր, սակայն շնորհիվ իր կազմակերպվածության և հակաիմպերիալիստական ամենահետևողական պայքարի, հանդիսանում էր ազգային-ազատագրական շարժման առաջատար ուժը։

***

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Իրաքի աշխատավորները պայքար սկսեցին իրենց դրության բարելավման համար։ Այդ պայքարի ավանգարդում ընթանում էր բանվոր դասակարգը՝ կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ։ Երկրում ծավալվում էր հուժկու գործադուլային շարժում։ Գործադուլային շարժման հիմնական բովանդակությունը կազմում էին աշխատավարձի բարձրացման, աշխատանքային օրվա կրճատման, առողջապահական պայմանների բարելավման, արհմիություններ կազմակերպելու և այլ պահանջներ։

1946 թվականի հուլիսին բռնկվեց Կիրկուկի նավթագործ բանվորների գործադուլը, որը ամենախոշորն էր Իրաքում մինչ այդ եղած գործադուլների մեջ։ Գործադուլին մասնակցում էին մոտ 6 հազար բանվորներ[1]։ Նրանք «Իրաք պետրոլիում»-ին ներկայացրին հետևյալ պահանջները. աշխատավարձը բարձրացնել, բնակարանային պայմանները բարելավել, տալ արձակուրդներ, թույլատրել արհմիությունների կազմակերպում, ստեղծել ապահովագրական ֆոնդ, կազմակերպել պրոֆեսիոնալ դպրոցներ և իրաքցի բանվորներին տալ այնպիսի իրավունքներ, որպիսին ունեն օտարերկրյա բանվորները[2]։ Այդ պահանջները, որի մշակմանը ակտիվորեն մասնակցել էին կոմունիստները, ցույց էին տալիս, որ նավթարդյունաբերության բանվորները լավ էին հասկանում իրենց դասակարգային խնդիրները։ Մանավանդ կարևոր էր արհմիությունների ստեղծման և իրաքցի բանվորների իրավունք-

[1] „Революция в Ираке", стр. 28.
[2] ЦГАОР, ф. 4459, оп. 24, ед. хр. 232, 1946., л. 89.



ները օտարերկրյա բանվորների իրավունքներին հավասարեցնելու պահանջները։ Վերևում արդեն նշվել է, որ օտարերկրյա մոնոպոլիաներին պատկանող նավթարդյունաբերության մեջ իրաքցի բանվորները զրկված էին արհմիություններ ստեղծելու իրավունքից։ Նրանք չէին օգտվում նույնիսկ այն սահմանափակ իրավունքներից, որ օրենքը ընձեռում էր Իրաքի արդյունաբերության մյուս ճյուղերում աշխատող բանվորներին։ Այդ պատճառով էլ վերջին այդ երկու պահանջներով, Կիրկուկի բանվորները փաստորեն հանդես էին գալիս օտարերկրյա իմպերիալիզմի դեմ, որը հաշվի չէր առնում երկրի օրենքները և նավթարդյունաբերության մեջ հաստատել էր այնպիսի կարգ ու կանոն, որպիսին ինքն էր ցանկանում։

1946 թվականի հուլիսի 14-ին մի քանի հազար գործադուլավորներ հավաքվեցին Կիրկուկի մոտ՝ Կաուր Բագիում, որպեսզի իմանան, թե նավթային ընկերությունը ինչ պատասխան է տալիս իրենց պահանջներին։ «Իրաք Պետրոլիում»-ը հրաժարվեց բավարարել գործադուլավորների գլխավոր պահանջները։ Կիրկուկի նահանգապետը գործադուլավոր բանվորների հավաքը գնահատեց որպես կարգ ու կանոնի խախտում և ոստիկանությանը կարգադրեց ցրել այդ միտինգը։ Ոստիկանները կրակեցին խաղաղ գործադուլավորների վրա։ Ինչպես նշում է «Սաութ ալ-Ահալի»-ն, բանվորներին այնպես չէին գնդակոծում, կարծես թե նրանք ոչ թե մարդիկ էին, այլ անասուններ։ Սպանվեց 18 և վիրավորվեց 50 բանվոր։ Ոստիկանությանը հաջողվեց զավազանների, հրացանների և գնդացիրների օգնությամբ ճնշել Կիրկուկի բանվորների գործադուլը։

Կաուր Բագիի արյունոտ դեպքերը ցույց տվին, որ Իրաքի իշխանությունները պատրաստ են հանուն օտարերկրյա իմպերիալիզմի շահերի թափել սեփական աշխատավորների արյունը։

Կաուր Բագիի գնդակոծության լուրը արագորեն տարածվեց ամբողջ երկրով մեկ։ Նա խորը ցասում առաջացրեց ժողովրդի մոտ։ Դեմոկրատական ուժերը պահանջում էին պատժել մեղավորներին և բավարարել նավթագործ բանվորների պահանջները։ «Իրաք պետրոլիում»-ը հարկադրված եղավ

դիմել որոշ զիջումների։ Նա բավարարեց բանվորների պահանջը աշխատավարձի բարձրացման հարցում։ Նավթային ընկերությունը խոստացավ իրականացնել բնակարանային շինարարություն, բարելավել բուժսպասարկումը և այլն[1]։ Սակայն նա մերժեց բանվորների գլխավոր՝ արհմիությունների կազմակերպելու և իրաքցի բանվորներին օտարերկրյա բանվորների հետ հավասար իրավունքներ տալու պահանջները։ Եվ սա հասկանալի է։ Իմպերիալիստների համար, որոնք Իրաքի բնական հարստությունների շահագործումից ստանում էին առասպելական շահույթներ, առանձնապես դժվար չէր որոշ չափով ավելացնել բանվորների աշխատավարձը և դրանով փորձել թուլացնել բանվորական շարժումը։ Սակայն թույլատրել արհմիությունների ստեղծում, դա նշանակում էր նպաստել բանվորների կազմակերպության բարձրացմանը, որը իմպերիալիզմը չէր կարող թույլ տալ։

Իրաքի հասարակական կյանքում նշանակալից երևույթ էր մամուլի աշխատավորների պայքարը հանուն խոսքի և մամուլի ազատության։ Իրաքի կառավարությունը, երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, ռևոլյուցիոն շարժման ճնշման տակ, հարկադրված եղավ որոշ դեմոկրատական ազատություններ տալ, այդ թվում թույլատրել մի քանի դեմոկրատական թերթերի հրատարակումը։ Սակայն նա պատեհ առիթը բաց չէր թողնում ճնշում գործադրելու մամուլի վրա, երբեմն փակելու դեմոկրատական ուղղության պատկանող թերթերը։ Կառավարությունը չէր հանդուրժում, որ այդ թերթերը քննադատում էին նրա ներքին ու արտաքին քաղաքականությունը, հանդես էին գալիս ընդդեմ իմպերիալիզմի և պահանջում ներքին բարեփոխումներ։ Ռեպրեսիաները հատկապես ուժեղացան 1946 թվականի կեսերին։ Կառավարությունը փակեց մի շարք լրագրեր։ Մամուլի համար ստեղծվեցին ծանր պայմաններ։ Դա մամուլի աշխատողներին ստիպեց 1946 թվականի սեպտեմբերի 6-ին հայտարարել համընդհանուր գործադուլ[2]։ Հաջորդ օրը թերթերը լույս չտեսան։ Գործադուլին

[1] **Mahmud al-Habib,** The Labour movement in Iraq, „Middle Eastern Affairs", vol. 7, № 4, New York, 1956, p. 142.

[2] ЦГАОР, ф. 4459, оп. 3, ед. хр. 1779, 1946., л. 85.



մասնակցեցին նաև տպարանական բանվորները։ Նրանք պահանջում էին կրկին թույլատրել արգելված թերթերի հրատարակումը և մամուլի գոյության համար ստեղծել նորմալ պայմաններ։

Մամուլի աշխատողների և տպարանական բանվորների գործադուլին միջամտեց ոստիկանությունը, քանի որ տպարանական բանվորները հրաժարվում էին հրատարակել նաև կառավարական թերթերը։ Ժանդարմները բանի ուժով ստիպում էին հրատարակել կառավարական թերթերը։ Նրանք բանվորներին թույլ չէին տալիս ազատ դուրս գալ տպարաններից, այլ հսկում էին նրանց։

Մամուլի և տպարանական բանվորների գործադուլը տևեց 9 օր և ավարտվեց սեպտեմբերի 15-ին։ Թեև այդ գործադուլը որոշակի հաջողությունների չհասցրեց, սակայն նա զգալի չափով նպաստեց մամուլի աշխատողների և տպարանական բանվորների համերաշխության ամրապնդմանը և ինքնագիտակցության բարձրացմանը։

Հետպատերազմյան շրջանի առաջին տարիների ամենախոշոր բանվորական ելույթներից էր Բաղդադի երկաթուղային բանվորների գործադուլը, որը տեղի ունեցավ 1946 թվականի սեպտեմբերին։ Բանվորները պահանջում էին բարձրացնել աշխատավարձը, վճարել հանգստյան օրերի համար, թույլատրել ունենալ իրենց արհմիությունը և այլն[1]։ Գործադուլը ղեկավարելու համար ստեղծվեց գործադուլային կոմիտե։ Երկաթուղային բանվորների պայքարը ղեկավարում էին կոմունիստները։ Գործադուլավորները դուրս եկան ցույցի, պահանջելով կառավարությունից բավարարել իրենց պահանջները։ Կառավարությունը խաղաղ ցուցարարների դեմ հանեց զինված ոստիկաններ, որոնք ցրեցին ցույցը և ձերբակալեցին շատերին։ Ձերբակալվածների թվում էին նաև Ազգային-ազատագրության պարտիայի (այդ պարտիան իր ծրագրով շատ մոտ էր Իրաքի կոմունիստական պարտիային) ղեկավարներ Հուսեյն աշ-Շաբիբին և Սելիմ Նաման։

Սակայն դա չխափանեց երկաթուղային բանվորների գործադուլը։ Շուտով ընդհատվեց երկաթուղային կապը Բաղ-

[1] ЦГАОР, ф. 4459, оп. 3, ед. хр. 1821, 1946. л. 1.

դադի և Կիրկուկի, Բաղդադի և Բասրայի, Բաղդադի և Սամառայի միջև։ Գործադուլն ընդունեց սպառնալի չափեր։ Այս պայմաններում Իրաքի կառավարությանն օգնության եկավ բրիտանական իմպերիալիզմը։ Անգլիացիները հնդկական զորքեր տեղափոխեցին Իրաք։ Դրանով անգլիացիները խախտեցին անգլո-իրաքյան 1930 թվականի պայմանագիրը, որը Մեծ Բրիտանիային իրավունք էր տալիս զորք տեղափոխել պատերազմի ժամանակ կամ պատերազմի վտանգի դեպքում։ Հայտնի է, որ Իրաքում այդ ժամանակ ոչ պատերազմ և ոչ էլ պատերազմի վտանգ կար։ Անգլիական իմպերիալիստները պարզապես վախենում էին, որ Իրաքում ստեղծված լարված դրությունը կարող է սպառնալ իրենց տիրապետությանը և օգնության շտապեցին Իրաքի կառավարող կլիկին։ Օպոզիցիոն պարտիաները խիստ կերպով հանդես եկան Ումարիի կառավարության դեմ, նրան մեղադրելով երկրի ազգային շահերը ոտնահարելու մեջ։ Կառավարությունը փակեց մի շարք թերթեր և նրա խմբագիրներին դատի տվեց։

Հնդկական զորքերի ժամանումից հետո ռեակցիան անցավ հարձակման։ Երկաթուղիների գլխավոր անգլիացի Սրմիթեր գործադուլի ժամանակ հնդիկ զինվորներին օգտագործեց գնացքների երթևեկությունը կազմակերպելու համար[1]։ Բացի այդ ոստիկանները ներխուժեցին գործադուլավորների տները և ուժով ստիպեցին նրանց դուրս գալ աշխատանքի։ Բազմաթիվ գործադուլավոր բանվորներ ձերբակալվեցին, նրանց մեջ գտնվեցին նաև անհայտ տարրեր, որոնք դիմեցին շտրեյկբրեխերության. նրանք առանց գործադուլային կոմիտեի համաձայնության դուրս եկան աշխատանքի։ Սակայն գործադուլավորները խորտակեցին շտրեյկբրեխերների նավթամթերքներով լի գնացքը։

Կառավարությունը մոբիլիզացնելով իր բոլոր միջոցները, կանգ չառնելով ոստիկանական տեռորի առջև, ճնշեց երկաթուղային բանվորների գործադուլը։ Գործադուլային կոմիտեն հաշվի առնելով ստեղծված իրադրությունը և ուժերի փոխհարաբերությունը, հրապարակեց մանիֆեստ, որով բանվորներին կոչ էր անում անցնել աշխատանքի, սակայն շարու-

[1] ЦГАОР, ф. 4459, оп. 3, ед. хр. 1821, л. 2.



նակել պնդել իրենց պահանջների վրա և պատրաստ լինել նոր ելույթների[1]։

Չնայած գործադուլավորներին չհաջողվեց հասնել իրենց պահանջների բավարարմանը, սակայն նրանք անցան պայքարի մեծ դպրոց և ուսանելի շատ բան քաղեցին։ Գործադուլը միաժամանակ ցույց տվեց, որ աշխատավորների պայքարն իրենց վիճակի բարելավման համար անխուսափելիորեն վեր է ածվում իմպերիալիզմի դեմ պայքարի, որովհետև Իրաքի կառավարությունը և օտարերկրյա իմպերիալիստները միասնական ճակատով էին հանդես գալիս աշխատավորական մասսաների դեմ։ Այս շրջանում տեղի ունեցան նաև Բասրայի նավավերանորոգման բանվորների, Բաղդադի կոպի աշխատողների գործադուլները և այլն։

Իրաքի ընդհանուր ազգային-ազատագրական շարժման մի մասն էր կազմում քրդական ազատագրական շարժումը։ Քրդերը կազմում են Իրաքի ազգաբնակչության մոտ 20 տոկոսը։ Նրանք բնակվում են երկրի հյուսիսային մասում, գլխավորապես Մոսուլի, Էրբիլի, Սուլեյմանիայի և Կիրկուկի լիվաներում, կազմելով տեղի բնակչության գերակշռող մասը։ Նրանք գտնվում են իրավազուրկ վիճակում, արաբական ադմինիստրացիայի ճնշման ներքո։ Քրդերը ազգային ճնշման էին ենթարկվում արաբ տիրող վերնախավի կողմից։

Քուրդ ժողովուրդը բազմիցս հանդես է եկել հանուն իր իրավունքների պաշտպանման և պայմանների բարելավման։

1945 թվականի սեպտեմբերին բռնկվեց մի նոր ապստամբություն։ Ապստամբության ղեկավարն էր Մուստաֆա Բարզանին։ Քրդական ազատագրական շարժման նպատակն էր ավտոնոմ իրավունքներ ձեռք բերել և նպաստավոր պայմաններ ստեղծել քրդերի տնտեսական և կուլտուրական զարգացման համար։ Սակայն Իրաքի կառավարությունը չէր ցանկանում այդ հարցում որևէ զիջում կատարել քրդերին։ Նա ապստամբների դեմ հանեց կանոնավոր բանակ՝ ծանր հրետանիով և ինքնաթիռներով։ Ըստ որում ավիացիան Իրաքի կառավարության տրամադրության տակ դրեցին անգլիացիները և

[1] ЦГАОР, ф. 4459, оп. 3, ед. хр. 1790, л. 55.

ամերիկացիները[1]: Նրանք անհանգստացած էին քրդական ազատագրական շարժման ծավալումից, վախենալով, որ նա վնաս կհասցնի իրենց նավթային տիրապետություններին և բացի այդ կարող է տարածվել հարևան երկրների քրդական շրջանները ու վտանգ ստեղծել նրանց տիրապետությանը Մերձավոր ու Միջին Արևելքի այդ շրջանում:

Կառավարական զորքերը բարբարոսական ռմբակոծման ենթարկեցին ապստամբների անպաշտպան գյուղերն ու բնակավայրերը: Նրանք ճնշեցին ապստամբությունը: Մուստաֆա Բարզանուն հաջողվեց իր զինված ջոկատներով փախչել Իրան: Այնտեղ փախան նաև Բարզանի ցեղին պատկանող մոտ 8000 մարդ: Սակայն դա լարվածությունը չմեղմացրեց: 1946 թվականին նոր հուզումներ սկսվեցին: Կառավարությունը պահանջեց, որ բարզանցիները իրենց տրամադրության տակ եղած զենքը հանձնեն: Սակայն վերջիններս հրաժարվեցին կատարել այդ պահանջը, որից հետո կառավարական զորքերն անցան հարձակման: Բազմաթիվ քրդեր իրենց բնակավայրերից քշվեցին Իրաքի այլ շրջաններ: Շարժման ղեկավարներից շատ հոգի մահապատժի ենթարկվեցին[2]:

Չնայած դրան, քուրդ ժողովուրդը չդադարեցրեց պայքարը օտարերկրյա իմպերիալիստների և ֆեոդալ շեյխերի տիրապետության դեմ: Նա արաբ աշխատավորական մասսաների հետ միասին հանդես էր գալիս հանուն Իրաքի անկախության և դեմոկրատացման:

Քրդական աշխատավորական մասսաները հանդիսացել են Իրաքի ազգային-ազատագրական շարժման առաջավոր ջոկատներից մեկը:

1947 թվականին կրկին հանդես եկան Կիրկուկի նավթագործ բանվորները: Գործադուլին մասնակցում էին մոտ 7000 բանվորներ: Գործադուլը, որ տևեց մի քանի օր, նավթային ընկերություններին միլիոնավոր դինարի վնասներ հասցրեց[3]: Նավթային ընկերությունը դաժան հաշվեհարդար տեսավ գոր-

[1] ЦГАОР, ф. 4459, оп. 1, ед. хр. 4178, л. 46.

[2] „Революция в Ираке“, стр. 23.

[3] „Trade Union Record“, vol. 15, № 10, New Delhi, 1959, p. 12.



ծադուլավորների հետ: Նա բազմաթիվ բանվորների հեռացրեց աշխատանքից:

Աշխատանքից զրկված և քաղցի դատապարտված բանվորները կազմակերպեցին բողոքի երթ: Նրանք ոտքով 200 մղոն կտրեցին, որպեսզի իրենց բողոքը հայտնեն կառավարությանը: Սակայն Բաղդադում նրանց դիմավորեց ոստիկանությունը, որը ցրեց ցուցարարներին և նրանց մի մասին ձերբակալեց: Այսպես վերջացավ Կիրկուկի բանվորների սոված երթը:

Բանվորները անհաջողությունից չէին վհատվում: Նրանք իրենց պարտությունները համարում էին ապագա մարտերի փորձություն:

Բանվորների հետ միասին պայքարում էին նաև գյուղացիությունը, ինտելիգենցիան և ուսանողությունը: Դժգոհությունը համակել էր սոցիալական բոլոր շերտերին: 1946 թվականին տեղի ունեցավ Այբու-Մաթնաուրի (Մոսուլի լիվա) գյուղացիների զինված ելույթը ընդդեմ ֆեոդալ շեյխերի[1]: Դա երկրորդ համաշխարհային պատերազմից հետո առաջին գյուղացիական զինված ելույթն էր: Դրա պատճառը մի կողմից գյուղացիների տնտեսական ծանր և հողազուրկ վիճակն էր, իսկ մյուս կողմից՝ ֆեոդալների ձգտումը իրենց ձեռքը բերել ոչ միայն պետական, այլ նաև գյուղացիներին և ցեղերին պատկանող հողերը: Սակայն գյուղացիական այս ելույթը դաժանորեն ճնշվեց իշխանությունների կողմից:

1947 թվականի մայիսին սկսվեց Բաղդադի Ֆեյսալի անվան կոլեջի ուսանողների դասադուլը: Այս կոլեջը գտնվում էր անգլիական վարչության տնօրինության տակ: Վարչությունը և նրա դիրեկտորը՝ անգլիացի Վուդը ամեն կերպ վիրավորում էին իրաքցիների ազգային զգացմունքները և կոլեջում քարոզում էին իմպերիալիստական գաղափարներ: Անգլիացիները դրանով փորձում էին այլասերել Իրաքի երիտասարդությանը և նրանց դարձնել հլու գործիք բրիտանական իմպերիալիզմի ձեռքում:

[1] „Доклады Московской ордена Ленина Сельхоз Академи им Тимирязева (ТСХА)“, вып. 58, М., 1960, стр. 317,

Կոլեջի ուսանողությունը չտանելով այս վիրավորանքները դասադուլ հայտարարեց, պահանջելով հարգել իրաքցիների ազգային արժանապատվությունը, չխառնվել նրանց ներքին գործերին և կոլեջում կիրառել դասավանդման դեմոկրատական մեթոդներ։

Ուսանողության այս դասադուլը լայն արձագանք գտավ երկրում։ Դասադուլ ուսանողությանը իրենց համերաշխությունը հայտնեցին Բաղդադի, Բասրայի, Նեջեֆի, Էդ-Դիվանիայի և մյուս վայրերի ուսանողները։

«Ալ-Վաթան»-ը անդրադառնալով այդ դեպքերին, իրավացիորեն նշում էր, որ «բոլոր այդ իրադարձությունները մեր գործերում իմպերիալիստների միջամտության արդյունք են։ Օտարերկրյա խորհրդատուները և հրավերները ամեն ինչ անում են հօգուտ իմպերիալիստների՝ ի վնաս ազգային շահերի»։

Աշխատավորական մասսաների շարժման ուժեղացումը սարսափեցրեց Իրաքի կառավարությանը։ Վերջինս որոշեց դիմել ամեն տեսակի միջոցների այդ շարժումը ճնշելու և գլխատելու համար։ 1947 թվականին նա ցրեց մի շարք դեմոկրատական պարտիաներ և արհմիություններ, փակեց բազմաթիվ պրոգրեսիվ թերթեր և այլն։ Սկսվեցին մասսայական ձերբակալությունները[1]։

Իրաքի կառավարությունն ամենադաժան կերպով հետապնդում էր կոմունիստական պարտիային, որը թեև գտնվում էր ընդհատակում, սակայն կարևոր դեր էր խաղում մասսաների ակտիվության պայքարը կազմակերպելու գործում։ 1947 թվականի հունվարի 18-ին ոստիկանական գործակալներին հաջողվեց ձերբակալել Իրաքի կոմունիստական պարտիայի գլխավոր քարտուղար Յուսուֆ Սալման Յուսուֆին (Ֆահդ), Կենտկոմի քաղբյուրոյի անդամ Զաքի Մուհամմեդ Բասսիմին, Իբրահիմ Նաջին Շումելին և ուրիշներին։ Նրանք հավաքվել էին կոմպարտիայի ընդհատակյա օրգան «Ալ-Քաիդա»-ի հերթական համարը լույս ընծայելու համար։ Իրաքի կառա-

[1] Тарих Мухаммед, Борьба Иракского народа за свободу и независимость. см. "Современный Восток", М., 1957, № 5, стр. 14.



վարող կլիկը նրանց մեղադրում էր կոմունիստական պրոպագանդայի և օտարերկրյա կոմպարտիաների հետ ունեցած կապի մեջ։ 1947 թվականի հունիսին դատարանը Յուսուֆ Սալմանին և նրա երկու ընկերներին դատապարտեց մահապատժի։

Դա բողոքի մեծ ալիք առաջացրեց ամբողջ երկրում։ Ի պաշտպանություն նրանց իրենց ձայնը բարձրացրին աշխատավորական մասսաները և առաջադեմ գործիչները։

Ժողովրդական շարժման ճնշման տակ Իրաքի իշխանությունները ստիպված եղան նրանց մահվան դատավճիռը փոխել. Յուսուֆ Սալմանը դատապարտվեց ցմահ, իսկ Զաքի Բասիմը և Նաջին Շումելին՝ 15 տարվա բանտարկության[1]։

Սակայն դեմոկրատական կազմակերպություններին ու գործիչներին հետապնդելը, առաջադիմական թերթերը փակելը, տեռորն ու ձերբակալությունները և մյուս ոստիկանական միջոցառումներն ի վիճակի չէին կանգնեցնել իմպերիալիզմի ու թագավորական-ֆեոդալական կլիկի դեմ ուղղված աշխատավորների խլրտումներն ու դեմոկրատական շարժումը։ Այդ շարժումն ուժեղ բնույթ ընդունեց և վերածվեց հակաիմպերիալիստական ապստամբության 1948 թվականի հունվարյան իրադարձությունների ժամանակ։ Դեռևս 1947 թվականի վերջերին առաջ քաշվեց մի պայմանագրի նախագիծ, որը պետք է փոխարիներ անգլո-իրաքյան 1930 թվականի պայմանագիրը։ Այդ պայմանագրի 5-րդ հոդվածի համաձայն Անգլիան իրավունք ուներ Իրաքում պահել իր զորքերը։ Նրա տնօրինության տակ էր դրվում երկու ռազմական բազա՝ Շայբայում և Հաբբանիայում։ Բրիտանական զորքերը իրավունք ունեին ազատ տեղափոխվել Իրաքի տերիտորիայով։ Իրաքը պարտավորվում էր իր բանակը զինել անգլիական զենքով և օգտագործել անգլիական ռազմական հրահանգիչներին։ Բանակը դրվում էր բրիտանական ռազմական միսիայի հսկողության տակ։ Իր կարիքները հոգալու համար Իրաքը կարող էր միայն Անգլիայից պաշտոնյաներ հրավիրել[2]։ Պայմանագիրը սահմանափակում

[1] ЦГАОР, ф. 4459, оп. 24, ед. хр. 10, л. 163.
[2] «Дипломатический словарь», М., 1960, т. 1, стр. 86.

էր Իրաքի իրավունքները արտաքին քաղաքականության բնագավառում, քանի որ նա պարտավոր էր ամեն մի հարցում «խորհրդակցել» Անգլիայի հետ։

Իրաքի ժողովուրդը երբեք չհաշտվեց այդ պայմանագրի հետ։ Սկսած 1930 թվականից նա անընդհատ պայքարել է պայմանագրի լիկվիդացման համար, պահանջելով երկիրը ազատագրել բրիտանական իմպերիալիզմի կապանքներից։ 1930 թվականի անգլո-իրաքյան պայմանագրի վերացումը և օտարերկրյա զորքերն Իրաքից դուրս բերելը դարձավ Իրաքի դեմոկրատական ուժերի հիմնական պահանջներից մեկը[1]։

Պայքարն այդ պայմանագրի դեմ ավելի ուժեղացավ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո։ Հաշվի առնելով այդ հանգամանքը, ինչպես նաև ազգային-ազատագրական շարժման ուժեղացումը Մերձավոր և Միջին Արևելքի մյուս երկրներում, որը հարցականի տակ էր դնում Անգլիայի գաղութային դիրքերը, վերջինս փորձեց առերես զիջել, ցույց տալ, որ ինքը իրոք հաշվի է առնում Իրաքի ժողովրդի պահանջները և պատրաստ է հրաժարվել 1930 թվականի պայմանագրից։ Անգլիան և Իրաքը համաձայնության եկան 1930 թվականի պայմանագիրը փոխարինել նորով։ 1948 թվականի հունվարի 6-ին Անգլիա ժամանեց իրաքյան պատվիրակությունը, որի կազմի մեջ մտնում էին պրեմիեր-մինիստր Սալեհ Ջաբրը, սենատի նախագահ Նուրի Սաիդը և արտաքին գործերի մինիստր Ֆադիլ Ջամալին։

1948 թվականի հունվարի 15-ին Պորտսմութում Անգլիայի արտաքին գործերի մինիստր Բեվինը և Իրաքի պրեմիեր-մինիստր Սալեհ Ջաբրը ստորագրեցին նոր պայմանագիր։ Պորտսմութի պայմանագրով նախատեսվում էր ստեղծել «Անգլո-իրաքյան համատեղ պաշտպանության օրգան» և միասին օգտագործել Իրաքի ռազմա-օդային բազաները։ Եթե Մեծ Բրիտանիան 1930 թվականի պայմանագրով իրավունք ուներ օգտվել միայն երկու բազաներից՝ ապա այժմ նա կարող էր առանց վճարի օգտագործել Իրաքի բոլոր օդային բազաները։

[1] توفيق منير، ... ص ٣٩



Անգլիան նախկինի պես իրավունք ուներ Իրաքում պահելու իր զորքերը։ Իրաքը պարտավորվում էր անգլիական զորքերին ցույց տալ ամեն տեսակի օգնություն ցամաքում, օդում և ջրում։ Նոր պայմանագիրը պարտավորեցնում էր Իրաքի բանակին համագործակցել անգլիական բանակի հետ ոչ միայն երկրի ներսում, այլ նաև Իրաքի սահմաններից դուրս[1]։ Դա նշանակում էր, որ անգլիական զորքերը կարող էին Իրաքի զորքերի հետ միասին մասնակցել ժողովրդական ելույթների ճնշմանը։ Բացի այդ անգլիական իմպերիալիզմը կարող էր իրաքյան բանակն օգտագործել իր շահերի համար, նրան ներքաշելով ամեն տեսակի ավանտյուրաների մեջ։

Ինչպես տեսնում ենք, 1948 թվականի Պորտսմութի պայմանագիրը ոչ միայն չվերացրեց 1930 թվականի պայմանագրի ծանր պայմանները, այլ, ընդհակառակը, էլ ավելի ընդլայնեց բրիտանական իմպերիալիզմի իրավունքները և ուժեղացրեց Իրաքի կախվածությունը Անգլիայից։ Պորտսմութի պայմանագրի կնքման լուրը Իրաքի ժողովուրդն ընդունեց խորը զայրույթով։ Իրաքի աշխատավորները պահանջում էին ոչ թե մեկ անիրավահավասար պայմանագիրը փոխարինել մեկ ուրիշով, այլ ընդհանրապես չեղյալ համարել բոլոր անիրավահավասար պայմանագրերը։ Պորտսմութի պայմանագրի դեմ դուրս եկան բանվորները, գյուղացիները, ուսանողությունը և ազգային հակաիմպերիալիստական բուրժուազիան։ Աշխատավորական մասսաների ելույթը սկզբից ևեթ ղեկավարում էր կոմունիստական պարտիան։ Իրաքի կոմունիստական պարտիայի զեկուցագրում ասված էր, որ կոմունիստական պարտիան 1948 թվականին «գլխավորեց ժողովրդի հուժկու ազգային ապստամբությունը»[2]։

Իրաքի կոմունիստական պարտիան հանդես էր գալիս թե 1930 թվականի և թե 1948 թվականի պայմանագրերի դեմ։ Նա պահանջում էր վերացնել բոլոր անիրավահավասար պայմանագրերը և վարել Իրաքի ազգային շահերին համապատասխանող քաղաքականություն։ 1948 թվականի դեպքերի ժամանակ Իրաքի կոմունիստական պարտիան ղեկավարելով մասսաների

[1] „Дипломатический словарь“, т. 1, стр. 87.
[2] „World News“, vol. 1. № 20, London, 1954, p. 389.

շարժումը, վերոհիշյալ պահանջների հետ միասին առաջադրեց նաև ընդհանուր դեմոկրատական պահանջներ։

Պորտսմուտի պայմանագրի դեմ հանդես եկավ նաև ազգային-դեմոկրատական պարտիան։ Այդ պարտիայի հայտարարության մեջ ասված էր, որ Իրաքը հույս ուներ ազատագրվել 1930 թվականի պայմանագրի կապանքներից, մինչդեռ նոր պայմանագիրը նրան դնում է ավելի ծանր կապանքների տակ։ Նա Պորտսմուտի պայմանագիրը դիտում էր որպես ոտնձգություն Իրաքի սուվերենության դեմ և արգելք նրա ազգային զարգացման ճանապարհին[1]։

Նույնպիսի հայտարարությամբ հանդես եկավ նաև ալ-Իսթիքլալ պարտիան։ Այդ պարտիայի հայտարարության մեջ ասված էր, որ Բևին-Ջաբր դաշնագիրն ավելի ծանր է, քան թե նրան նախորդող դաշնագիրը, որ Պորտսմուտի դաշնագրի համաձայն Իրաքի զավակները պետք է զոհվեն բրիտանական կայսրության շահերը պաշտպանելու համար։

Հունվարի 16-ից սկսած, երբ հայտնի դարձավ նոր պայմանագրի բովանդակությունը, Իրաքում սկսվեցին ժողովրդական ցույցեր, որոնց ավանգարդում բռնվում էին բանվորները։ Ակտիվորեն հանդես էին գալիս ուսանողները։ Նրանք Իրաքի պառլամենտի առջև կազմակերպեցին ցույց։ Դիմելով պառլամենտի անդամներին ցուցարարներն ասում էին. «Դեպուտատնե՛ր։ Դուք պառլամենտ եք ընտրվել ոչ թե ժողովրդի կամքով, այլ Նուրի Սաիդի կողմից կեղծված ընտրությունների միջոցով։ Դուք, դեպուտատներ, չեք ներկայացնում ժողովրդին, այդ պատճառով էլ ձեր կողմից ստեղծված կառավարությունը չի ճանաչվում ժողովրդի կողմից»[2]։ Ոտքի ելած ժողովուրդը պահանջում էր կառավարության հրաժարականը և չեղյալ համարել Պորտսմուտի պայմանագիրը։ Ոստիկանությունը կատարեց մի շարք ձերբակալություններ, բայց այլևս անզոր էր հանդարտեցնել ժողովրդական մասսաներին և վերականգնել կարգ ու կանոնը։ Քաղաքական միթինգները երկ-

[1] Հովհ. Աղբաշյան, Արաբական ազգային ազատագրական շարժումը, Բեյրութ, 1959, էջ 80։

[2] Г. Фарман... стр. 37.



րում չիկացել էր։ Պայթյունը կարող էր ամեն րոպե տեղի ունենալ։ Այսպիսի պայմաններում, հունվարի 21-ին խնամակալը՝ Աբդուլ Իլլահը, թագավորական պալատում հրավիրեց խորհրդակցություն, որին մասնակցում էին մինիստրները, քաղաքական գործիչները և Իրաքի քաղաքական պարտիաների ներկայացուցիչները։ Վերջիններս քննադատեցին Ջաբրի կառավարությանը և պահանջեցին անհապաղ չեղյալ հայտարարել նոր կնքված պայմանագիրը։

Ժողովրդական շարժման ճնշման տակ, ստեղծված քաղաքական իրադրության պայմաններում խնամակալը հարկադրված եղավ նահանջել։ Խորհրդակցությունից հետո նա հանդես եկավ մի հայտարարությամբ, որտեղ ստիպված էր խոստովանել, որ Պորտսմուտի պայմանագիրը չի համապատասխանում Իրաքի ազգային շահերին։ Նա միաժամանակ հայտարարեց, որ այդ պայմանագիրը չի վավերացվի[1]։ Հաջորդ օրը Բաղդադում տեղի ունեցավ վիթխարի ցույց, որին մասնակցեց 50 հազար մարդ։ Ցուցարարները պահանջում էին, որ Սալեհ Ջաբրը հրաժարական տա և Իրաքում ստեղծվի ամենից ազգային կաբինետ, որն ի վիճակի լինի իրականացնել ժողովրդի ազգային պահանջները[2]։

Հունվարի 22-ին Լոնդոնի ռադիոյով հանդես եկավ Սալեհ Ջաբրը, որը դեռևս այնտեղ էր գտնվում։ Նա հայտարարեց, որ այդ պայմանագիրը արտահայտում է Իրաքի ազգային շահերը։ Անդրադառնալով Իրաքում պայմանագրի դեմ ծավալված շարժմանը, նա նշեց, որ դա կոմունիստներն են հրահրել, օգտագործելով մի քանի անմեղ ուսանողների։ Ջաբրը հայտարարեց, որ ինքը կվերադառնա Իրաք և հաշվեհարդար կտեսնի բոլոր այդ «խռովարարների» հետ։

Սալեհ Ջաբրի այդ ռադիոելույթն ավելի զայրացրեց ժողովրդական մասսաներին, նրանք պահանջում էին Ջաբրի գլխավորած կառավարության անհապաղ հրաժարականը։

Վերադառնալով Իրաք Ջաբրը ոչ միայն հրաժարական

[1] ЦГАОР, ф. 4459, оп. 2, ед. хр. 1079, 1948., л. 10; Majid Khadduri, Independent Iraq, p. 271.

[2] ЦГАОР, ф. 4459, оп. 3, ед. хр. 2282, 1948., л. 42.

շավեց, այլև ուրի հանեց ոստիկանությունը: Զինված ոստիկանները գրավեցին Բաղդադի կարևոր ստրատեգիական կետերը, խաչմերուկները և հրապարակները: Բայց դա չսարսափեցրեց ժողովրդին: Բանվորները, ծառայողները, ուսանողները և ուսանողությունը դուրս եկան ցույցի, որը վերածվեց ապստամբության: Ապստամբների հիմնական լոզունգներն էին. «Կորչի անգլո-սաքսոնական իմպերիալիզմը», «Պորտսմուտի պայմանագիրը Սալեհ Ջաբրը թանաքով գրեց, մենք այն կջնջենք արյունով», «Իմպերիալիզմի զորքերը դո՛ւրս Իրաքից և արաբական երկրներից», «Կորչի սարսափի և սովի կառավարությունը» և այլն: Դրա հետ միասին նրանք պահանջում էին հաց, խոսքի և մամուլի ազատություն, պարտիաների և արհմիությունների թույլատրում և այլն[1]: Սկսվեցին մարտերը ցուցարարների և ոստիկանների միջև: Շատ վայրերում ապստամբները գրավեցին ոստիկանական տեղամասերը, զինաթափ արին ժանդարմներին ու զինվեցին նրանց զենքով: Ցուցարարների մի մասը շարժվեց դեպի մինիստրների խորհրդի շենքը, փորձելով մտնել պրեմիեր-մինիստրի ընդունարան: Առջևից ընթանում էին լացող կանայք, արյունի մեջ թաթախած կարմիր դրոշներով: Ոստիկանությունը նրանց վրա կրակ բացեց գնդացիրներից և զրահամեքենաներից[2]:

Նրան հաջորդեց ևս մեկ ցուցարարների գրոհը: Սակայն դա նշանակություն չունեցավ ապստամբության ելքի համար: Վճռական ճակատամարտը ապստամբ ժողովրդի և կառավարական ուժերի միջև տեղի ունեցավ Բաղդադի կենտրոնական կամուրջի վրա: Տիգրիսի վրա գտնվող այդ կամուրջը Բաղդադի երկու մասերն միացնում է իրար: Տիգրիսի տարբեր ափերում գտնվող Բաղդադի մասերից՝ ալ-Կյարխայից և ալ-Ռուսաֆայից ցուցարարները շարժվեցին դեպի կամուրջը, փորձելով միանալ միմյանց: Ոստիկանները ցուցարարներին գնդացրային կրակով դիմավորեցին, աշխատելով թույլ չտալ նրանց միանալու: Ցուցարարները երկու կողմից անցան գրոհի, ճզմեցին ոստիկանների դիմադրությունը, նրանցից

[1] Հովհ. Աղբաշյան, Արաբական ազգային ազատագրական պայքարը, Բեյրութ, 1959, էջ 83:

[2] ЦГАОР, ф. 4459, оп. 12, ед. хр. 431, л. 180.



շտաբերին նետեցին Տիգրիսի ջրերը և միացան միմյանց: Նման վիճակ էր տիրում նաև երկրի մյուս շրջաններում. Ժողովուրդը դրության տերն էր Սուլեյմանիայում, Հյուսիսային Իրաքում, Էրբիլում, նավթային կենտրոններ Կիրկուկում և Մոսուլում:

Սալեհ Ջաբրի կառավարության հարցն արդեն լուծված էր: Նա այլևս հենարան չուներ: Երկու մինիստրների և 30 դեպուտատների հրաժարականից հետո, 1948 թվականի հունվարի 27-ի երեկոյան հրաժարական տվեց նաև Սալեհ Ջաբրը: Վախենալով ժողովրդական ցասումից Նուրի Սաիդը կանացի շորերով ծպտված փախավ Թուրքիա, իսկ Սալեհ Ջաբրը՝ Հորդանան:

Իրաքի պառլամենտը սենատի և դեպուտատների պալատի համատեղ նիստում միաձայն մերժեց Պորտսմուտի պայմանագիրը[1]: Դա Իրաքի ժողովրդի հաղթանակն էր և անգլիական գաղութարարների ու նրանց հետ համագործակցող Իրաքի կառավարող ֆեոդալական վերնախավի պարտությունը:

Այդ հաղթանակը հեշտ ձեռք չբերվեց: Աշխատավորական մասսաները տվեցին մոտ 100 սպանված և 360 վիրավոր: Ձերբակալվածների թիվը հասնում էր 8000-ի: Բաղդադի այն կամուրջը, որի վրա տեղի ունեցան այդ հերոսական իրադարձությունները, ժողովուրդն անվանեց «Զոհված մարտիկների կամուրջ»:

1948 թվականի հունվարյան դեպքերը նշանակալի են ոչ միայն նրանով, որ իմպերիալիզմի և ներքին ռեակցիայի դեմ մղված պայքարում համախմբվեցին բոլոր հայրենասիրական ուժերը, այլև նրանով, որ այդ պայքարին ակտիվորեն մասնակցեցին Իրաքի բոլոր ազգությունները: Արաբների հետ միասին կողք կողքի պայքարում էին քրդերը և հայերը: Այդ կապակցությամբ Հովհ. Աղբաշյանը գրում է. «Նշանակալի էր Իրաքի մեջ հայերու լայն մասնակցությունը Պորտսմուտի դաշնագրին դեմ կազմակերպված զանգվածային ցույցերուն: Իրաքի ազատագրական շարժման իրենց հետևողական մասնակցության համար, արաբ և քուրդ հայրենասերներու կող-

[1] ЦГАОР, ф. 4459, оп. 3, ед. хр. 2285, л. 13.

քին, խոշտանգվեցան և Նուրի Սաիդի բանտերում մեջ երկար տարիներ արգելափակվեցին նաև շարք մը հայ հեղափոխական աշխատավորներ, որոնց վերջինները ազատ արձակվեցան միայն հուլիսի 14-ի հեղափոխության վաղորդայնին[1]։

Մեծ է 1948 թվականի հունվարյան ապստամբության նշանակությունը։ Նա ցույց տվեց, որ եթե օպոզիցիոն, հայրենասեր ուժերը հանդես գան միասնական ճակատով և հետևողական լինեն, ապա նրանց համար սարսափելի չէ ոչ օտարերկրյա իմպերիալիզմը և ոչ էլ ներքին ռեակցիան կլիկը։ 1948 թվականի հունվարին ձեռք բերված հաղթանակը հավատ ներշնչեց աշխատավորական մասսաներին իրենց ուժերի նկատմամբ։ Սիրիայի կոմունիստական պարտիայի գլխավոր քարտուղար Խալեդ Բեկդաշը անդրադառնալով այդ երևույթին, նշել է, որ նա արդեն նոր երևույթ մըն էր արաբներու մղած ազգային ճակատամարտերուն մեջ, այն իմաստով, որ ազգային պայքարը զորավոր կերպով միաձուլվեցավ դեմոկրատական պայքարի հետ։ Օտար զորքերու հեռացման պահանջին և իմպերիալիստական դաշնագրերի մերժումին կողքին ի հայտ եկավ հացի պահանջը, գյուղացիներու կարգ մը պահանջները, ուսանողներու և կուսակցություններու ազատության պահանջը, որոնք բոլորը մտան ազգային ընդհանուր շարժման տարբերին մեջ»[2]։ Այդ շարժման ընթացքում իմպերիալիզմի դեմ մղվող պայքարն անխուսափելիորեն միահյուսվեց Իրաքում տիրապետող ռեակցիոն ռեժիմի դեմ մղվող պայքարին։

1948 թվականի հունվարյան ապստամբությունը Իրաքի ազգային-ազատագրական շարժման փայլուն էջերից է։

* * *

Սալեհ Ջաբրի կառավարության հրաժարականից հետո իշխանության գլուխ եկավ Մուհամմեդ ալ-Սադրի կառավարությունը։ Նա հաշվի առնելով ուժերի նոր փոխհարաբերու-

[1] Հովհ. Աղբաշյան, Արաբական ազգային ազատագրական զարթոնքը, էջ 108։

[2] Նույն տեղում, էջ 83։



թյունը հարկադրված էր ճնշումները մեղմացնել և ժողովրդին տալ որոշ դեմոկրատական ազատություններ։ Սկսեցին լույս տեսնել մի շարք արգելված թերթեր, իրենց գործունեությունը վերսկսեցին քաղաքական պարտիաները և այլն։ Սակայն այդ դրությունը երկար չշարունակվեց։ 1948 թվականի մարտի 15-ին Իսրայելի դեմ սկսված պատերազմի կապակցությամբ Իրաքում մտցվեց արտակարգ դրություն և ուժի մեջ մտան պատերազմի ժամանակվա օրենքները։ Այդ պատերազմը պատրվակ էր իրաքյան ռեակցիայի ձեռքին կրկին հարձակվելու աշխատավորների դեմոկրատական իրավունքների վրա։ Փակվեցին բազմաթիվ առաջադիմական լրագրեր, մի շարք պարտիաներ դադարեցրին իրենց գործունեությունը։ Դարձյալ բռնկվեցին ձերբակալություններն ու տեռորը։ Ռեակցիան ավելի սաստկացավ, երբ 1949 թվականի հունվարին իշխանության գլուխ եկավ Նուրի Սաիդը։

Ի պատասխան այս բռնությունների երկրում ծայր առավ խիստ դժգոհությունը։ Տարբեր վայրերում տեղի ունեցան բողոքի ցույցեր։ Ցուցարարները կրում էին հետևյալ լոզունգները. «Մենք պահանջում ենք հաց և ազատություն», «Մենք պահանջում ենք դադարեցնել ձերբակալությունները և ազատել քաղաքական բանտարկյալներին», «Կորչի Նուրի Սաիդի կառավարությունը» և այլն[1]։ Ոստիկանությունը դաժանորեն ճնշում էր այդ ցույցերը։ Գործի անցան ռազմական տրիբունալները, որոնք ցույցի մասնակիցներին դատապարտում էին տաժանակիր բանտարկության։

1949 թվականի փետրվարին ռեակցիան Իրաքում դիմեց անլուր ոճրագործության։ Մահապատժի դատապարտվեցին Իրաքի կոմունիստական պարտիայի ղեկավարները՝ գլխավոր քարտուղար Յուսուֆ Սալմանը (Ֆահդ), Հուսեյն Մուհամմեդ աշ-Շաբիբին, Զաքի Մուհամմեդ Բասսիմը և Յաղուդա Իբրահիմ Սադիքը։ Նրանք մահվան էին դատապարտվել դեռևս 1947 թվականին, սակայն ժողովրդական շարժման ճնշման տակ մահապատիժը փոխարինվել էր բանտարկությամբ։ Այժմ ռեակցիան որոշեց ի կատար ածել իր վաղեմի երազանքը՝

[1] ЦГАОР, ф. 4459, оп. 3, ед. хр. 2651, л. 60.

հույս ունենալով դրանով գլխատել կոմունիստական շարժումը Իրաքում։ 1949 թվականի փետրվարի 14-ին կախաղան բարձրացվեցին Յուսուֆ Սալմանը և Մուհամմեդ աշ-Շաբիբին, իսկ 16-ին՝ Զաքի Բասսիմը և Յաղուբ Սադիքը։ Բացի այդ 56 կոմունիստներ դատապարտվեցին ցմահ բանտարկության և տաժանակիր աշխատանքների։ Կոմունիստական պարտիայի ղեկավարների մահապատիժը բողոքի մեծ շարժում առաջացրեց Իրաքում և արաբական մյուս երկրներում։ Աշխատավորական մասսաները և առաջադեմ գործիչները պահանջում էին դադարեցնել քաղաքական ազատությունների ճնշումը, դադարեցնել մահապատիժները։ Բողոքի ուժեղ շարժում տեղի ունեցավ Սիրիայում, Լիբանանում և մյուս երկրներում։ Մեծ ցույցեր տեղի ունեցան Հալեպում։ «Բազմահազար ցուցարարներ,— գրում է «Արարատ» թերթը,— հարձակված են Հալեպի իրաքյան դեսպանատան վրա, քարկոծելով դուռն և այպանական բացականչություններ ընելով Իրաքի կառավարության և դեսպանատան անձնակազմի հասցեին։ Ամբոխն այս ցույցով իր բողոքն ու զայրույթը հայտնած է Իրաքի կառավարության դեմ, որ վերջերս ձերբակալված կոմունիստ լիդերները մահվան դատապարտեց և որ այսօր այդ մահավճիռները գործադրված են»[1]։

Անգլիայի կոմունիստական պարտիայի օրգան «Դեյլի Ուորկերը», Իրաքի կոմունիստական պարտիայի ղեկավարների մահապատիժը համարեց «դավաճանական սպանություն», որին ձգտում էր թե անգլիական իմպերիալիզմը և թե Իրաքի կառավարությունը։

Ոստիկանական այս միջոցառումներով ռեակցիան վրեժ էր լուծում առաջադեմ ուժերից 1948 թվականի հունվարին նրանց տարած հաղթանակի համար։ Մյուս կողմից նա դրանով ուզում էր ահաբեկել ժողովրդական մասսաներին և ճնշել ազգային-ազատագրական շարժումը։ Բայց Իրաքի աշխատավորական մասսաները չհաշտվեցին ռեակցիայի ճնշման տակ։ Նրանք կառավարության ձեռնարկած ոստիկանական միջոցառումներին պատասխանեցին գործադուլներով, ցույցերով, բողոքներով և այլն։ 1948 թվականի մարտին գործա-

[1] «Արարատ», 1949, 2 մարտի։



դուլ հայտարարեցին երեք հազար երկաթուղայիններ, մայիսին կոմունիստները ղեկավարեցին Իրաքից Միջերկրական ծով ձգվող նավթամուղի բանվորների գործադուլը[1]։ 1949—1950 թվականներին բազմիցս հանդես եկան ուսանողները։ Բանվորները և ուսանողները առաջադրում էին տնտեսական և քաղաքական մի շարք պահանջներ։ 1950 թվականի դեկտեմբերին սկսվեց Իրաքի բոլոր բանկերի ծառայողների գործադուլը, որին մասնակցում էր հինգ հազար մարդ[2]։ Նրանք պահանջում էին հրաժարվել աշխատավարձերը սառեցնելու քաղաքականությունից։

Այս շրջանի բանվորական ելույթների առանձնահատկություններից մեկն այն էր, որ նրանք ավելի կազմակերպված բնույթ ունեին։ Գործադուլավորներն աշխատավարձի բարձրացման պահանջի հետ միասին առաջադրում էին նաև իրենց դասակարգային շահերը պաշտպանող պահանջներ, ինչպես, օրինակ՝ արհմիությունների ազատություն, աշխատանքային օրենքի կիրառում, աշխատանքից արձակված բանվորների ետ ընդունում և այլն։ Այս տեսակետից հատկանշական էր Բաղդադի «Նուրի ֆաթթահ» տեքստիլ ֆաբրիկայի բանվորների գործադուլը, որը տեղի ունեցավ 1951 թվականի մայիսին։ Գործադուլի պատճառը 200 բանվորների աշխատանքից հեռացնելն էր։ «Նուրի ֆաթթահ» ֆաբրիկայի բանվորները միահամուռ դուրս եկան և պահանջեցին աշխատանքի ընդունել իրենց հեռացված ընկերներին։ Դրա հետ միասին նրանք պահանջում էին աշխատավարձի բարձրացում և աշխատանքային կոդեքսի կիրառում[3]։ Ստեղծվեց գործադուլային կոմիտե։ Այս գործադուլը լայն պաշտպանություն գտավ Իրաքի մյուս վայրերի բանվորների կողմից։ Շուտով համերաշխության գործադուլ հայտարարեցին Բաղդադի մյուս տեքստիլ ֆաբրիկայի՝ «Սալիհ Իբրահիմ»-ի բանվորները։ Ծխախոտի արդյունաբերության բանվորների արհմիությունը հայտարարեց, որ ինքը լրիվ կերպով պաշտպանում է տեքստիլագործների պա-

[1] ЦГАОР, ф. 4459, оп. 3, ед. хр. 2387, л. 8.
[2] Նույն տեղում, ед. хр. 3352, л. 61.
[3] „Саут аль-Ахали“, Багдад, 1951, 28 мая.

հանքները։ Նրանց միացան նաև Քազիմի քաղաքի բանվորները։ Վերջիններս իրենց արհմիության միջոցով դիմեցին կառավարությանը, նշելով, որ իրենք պահանջում են կառավարությունից պարտավորեցնել ֆաբրիկանտներին լրիվ կերպով բավարարել բանվորների պահանջները[1]։ Այսպիսով, տեքստիլագործ բանվորների գործադուլը վերածվեց պրոլետարական համերաշխության մի հոյակապ ցույցի։ Իրաքի կառավարությունը հայտարարեց, որ գործադուլավորների աշխատանքի վերադառնալուց հետո միայն արձակված բանվորները կվերականգնվեն աշխատանքի։ Սակայն գործադուլային կոմիտեն, շատ լավ իմանալով, որ դա մի դատարկ խոստում է և նպատակ ունի գործադուլը կազմալուծելու, մերժեց այդ առաջարկը։ Դրանից հետո կառավարությունը գործադուլավորների դեմ նետեց ոստիկանությանը և ուժով ճնշեց տեքստիլագործ բանվորների այդ ելույթը։

Իրաքի պրոլետարիատի դասակարգային ինքնագիտակցության զարգացման մասին է վկայում Բասրայի նավթագործների 1951 թվականի մարտի գործադուլը, որն ընդգրկեց ամբողջ Ազ-Զուբեյրի նավթային շրջանը։ Նավթագործների գործադուլին շուտով միացան երկաթուղային կայարանի, Ֆաոի նավահանգստի և այլ ձեռնարկությունների բանվորները։ Գործադուլավորները պահանջում էին աշխատավարձը բարձրացնել 50 տոկոսով, բարելավել աշխատանքի պայմանները և իրենց նկատմամբ լավ վերաբերմունք ցույց տալ[2]։

«Սադա ալ-Ահալի» թերթը անդրադառնալով «Բասրա Պետրոլիում»-ի բանվորների գործադուլին նշում էր, որ օտարերկրյա իմպերիալիստները ոչ միայն թալանում են Իրաքը, այլև ծաղրում նրա սուվերենությունն ու նրա զավակների արժանապատվությունը։

Եվ ահա Բասրայի բանվորները չդիմանալով այդ ծաղր ու ծանակին, ոտքի ելան ընդդեմ իմպերիալիստների, պահանջելով վերադարձնել իրենց արժանապատվությունը։

Այս գործադուլը, որը տևեց 13-օր, ավարտվեց բանվոր-

[1] „Сада аль-Ахали", Багдад, 1951, 30 мая.
[2] „The Iraq Times", March 1, 1951.



ների հաղթանակով։ Նավթային ընկերությունը հարկադրված եղավ բավարարել գործադուլավորների մի շարք պահանջները։

1951 թվականի հուլիսին խոշոր ցույցեր սկսվեցին անգլիական ռազմա-օդային բազա Շայբայում՝ Բասրայի մոտ։ Ցուցարարները պահանջում էին Իրաքից դուրս բերել անգլիական զորքերը։ Դրա հետ միասին նրանք բողոքում էին Իրաքի կառավարության դեմ, որը վարում էր Իրաքը անգլիական ռազմական բազայի վերածելու քաղաքականությունն[1]։ Խաղաղ ցուցարարների դեմ դուրս եկան Շայբայում գտնվող անգլիական զորքերը։ Զինված անգլիացիները հարձակվեցին ցուցարարների վրա, սպանելով և վիրավորելով նրանցից շատերին։ Անգլիական զորքերը արյան մեջ խեղդեցին աշխատավորների հակաբրիտանական այդ ելույթը։

Անգլիական իմպերիալիստների դեմ հանդես եկան նաև բրիտանական մյուս ռազմա-օդային բազայի՝ Հաբբանիայի բանվորները։ 1952 թվականի հունիսի 9-ին նրանք գործադուլ հայտարարեցին և անգլիական վարչությանը ներկայացրին հետևյալ պահանջները. աշխատավարձի բարձրացում, բանվորների կամայական հեռացումների դադարեցում և աշխատանքային կոդեքսի կիրառում[2]։ Անգլիացիները մերժեցին բավարարել Հաբբանիայի բանվորների պահանջները։ Բանվորները չզիջեցին և շարունակեցին իրենց պայքարը։ Հունիսի 11-ին անգլիական զորքերը և Իրաքի ոստիկանությունը կազմակերպեցին գործադուլավոր բանվորների գնդակոծումը, եղան բազմաթիվ զոհեր և վիրավորներ։ Չբավարարվելով դրանով, նրանք հրդեհեցին շատ բանվորների տները և 60 հոգու շղթայակապ ուղարկեցին «Կարրամադրո»-ի բանտը։ Այդպիսի դաժանությամբ անգլիական զորքերը և Իրաքի ոստիկանությունը ճնշեցին Հաբբանիայի բանվորների ելույթը։ Անգլիական զորքերի հետ Իրաքի ոստիկանության համագործակցությունը Հաբբանիայի գործադուլավորների գնդակոծմանը և դաժան դատաստանը նրանց հետ կրկին անգամ ցույց տվեց, որ

[1] Տե՛ս „Кейхан", Тегеран, 1951, 26 июля.
[2] Տե՛ս „Ас-Сарха", Бейрут, 1952, 24 июня.

Իրաքի կառավարությունը իմպերիալիզմի շահերը ավելի բարձր է դասում իր երկրի ազգային շահերից և հանուն բրիտանական իմպերիալիզմի շահերի պատրաստ է թափել իր սեփական ժողովրդի արյունը։

Ազգային-ազատագրական պայքարին ակտիվորեն մասնակցում, Իրաքի կառավարության քաղաքականության և ֆեոդալ շեյխերի տիրապետության դեմ հանդես էր գալիս նաև Իրաքի գյուղացիությունը։ Հողազրկությունն ու աղքատությունը մի կողմից և ֆեոդալ-շեյխերի ագահությունը, կամայականությունը, ծաղր ու ծանակը մյուս կողմից, ստիպում էին գյուղացիությանը պայքարի դուրս գալ իրենց իրավունքները պաշտպանելու համար։

1951 թվականին մի շարք գյուղացիական ելույթներ տեղի ունեցան Ամարայի, Բասրայի և Քութի լիվաներում։ Գյուղացիները պահանջում էին իրենց հող տալ։ Բացի դրանից նրանք հրաժարվում էին ֆեոդալներին վճարել վարձագին ու պահանջում, որ հարկերը թեթևացվեն։ Մի շարք տեղերում գյուղացիական ելույթները ղեկավարում էին գյուղացիական կոմիտեները[1]։ Այդ ելույթները ճնշելու և ֆեոդալների տիրապետությունը պահպանելու համար Իրաքի կառավարությունը գյուղացիության դեմ հանեց բանակը։ Վերոհիշյալ լիվաներն ուղարկված զորքերը դաժանորեն հաշվեհարդար տեսան գյուղացիների հետ։ Գնդակահարվեց մոտ 280 գյուղացի, իսկ շատերն էլ ձերբակալվեցին։

Նշանակալի էր քրդական գիղայի ցեղին պատկանող գյուղացիների զինված ապստամբությունը։ Ապստամբ գյուղացիները գրավեցին կալվածատերերին պատկանող հողերը և որոշեցին այդ հողերը մշակել կոլեկտիվ կերպով։ Նրանք փորձեցին ստեղծել գյուղատնտեսական կոմունա[2]։ Իրաքի կառավարությունը նրանց դեմ նույնպես զորքեր ուղարկեց, որոնք դաժանորեն ճնշեցին քուրդ գյուղացիների ելույթը։

Սակայն այս շրջանի ամենաաչքի ընկնող գյուղացիական ելույթը՝ դա Ամարայի գյուղացիների 1952 թվականի զինված

[1] Տե՛ս „Арабы в борьбе за независимость", стр. 383.

[2] „Современный Восток", № 5, 1957, стр. 15.



ելույթն էր։ Ընդհանրապես Ամարայի լիվան գյուղացիական շարժումների կարևոր կենտրոններից մեկն է եղել։ Դա պետք է բացատրել նրանով, որ ֆեոդալական տիրապետությունն ու շահագործումն Իրաքում ամենաայլանդակ ձևով դրսևորվում էր հենց այս լիվայում։ Խոշոր չափերի էին հասնում ֆեոդալական կալվածքները։ Ամբողջ լիվայում եղած 832 հազար հեկտար հողից 808 հազար հեկտարը կենտրոնացված էր ֆեոդալների ձեռքում։ Բարձր էր ֆեոդալներին վճարվող վարձագինը և այլն։ Չդիմանալով այս ծանր պայմաններին Ամարայի գյուղացիները բազմիցս հանդես եկան ֆեոդալների դեմ։ Նրանք հող էին ուզում, պահանջում էին վերացնել իրենց կախվածությունը շեյխերից, ոչնչացնել անուղղակի հարկերը և այլն[1]։ Իրաքի ահաբեկված կառավարությունը Ամարա ուղարկեց մեքենայացված ոստիկանություն, որը ճնշեց գյուղացիական այդ ելույթը և «կարգ ու կանոն» հաստատեց Ամարայի լիվայում։

Սակայն պետք է նշել, որ գյուղացիական ելույթները տարերային բնույթ էին կրում, վատ էին կազմակերպված և տեղի էին ունենում մեկը մյուսից անջատ։ Դա, անշուշտ, հեշտացնում էր Իրաքի կառավարության գործողությունները այդ շարժումները ճնշելու գործում։ Չնայած դրան, գյուղացիական ելույթները ցնցեցին հին ռեժիմի հիմքերը։ Բանվորական, գյուղացիական և ուսանողական շարժումները վկայում էին, որ Իրաքի ճգնաժամը համազգային էր և շոշափում էր բոլոր դասակարգերի ու սոցիալական շերտերի շահերը։

* * *

1950-ական թվականների սկզբներին Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում ուժեղ շարժում սկսվեց նավթարդյունաբերության ազգայնացման համար։ Դա մի նոր էտապ էր թույլ զարգացած երկրների ազգային-ազատագրական պայքարի մեջ։

Նավթարդյունաբերության ազգայնացման և օտարերկրյա նավթային ընկերություններին Իրաքից վտարելու համար

[1] „Новое Время", № 38, 1953, стр. 27.

պայքարի ելան նաև Իրաքի աշխատավորական մասսաները և դեմոկրատական ուժերը։ Այդ պայքարի ուժեղացման վրա մեծ ազդեցություն թողեց անգլո-իրանական նավթային ընկերության ազգայնացումը Իրանում։ Իրաքի աշխատավորական մասսաները իրենց համերաշխությունը հայտնեցին Իրանի աշխատավորներին և պաշտպանեցին Մոսադիղի կառավարության միջոցառումները։ 1951 թվականի հուլիսին Բասրայում տեղի ունեցավ երիտասարդության մեծ ցույց ի պաշտպանություն Իրանում նավթային արդյունաբերության ազգայնացման[1]։ Դա սարսափեցրեց տեղական իշխանություններին և անգլիացիներին։ Բասրայի փողոցներում սկսեցին պարեկություն կատարել անգլիական զորքերը, որոնց հրաման էր տրված ցրել ամեն մի ցույց, օգտագործելով նաև զենք։

1951 թվականի սկզբներին Իրաքի օպոզիցիոն ուժերը կառավարությունից պահանջեցին ազգայնացնել նավթային արդյունաբերությունը։ Նույն թվականի մարտին Իրաքի պառլամենտի 18 դեպուտատներ պաշտոնապես առաջարկություն մտցրին, որ կառավարությունն ընդունի օրենք՝ առանց բացառության բոլոր նավթային ընկերությունները ազգայնացնելու մասին[2]։ Օպոզիցիոն ուժերը նշում էին, որ արդյունաբերության ազգայնացումը յուրաքանչյուր պետության իրավունքն է և Իրաքը նույնպես պետք է օգտվի այդ իրավունքից։

Նավթարդյունաբերության ազգայնացման համար բռնկված շարժումը լուրջ կերպով անհանգստացրեց անգլիական և ամերիկյան իմպերիալիստներին։ 1951 թվականի ապրիլին Բաղդադում Անգլիայի դեսպան Ջոն Թրուտբեկը և Միջին Արևելքի ու Աֆրիկայի գործերով ԱՄՆ-ի պետական քարտուղարի օգնական Մաքգին տեսակցություն ունեցան պրեմիեր-մինիստր Նուրի Սաիդի և արտաքին գործերի մինիստր Սուվեյդիի հետ։ Տեսակցության ժամանակ նրանք պահանջեցին, որ Իրաքի կառավարությունն անհապաղ վճռական միջոցներ ձեռք առնի նրանց դեմ, ովքեր պահանջում են նավթարդյունաբերության ազգայնացում[3]։

[1] Տե՛ս „Бахтаре Эмруз", Тегеран, 1951, 15 июля.
[2] „The Iraq Times", March 27, 1951.
[3] „Телеграф", Бейрут, 1951, 13 апреля.



Երկրում արտակարգ դրություն մտցնելու առիթ տալու նպատակով, շահագրգռված տարրերը Բաղդադում ԱՄՆ-ի ինֆորմացիոն ծառայության շենքի մոտ կազմակերպեցին պրովոկացիոն պայթյուն։ Անգլիան շտապ կարգով զորքեր տեղափոխեց Բասրա և Կիրկուկ ու սկսեց ուժեղացնել Իրաքում գտնվող իր ռազմա-օդային ուժերը։ Դրա նպատակն էր ահաբեկել աշխատավորական մասսաներին և ժողովրդական ելույթների դեպքում անզեն ժողովրդի դեմ հանել զինված անգլիական զինվորներին՝ պաշտպանելու նավթային մոնոպոլիաների շահերը։

Իրաքի կառավարությունը կատարելով անգլիական և ամերիկյան իմպերիալիստների պահանջը սկսեց ռեպրեսիաներ կիրառել պրոգրեսիվ ուժերի նկատմամբ։ Բանվորների և ինտելիգենցիայի մասսայական ձերբակալություններ կատարվեցին Բաղդադում։ Միայն մի քանի օրվա ընթացքում ձերբակալվեց մոտ 200 մարդ։

1951 թվականի մայիսին դեպուտատների պալատում հանդես եկավ պրեմիեր-մինիստր Նուրի Սաիդը։ Անդրադառնալով նավթի ազգայնացման հարցին, նա ի զարմանս բոլորի հայտարարեց, որ «նավթը Իրաքում արդեն ազգայնացված է, որովհետև նա գտնվում է պետության հսկողության տակ։

Մեր հարաբերությունները ընկերության (նավթային—Ն. Հ.) հետ նման են տիրոջ և վարձակալի հարաբերություններին»[1]։ Նուրի Սաիդի այդ դեմագոգիկ հայտարարությունը, որի նպատակն էր քողարկել Իրաքի կառավարության և նավթային ընկերությունների իսկական փոխհարաբերությունները, երկրում ընդունվեց խոր զայրույթով։ Դիտավորյալ կերպով ազգայնացման հարցը նենգափոխելով իրավական տեսակետից նավթը Իրաքի պետությանը պատկանելու հարցի հետ, Նուրի Սաիդը փորձում էր շփոթություն առաջացնել և ապակողմնորոշել աշխատավորական մասսաներին։ Մի՞թե տիրոջ և վարձակալի փոխհարաբերություն է դա, երբ տերը մինչև 1952 թվականը յուրաքանչյուր տոնն նավթի դիմաց

[1] „The Iraq Times", May 7, 1951.

տտանում էր ընդամենը 4 շիլլինգ, իսկ վարձակալը մի քանի անգամ ավելի։

Դեմ դուրս գալով նավթարդյունաբերության ազգայնացմանը, օտարերկրյա մոնոպոլիաները սակայն հասկանում էին, որ նախկին հարաբերությունները պահպանել այլևս հնարավոր չէ։ Նրանք հարկադրված էին զիջել, հակառակ դեպքում կկորցնեին ամեն ինչ։ 1951 թվականի օգոստոսին Իրաքի կառավարության և նավթային երեք ընկերությունների միջև կնքվեց նոր նավթային համաձայնագիր, որը սահմանեց նավթից ստացվող շահույթների բաժանման 50/50-ի սկզբունքը։ Թեև այդ համաձայնագիրը մի քայլ էր դեպի առաջ, համեմատած մինչ այդ եղած փաստաթղթերի հետ, պետք է նշել, որ օպոզիցիոն ուժերն այն չընդունեցին և շարունակեցին պնդել ազգայնացման վրա։ «Իրաք պետրոլիում»-ի գլխավոր դիրեկտոր Գիբսոնը, որը ղեկավարում էր անգլիական պատվիրակությունը, հարկադրված խոստովանեց, որ «եթե Իրաքում չլինեին անգլիական զորքեր, անգլիացիներին չէր հաջողվի համաձայնագիր կնքել Բաղդադի կառավարության հետ»[1]։ Նա միաժամանակ նշեց, որ անգլիական դիվերսիոն նորանոր կոնտինգենտների ժամանումը Իրաք ցույց էր տալիս, որ Անգլիան որոշել էր ոչ մի գնով թույլ չտալ նավթի ազգայնացում։ Անգլիական զորքերի ներկայությունը ամրապնդում էր Նուրի Սաիդի դրությունը։

Նավթի ազգայնացման համար մղվող պայքարն ավելի ուժեղացավ 1952 թվականին։ Փետրվարին պառլամենտը պետք է վավերացներ 1951 թվականի օգոստոսին կնքված պայմանագիրը։ Այդ առթիվ տեղի ունեցան բանվորական և ուսանողական մի շարք ցույցեր։ Ցուցարարները պառլամենտից պահանջում էին չվավերացնել այդ պայմանագիրը և ընդունել օրենք նավթարդյունաբերության ազգայնացման մասին։ Փետրվարին կառավարությունը 15 օրով փակեց երկրի բոլոր ուսումնական հաստատությունները։ Փետրվարի 18-ին և 19-ին քաղաքական պարտիաների կոչով Իրաքում սկսվեց համընդհանուր գործադուլ, որպես բողոք նավթային նոր համաձայնագրի դեմ։ Գործադուլին մասնակցում էին բանվորնե-

[1] „Аванти“, Рим, 1951, 23 августа.



րը, ուսանողները, առևտրականները և այլն։ Գործադուլավորների դեմ կառավարությունը հանեց ոստիկանությանը և զորամասեր։ Նրանք գործադուլավորներին հարկադրում էին սկսել աշխատանքը, բռնի կերպով բացել էին տալիս փակ խանութները և այլն։ Դրա հետ միասին Նուրի Սաիդը դիմեց Իրաքի բնակչությանը, սպառնալով, որ իշխանությունները իրենց պարտքը կկատարեն և դաժան միջոցներ կկիրառեն նրանց դեմ, ովքեր հանդես են գալիս ընդդեմ նոր նավթային համաձայնագրի և պահանջում նավթարդյունաբերության ազգայնացումը։

Համանման հայտարարությամբ նա հանդես եկավ նաև փետրվարի 28-ին, քանի որ ժողովրդական հուզումները չէին դադարում։

Նուրի Սաիդը փորձեց ժողովրդին վախեցնել այն բանով, որ նավթի ազգայնացումը կքայքայի Իրաքը։ Նա հայտարարեց, որ նավթի ազգայնացումն «այժմ կնշանակի գործարանների լրիվ փակում, որը կտանի դեպի գործազրկություն և կունենա այլ հետևանքներ, որոնք կառաջացնեն տնտեսական փլուզում»[1]։ Թե ինչու էր նավթարդյունաբերության ազգայնացումն տնտեսական փլուզում առաջացնելու պատճառ, պարզ չէ։ Պատմական փորձը ցույց է տալիս, որ, ընդհակառակը, օտարերկրյա իմպերիալիստների ձեռքում գտնվող արդյունաբերության ազգայնացումը ծառայում է տվյալ երկրի էկոնոմիկայի զարգացմանը և քաղաքական անկախության ամրապնդմանը։ Ինչպես իրավացիորեն նշում էր «Լիվա ալ-իսթիքլալ» թերթը, նավթարդյունաբերության ազգայնացումը կհասցներ Իրաքի տնտեսական և ֆինանսական անկախության ամրապնդմանը։

Նավթարդյունաբերության ազգայնացման դեպքում երկրի տնտեսական վիճակը այդպիսի մռայլ գույներով ներկայացնելով Նուրի Սաիդը ցանկանում էր ահաբեկել ժողովրդական մասսաներին և թուլացնել նրանց պայքարը։ Բայց ժողովրդական ելույթները շարունակվում էին։ Փետրվարի 28-ին կրկին հանդես եկան Իրաքի ուսանողները։ Հակակառավարական և հակաիմպերիալիստական խոշոր ցույց տեղի ունե-

[1] „The Iraq Times“, February 12, 1952.

ցավ Բաղդադում 1952 թվականի ապրիլի 14-ին։ Ցուցարարները դեմ դուրս եկան Նուրի Սաիդի կառավարությանը և Իրաքի կառավարության ու օտարերկրյա նավթային ընկերությունների միջև կնքված պայմանագրին[1]։ Նուրի Սաիդը դաժանորեն ճնշեց այդ ցույցը։ Մի քանի ցուցարարներ զոհվեցին, 37 հոգի վիրավորվեց։ Կառավարությունը ձերբակալեց բազմաթիվ ցուցարարների։

Դրանից հետո շարժման թափը թուլացավ, թեև օպոզիցիոն ուժերը նավթի ազգայնացման պահանջը երբեք օրակարգից չհանեցին։

Այսպիսով, աշխատավորական մասսաների և դեմոկրատական ուժերի պայքարը չհանգեցրեց նավթային արդյունաբերության ազգայնացմանը Իրաքում։ Դա պետք է բացատրել նախ և առաջ նրանով, որ իմպերիալիզմի ուժերը գերակշռող էին։ Իրաքում գտնվում էին անգլիական զորքերը, որոնք Անգլիան պատրաստ էր օգտագործել ժողովրդական մասսաների ելույթների դեմ։ Մյուս կողմից նավթային ընկերությունները հաշվի առնելով Իրանի դասերը շտապեցին որոշ զիջումների դիմել, բարձրացնելով Իրաքի բաժինը նավթից ստացվող եկամուտներից։ Դա, անշուշտ, որոշ չափով թուլացրեց պայքարի սրությունը։

Չնայած այս բոլորին, նավթի ազգայնացման և օտարերկրյա մոնոպոլիստական ընկերություններին Իրաքից դուրս քշելու համար մղած պայքարը կազմում է Իրաքի ազգային-ազատագրական շարժման կարևոր մոմենտներից մեկը։ Առանց 1951—1952 թվականների ելույթների իմպերիալիստական մոնոպոլիաները չէին զիջի և չէին ընդունի 50/50-ի սկզբունքը։ Հենց դրանում է այդ ելույթների պատմական նշանակությունը։

***

Իմպերիալիստական պետությունները և, առաջին հերթին, ԱՄՆ-ը և Անգլիան իրենց ագրեսիվ պլաններում մեծ տեղ էին հատկացնում Մերձավոր և Միջին Արևելքի երկրներին։ Հետպատերազմյան շրջանում երկրագնդի տարբեր մասերում

[1] Տե՛ս „Аш-Шарк", Бейрут, 1952, 15 апреля.



ռազմական բլոկներ ստեղծելու ուղի վերցնելով, նրանք փորձում էին այդ բլոկների մեջ ներքաշել նաև արաբական երկրներին։ Դրանով նրանք երկու նպատակ էին հետապնդում։ Առաջին, ստեղծել ռազմական պլացդարմ ուղղված Սովետական Միության և սոցիալիստական մյուս երկրների դեմ և, երկրորդ՝ օգտագործել ռազմական այդ խմբավորումները ճնշելու արաբական երկրներում ծավալվող ազգային-ազատագրական շարժումները և պահպանել նրանց գաղութային կախվածությունը արևմտյան տերություններից։ Այդ պլանների մեջ ավելի ու ավելի վճռական դեր էր խաղում ԱՄՆ-ը, որի դիրքերը արաբական երկրներում երկրորդ համաշխարհային պատերազմից հետո հետզհետե ուժեղանում էին։ ԱՄՆ-ը ձգտում էր վերջնականապես դուրս մղել Անգլիային ու Ֆրանսիային այդ շրջանից։ Հատկապես ուժեղանում է ամերիկյան ներթափանցումը Սաուդյան Արաբիա, Հորդանան, Լիբանան, Իրաք և այլն։

1951 թվականի ապրիլի 10-ին ԱՄՆ-ի և Իրաքի միջև պայմանագիր կնքվեց, որի համաձայն ԱՄՆ-ը տնտեսական «օգնություն» պետք է ցույց տար Իրաքին՝ «Տրումենի դոկտրինայի» 4-րդ կետի համաձայն[1]։ 1953 թվականի փետրվարի 19-ին նրանց միջև կնքվեց նոր պայմանագիր՝ «տեխնիկական օգնության» մասին։ Այս պայմանագրերը ամերիկյան իմպերիալիզմին լայն հնարավորություններ էին տալիս Իրաքի էկոնոմիկայի մեջ ներթափանցելու համար։ Ամերիկյան բազմաթիվ մասնագետներ, էքսպերտներ և խորհրդատուներ, այդ պայմանագրերի համաձայն, հաստատվեցին Իրաքի զանազան մինիստրություններում և օրգաններում, ամեն կերպ ջանալով նպաստավոր պայմաններ ստեղծել ամերիկյան կապիտալի համար և ուժեղացնել ԱՄՆ-ի ազդեցությունը Իրաքի կառավարության վրա։

Իրաքում ԱՄՆ-ի դիրքերի հետագա ուժեղացման արտահայտություն էր 1954 թվականի ապրիլի 21-ին Բաղդադում կնքված համաձայնագիրը՝ Իրաքին ամերիկյան ռազմական օգնություն ցույց տալու մասին[2]։ Այդ պայմանագրով ԱՄՆ-ը

[1] „UN Treaty Series", 1952, vol. 151, p. 184.

[2] Տե՛ս „The Iraq Times", April 26, 1954.

պարտավորվում էր մինչև 1957 թվականը Իրաքին տալ 100 միլիոն դոլլարի զենք։ Իրաքում ստեղծվում էր ամերիկյան ռազմական միսիա։ Ինչպես նշել է «Սաուտ ալ-Ահալի»-ն, Իրաքի կողմից ամերիկյան ռազմական օգնության ընդունումը նշանակում էր, որ Իրաքը մտնում է ամերիկյան քաղաքական ազդեցության ոլորտը։

Այս ամենը էլ ավելի էր սրում անգլո-ամերիկյան հակասությունները Մերձավոր և Միջին Արևելքի շրջանում։ Բայց արաբական երկրներում տիրապետող դիրք գրավելու համար Անգլիայի և ԱՄՆ-ի միջև մղվող պայքարը չէր խանգարում նրանց միասնական ճակատով հանդես գալ արաբական ազգային-ազատագրական շարժումների դեմ և արաբական երկրներն օգտագործել իրենց ագրեսիվ պլանների կենսագործման համար։ Այդ նպատակին էր հետապնդում միջինարևելյան հրամանատարություն ստեղծելու պլանը, որ առաջ քաշվեց 1951 թվականին։ ԱՄՆ-ը, Անգլիան, Ֆրանսիան և Թուրքիան պաշտոնապես դիմեցին արաբական երկրներին՝ Եգիպտոսին, Իրաքին, Սիրիային, Սաուդյան Արաբիային, Լիբանանին, Հորդանանին և Եմենին միավորել իրենց ռազմական ուժերը և ստեղծել՝ միջինարևելյան հրամանատարություն։ Նրա մեջ մտնելու էին նաև Իսրայելը, Ավստրալիան, Նոր Զելանդիան և Հարավ-Աֆրիկյան միությունը։ Այդ ագրեսիվ պլանի հեղինակները նախատեսում էին, որ միջինարևելյան հրամանատարության մեջ մտնող երկրները կկնքեն ռազմական դաշինք և կստեղծեն միասնական զինվորական հրամանատարություն, որի տրամադրության տակ կդրվեն այդ ռազմական խմբավորման մեջ մտնող երկրների ռազմական ուժերը, բազաները, օդանավակայանները, նավահանգիստները և այլն։ Այդ դաշինքի մեջ մտնող յուրաքանչյուր երկիր պարտավոր էր իր տերիտորիայում տեղավորել իր «դաշնակցի» զորքերը[1]։ Ինչպես տեսնում ենք, իմպերիալիստական տերությունները փորձում էին փաստորեն օկուպացնել արաբական երկրները, նրանց ռազմական ուժերը և կոմունիկացիաները վերցնել ի-

[1] О. Э. Туганова, Политика США и Англии на Ближнем и Среднем Востоке, М., 1960, стр. 40—41.



րենց հսկողության տակ և նրանց փաստորեն զրկել անկախությունից։ Մյուս կողմից, եթե ի նկատի ունենանք, որ ԱՄՆ-ը, Անգլիան, Ֆրանսիան և Թուրքիան մտնում էին Հյուսիս-ատլանտյան ագրեսիվ դաշինքի մեջ, որն ուղղված էր Սովետական Միության և սոցիալիստական երկրների դեմ, ապա հասկանալի կդառնա, թե ինչն էր իմպերիալիստական տերությունների նպատակը։

Միջինարևելյան հրամանատարություն ստեղծելու առաջարկը տարբեր ընդունելություն գտավ արաբական երկրների կառավարողների և ժողովուրդների կողմից։ Արաբական մի շարք երկրների կառավարողներ բարյացակամ վերաբերմունք ցույց տվին այդ պլանին։ Նրանք հույս ունեին այդ ռազմական խմբավորման օգնությամբ ճնշել ժողովրդական ելույթները և պահպանել իրենց տիրապետությունը։ Իսկ ժողովրդական մասսաները և բոլոր դեմոկրատական ուժերը վճռականորեն մերժեցին արևմտյան իմպերիալիստական պետությունների այդ առաջարկությունը։

Այդպես եղավ նաև Իրաքում։ Իրաքի պրեմիեր-մինիստր Նուրի Սաիդը հանդես գալով պառլամենտում հայտարարեց, որ Իրաքի համար չեզոքությունն անհնար է և անընդունելի։ Նա նշեց, որ չեզոք լինելու համար պետք է ուժեղ լինել, որպեսզի կարողանա դիմադրել ամեն մի ոտնձգության։ Իսկ Իրաքը ուժեղ չէ և չի կարող չեզոքության իրավունք ձեռք բերել[1]։ Պատասխանելով Նուրի Սաիդին սեյիդ Ֆաիք աս-Սամարրային նշեց, որ միանգամայն հնարավոր է չեզոք լինել։ Դրա համար անհրաժեշտ է Իրաքում վերացնել բոլոր բազաները և ոչ մի պրովոկացիայի առիթ չտալ[2]։

Իրաքի կառավարությունը չեզոքության դեմ դուրս գալով պաշտպանում էր ռազմական բլոկներին միանալու քաղաքականությունը։ Բայց դա հակասում էր Իրաքի և արաբական մյուս ժողովուրդների կենսական շահերին և ազգային բաղձանքներին։ Արաբական բոլոր երկրներում և Իրաքում ուժեղ պայքար սկսվեց ծավալվել միջինարևելյան հրամանատարու-

[1] „The Iraq Times", May 7, 1951.

[2] Նույն տեղում։

թյան ստեղծելու դեմ։ Դեմոկրատական թերթերը և քաղաքական պարտիաները մերկացնում էին իմպերիալիստական այդ պլանի գաղութարարական նպատակները։ 1951 թվականի հոկտեմբերին տեղի ունեցավ Իրաքի երեք օպոզիցիոն պարտիաների՝ ալ-Իսթիքլալ, միասնական ժողովրդական ճակատ և ազգային դեմոկրատական պարտիաների համատեղ նիստը, որտեղ մի շարք կարևոր հարցերի հետ միասին քննարկվեց նաև միջինարևելյան ռազմական խմբավորում ստեղծելու հարցը։ Պարտիաները միաձայն որոշեցին, որ Իրաքի ազգային շահերին ամենից ավելի համապատասխանում է չեզոքությունը և դա պետք է լինի Իրաքի կառավարության քաղաքականությունը։ Նրանք Իրաքի կառավարությունից պահանջեցին հրաժարվել «համատեղ պաշտպանությանը»՝ այսինքն իմպերիալիստական պետությունների կողմից ծրագրվող միջինարևելյան ռազմական հրամանատարությանը մասնակցելուց[1]։ 1951 թվականի դեկտեմբերին «Սադա ալ-Ահալի»-ն տպագրեց Բաղդադի բնակիչների բողոքը, որի մեջ ասվում էր. «Մենք մերժում ենք բոլոր իմպերիալիստական պլանները և կոչ անում բոլոր արաբներին տապալել «համատեղ պաշտպանության» սիստեմ ստեղծելու նախագիծը[2]»։ Դրա հետ միասին նրանք կառավարությունից պահանջում էին վերացնել անգլո-իրաքյան 1930 թվականի պայմանագիրը։ Նման մի հուշագիր ներկայացրին նաև Բաղդադի իրավաբանները, որի մեջ կառավարությունից պահանջում էին մերժել Անգլիայի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի հետ որևէ համատեղ «պաշտպանության» պակտի կնքումը։ Բողոքի ելույթներ էին տեղի ունենում նաև Նեջեֆում, Բասրայում, Ալ-Ամարայում և Իրաքի մյուս շրջաններում։

Ռազմական խմբավորումներ ստեղծելու դեմ և Իրաքը անգլիական ու ամերիկյան իմպերիալիզմի շղթաներից ազատելու պահանջով հանդես եկավ Իրաքի խաղաղության խորհուրդը։ Նրա հայտարարության մեջ ասվում էր. «Իրաքի խաղաղության կողմնակիցները իրենց հիմնական պարտակա-

[1] „Телеграф", Бейрут, 1951, 16 октября.
[2] „Сада аль-Ахали" Багдад, 1951 16 декабря.



նությունները են համարում պայքարել... որևէ օտար պետության ռազմական բազաներ չտրամադրելու, ռազմական ագրեսիվ նպատակներ հետապնդող ռազմական դաշինքներին մասնակցելուց հրաժարվելու, օտար ռազմական օգնությունները մերժելու, ամերիկյան չորրորդ կետի[1] գործունեության արգելման, իմպերիալիզմի ռազմական ապարատից նավթային աղբյուրները կտրելու, ազգային քաղաքականությունն ու էկոնոմիկան օտար ազդեցությունից ազատագրելու համար[2]»։

Միջին և Մերձավոր Արևելքում ռազմական խմբավորում ստեղծելու դեմ ուղղված մասսայական ելույթներ տեղի ունեցան նաև արաբական մյուս երկրներում։ Հանդիպելով արաբական ժողովրդի միահամուռ դիմադրությանը իմպերիալիստական տերությունները հարկադրված եղան հրաժարվել միջինարևելյան հրամանատարություն ստեղծելու իրենց պլաններից։ Սակայն 1952 և 1953 թվականներին նրանք դարձյալ, այս անգամ արդեն ուրիշ անվան տակ, առաջ քաշեցին Միջին և Մերձավոր Արևելքում ռազմական բլոկ ստեղծելու պլանը։ Դա առիթ հանդիսացավ նոր, ավելի խոշոր ժողովրդական ելույթների համար։ 1952 և 1953 թվականներին Եգիպտոսում, Սիրիայում, Լիբանանում և այլ երկրներում տեղի ունեցան բազմաթիվ հակաիմպերիալիստական ելույթներ, բողոքներ, ցույցեր և գործադուլներ։ Հակաիմպերիալիստական մեծ շարժում սկսվեց նաև Իրաքում։ 1952 թվականի ապրիլին խոշոր ցույց տեղի ունեցավ Բաղդադում, որին մասնակցում էին բանվորներ, առևտրականներ, ուսանողներ և այլն։ Նրանք պահանջում էին, որ Իրաքը չմիանա միջինարևելյան ռազմական բլոկին[3]։ Ցուցարարների դեմ նետված ոստիկանությունը դաժանորեն ճնշեց Բաղդադի աշխատավորների այդ ելույթը։ Եղան սպանվածներ, վիրավորներ, շատերին ձերբակալեցին։ Ցուցարարների հետ ոստիկանության այդ բարբարոսական վերաբերմունքը խորը զայրույթ առաջացրեց երկրում։ Որպես

[1] Ի նկատի ունի Տրումենի դոկտրինայի չորրորդ կետը։
[2] توفيق منير، ... ص ٣٩
[3] „Аш-Шарк", Бейрут, 1952, 15 апреля.

բողոքի նշան Բաղդադում հաջորդ օրը հայտարարվեց համընդհանուր գործադուլ։ Ռազմական բլոկ ստեղծելու դեմ ուղղված ելույթները շարունակվեցին նաև 1953 թվականին։

Իրաքում և Մերձավոր ու Միջին Արևելքի մյուս երկրներում ծավալված ժողովրդական լայն զանգվածների պայքարի հետևանքով իմպերիալիստական պետությունները հարկադրված եղան ժամանակավորապես հրաժարվել Արևելքի այդ շրջանում ռազմական բլոկ ստեղծելու իրենց մտադրությունից։ Նրանք համոզվեցին, որ դրա համար հող չկա և որ արաբական ժողովուրդներին անընդունելի է ռազմական բլոկներին միանալու քաղաքականությունը։

***

1952 թվականի վերջին դրությունը Իրաքում կրկին լարվեց։ Դրա անմիջական առիթը պառլամենտական ընտրությունների հարցն էր։ Ինչպես արդեն նշել ենք, ընտրությունները Իրաքում երկաստիճան էին։ Ընտրությունները տեղի էին ունենում ոստիկանական ռեժիմի պայմաններում և թույլ էին տալիս մեծ կեղծիքներ։ Իրաքի դեմոկրատական ուժերը պահանջեցին վերացնել երկաստիճան ընտրական սիստեմը և մտցնել ուղղակի ընտրական սիստեմ, օպոզիցիոն ուժերի համար պայմաններ ստեղծել ընտրություններին մասնակցելու համար, չբռնանալ ընտրողների կամքին և այլն։

Իրաքի կառավարությունը մերժեց դեմոկրատական ուժերի պահանջը և հայտարարեց, որ ընտրությունները նախկինի պես լինելու են երկաստիճան։ Ուղղակի ընտրությունների հակառակորդների փաստարկը կայանում էր նրանում, որ Իրաքի բնակչության 92 տոկոսը անգրագետ է, հետևաբար, Իրաքում ուղղակի ընտրությունների համար պայմաններ դեռևս չեն հասունացել[1]։ Իրաքի կառավարությունը դեմոկրատական ազատությունների հարցը ոչ ճիշտ կերպով կապում էր գրագիտության աստիճանի հետ։

Հարցի էությունը, իհարկե, այլ էր. երկաստիճան ընտրա-

[1] „The Iraq Times", November 10, 1952.



կան սիստեմի պայմաններում կառավարող կլիկը ավելի լայն հնարավորություններ էր ստանում ներկայացուցչական օրգաններում ընտրել այնպիսի մարդկանց, որոնք թագավորական ռեժիմի կողմնակիցներն էին և որոնց օգնությամբ այդ կլիկը ավելի կամրապնդեր իր դիրքերը։ Անուղղակի ընտրությունների պայմաններում ավելի լայն հնարավորություններ էին ստեղծվում խարդախությունների և կեղծիքների համար, և ժողովրդական մասսաներն ավելի քիչ հնարավորություններ ունեին ազդելու ընտրությունների ելքի վրա։ Դա, իհարկե, չի նշանակում, որ եթե Իրաքում մտցվեր ուղղակի ընտրական սիստեմ, ապա երկրում չարիքները կանհետանային։

Պայքարը ուղղակի ընտրական սիստեմի համար, ինչպես և պետք էր սպասել, վերածվեց պայքարի ընդդեմ Իրաքում գոյություն ունեցող ռեժիմի։

1952 թվականի հոկտեմբերին Իրաքի չորս օպոզիցիոն պարտիաները՝ ալ-Իսթիքլալ, ազգային-դեմոկրատական, միացյալ ժողովրդական ճակատ և ժողովրդա-սոցիալիստական պարտիաները Աբդուլ Իլլահին ներկայացրեցին հուշագիր, որի մեջ շարադրված էին նրանց հիմնական պահանջները։ Օպոզիցիոն պարտիաները պահանջում էին մտցնել ուղղակի ընտրական սիստեմ, սենատորներին ոչ թե նշանակել, այլ ընտրել, տալ քաղաքական լայն ազատություններ, չեղյալ հայտարարել անգլո-իրաքյան 1930 թվականի պայմանագիրը, հրաժարվել միջինարևելյան հրամանատարությանը մասնակցելուց, երկրում անցկացնել ագրարային ռեֆորմ, վերացնել ցեղերի վերաբերյալ օրենքը և այլն[1]։

Հետագայում այդ պահանջներին ավելացան նաև նավթային մոնոպոլիաները Իրաքից վտարելու և հողատերերի ձեռքից քաղաքական միահեծան իշխանությունը խլելու պահանջը[2]։ Ինչպես տեսնում ենք, Իրաքի օպոզիցիոն պարտիաների հուշագիրը պարունակում էր Իրաքի ազգային-ազատագրական շարժման բոլոր գլխավոր պահանջները։

[1] Տե՛ս Khalil Totah, Dynamite in the Middle East, New York, 1955, p. 230.

[2] ЦГАОР, ф. 4459, оп. 9, ед. хр. 804.

Խնամակալը հրաժարվեց բավարարել օպոզիցիոն պարտիաների պահանջները։ Իր պատասխանում նա նշում էր, որ Իրաքի կառավարման սիստեմը լավ է և սահմանադրության մեջ փոփոխություն մտցնելու կարիք չկա[1]։ Այդպիսի պատասխանը երկրում խորը դժգոհություն առաջացրեց։ Վերոհիշյալ պարտիաները հայտարարեցին, որ իրենք ընտրություններին չեն մասնակցի և կոչ արին Իրաքի ժողովրդին բոյկոտի ենթարկել առաջիկա ընտրությունները։

Ժողովրդական հուզմունքն ու դժգոհությունն ավելի ուժեղացավ, երբ նոյեմբերի 17-ին պրեմիեր-մինիստր Մուստաֆա ալ-Ումարին հայտարարեց, որ Իրաքի կառավարությունը մտադիր չէ որևէ փոփոխություն մտցնել իր քաղաքականության մեջ։

Երկրում սկսվեցին ցույցերն ու գործադուլները։ 1952 թվականի նոյեմբերի 17-ին դասադուլ հայտարարեցին Բաղդադի կոլեջների ուսանողները։ Կրթական գործերի բարձրագույն կոմիտեն փակեց Բաղդադի ուսումնական հաստատությունները։ Բայց արդեն ուշ էր։ Դեպքերի զարգացումը դուրս եկավ Իրաքի կառավարության հսկողությունից։ Նոյեմբերի 22-ին և 23-ին Բաղդադում տեղի ունեցան հզոր ցույցեր, որին մասնակցում էր 20 հազար մարդ։ Պայքարի առաջնագծում ընթանում էին բանվորները և ուսանողները։ Ցուցարարների հիմնական լոզունգներն էին. «Կորչեն անգլո-ամերիկյան իմպերիալիստները», «Կորչի անգլո-իրաքյան պայմանագիրը», «Կորչեն խարդախ ընտրությունները», «Կորչի գոյություն ունեցող ռեժիմը» և այլն։ Կառավարությունը ցուցարարների դեմ դուրս բերեց ոստիկանությանը, որը նրանց դեմ օգտագործեց գնդացիրներ և արտասվաբեր ռումբեր։ Սպանվեց 5 և վիրավորվեց 50 մարդ։ Ցուցարարները հարձակվեցին կառավարական շենքերի վրա։ Տեսնելով ժողովրդական շարժման լայն թափը խնամակալը շտապ կերպով հրավիրեց կառավարության նիստ, որին հրավիրվեցին նաև օպոզիցիայի լիդերները։ Խնամակալը փորձեց համոզել օպոզիցիոն պարտիաների ղեկավարներին, որ նրանք դադարեցնեն պայքարը։

[1] „The Iraq Times“; October 30, 1952.



Սակայն վերջիններս հայտարարեցին, որ իրենք չեն պաշտպանի ոչ մի կառավարության, որն անհապաղ փոփոխություններ չի մտցնի ընտրական սիստեմում։ Աշխատավորների ելույթներն ու ցույցերը շարունակվեցին։ Նոյեմբերի 23-ին ցույցի դուրս եկան 20 հազար բաղդադցիներ։ Նրանք հրկիզեցին ԱՄՆ-ի դեսպանության կից ամերիկյան ինֆորմացիոն ծառայության շենքը, ոստիկանական մի քանի շենքեր, ներխուժեցին Նուրի Սաիդի պարտիայի՝ կոնստիտուցիոն միության շենքը և ջարդ ու փշուր արին այնտեղ գտնվող կահկարասին։ Նրանք հրկիզեցին նաև «Իրաք թայմս»-ի շենքը։ Նախորդ օրը ցուցարարները հարձակվել էին նաև անգլիական դեսպանության հասարակական կապերի շենքերի վրա։ Ինչպես նշում է «Daily Telegraph»-ը Իրաքի ժողովրդի մասսայական առելությունը «ուղղված էր թե Մեծ Բրիտանիայի և թե Ամերիկայի դեմ»[1]։ Իրաքի կառավարությունը ԱՄՆ-ի և Անգլիայի դեսպանության շենքերը պաշտպանելու համար ուժեղ ոստիկանական պաշտպանություն նշանակեց։ Սակայն ոստիկանությունն այլևս ի վիճակի չէր դիմագրավել ժողովրդի ճնշմանը։ Բաղդադի շատ վայրերում ցուցարարներ համարձակ կերպով մարտի մեջ էին մտնում ոստիկանների հետ։

Ժողովրդական խոշոր ելույթներ տեղի ունեցան նաև ան-Նաջաֆում, էդ-Դիվանիայում և այլ վայրերում[2]։ Կառավարությունն այլևս հենարան չուներ։ Նոյեմբերի 22-ին Մուստաֆա Ումարիի կառավարությունը հրաժարական տվեց։ Ջեմալ ալ-Մադֆաին կազմեց նոր կառավարություն, որը հենց նույն օրը ժողովրդական շարժման ճնշման տակ նույնպես հրաժարվեց։ Ժողովրդական մասսաները դարձան դրության տերը։

1952 թվականի նոյեմբերյան այս ելույթների ժամանակ Իրաքի կոմունիստական պարտիան, որի անդամները գտնվում էին շարժման առաջնագծում և ղեկավարում աշխա-

[1] „Daily Telegraph“. London, November 24, 1952.
[2] „За прочный мир, за народную демократию“, 1953, 5 июня.

տակերների ելույթները, առաջ քաշեց ազգային դեմոկրատական կառավարություն ստեղծելու պահանջը։ Այդ կառավարությունն աշխատելու էր ազգային դեմոկրատական ուղղությամբ և գործելու էր գոյություն ունեցող սիստեմի շրջանակներում։ Նրա հիմնական խնդիրներն էին լինելու վերացնել 1930 թվականի պայմանագիրը և օտարերկրյա ռազմական բազաները Իրաքում, պայքարել ռազմական ագրեսիվ պլանների դեմ, երկրից արտաքսել նավթային և այլ մոնոպոլիստական ընկերությունները և Իրաքի ժողովրդին երաշխավորել դեմոկրատական ազատություններ[1]։ Նա լինելու էր մի այնպիսի կառավարություն, որը երկրում կիրառելու էր մի շարք բուրժուական միջոցառումներ և Իրաքը ազատագրելու էր օտարերկրյա իմպերիալիզմի կախումից։ Այդպիսի կառավարության ստեղծումը ավելի նպաստավոր պայմաններ կստեղծեր դեմոկրատական կազմակերպությունների և պարտիաների գոյության համար, աշխատավորների շարժումների համար։

Սակայն այդպիսի կառավարություն կազմելու համար համապատասխան պայմաններ չստեղծվեցին։ Ռեակցիան, որ ուժեղ հարված էր ստացել, դեռևս չէր պարտվել։ Իրաքի կառավարող կլիկը իր իշխանությունը փրկելու և ժողովրդական ապստամբությունը ճնշելու համար Իրաքի ժողովրդի դեմ հանեց բանակը։ 1952 թվականի նոյեմբերի 23-ին Իրաքի բանակը, տանկերով և զրահամեքենաներով, գրավեց Բաղդադի բոլոր ստրատեգիական կետերը[2]։ Խնամակալը Իրաքի բանակի շտաբի պետ Մուհամմեդ Նուրեդդինին հանձնարարեց կազմել կառավարություն։ Մուհամմեդ Նուրեդդինին պրեմիեր-մինիստր նշանակելը սահմանադրության կոպիտ խախտում էր, որովհետև Իրաքի սահմանադրությունը արգելում է բանակի շտաբի պետին կառավարության ղեկավար նշանակել։ Բայց արքունիքը և ֆեոդալ շեյխերն իրենց տիրապետությունը պահպանելու համար ոչնչի առջև կանգ չէին առնում։ Ժողովուրդը խիստ դժգոհությամբ ընդունեց Մուհամմեդ Նուրեդդինի պրեմիեր-մինիստր նշանակելու լուրը։ Նոյեմբերի 23-ին Բաղդա-

[1] „World News", vol. 1, № 20, London, 1954, p. 389.

[2] „Iraq Year Book", Baghdad, 1953, p. 49.



դում տեղի ունեցավ մի նոր ցույց ուղղված պալատի այդ ակտի դեմ։

Նոյեմբերի 23-ի երեկոյան բանակին հաջողվեց երկրում վերականգնել կարգը։ Ռեակցիան կրկին դարձավ դրության տերը։ Նա սկսեց ռեպրեսիաների կիրառումը օպոզիցիոն ուժերի նկատմամբ։ Միայն մի գիշերվա ընթացքում ձերբակալվեց մոտ 2000 հայրենասեր։ Ձերբակալվածների թվում էին Իրաքի ազգային-ազատագրական շարժման ականավոր գործիչներ, այդ թվում նաև Իրաքի մեծ հայրենասեր, պոետ, խաղաղության շարժման ակտիվ գործիչ Մուհամմեդ Մահդի ալ-Ջավահիրին։ Բաղդադում մտցվեց ռազմական դրություն, արգելվեցին ցույցերն ու ժողովները, փակվեցին 17 առաջադիմական թերթեր, արձակվեցին բոլոր քաղաքական պարտիաները։

Չնայած ռեակցիային հաջողվեց ճնշել 1952 թվականի ապստամբությունը, սակայն Իրաքի կառավարությունը հարկադրված էր դիմել որոշ զիջումների և բավարարել օպոզիցիոն ուժերի որոշ պահանջներ։ Մուհամմեդ Նուրեդդինի կառավարությունը վերացրեց երկաստիճան ընտրությունները և մտցրեց ուղղակի ընտրություններ։ 1953 թվականին Իրաքի պատմության մեջ առաջին անգամ, ընտրական նոր կարգով անցկացվեցին պառլամենտական ուղղակի ընտրությունները։ Դրանով իսկ Իրաքի կառավարող կլիկը հարկադրված եղավ կատարել երկրի դեմոկրատական ուժերի կարևոր պահանջներից մեկը, այն պահանջը, որն 1952 թվականի նոյեմբերյան իրադարձությունների անմիջական պատճառը հանդիսացավ։ Սա, անշուշտ, Իրաքի աշխատավորական մասսաների և դեմոկրատական ուժերի խոշոր հաղթանակն էր։

1952 թվականի նոյեմբերյան ապստամբությունը երկրորդ խոշոր հարվածն էր իմպերիալիզմին և Իրաքի միապետական ռեժիմին։ Ինչպես նշել է Աբդել Քերիմ Կասեմը Իրաքի 1958 թվականի հուլիսի 14-ի ռևոլյուցիան նախապատրաստվել էր 1948, 1952 և 1956 թվականների ժողովրդական խոշոր ելույթներով։

⁂

Մուհամմեդ Նուրեդդինի իշխանության գլուխ գալը և երկրում արտակարգ դրության մացնելը նշանակում չէր, որ Իրաքում հաստատվել էր զինվորական դիկտատուրա: Սակայն դա ևս չկարողացավ կանգնեցնել ժողովրդական շարժումները: Աշխատավորական մասսաները և պրոգրեսիվ ուժերը չդադարեցրին իրենց պայքարը իմպերիալիզմի և միապետական ռեժիմի դեմ: Ընդհակառակը, այդ պայքարը այս շրջանում ավելի ուժեղացավ և ավելի կազմակերպված բնույթ կրեց: Իրաքի օպոզիցիոն ուժերը պահանջում էին վերացնել արտակարգ դրությունը երկրում, թույլատրել դեմոկրատական կազմակերպությունների և քաղաքական պարտիաների գործունեությունը, դադարեցնել պրոգրեսիվ գործիչների հետապնդումն ու ձերբակալությունները և այլն: Դրա հետ միասին նրանք առաջադրում էին հակաիմպերիալիստական մի շարք պահանջներ: 1953 թվականի մայիսին Իրաքում և նրա սահմաններից դուրս տարածվեց Իրաքի կոմունիստական պարտիայի դիմումը՝ ուղղված Իրաքի ժողովրդին, ՄԱԿ-ին և բոլոր միջազգային կազմակերպություններին, որտեղ կոչ էր արվում Իրաքում հաստատել քաղաքական ազատություններ, դադարեցնել ձերբակալությունները և ազատ արձակել բանտարկված հայրենասերներին[1]: Կոմունիստական պարտիայի այդ կոչը մեծ դեր խաղաց Իրաքի պրոգրեսիվ ուժերի մոբիլիզացման և պայքարի կազմակերպման գործում:

1953 թվականի հունիսին Բաղդադի ավելի քան 5 հազար բնակիչներ խնդրագիր ուղղեցին Իրաքի թագավոր Ֆեյսալ 2-րդին[2], որի մեջ շարադրված էին հետևյալ պահանջները. վերացնել բոլոր արտակարգ օրենքները և ազատ արձակել քաղաքական բանտարկյալներին, չեղյալ հայտարարել անգլո-իրաքյան 1930 թվականի պայմանագիրը, չմիանալ միջինարևելյան հրամանատարությանը, չեղյալ հայտարարել օտարերկրյա նավթային ընկերությունների հետ կնքած պայմանա-

[1] „Ас-Сарха", Бейрут, 1953, 9 мая.

[2] Ֆեյսալ 2-րդը չափահաս դարձավ և գահ բարձրացավ 1953 թ. մայիսին:



գրերը և այլն[1]: Նույնպիսի պահանջներով հանդես եկան նաև ազգային-դեմոկրատական պարտիան, իրավաբանների ասոցիացիան և քաղաքական տարբեր ուժերի ներկայացուցիչներ: Իրաքի կառավարությունը ստիպված եղավ զիջել և երկրում արտակարգ դրությունը վերացվեց: Կրկին սկսեցին լույս տեսնել պրոգրեսիվ լրագրերը, որոնք փակվել էին 1952 թվականի նոյեմբերյան դեպքերից հետո: Քաղաքական լիգալ գործունեության իրավունք ստացան դեմոկրատական պարտիաները, բացի Իրաքի կոմունիստական պարտիայից:

1954 թվականի մայիսին Իրաքի դեմոկրատական ուժերի կյանքում տեղի ունեցավ նշանակալի երևույթ: Ստեղծվեց Ազգային ճակատ, որի մեջ մտան ալ-իսթիքլյալ և ազգային դեմոկրատական պարտիաները, ինչպես նաև բանվորների, գյուղացիների, ուսանողության, երիտասարդության, իրավաբանների, բժիշկների և հասարակական այլ շերտերի ներկայացուցիչներ: Այդ երևույթը նշանակալի էր այն իմաստով, որ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո առաջին անգամ դեմոկրատական ուժերը միավորվեցին: Ազգային ճակատը ստեղծվեց 1954 թվականի հունիսին կայանալիք ընտրություններին միասնականորեն հանդես գալու համար: Նա ընդունեց խարտիա, որի մեջ շարադրված պահանջները շոշափում էին ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության բազմաթիվ կարևոր հարցեր: Խարտիան պահանջում էր՝ արտաքին քաղաքականության բնագավառում—չեղացնել անգլո-իրաքյան 1930 թվականի պայմանագիրը, հրաժարվել ամերիկյան ռազմական օգնությունից, չմասնակցել ռազմական խմբավորումներին, ամրապնդել բարեկամական կապերը արաբական երկրների հետ և այլն: Ներքին քաղաքականության բնագավառում՝ տալ դեմոկրատական ազատություններ (մամուլի, խոսքի, ժողովների, միությունների), կիրառել 1936 թվականի աշխատանքային օրենքը, կրճատել լատիֆունդիաների չափերը, վերացնել օտարերկրյա մենաշնորհները, ապահովել լրիվ զբաղվածություն, բարձրացնել աշխատավորների կենսամակարդակը և այլն: Խարտիան ուշագրավ էր նրանով, որ այն ստորագրել էին նաև

[1] „Аль-Мыср", Каир, 1953, 2 июня.

գյուղացիության ներկայացուցիչները։ Դա նշանակում էր, որ գյուղացիական շարժումը թևակոխում էր նոր էտապ։ Մինչ այդ գյուղացիական շարժումների հիմնական պահանջները հանգում էին հող ձեռք բերելուն, վարձակալման պայմանները բարելավելուն և այլն։ Ընդհանուր ազգային-դեմոկրատական պահանջների առաջադրումը գյուղացիության կողմից համեմատաբար թույլ էր։ 1950-ական թվականներից սկսած, երբ գյուղացիական շարժումները ավելի լայն թափ և կազմակերպված բնույթ ստացան գյուղացիությունը ավելի վճռականորեն հանդես եկավ ազգային դեմոկրատական խնդիրների պաշտպանությամբ։

Ազգային ճակատի խարտիան, որը փաստորեն դարձավ Իրաքի դեմոկրատական ուժերի ընտրական պլատֆորմը, լայն աջակցություն գտավ ժողովրդական մասսաների կողմից։ «Սաութ ալ-Ահալի»-ն նշում էր, որ Ազգային ճակատի ստեղծումը ժողովուրդը ցնծությամբ ընդունեց, մինչդեռ ռեակցիոն շրջաններն այն համարեցին մեծ վտանգ իրենց շահերին և բարեկեցությանը։ Այդ պատճառով էլ կառավարությունը սկսեց ամեն տեսակ խոչընդոտներ ստեղծել նրա գործունեության համար։

1954 թվականի հունիսի ընտրություններն անցան ոստիկանական ռեժիմի պայմաններում։ Կառավարությունը բացահայտ կերպով միջամտում էր ընտրությունների ընթացքին, ահաբեկում ընտրողներին, որ նրանք իրենց ձայնը չտան Ազգային ճակատի թեկնածուներին։ Ընտրությունների արդյունքները կեղծելու նպատակով շատ տեղերում ընտրական ցուցակներում մտցնում էին մահացածների և այնպիսի մարդկանց անուններ, որոնք ընդհանրապես գոյություն չունեին։ Ոստիկանությունը Ազգային ճակատի թեկնածուներին թույլ չտվեց անցկացնել նախընտրական կամպանիա, նրանց հեռացնում էր ընտրական տեղամասից և այլն։ Կառավարության հակադեմոկրատական գործողությունները և ոստիկանական միջոցառումները ժողովրդական նոր ելույթների առիթ հանդիսացան։ Մի շարք վայրերում՝ Քերբելայում, Սուլեյմանիեում և Ալ-Քութայում արյունալի ընդհարումներ տեղի ունեցան ժողովրդի և ոստիկանության միջև։ Էն-Նեջեֆում տեղի ունե-



ցավ բողոքի ցույց այն կապակցությամբ, որ տեղական իշխանությունները ձերբակալել էին տեղի թեկնածու Մուհամմեդ աշ-Շաբիբիին։ Ոստիկանությունը ձերբակալեց և բանտ նետեց բազմաթիվ ցուցարարների[1]։ Մի քանի հազարանոց ցույց տեղի ունեցավ Կադիմայնում (Բաղդադի մոտ), որտեղ իշխանությունները կոպիտ կերպով խախտել էին ընտրությունների կանոնները և չէին ուզում, որ ընտրվեր օպոզիցիայի ներկայացուցիչը։ Ոստիկանությունը ճնշեց այդ ցույցը։ Եղան սպանվածներ և վիրավորներ[2]։ Բացի այդ մի շարք ելույթներ տեղի ունեցան Դուզ Քուրմաթուում (Կիրկուկի լիվա), Հիլլայում, Քարխում (Բաղդադի շրջան), Դուլայմայում, Սամառրայում և այլ վայրերում։ Աշխատավորական մասսաների և պրոգրեսիվ ուժերի ակտիվ աջակցության շնորհիվ Ազգային ճակատի 10 դեպուտատներ ընտրվեցին պառլամենտի անդամ։ Իրաքի պատմության մեջ առաջին անգամ օպոզիցիան իր ներկայացուցիչներն ունեցավ պառլամենտում։ Դա ռեակցիոն ուժերի պարտությունն ու ժողովրդական մասսաների, Իրաքի առաջադեմ ուժերի խոշոր հաղթանակն էր։

Հակաիմպերիալիստական պայքարի հետ միասին բանվորները և գյուղացիները շարունակում էին պայքարը իրենց տնտեսական պահանջները բավարարելու համար։ 1953 թվականի դեկտեմբերի 5-ին գործադուլ սկսեցին «Բասրա պետրոլիումի» բանվորները, որոնք պահանջում էին աշխատավարձի բարձրացում և իրենց արհմիության ստեղծում։ Այս գործադուլն աչքի էր ընկնում իր կազմակերպվածությամբ։ Այն ղեկավարում էր կոմունիստական պարտիայի Բասրայի ընդհատակյա կոմիտեն[3]։

Բասրայի գործադուլը լայն արձագանք գտավ ողջ երկրում։ Նավթագործ բանվորների հետ համերաշխության դասադուլ հայտարարեցին Բաղդադի երեք ուսումնական հաստատությունների ուսանողները, գործադուլ արեցին տասը տպարանների բանվորները և այլն։ Երկրի դեմոկրատական

[1] „Саут аль-Ахали", Багдад. 1954, 5 июня; „Аль-Ахбар", Каир, 1954, 9 июня.

[2] „The Iraq Times", June 10, 1954.

[3] „The Iraq Times", January 18, 1954.

ուժերը պահանջում էին բավարարել գործադուլավորների պահանջը։ Գործադուլավորների դեմ նետվեցին ոստիկանները. շատերը վիրավորվեցին, եղան բազմաթիվ ձերբակալություններ, փակվեց 9 թերթ։ Դեկտեմբերի 15-ին Բասրայում մտցվեց ռազմական դրություն։

Սակայն ոստիկանական միջոցառումների օգնությամբ նույնպես հնարավոր չեղավ ընկճել գործադուլավորների կամքը։ Նրանք պնդում էին իրենց պահանջների բավարարման վրա։ Հանդիպելով այսպիսի համառ դիմադրության նավթատերերը հարկադրված եղան զիջել։ Նրանք բավարարեցին բանվորների պահանջները աշխատավարձը բարձրացնելու վերաբերյալ։ Բանվորներին թույլատրվեց կազմակերպել իրենց արհմիությունը։ Բասրայի նավթագործ բանվորների հաղթանակը Իրաքի բանվորական շարժման լավագույն էջերից է։

Ուշադրության արժանի է Բաղդադի ծխախոտի երկու ընկերությունների բանվորների գործադուլը, որը տեղի ունեցավ 1953 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին։ Գործադուլավորները պահանջում էին աշխատավարձի բարձրացում և բանվորների իրավունքների հարգում[1]։ Կոմունիստների ղեկավարությամբ նրանք կազմակերպեցին միտինգներ և ցույցեր։ Ծխախոտագործ բանվորները պաշտպանեցին «Ազատ հայրենիք և ծաղկող ժողովուրդ» կոմունիստական լոզունգը։ Նրանք ցույցի դուրս եկան «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» լոզունգով։ Ցուցարարները Իրաքի կառավարությունից պահանջեցին պաշտպանել Իրանի ժողովրդի պայքարը և Մոսադդիկի կառավարությունը, իրենց համերաշխությունը հայտնեցին Հյուսիսային Կորեայի ժողովրդի ազատագրական պայքարին։ Ծխախոտի ընկերության բանվորները ցույցի ժամանակ առաջ քաշեցին «Մենք ուզում ենք մի ռեսպուբլիկա, որը ղեկավարի բանվոր դասակարգը»[2]։ Սա բոլորովին նոր երևույթ էր Իրաքի ազգային ազատագրական շարժման մեջ։ Այժմ այդ կարգի պահանջի առաջադրումը խոսում էր այն մասին, որ Իրաքի ազգային ազատագրական ուժերն ընդհուպ

[1] „The Iraq Times", January 21, 1954.
[2] Նույն տեղում, February 1, 1954.



մոտեցել էին միապետության տապալման և ռեսպուբլիկա հիմնելու գաղափարին։

1954 թվականին հուզումներ տեղի ունեցան նաև Բաղդադում (մայիսի 1-ի կապակցությամբ), Հարբանիայում, Հայյում (Քութի լիվա) և այլ վայրերում։ Ըստ որում Հայյում այդ հուզումները, որոնց պատճառը աշխատավորների ծանր պայմաններն էին, վերածվեցին խոշոր հակակառավարական ելույթի։ Ցուցարարները կտրեցին հեռախոսային կապը, ջարդեցին տեղի փոստի շենքի պատուհաններն ու դռները, այրեցին տեղի պաշտոնյաների ակումբի կահ-կարասին, քարեր նետեցին կառավարական շենքերի վրա, հարձակվեցին դատավորի տան վրա և այլն[1]։ Քութի մութասարիֆը նրանց դեմ ուղարկեց ոստիկանական խոշոր ուժեր, որոնք ճնշեցին Հայյի բնակիչների այդ հակակառավարական ելույթը։

Չնայած այդ պարտություններին և ժամանակավոր անհաջողություններին, բանվորական շարժումն Իրաքում անշեղորեն աճում ու ավելի կազմակերպված էր դառնում։

Այս շրջանում ուժեղանում են նաև գյուղացիական ելույթները։ Նրանք դառնում են ավելի մասսայական։ Գյուղացիները վճռականորեն հանդես էին գալիս ֆեոդալ-շեյխերի դեմ, բռնագրավում նրանց հողերը, հրաժարվում հարկերը վճարելուց, պահանջում բարձրացնել վարձակալման իրենց բաժինը և այլն։ 1953 թվականի փետրվարին Ամարայի լիվայի Ալ-Ավիրջա գյուղի բնակիչները ոտքի ելան պաշտպանելու իրենց իրավունքները։ Գյուղի կալվածատերերը փորձում էին բռնագրավել գյուղացիներին պատկանող փոքրիկ հողակտորները։ Զայրացած գյուղացիները կալվածատերերին վռնդեցին գյուղից[2]։ Նրանք զինված դիմադրություն ցույց տվին գյուղ եկած ոստիկաններին։ Ոստիկանությունը 6 ժամ անընդհատ գնդակոծում էր գյուղացիների խրճիթները։ Եվ միայն դրանից հետո նրան հաջողվեց կոտրել գյուղացիների դիմադրությունը։ Գյուղացիներից եղան սպանվածներ, վիրավորներ, իսկ 49 հոգի, որպես խռովարարներ, ձերբակալվեցին։

[1] „The Iraq Times", June 10, 1954.
[2] Տե՛ս „Арабы в борьбе за независимость", стр. 391.

1953 թվականի մայիսին ապստամբվեցին Էրբիլի լիվայի մոտ 300 գյուղեր։ Ապստամբությունը տարածվեց նաև Դիալայի և Սուլեյմանիայի լիվաները[1]։ Սարսափահար ֆեոդալներն ու կառավարությունը հարկադրված եղան ապստամբների դեմ ուղարկել ոստիկանական մեծ ուժեր, որոնք ճնշեցին գյուղացիական այդ խոշոր ելույթը։ Ապստամբության ղեկավարները ձերբակալվեցին, իսկ շատ գյուղացիներ արտաքսվեցին իրենց հարազատ վայրերից։

Գյուղացիական նման մեծ ելույթներ տեղի ունեցան նաև Միջին Եփրատում։ Այստեղ առանձնապես աչքի ընկավ ալ-Հիլլայի գյուղացիների շարժումը։ Նրանք հրավիրեցին ազգային համագումար, որին մասնակցեց մոտ 300 մարդ։ Համագումարում ընդունվեց ազգային ծրագիր, որի մեջ շարադրված էին գյուղացիներին հուզող բազմաթիվ պահանջներ[2]։ Իսկ ալ-Իմարի գյուղացիները պահանջում էին, որ պետությանը պատկանող միրի սիրֆ հողերը արդարացիորեն բաժանվեն, որ այդ հողերը չանցնեն միայն ֆեոդալների ձեռքը։ Նրանք պահանջում էին իրենց ապահովել հողակտորով և սահմանել վարձակալման այնպիսի սիստեմ, որ իրենք ստանան բերքի կեսը։

1954 թվականին գյուղացիական խոշոր ելույթներ տեղի ունեցան նաև Շայմանում, որին մասնակցում էին մի քանի հազար գյուղացիներ։ Ֆեոդալ-շեյխերը հարկադրված եղան նրանց մի շարք պահանջները բավարարել։ Հետպատերազմյան շրջանի ամենախոշոր գյուղացիական ելույթը՝ Ամարայի լիվայի գյուղացիների 1955 թվականի հունիս-հուլիս ամիսների ապստամբությունն էր, որին մասնակցեց 20 հազար գյուղացի։ Գյուղացիները բռնագրավեցին կալվածատիրական հողերը և բաժանեցին իրար միջև։ Նրանց միջև բաժանվեց նաև բերքը[3]։ Նուրի Սաիդի կառավարությունը ապստամբների դեմ ուղարկեց զինվորական մասեր, որոնք դաժանորեն ճնշեցին գյուղացիների այդ ելույթները։ Ապստամբ

[1] Տե՛ս „Доклады ТСХА", вып. 58, стр. 317.
[2] Տե՛ս Г. Фарман... стр. 93.
[3] „Ат-Тахрир", Каир, 1955, 19 июня.



գյուղացիների տները քանդեցին և այրեցին, մի քանի հոգու մահապատժի ենթարկեցին և շատերին էլ ձերբակալեցին։

Շատ ժամանակ չէր անցել Ամարայի գյուղացիների ապստամբությունից, երբ 1956 թվականին գյուղացիական մի նոր ելույթ բռնկեց Քութի լիվայի Ռամիսա գյուղում։ Գյուղացիները գրավեցին կալվածատիրական հողերը և հրաժարվեցին վարձավճար տալ։ Ռամիսա եկած ոստիկանները չկարողացան ճնշել գյուղացիների ելույթը և վերականգնել կալվածատերերի իրավունքները։ Այն ժամանակ Իրաքի կառավարությունը Ռամիսայի գյուղացիների դեմ ուղարկեց զորքեր՝ զրահապատ մեքենաներով և հրետանիով[1]։ Ինչպես նշում է «Աթ-Թալիա» թերթը սկսվեց իսկական ճակատամարտ զորքերի և գյուղացիների միջև։ Կառավարական զորքերը արյան մեջ խեղդեցին գյուղացիական այս ելույթը։ Բավական է նշել, որ այդ մարտում զոհվեցին 200 գյուղացիներ։

Դեմոկրատական ուժերի հաղթանակը ընտրությունների ժամանակ, ինչպես նաև բանվորական և գյուղացիական մասսայական ելույթները ցույց էին տալիս, որ միապետական ռեժիմն ապրում էր խոր ճգնաժամ։ Իրաքը նորից գտնվում էր մեծ իրադարձությունների նախօրյակին։

* * *

1954 թվականի ընտրություններին կոնստիտուցիոն միություն պարտիան ստացավ պառլամենտի տեղերի մեծ մասը և նրա լիդեր Նուրի Սաիդը կազմեց կառավարություն։ Նուրի Սաիդի կրկին պրեմիեր-մինիստր դառնալը Իրաքի դեմոկրատական ուժերը ընդունեցին խոր դժգոհությամբ։ Նրանք արդեն փորձից գիտեին, որ ամեն անգամ, երբ անգլիական իմպերիալիզմի այդ հին ծառան իշխանության գլուխ էր կանգնում, երկրում հաստատվում էր տեռորիստական ռեժիմ և իմպերիալիստական ուժերը աշխատում էին իրականացնել իրենց հակաժողովրդական պլանները։ Այդպես եղավ նաև այժմ։ Նուրի Սաիդը որոշեց անպայման միանալ արևմտյան իմպերիալիստական պետությունների կողմից ծրա-

[1] „Ат-Талиа", Дамаск, 1956, 9 мая.

գրավող ռազմական խմբավորմանը։ Սակայն մինչև այդ քայլի իրականացումը նա ձեռք առավ մի շարք ոստիկանական միջոցառումներ՝ երկրում օպոզիցիոն ուժերին ճնշելու համար։ Ինչպես նշվեց սույն աշխատության առաջին գլխում 1954 թվականի ընթացքում Նուրի Սաիդի կառավարությունն ընդունեց բազմաթիվ հակաժողովրդական և հակադեմոկրատական դեկրետներ, որոնք արգելեցին քաղաքական պարտիաների գործունեությունը, արհմիությունները, ժողովները և ցույցերը, փակեցին դեմոկրատական թերթերը, քաղաքացիությունից զրկեցին կոմունիստներին, սկսեցին հետապնդել խաղաղության կողմնակիցներին, երիտասարդական դեմոկրատական կազմակերպությունները և այլն։ Երկրում մոլեգնում էր տեռորը։

Նախքան ռազմական խմբավորմանը միանալը Իրաքի կառավարությունը որոշեց խզել իր դիվանագիտական հարաբերությունները Սովետական Միության հետ։ 1954 թվականի նոյեմբերի 6-ին Իրաքի արտաքին գործերի մինիստր Շաբանդերը Բաղդադում ՍՍՌՄ Գործերի ժամանակավոր հավատարմատարին հայտարարեց, որ Իրաքի կառավարությունը վճռել է «ելնելով խնայողության նկատառումներից» փակել իր դիվանագիտական ներկայացուցչությունը Մոսկվայում։ 1955 թվականի հունվարի 3-ին Իրաքի կառավարությունը հայտարարեց, որ դիվանագիտական հարաբերությունները երկու երկրների միջև համարում է ընդհատված, թեև, ինչպես նշվում էր, դա չէր նշանակում դիվանագիտական հարաբերությունների խզում՝ Սովետական Միության և Իրաքի միջև[1]։

ՍՍՌՄ Արտաքին գործերի մինիստրության հայտարարության մեջ Իրաքի կառավարության այդ քայլը իրավացիորեն գնահատվեց որպես անբարյացակամ ակտ Սովետական Միության նկատմամբ։ Այնտեղ միաժամանակ նշվում էր, որ «Նուրի Սաիդի կառավարության այդպիսի գործողությունները ուղղակի կապ ունեն նրա արտաքին քաղաքական կուրսի հետ, որը ուղղված է Իրաքը և արաբական մյուս երկրները Մերձավոր և Միջին Արևելքի շրջանում Ամերիկայի Միացյալ Նա-

[1] „Правда", 1955, 8 января.



հանգների և Անգլիայի կողմից կազմակերպվող ագրեսիվ ռազմական խմբավորումների մեջ ներքաշվելու հետ»[1]։

1955 թվականի հունվարին Թուրքիայի պրեմիեր-մինիստր Մենդերեսը այցելեց Բաղդադ՝ Իրաքի կառավարության հետ ռազմական դաշինք կնքելու վերաբերյալ կոնկրետ խնդիրները քննարկելու համար։ Մենդերեսի այցը և նրա ու Նուրի Սաիդի հունվարի 12-ի համատեղ կոմյունիկեն այն մասին, որ Թուրքիան և Իրաքը որոշել են ռազմական պակտ կնքել, խորը դժգոհություն առաջացրին Իրաքում և ողջ արաբական աշխարհում։ Իրաքում տեղի ունեցան բազմաթիվ ցույցեր, որի ժամանակ ցուցարարները պահանջում էին Թուրքիայի հետ չկնքել որևէ ռազմական պայմանագիր։ Երկրում տարածվեցին թռուցիկներ, որոնք աշխատավորներին կոչ էին անում պայքարել Նուրի Սաիդի կառավարության և նրա հակաժողովրդական քաղաքականության դեմ։ Նուրի Սաիդը այդ ցույցերը ճնշեց անողորմաբար։ Մի քանի օրվա ընթացքում ոստիկանությունը ձերբակալեց մոտ 1000 մարդ։ Բաղդադում կենտրոնացվեցին զորքեր։ Լիբանանի «Ալ-Ախբար» թերթը «Մենդերեսը ամերիկյան իմպերիալիզմի պատգամաբերն է» հոդվածում անդրադառնալով Մենդերեսի Իրաք կատարած այցին նշում էր, որ պատահական չէր Իրաքի կառավարության կողմից դիվանագիտական հարաբերությունների խզումը Սովետական Միության հետ՝ Մենդերեսի այցի նախօրյակին։ Մենդերեսի այցը, շարունակում է «Ալ-Ախբարը», նշանակում է մի նոր փորձ արաբական երկրները Սովետական Միության դեմ ուղղված ռազմական խմբավորման մեջ ներքաշելու ուղղությամբ։ Բեյրութում լույս տեսնող «Տելեգրաֆ» թերթը, բացահայտելով թուրք-իրաքյան ռազմական դաշինք կնքելու իսկական պատճառները, գրում էր, որ այդ պակտի նպատակը ոչ թե Իրաքի պաշտպանությունն էր արտաքին վտանգից, այլ երկրում գոյություն ունեցող ռեժիմի փրկումը, որպեսզի ճնշվի ազգային-ազատագրական շարժումը, որը բազմիցս հարկադրել է Նուրի Սաիդին և նրա համախոհներին փախչել Իրաքից։

[1] „Правда" 1955, 8 января.

Եգիպտոսը հայտարարեց, որ եթե Իրաքը Թուրքիայի հետ ռազմական դաշինք կնքի, ապա դրանով նա արաբական միասնությանը հարված հասցրած կլինի։ Արաբական երկրներում Իրաքի դեմ եղած դժգոհությունը մեղմացնելու և, եթե հնարավոր է նրանց նույնպես նախապատրաստվող ռազմական բլոկին միացնելու նպատակով, Նուրի Սաիդը արաբական երկրները ուղարկեց Իրաքի հայտնի պետական և քաղաքական գործիչ Ֆադիլ Ջամալիին։ Վերջինս հանդիպումներ ունեցավ Եգիպտոսի, Սիրիայի և Լիբանանի պրեզիդենտների և պետական այլ գործիչների հետ։ 1955 թվականի փետրվարի 2-ին Ֆադիլ Ջամալին հանդես եկավ Իրաքի պառլամենտում զեկուցելով իր շրջագայությունների արդյունքների մասին։ Նրա ելույթը հետաքրքիր է այն տեսակետից, որ լույս է սփռում Իրաքի և արևմտյան տերությունների քաղաքականության մի քանի հարցերի վրա։ Այսպես, երբ, արաբական երկրների ղեկավարները առաջարկում են Իրաքին, որ նա չմտնի ռազմական բլոկի մեջ, որովհետև Արաբական Լիգան, վտանգի դեպքում կարող է օգնել Իրաքին, Ֆ. Ջամալին առարկում է, նշելով, որ Արաբական Լիգան ազգային կազմակերպություն է, մինչդեռ իրենց անհրաժեշտ է ռեգիոնալ կազմակերպություն։ «Եթե ուզում ենք ունենալ ռեգիոնալ կազմակերպություն, ապա այս շրջանի մեջ պետք է մտցնենք Թուրքիան, Իրանը, Պակիստանը և նույնիսկ Աֆղանստանը»[1]։ Ամեն ինչ ասված է պարզ։ Պարզվում է, որ արևմտյան իմպերիալիստները իրենց ագրեսիվ խմբավորման մեջ ցանկացել են ներգրավել ոչ միայն արաբական երկրները, Թուրքիան և Իրանը, այլ նույնիսկ Աֆղանստանը, որը վարում է չեզոքության և ռազմական խմբավորումներին չմիանալու քաղաքականություն։

Ֆադիլ Ջամալիի ելույթը նշանակալի է նաև մեկ այլ իմաստով։ Նա ստիպված է խոստովանել, որ արևմտյան տերությունները առանց պայմանի Իրաքին ոչինչ չեն տա։ Նա նշում է, որ արաբական երկրների լիդերներին ինքն ասել է,

[1] الدكتور محمد فاضل الجمالي، من واقع السياسة العربية، بيروت، ١٩٥٩ ص ٤



որ «միջազգային դրությունը ու նրա ճգնաժամը մեզանից պահանջում են երկու բան 1. զինվել, 2. ռեգիոնալ կազմակերպություն։ Գալով զենքին, նրա աղբյուրը Արևմուտքն է, քանի որ չենք ուզում գործակցել կոմունիզմի հետ։ Արևմուտքը մեզ զենք չի տա մեր աչքերի սևության համար, եթե նրա հետ համաձայնության և համագործակցության չգանք»[1]։ Այսպես, ուրեմն, իմանալով, որ արևմտյան տերությունների օգնությունն անշահախնդիր չէ, որ նրանք ցանկանում են արաբական երկրներն օգտագործել իրենց նպատակների համար, Իրաքի կառավարող կլիկը, այնուամենայնիվ, կանգնում է այդպիսի «օգնություն» ստանալու, Բաղդադի ագրեսիվ բլոկի ստեղծման տեսակետի վրա։ Դա մի ավելորդ անգամ ցույց է տալիս, որ Իրաքի կառավարության քաղաքականությունը ուղղակի դավաճանություն էր իր և արաբական մյուս ժողովուրդների կենսական շահերին։ Ֆ. Ջամալին Իրաքի կառավարության անունից պաշտոնապես հայտարարում է, որ իրենք չեն կարող չեզոք լինել, և որ «մեր հետևելիք քաղաքականությունը պետք է լինի Թուրքիայի ընտրած քաղաքականությունը»[2]։ Իրաքի համար օրինակ էր դարձել այն Թուրքիան, որը փաստորեն վեր էր ածվել արևմտյան տերությունների գաղութին և դարձել ամերիկյան իմպերիալիզմի ռազմական բազան։

Արաբական մյուս երկրները ուղղակիորեն դատապարտեցին Իրաքի կառավարության այս դիրքը։ Նրանք պահանջեցին, որ Իրաքը հրաժարվի իր մտադրություններից։ Նրանք իրավացիորեն գտնում էին, որ «Բաղդադի պակտը իր հակայական վտանգներով մի նոր սպառնալիք է ոչ միայն Իրաքի ժողովրդին, այլ նաև ամբողջ արաբական ազգին և Միջին Արևելքի մյուս ժողովուրդներին»[3]։

Սակայն Նուրի Սաիդի կառավարությունը, հաշվի չառնելով Իրաքի ժողովրդի և ողջ արաբական աշխարհի պահանջը, 1955 թվականի փետրվարի 24-ին Բաղդադում 5 տարի

[1] الدكتور محمد فاضل الجمالي... ص ٤١

[2] Նույն տեղում, էջ 43։

[3] «انتفاضة العراق الأخيرة، عرض وتحليل»، بغداد، ١٩٥٧ ص ١٢

ժամանակով ռազմական պակտ կնքեց Թուրքիայի հետ, որի համաձայն կողմերը պարտավորվում էին համագործակցել իրենց անվտանգությունն ու պաշտպանությունը» ապահովելու նպատակով։ Թուրք-իրաքյան ռազմական պայմանագրի կնքումով հիմքը դրվեց Մերձավոր և Միջին Արևելքում ռազմական բլոկի ստեղծմանը, որը հետագայում Անգլիայի, Պակիստանի և Իրանի միացումով Բաղդադի պակտ անունը ստացավ։

Ապրիլի 4-ին Թուրք-իրաքյան ռազմական պակտին միացավ Անգլիան։ Միաժամանակ Իրաքի և Անգլիայի միջև կնքվեցին «հատուկ համաձայնագրեր», որոնցով վերանում էր անգլո-իրաքյան 1930 թվականի պայմանագիրը։ Սակայն դա որևէ փոփոխություն առաջ չբերեց Անգլիայի և Իրաքի հարաբերություններում, քանի որ Անգլիան, ըստ նոր համաձայնագրի, առաջվա պես պահպանում էր իր արտոնությունները Իրաքում։ Նոր համաձայնագիրը Անգլիայի տրամադրության տակ էր թողնում Հաբբանիա և Շայբա ռազմա-օդային բազաները։ Անգլիական ռազմական ուժերը կարող էին օգտվել Իրաքի բոլոր ռազմական օբյեկտներից, ազատ թռչել Իրաքի տերիտորիայի վրայով։ Բրիտանական նավերը կարող էին ամեն ժամանակ ազատ մտնել Շատ էլ-Արաբի ջրերը։ Անգլիական զինվորական հրահանգիչները մնում էին Իրաքում իրաքյան բանակը վարժեցնելու համար։ Անգլիական սպաները և զինվորները օգտվելու էին էքստերիտորիալ իրավունքներից[1]։ Ինչպես տեսնում ենք, այս նոր համաձայնագիրը պահպանում է անգլո-իրաքյան 1930 թվականի պայմանագրի բոլոր հիմնական կետերը։ Եվ եթե 1930 թվականի պայմանագիրը չեղյալ հայտարարեցին, ապա դա բացատրվում է նրանով, որ նրա անունն անգամ ատելի էր դարձել Իրաքի ժողովրդին։ Անգլիան և Իրաքը կնքեցին «նոր» պայմանագիր և չեղյալ հայտարարեցին հինը, կարծելով, թե անվան փոփոխումը կարող է խաբել ժողովրդական մասսաներին։

Բաղդադի ռազմական դաշինքը ներկայացվեց պաշտպանական հաստատանք։ Սակայն նրա «քննարկումն» անցավ վերին աստիճանի տարօրինակ։ Դեպուտատներին պայմանա-

[1] «Известия» 1955, 7 апреля.



գրի գրավոր տեքստը չբաժանվեց։ Ընթերցվեց պայմանագրի բովանդակությունը և 10 րոպե ժամանակ տրվեց քննարկման համար։ Իսկ անգլո-իրաքյան «հատուկ համաձայնագրերը» պառլամենտի հաստատմանը ընդհանրապես չներկայացվեցին։ Նրա մասին ոչ մի խոսք չխոսվեց և դեպուտատները համաձայնագրերի մասին տեղեկացան միայն հետո, երբ այդ հարցը քննարկվում էր Անգլիայի համայնքների պալատում։ Իրաքի պառլամենտից և ժողովրդից «հատուկ համաձայնագրերի» գոյության փաստը թաքցնելը պետք է բացատրել նրանով, որ այդ համաձայնագրերը ոչնչով չէին փոխում 1930 թվականի պայմանագրի հոդվածները և Իրաքը առաջվա պես մնում էր որպես Անգլիայի ռազմական բազա։ Ուստի և Նուրի Սաիդը հույս չուներ, թե Իրաքի պառլամենտը, չնայած, որ այնտեղ հիմնականում նստած էին նրա մարդիկ, կարող էր հաստատել այդ համաձայնագրերը։

1955 թվականի սեպտեմբերի 23-ին Բաղդադի պայմանագրին միացավ Պակիստանը, իսկ նոյեմբերի 3-ին՝ Իրանը։ ԱՄՆ-ի և Անգլիայի բոլոր փորձերը այդ ագրեսիվ խմբավորման մեջ ներքաշել արաբական բոլոր երկրներին, վերջացան անհաջողությամբ։ Բաղդադի պակտը կազմակերպչորեն վերջնականապես ձևավորվեց 1955 թվականի նոյեմբերի 21—22-ին Բաղդադում տեղի ունեցած հիմնադիր ժողովում, որտեղ և ստեղծվեցին այդ ագրեսիվ խմբավորման հանձնաժողովները։

Բաղդադի ռազմական պակտի ստեղծումը հետևյալ նպատակներն էր հետապնդում։ Առաջին, ստեղծել ռազմական պլացդարմ Սովետական Միության հարավային սահմանների մոտ։ Այն ուղղված էր սոցիալիստական լագերի երկրների դեմ։ Երկրորդ, ճնշել ազգային-ազատագրական շարժումները և փրկել գաղութային սիստեմը կործանումից։ Երրորդ, ռեակցիոն ուժերը հույս ունեին այդ պակտի մեջ մտնող երկրների զինված ուժերի օգնությամբ պահպանել իրենց տիրապետությունը, պահպանել այդ երկրներում գոյություն ունեցող հակաժողովրդական ռեժիմները։ Բաղդադի բլոկը իմպերիալիստական և հակաժողովրդական ռեակցիոն ուժերի դաշինքն էր։ Այդ բանը հարկադրված էին խոստովանել

նաև քուրդական մի շարք պատմաբաններ։ Այսպես, օրինակ, անգլիացի պատմաբան Կարակտուսը գրում է, որ Բաղդադի պակտի նպատակն էր ստեղծել ՆԱՏՕ-ի նման մի դաշինք Ռուսաստանի հարավային սահմանների մոտ[1]։

Թեև ԱՄՆ-ը ձևականորեն չմտավ Բաղդադի պակտի մեջ, սակայն նա հանդիսացավ այդ պակտի ակտիվ ստեղծողը և նրա քաղաքականության որոշողը։ 1956 թվականի ապրիլին ԱՄՆ-ը մտավ Բաղդադի պակտի տնտեսական և քայքայիչ գործունեության դեմ պայքարող կոմիտեների մեջ, իսկ 1957 թվականի հունիսին՝ ռազմական կոմիտեի մեջ[2]։ Դա նշանակում էր, որ նա փաստորեն մտավ Բաղդադի պակտի մեջ։ Ուստի Իրաքի դեմոկրատական ուժերը լրիվ հիմք ունեին ասելու, որ Բաղդադի պակտի ստեղծումով ամերիկյան ու անգլիական իմպերիալիզմը և նրանց գործակալները համախմբվեցին մի ճակատում ընդդեմ Մերձավոր ու Միջին Արևելքի ժողովուրդների[3]։

Բաղդադի պակտի կնքումը Իրաքի ժողովրդական լայն մասսաներն ընդունեցին խորին զայրույթով։ Նուրի Սաիդը այդ բանը նախատեսնում էր։ Այդ պատճառով էլ նա նախօրոք մարտական պատրաստականության մեջ էր դրել բանակը և ոստիկանությունը։ Պալատների շուրջը և փողոցներում նա տեղավորեց տանկեր և զինվորական մասեր։ Բանակին և ոստիկանությանը հրաման արձակվեց առանց զգուշացման կրակել ցուցարարների վրա[4]։

Սակայն այս նախազգուշական միջոցառումները չկարողացան կանխել ժողովրդական ելույթները. երկրի զանազան վայրերում տեղի ունեցան միտինգներ և ցույցեր։ Օպոզիցիոն ուժերը տարածում էին թռուցիկներ, կոչ անելով ժողովրդական մասսաներին ակտիվ պայքար ծավալել Բաղդադի պակտի դեմ։ Ամարայում, Նասրիյայում, Ալ-Հայյում և այլ վայրե-

[1] Caractus,... p. 102.
[2] „Iraq", Department of State, U. S. Washington, 1957, p. 15.
[3] «انتفاضة العراق الأخيرة، عرض وتحليل»، ص ١٠١
[4] ЦГАОР, ф. 4459, оп. 26, ед. хр. 175, л. 12.



րում արյունալի ընդհարումներ տեղի ունեցան գյուղացիության և ոստիկանության միջև[1]։

1955 թվականի մարտին խոշոր ցույցեր տեղի ունեցան Բաղդադում՝ Թուրքիայի պրեզիդենտ Ջելալ Բայարի Իրաք ժամանելու կապակցությամբ։ Այդ ցույցերը, որին մասնակցում էին Բաղդադի հազարավոր քաղաքացիներ, վերածվեցին հակաիմպերիալիստական, Բաղդադի պակտի դեմ ուղղված ելույթների[2]։ Թեև Իրաքի կառավարությունը ճնշեց այդ ցույցերը, սակայն նա հարկադրված եղավ փոփոխություններ մտցնել Բայարի Իրաքում գտնվելու ծրագրի մեջ և կրճատել նրա այցելության ժամանակը։ Փետրվար—մարտ ամիսներին Բաղդադի պակտի դեմ ուղղված բողոքի գործադուլներ հայտարարեցին Բաղդադի ուսանողները։ Նրանց լռեցնելու համար կառավարությունը ժամանակավորապես փակեց ուսումնական հաստատությունները։ 1955 թվականի մայիսին տեղի ունեցավ Իրաքի կանանց կոնֆերանսը։ Կոնֆերանսում ընդունված բանաձևում ասված էր. «Իրաքի ժողովուրդը դատապարտում է թուրք-իրաքյան պակտը, հանդես է գալիս Իրաքին տրվող ԱՄՆ-ի ռազմական «օգնության», երկիրը ռազմական դաշինքների մեջ ներքաշվելու, օտարերկրյա պետությունների տիրապետության դեմ և պահանջում է վարել չեզոք քաղաքականություն»[3]։

Անգլիան ի նկատի ունենալով Բաղդադի պակտի դեմ Իրաքում ծավալված ելույթներն ու դժգոհությունները 1956 թվականի հունվարին լրացուցիչ ռազմական ուժեր տեղափոխեց Կիպրոս՝ անհրաժեշտության դեպքում Նուրի Սաիդին շտապ օգնություն հասնելու ժողովրդական ելույթները ճնշելու համար։

1956 թվականի հունվարին հրապարակվեց Իրաքի կոմունիստական պարտիայի Կենտրոնական կոմիտեի հայտարարությունը, որտեղ վերլուծվում էր Իրաքում ստեղծված դրությունը՝ ԱՄՆ-ից ռազմական «օգնություն» ստանալու

[1] ЦГАОР, ф. 4459, оп. 26, ед. хр. 175, л. 12.
[2] Նույն տեղում, թ. 18
[3] „Аль-Файха", Бейрут, 1955, 20 мая.

պայմանագրի և Բաղդադի պակտի կնքումից հետո։ Կոմպարտիան հայտարարում էր, որ Իրաքի կառավարության այդ քայլերը հանգեցրին ազգային սուվերենիտետի բոլոր հատկանիշների վերացմանը և Իրաքը «կախման մեջ դրին անգլո-ամերիկյան իմպերիալիստական շրջաններից»[1]։ Հայտարարության մեջ այնուհետև նշվում էր, որ միանալով Բաղդադի պակտին, Իրաքը խախտեց արաբական երկրների Լիգայի որոշումը՝ չեզոքություն պահպանելու և ռազմական խմբավորումներին չմասնակցելու մասին, խախտեց Բանդունգի կոնֆերանսում վերցրած իր պարտավորությունը և դրանով իսկ իրեն մեկուսացրեց Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդների իմպերիալիզմի ու գաղութատիրության դեմ մղվող պայքարից։ Իրաքի կոմունիստական պարտիան կոչ էր անում ժողովրդին պայքարել Բաղդադի պակտի դեմ, հասնել այն բանին, որ Իրաքը վարի չեզոք քաղաքականություն։ Նա միաժամանակ պահանջում էր վերականգնել դիվանագիտական հարաբերությունները Սովետական Միության հետ[2]։ Իրաքի կոմպարտիայի հայտարարությունը լայն արձագանք գտավ աշխատավորական մասսաների շրջանում և նրանց օգնեց ճիշտ կերպով հասկանալու իրենց առջև կանգնած խնդիրները։

Դժգոհությունը Նուրի Սաիդի կառավարության քաղաքականությունից այնքան խորն էր, որ դա իր արտացոլումը գտավ նույնիսկ պառլամենտում։ Առանձին դեպուտատներ պառլամենտում հանդես եկան Նուրի Սաիդի քաղաքականության խիստ քննադատությամբ։ Դեպուտատ Աբդուլ Մահմուդը նշեց, որ Բաղդադի պակտը քայքայում է արաբական երկրների միասնությունը և հանդիսանում է նրանց միջև գոյություն ունեցող տարաձայնությունների հիմնական պատճառ։ Մի այլ դեպուտատ՝ Սեիդ ալ-Ֆարսին պառլամենտի նիստում հայտարարեց, որ Բաղդադի պակտին մասնակցելը Իրաքի համար ունեցավ չափազանց բացասական հետևանքներ։ Իսկ մի շարք դեպուտատներ մատնանշեցին, որ Բաղդադի պակտին մասնակցելը ծանր է անդրադառնում երկրի էկոնոմիկա-

[1] „Ан-Нур“, Дамаск, 1956, 17 января.

[2] Նույն տեղում։



յի վրա։ Նրանք պահանջեցին երկիրը ազատել օտարերկրյա ազդեցությունից, վերականգնել կոնստիտուցիոն ազատությունները և այլն։

Դեպքերի զարգացումը տրամաբանորեն հասցրեց Նուրի Սաիդի հրաժարականի պահանջին։ Երկրի բոլոր օպոզիցիոն ուժերը իրավացիորեն ի դեմս Նուրի Սաիդի տեսնում էին այն մարդուն, որը բոլորովին անտեսում էր Իրաքի ազգային շահերը և ամեն միջոցներով պաշտպանում իմպերիալիզմի և ֆեոդալական վերնախավի շահերը։ Նրանք պահանջում էին, որ ժողովրդին ատելի կառավարությունը հեռանա իշխանությունից։

* * *

1956 թվականի հոկտեմբեր—նոյեմբերին Անգլիան, Ֆրանսիան և Իսրայելը ագրեսիվ պատերազմ սանձազերծեցին Եգիպտոսի դեմ, Սուեզի ջրանցքը վերջինիս կողմից ազգայնացնելու կապակցությամբ։ Սուեզի ջրանցքի ազգայնացումը ծանր հարված էր իմպերիալիստներին և, առաջին հերթին, Անգլիային ու Ֆրանսիային։ Իմպերիալիստները գտնում էին, որ եթե Եգիպտոսին հաջողվի իրականացնել իր սուվերեն իրավունքները Սուեզի ջրանցքի նկատմամբ, ապա դա խոշոր հարված կլինի իրենց դիրքերին ոչ միայն Եգիպտոսում, այլ նաև Մերձավոր և Միջին Արևելքի բոլոր երկրներում և հատկապես արաբական երկրներում։ Ուստի նրանք որոշեցին զենքի ուժով ստիպել Եգիպտոսին հրաժարվելու իր մտադրությունից։ Դա բողոքի խոշոր ալիք բարձրացրեց ամբողջ աշխարհում։ Խաղաղասեր ուժերը պահանջում էին դադարեցնել զինված ագրեսիան Եգիպտոսի դեմ և հարգել նրա օրինական իրավունքները։ Եգիպտոսի պաշտպանությամբ ակտիվորեն հանդես եկան արաբական բոլոր երկրները։ Արաբական ժողովուրդները Եգիպտոսի պայքարը համարեցին իրենց պայքարը, արաբական ազգային-ազատագրական շարժման անբաժանելի մասը։ Եգիպտոսի հաղթանակը մեծ չափով կնպաստեր արաբական ազգային-ազատագրական շարժման ուժեղացմանը, իսկ պարտությունը կթուլացներ այդ շարժ-

ման դիրքերը և հնարավորություն կընձեռեր իմպերիալիստական պետություններին որոշ ժամանակ ևս պահպանել իրենց գաղութային տիրապետությունը։

Եգիպտական ժողովրդի պայքարը վճռական պաշտպանություն գտավ նաև Իրաքի ժողովրդի կողմից։ Դեռևս օգոստոսին ամբողջ Իրաքում տեղի ունեցավ համընդհանուր գործադուլ ի պաշտպանություն Եգիպտոսի։ Պառլամենտի մի շարք դեպուտատներ կառավարությունից պահանջեցին անհրաժեշտ օգնություն ցույց տալ Եգիպտոսին Սուեզի հարցում։ Երկրի դեմոկրատական ուժերը պահանջում էին, որ Իրաքի կառավարությունը բացահայտորեն դատապարտի Անգլիայի և Ֆրանսիայի գործողությունները։

Ագրեսորները իրենց պլանների իրականացման գործում մեծ հույսեր էին կապել Բաղդադի պակտի և հատկապես Իրաքի հետ, որը նրանք համարում էին այդ ագրեսիվ խմբավորման ամենահուսալի անդամը։ Անգլիան և Ֆրանսիան, որոնց ագրեսիվ գործողությունները փաստորեն աջակցություն գտան ԱՄՆ-ի կողմից, հույս ունեին իրենց այդ ավանտյուրայի մեջ ներքաշել Իրաքը և նրա օգնությամբ քայքայել արաբական միասնությունը և թիկունքից հարված հասցնել մեկուսացված Եգիպտոսին։

Սակայն այդ պլանները հնարավոր չեղավ իրականացնել։ Իրաքի ողջ ժողովուրդը ոտքի ելավ Եգիպտոսին պաշտպանելու համար։ Ամբողջ նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին Իրաքում տեղի ունեցան գործադուլներ, ցույցեր, ելույթներ և այլն, որի ժամանակ Եգիպտոսին լիակատար աջակցություն ցույց տալու պահանջը միաձուլվեց հակաիմպերիալիստական և հատկապես Բաղդադի պակտի դեմ ուղղված պայքարի հետ։ Իրաքի աշխատավորական մասսաները պահանջում էին դուրս գալ Բաղդադի պակտից, խզել դիվանագիտական հարաբերությունները Անգլիայի, Ֆրանսիայի և Թուրքիայի հետ, դադարեցնել նավթի մատակարարումը Անգլիային և Ֆրանսիային, պահպանել արաբական միասնությունը։

Ժողովրդական շարժումների ճնշման տակ Իրաքի կառավարությունը հարկադրված եղավ խզել դիվանագիտական հարաբերությունները Ֆրանսիայի հետ և հայտարարել, որ Բաղ-



դադի պակտի խորհրդի նիստերին չի մասնակցի, եթե այնտեղ ներկա գտնվեն Անգլիայի ներկայացուցիչները։ Դա առաջին լուրջ ճեղքվածքն էր, որ տվեց Բաղդադի ռազմական մեքենան։

Սակայն Իրաքի կառավարության այդ որոշումը չէր նշանակում, որ նա խզեց ամեն մի հարաբերություն ագրեսորների հետ։ Շուտով Իրաքի հասարակայնությանը հայտնի դարձավ, որ Նուրի Սաիդի թույլտվությամբ Եգիպտոսի քաղաքները և գյուղերը ռմբակոծելու համար Անգլիան օգտագործում է Իրաքի օդանավակայանները։ Իրաքի կառավարությունը անգլիական ռազմական ինքնաթիռներին ապահովում էր վառելանյութով, անգլիական վիրավորներին օգնում էր դեղորայքով և այլն։ Բացի այդ, հայտնի դարձավ նաև, որ իմպերիալիստների թելադրանքով Իրաքը դավադրություն էր նախապատրաստում Սիրիայի դեմ, որը փակել էր Եգիպտոսի թիկունքը և մեծ օգնություն էր ցույց տալիս նրան։

Նուրի Սաիդի այդ դավաճանական քաղաքականությունը հանգեցրեց այն բանին, որ Իրաքում նոր ապստամբություն սկսվեց։ Զինված ընդհարում տեղի ունեցավ Բաղդադի տասնյակ հազարավոր ցուցարարների և ոստիկանների միջև։ Ցուցարարները պահանջում էին իսկական օգնություն ցույց տալ Եգիպտոսին և դուրս գալ Բաղդադի պակտից։ Եգիպտոսի օգնության իրաքյան կոմիտեն, որի մեջ մտնում էին երկրի բոլոր քաղաքական պարտիաների և կազմակերպությունների ներկայացուցիչները, մերկացրեց Նուրի Սաիդի կառավարության երկերեսանի քաղաքականությունը։ Իրաքի ժողովրդին ուղղված այդ կոմիտեի դիմումի մեջ ասվում էր. «Նուրի Սաիդը երեսպաշտորեն հայտարարեց Եգիպտոսին պաշտպանելու մասին։ Նույն ժամանակ նա արձակեց անգլիական օդաչուների ձեռքերը, նրանց համար օդանավակայաններն օգտագործելու իրավունք վերապահելով»[1]։

Երկրի տարբեր վայրերում, մասսաների ելույթը կազմակերպելու նպատակով ստեղծվեցին ազգային կոմիտեներ։

Ապստամբությունն առանձնապես մեծ թափ ընդունեց Նեջեֆում և Քութ էլ-Հայյում։ Նեջեֆում հինգ օր շարունակ բա-

[1] „Ар-Рай аль-Амм", Дамаск, 1956, 16 ноября.

ղաքի ողջ բնակչությունը դիմադրություն էր ցույց տալիս զորքերին և ոստիկանական ուժերին։ Ապստամբները պահանջում էին Նուրի Սաիդի կառավարության հրաժարականը, Բաղդադի պակտից դուրս գալ և իսկական օգնություն ցույց տալ Եգիպտոսին։ Նեջեֆի բնակչության պայքարը լայն արձագանք գտավ Իրաքում։ Համերաշխության հուժկու ցույցեր տեղի ունեցան Բաղդադում, Ամարայում, Էդ-Դիվանիայում և այլ վայրերում։ Ցուցարարները պահանջում էին փոփոխություն մտցնել կառավարության քաղաքականության մեջ և դադարեցնել ռեպրեսիաները Նեջեֆի բնակչության դեմ։

Նեջեֆում զորքերի և բնակչության միջև տեղի ունեցած զինված ընդհարումների հետևանքով երկու կողմից զոհվեց 104 մարդ։

Քութ էլ-Հայյում բնակչությունը ցրեց ոստիկանությանը և քաղաքի կառավարումը վերցրեց իր ձեռքը։ Ստեղծվեցին ժողովրդական կոմիտեներ։ Քաղաքում հաստատվեց լրիվ կարգ ու կանոն[1]։ Երբ կառավարության զորքերը մոտեցան քաղաքին, բնակչությունը ստեղծեց դիմադրության ժողովրդական կոմիտեներ։ Քութ էլ-Հայյի բնակչությունը ավելի քան վեց օր դիմադրում էր կառավարական ուժերին։ Եվ միայն ինքնաթիռների ու հրետանու օգնությամբ Իրաքի կառավարությանը հաջողվեց ճնշել Քութ էլ-Հայյի ապստամբությունը։

Հուժկու մասսայական ելույթներ տեղի ունեցան նաև Բասրայում, Սուլեյմանիայում, Կիրկուկում և այլ վայրերում, որոնք վերածվեցին արյունալի ընդհարումների ցուցարարների ու զորքերի միջև։ Կիրկուկի բանվորները Արաբական Արհմիությունների միջազգային կոնֆեդերացիայի կոչով երկու անգամ քանդեցին նավթամուղը ագրեսորներին նավթից զրկելու համար[2]։

Նուրի Սաիդը սարսափած ժողովրդական ապստամբությունից իր իշխանությունը պահպանելու համար մոբիլիզացիոն վիճակում էր պահում Իրաքի բանակի երկու երրորդը։

[1] Տե՛ս „Современный Восток", № 5, 1957, стр. 15.

[2] „Trade Union Record", New Delhi, 1959, vol. 15, № 10, p. 12.



Բացի այդ կառավարական հիմնարկների պաշտպանությունը ուժեղացնելու նպատակով, նա Բաղդադում կենտրոնացրեց երկու զրահատանկային բրիգադներ։ Սակայն այդ բոլոր միջոցառումները անզոր էին կանխելու ժողովրդական շարժումները։ Նուրի Սաիդը ստիպված եղավ դիմել ցեղերի ղեկավարներին, խնդրելով նրանց մասնակցել այդ շարժումների ճնշմանը։ Այդպիսի դիմումը ցեղերի պետերին բացատրվում էր ոչ միայն ազգային-ազատագրական շարժման լայն թափով, այլ նաև նրանով, որ սկսվել էր տատանվել նաև բանակը։ 1956 թվականի նոյեմբերյան իրադարձությունների ժամանակ բազմաթիվ դեպքեր եղան, երբ զորքերը հրաժարվում էին կատարել կառավարության հրամանը և չէին կրակում ապստամբների վրա։

Ցեղերի ղեկավարները մերժեցին Նուրի Սաիդի պահանջը։ Դեռ ավելին, շիի ցեղերի ղեկավարները մտան Ֆեյսալ II պալատը և հայտարարեցին, որ իրենք այնտեղից դուրս չեն գա, քանի դեռ Նուրի Սաիդը պրեմիեր-մինիստր է։

1956 թվականի դեպքերին ակտիվորեն մասնակցում էր նաև Իրաքի գյուղացիությունը։ Միջին Եփրատի և Տիգրիսի, Բաղդադի լիվայի և այլ վայրերի գյուղացիները պատվիրակություններ ուղարկեցին Բաղդադ իրենց պահանջները կառավարությանը հաղորդելու համար։ Նրանք պահանջում էին հող և ազատություն, Նուրի Սաիդի հրաժարականը, Բաղդադի պակտից դուրս գալը և արաբական ազատագրական քաղաքականության միանալը[1]։ Կառավարությունը հրաժարվեց բավարարել գյուղացիների պահանջները և վերոհիշյալ վայրերն ուղարկեց զինվորական ուժեր, որոնք հրետանու, ավիացիայի և զրահամեքենաների օգնությամբ ճնշեցին գյուղացիական հուզումները։ Եղան բազմաթիվ զոհեր։ Մի քանի հազար գյուղացիներ ձերբակալվեցին, իսկ որոշ ցեղեր տեղահան արվեցին։ Սակայն ժողովրդական ելույթները շարունակվում էին։ Նուրի Սաիդի կառավարությունը գտնվում էր անկման եզրին։ Անկարող լինելով իր ուժերով ճնշել ժողովրդական շարժումները, Իրաքի կառավարությունը դիմեց ԱՄՆ-ի

[1] „Современный Восток", № 5, 1957, стр. 16.

օգնությանը։ Նա խնդրեց, որ իրեն ցույց տան անհրաժեշտ օգնություն և որ ԱՄՆ-ը բացեիբաց հանդես գա Իրաքի և Բաղդադի պակտի պաշտպանությամբ։ 1956 թվականի նոյեմբերի 29-ին ԱՄՆ-ի կառավարությունը պաշտոնապես հայտարարեց, որ ինքը պաշտպանում է Բաղդադի պակտը[1]։ ԱՄՆ-ը միաժամանակ սպառնաց Իրաքի ազգային-ազատագրական ուժերին։ ԱՄՆ-ի կառավարության այդ հայտարարությունը Իրաքի ռադիոն բազմիցս հաղորդում էր, որպեսզի ահաբեկի ժողովրդին։ Ստանալով ամերիկյան իմպերիալիստների աջակցությունը Իրաքի կառավարող կլիկը անցավ վճռական գործողությունների։ Ֆեյսալ II արձակեց պառլամենտը և դեկտեմբերի 1-ից երկրում մտցրեց ռազմական դրություն։ Դա նշանակում էր, որ սկսելու էին գործել արտակարգ օրենքներ։ Երկրում կատարվեցին մասսայական ձերբակալություններ, այդ թվում նաև բանակի սպայական կազմից։

Չնայած ԱՄՆ-ի կառավարության սպառնալիքներին և Իրաքում ռազմական դրություն մտցնելուն, գործադուլները և ցույցերը Բաղդադում, Նաջաֆում և այլ վայրերում շարունակվեցին։ Իրաքի ազգային-ազատագրական ուժերը հայտարարեցին, որ նրանք չեն դադարեցնի պայքարը մինչև որ Նուրի Սաիդը հրաժարական չտա և Իրաքը դուրս չգա Բաղդադի պակտից։ Բայց արդեն դեկտեմբերի ամսին ելույթները նախորդ շրջանի հետ համեմատած թուլացան։

1956 թվականի նոյեմբերյան ապստամբությունը և հետագա ելույթները չհասցրին Նուրի Սաիդի կառավարության անկմանը։ Վայելելով օտարերկրյա իմպերիալիստների աջակցությունը, օգտագործելով բանակը և կանգ չառնելով ոչ մի ոստիկանական միջոցների առջև նա կարողացավ ճնշել ժողովրդական շարժումները և մնալ իշխանության գլուխ։

Չնայած այդ հանգամանքներին 1956 թվականի ապստամբությունը մեծ նշանակություն ունեցավ։ Ժողովրդական, մասսայական ելույթները ձախողեցին Իրաքը Եգիպտոսի դեմ օգտագործելու իմպերիալիստների պլանները։ Իրաքի ժողովուրդը հանդես եկավ ոչ թե Եգիպտոսի դեմ, այլ կանգնեց

[1] „Современный Восток", № 1, 1957, стр. 31.



նրա կողքին և դրանով իսկ մեծ չափով օգնեց Եգիպտոսի ժողովրդի հաղթանակին։

Մյուս կողմից, այդ ելույթները սասանեցին Բաղդադի պակտի հիմքերը։ Իրաքի ժողովրդի վճռական գործողությունների հետևանքով այդ ռազմական խմբավորումը չկարողացավ խաղալ այն դերը, որ նրան հատկացրել էին իմպերիալիստները։ Բաղդադի պակտը փաստորեն ջլատվեց։ Նոյեմբերյան ապստամբությունը ցրեց այն իլյուզիան, թե Իրաքը հանդիսանում է Բաղդադի պակտի ամենահուսալի անդամը։

1956 թվականի ապստամբությունը հանդիսացավ Իրաքի ազգային-ազատագրական շարժման և միապետական ռեժիմի տապալման կարևոր էտապներից մեկը։

* * *

Անգլիայի և Ֆրանսիայի պարտությունը Եգիպտոսի դեմ սկսած ագրեսիայում խիստ կերպով թուլացրեց նրանց դիրքերը Արաբական Արևելքում։ Դրանից օգտվեցին ամերիկյան իմպերիալիստները, որոնք առաջ քաշեցին «վակուումի» տեսությունը։ Այդ տեսության արտահայտությունը եղավ «Էյզենհաուերի դոկտրինան», որը լույս աշխարհ եկավ 1957 թվականի հունվարի 5-ին։ «Էյզենհաուերի դոկտրինան» ռազմական և տնտեսական «օգնություն» էր խոստանում Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներին և պրեզիդենտին իրավունք էր տալիս ըստ իր հայեցողության ռազմական ինտերվենցիա կատարել այդ երկրները նրանց «կոմունիստական ագրեսիայից» փրկելու համար։

Ինչպես ճիշտ նկատել է Յուսուֆ Խաթթար ալ-Հելուն, արաբների համար «Էյզենհաուերի դոկտրինային» կապվելու քաղաքականության ամենավատ արդյունքներից մեկը՝ «միջազգային կոմունիզմի» դեմ, Սովետական Միության ու սոցիալիստական մյուս երկրների դեմ պայքարելու թշնամական քաղաքականության որդեգրումը կլինի[1]։ «Էյզենհաուերի դոկտրինան», նշել է Իրաքի արտաքին գործերի նախկին մի-

[1] «الأخبار» ، بيروت, 19.I.1958

Նիսաթ Հաշիմ Ջավադը, սահմանափակում էր Իրաքի անկախությունը[1]։

Նրա նպատակն էր ճնշել ազգային-ազատագրական շարժումները արաբական երկրներում։ Ամերիկյան իմպերիալիզմը հանդես էր գալիս միջազգային ժանդարմի դերում։ Մյուս կողմից, ամերիկյան կապիտալը, օգտագործելով անգլիական և ֆրանսիական իմպերիալիստների պարտությունը, «Էյզենհաուերի դոկտրինայի» օգնությամբ փորձում էր նրանց վերջնականապես դուրս մղել արաբական երկրներից։ «Էյզենհաուերի դոկտրինան» Մերձավոր և Միջին Արևելքում իմպերիալիստական ուժերի նոր տեղաբաշխման արտահայտությունն էր։

1957 թվականի հունվարի 20-ին Իրաքը և Բաղդադի պակտի մյուս երկրները ընդունեցին «Էյզենհաուերի դոկտրինան»։ Իրաքի կառավարող կլիկը հույս ուներ ամերիկյան զենքի օգնությամբ պահպանել իր տիրապետությունը։ ԱՄՆ-ը սկսեց ճնշում գործադրել արաբական բոլոր երկրների վրա, որպեսզի նրանք նույնպես իրենց համաձայնությունը տան «Էյզենհաուերի դոկտրինային»։ Սակայն ամերիկյան իմպերիալիստները հանդիպեցին արաբական ժողովուրդների, ինչպես նաև Եգիպտոսի ու Սիրիայի կառավարությունների համառ դիմադրությանը։

Իրաքի կառավարության կողմից դոկտրինայի ընդունումը խորը դժգոհություն առաջացրեց երկրում։

Իրաքի դեմոկրատական ուժերը հասկանում էին, որ նա նոր սպառնալիք էր Իրաքի ազգային-ազատագրական պայքարին։ Ինչպես նշում էր Գ. Ֆարմանը «Էյզենհաուերի դոկտրինան» ողջ Արաբական Արևելքին սպառնում է նոր ագրեսիայով»[2]։ 1957 թ. Բաղդադում լույս տեսավ «Իրաքի վերջին ազգային ելույթների վերլուծությունը» գիրքը (հեղինակը չի նշված)։ Գրքի մի մասը նվիրված է «Էյզենհաուերի դոկտրինայի» նկատմամբ Իրաքի ժողովրդի դիրքի լուսաբանմանը։ Այնտեղ ասված է. «Իրաքի ժողովուրդը, որ երկար պայքարեց ու բարձրացրեց իր վերջին ընդդիմությունը Բաղդադի պակտը ջախջախելու համար, ոչ մի օր պատրաստ չի եղել և չի լինելու ընդունելու ամերիկյան նոր իմպերիալիզմը՝ ավելացրած բրիտանական հին լծի վրա։ Իրաքի ժողովուրդը ընդդեմ է, ինչպես ընդդեմ են բոլոր արաբական ժողովուրդները, որ «Էյզենհաուերի դոկտրինայի» գլխավոր նպատակն է հարձակվել արաբ ազգի վրա, եւ դարձնելու նրա մեծ ոստումը»[1]։

Իրաքի ազգային բարձրացում կոմիտեն այդ դոկտրինան բնութագրեց որպես «իմպերիալիստական տիրապետության նոր ձև»։ Իրաքի ժողովրդին ուղղված դիմումի մեջ կոմիտեն կոչ էր անում ուժեղացնել պայքարը Նուրի Սաիդի կառավարության, Բաղդադի պակտի և «Էյզենհաուերի դոկտրինայի» դեմ։

Դժգոհությունը համակեց նաև ազգային բուրժուազիային։ Ինչպես նշում էր «Արարատ» թերթը, «Տնտեսական կացության ծանրացումը նույնպես ազգային բուրժուազիային կարելի համարեն պահանջել, որ վերատեսության ենթարկվի կառավարության արտաքին քաղաքականությունը, որ Իրաք դուրս գա Բաղդադի ուխտեն, մերժե «Դալես-Էյզենհաուերյան վարդապետությունը» և իր անտեսությունը պաշտպանե կայսերապաշտական մենաշնորհներու լուծին դեմ»[2]։

Այդ դոկտրինայի՝ ընդդիմությամբ հանդես եկան մի շարք անհատներ։ Իրաքում կրկին սկսվեցին ժողովրդական ելույթները։ Օպոզիցիոն ուժերը պառլամենտին և թագավորին ուղարկեցին բազմաթիվ պետիցիաներ, նամակներ ու բանաձևեր, պահանջելով մերժել դոկտրինան։ Դրությունը խիստ սրվեց Բաղդադում, Մոսուլում և այլ վայրերում։ Էն-Նեջեֆում և Քերբելայում Նուրի Սաիդի կառավարությունը ռազմական դրություն մտցրեց[3]։ Ժողովրդական լայն մասսաները պաշտպանեցին Իրաքի քաղաքական գործիչ Հասան Ջալիբիի դիմումը՝ բացահայտորեն դատապարտել ամերիկյան իմպերիա-

[1] «سياسة الجمهورية العراقية الخارجية»، بغداد، ١٩٥٩، ص٧
[2] Г. Фарман.. стр. 100.



[1] «انتفاضة العراق الأخيرة»، ص ١٠٩
[2] «Արարատ», 1957, 2 փետրվարի։
[3] Տե՛ս „Ас-Сиас", Бейрут, 1957, 23 января.

լիզմի ագրեսիվ քաղաքականությունը և բոյկոտի ենթարկել ամերիկյան ինֆորմացիոն կենտրոնները Իրաքում։

«Էյզենհաուերի դոկտրինայի» դեմ ուղղված ելույթներից հատկապես պետք է նշել 1958 թվականի հունիսի 18-ին Բաղդադում տեղի ունեցած ցույցը, որին մասնակցում էին մի քանի հազար բանվորներ, ուսանողներ և այլք։ Այդ ցույցն ընթացավ «Կորչի Էյզենհաուերի իմպերիալիստական դոկտրինան և Բաղդադի ագրեսիվ պակտը» լոզունգի ներքո[1]։ Ցուցարարները ավելի քան երեք ժամ համառ դիմադրություն էին ցույց տալիս ոստիկաններին, որոնք զինված էին գնդացիրներով և նռնակներով։ Այդ ելույթի ընթացքում սպանվեց 42 և վիրավորվեց մոտ 300 ցուցարար։

Իրաքի ժողովուրդը երբեք չհաշտվեց «Էյզենհաուերի դոկտրինայի» հետ և պայքարը նրա դեմ շարունակեց ընդհուպ մինչև 1958 թվականի հուլիսի 14-ի ռևոլյուցիան։ Ընդունելով այդ դոկտրինան և ճնշելով նրա դեմ ուղղված ելույթները Իրաքի կառավարությունն էլ ավելի մերկացրեց իր հակաժողովրդական բնույթը և խորացրեց այն անդրպատը, որ գոյություն ուներ նրա և ժողովրդի միջև։

***

1957 թվականի գարնանը Իրաքում տեղի ունեցավ մի նշանակալի երևույթ։ Ստեղծվեց Իրաքի Ազգային միասնության ճակատը, որի մեջ մտան հետևյալ պարտիաները՝ կոմունիստական, ազգային-դեմոկրատական, անկախության (ալ-Իսթիքլյալ), արաբական վերածննդի սոցիալիստական պարտիան (Բաաս) և անկախականների մի խումբ։ Մինչև այդ ճակատի ստեղծումը Իրաքի օպոզիցիոն ուժերը գործում էին անջատ, որը բացասաբար էր անդրադառնում ազգային-ազատագրական պայքարի վրա։ Ճիշտ է, երբեմն այս կամ այն մասնակի հարցի շուրջը ստեղծվում էր քաղաքական ուժերի բլոկ, բայց դա ժամանակավոր բնույթ էր կրում և երկրի բոլոր օպոզիցիոն ուժերը չէր ընդգրկում։

[1] „Аль-Хадара", Дамаск, 1958, 20 июня.



Ազգային ճակատի ստեղծման համար ակտիվ պայքար էր մղում կոմունիստական պարտիան։ Ճակատի կազմակերպման հարցը դրվեց դեռևս 1945 թվականին կոմունիստական պարտիայի I համագումարում, որտեղ առաջ քաշվեց «Ամրապնդիր քո պարտիայի կազմակերպությունը, ամրապնդիր ազգային շարժման կազմակերպվածությունը» լոզունգը։ Սակայն այն ժամանակ հնարավոր չեղավ ստեղծել այդ ճակատը, որովհետև օպոզիցիոն ուժերի մի մասը դեռևս չէր ըմբռնում դրա անհրաժեշտությունը, իսկ մի մասն էլ՝ հատկապես Բաասը, ալ-Իսթիքլյալը, հակակոմունիզմով տարված չէին ցանկանում կոմունիստական պարտիայի հետ միավորվել մեկ համազգային օրգանում։ Բայց ազգային-ազատագրական պայքարում նրանց ձեռք բերած փորձը և դեպքերի հետագա զարգացումը այդ ուժերին կանգնեցրին Ազգային միասնության ճակատի ստեղծման անհրաժեշտության առջև։ Իրաքի կոմունիստական պարտիայի գլխավոր քարտուղար Սալյամ Ադիլը նշել է, որ «մինչև հուլիսի 14-ի ռևոլյուցիան բոլոր պարտիաները և ազգային ուժերը համոզված էին, որ ոչ մի պարտիա և ոչ էլ Ազգային ճակատը մյուս պարտիաներից անջատ չի կարող երկրի ազատագրման և ազգային անկախության նվաճման խնդիրը կրել իր ուսերի վրա»[1]։ Իրաքի առջև կանգնած համազգային խնդիրները կարող էին լուծվել միայն բոլոր օպոզիցիոն ուժերի միացյալ ջանքերով։

Ազգային միասնության ճակատը ընդունեց ծրագիր, որի հիմնական պահանջները սկզբնական շրջանում հանգում էին հետևյալին. Նուրի Սաիդի հեռացումը կառավարությունից, Իրաքի դուրս գալը Բաղդադի պակտից և չեզոք քաղաքականության վարում, արաբական միասնության պաշտպանում, կոնստիտուցիոն ազատությունների և քաղաքական ամնիստիայի շնորհում։ Ազգային միասնության ճակատը ակտիվ պայքար ծավալեց մասսաների ելույթները կազմակերպելու և ղեկավարելու ուղղությամբ։ Նա տարածում էր թռուցիկներ,

[1] Ответ Секретаря ЦК Иракской Компартии Салям Адила на вопросы редакции газеты „Иттихад аш-Шааб" от 30 марта 1959 г.

կազմակերպում միտինգներ ու ցույցեր, մերկացնում էր կառավարության հակաժողովրդական քաղաքականությունը և օտարերկրյա իմպերիալիստներին։ 1957 թվականի նոյեմբերին ամբողջ Իրաքում տարածվեց Ազգային միասնության ճակատի հայտարարությունը՝ Իրաքում տիրող դրության մասին։ Այնտեղ ասված էր, որ Նուրի Սաիդի ռեժիմը և իմպերիալիստական պետությունների քաղաքականությունը հասցրին նրան, որ Իրաքը մտավ ագրեսիվ Բաղդադի պակտի մեջ, կնքեց կաբալային պայմանագրեր Անգլիայի հետ, ընդունեց «էյզենհաուերի դոկտրինան», վերացվեցին տարրական դեմոկրատական ազատությունները և երկրում հաստատվեց տեռորի ռեժիմ[1]։ Նա կոչ էր անում Իրաքի ժողովրդին պայքարել Իրաքում դեմոկրատական ազատություններ հաստատելու համար և հասնել այն բանին, որ Իրաքը դուրս գա Բաղդադի պակտից ու հրաժարվի «էյզենհաուերի դոկտրինայից»։

Ազգային միասնության ճակատի ստեղծումից հետո հակաիմպերիալիստական ելույթները Իրաքում դարձան ավելի ուժեղ ու կազմակերպված։ Ազգային միասնության ճակատի և նրա տեղական օրգանների օրինակով ստեղծվեցին նաև գյուղացիական ընդհատակյա զանազան կազմակերպություններ, գյուղացիական միություններ, կոմիտեներ և այլն[2]։ Մի շարք վայրերում նրանք կազմակերպեցին գյուղացիական ելույթներ, ղեկավարեցին գյուղացիների պայքարը կալվածատերերի դեմ և այլն։ Բացի այդ նրանք կազմակերպում էին համատեղ հողօգտագործման խմբեր։

Գյուղացիական միությունները և կոմիտեները զգալի դեր խաղացին հուլիսի 14-ի ռևոլյուցիայի նախապատրաստման գործում։

Սկսած 1957 թվականից և մինչև 1958 թվականի կեսերը ժողովրդական մասսաները չդադարեցին պայքարը Իրաքի ռեակցիոն ռեժիմի և օտարերկրյա իմպերիալիստների դեմ։ Երկրի տարբեր վայրերում տեղի ունեցան բանվորների, գյուղացիների և ուսանողների մի շարք ելույթներ ու ցույցեր,

[1] „Телеграф", Бейрут, 1957, 5 ноября.

[2] Տե՛ս „The Iraqi Revolution", p. 97, „Проблемы мира и социализма", № 4, 1959, стр. 59.



որոնք կառավարության կողմից դաժանորեն ճնշվեցին։ Երկրում շարունակում էր մոլեգնել տեռորը։ Մասսայական ձերբակալությունները դարձել էին սովորական երևույթ։

Բայց ժողովրդական մասսաներին ոչինչ չէր կարող ահաբեկել և նրանք ոչ մի առիթ բաց չէին թողնում իմպերիալիստական ուժերին հարվածելու համար։

1958 թվականի փետրվարի 14-ին, Եգիպտոսի ու Սիրիայի միավորումից ու Արաբական Միացյալ Հանրապետության ստեղծումից ուղիղ երկու շաբաթ անց ստեղծվեց Արաբական ֆեդերացիան, որի մեջ մտան Իրաքը և Հորդանանը։

Արաբական ֆեդերացիան ԱՄՆ-ի և Անգլիայի կողմից ստեղծվեց ի հակակշռություն նրանց համար անցանկալի Արաբական Միացյալ Հանրապետության։ Դա ռեակցիոն Հաշիմիդների դինաստիային պատկանող միապետների դաշինքն էր՝ ուղղված արաբական ազգային-ազատագրական շարժման դեմ։ Արաբական ֆեդերացիայի ստեղծումով փորձ էր արվում պառակտում մտցնել արաբական երկրների միջև, նրանց հակադրել մեկը մյուսին, պառակտել Սիրիային ու Եգիպտոսին։ Արաբական ֆեդերացիայի ստեղծումից հետո ԱՄՆ-ը և Անգլիան ամեն կերպ փորձում էին ընդլայնել այն, նրա մեջ մտցնելով արաբական նոր պետություններ՝ Սաուդյան Արաբիան և Քուվեյթը։

Սակայն արաբական ժողովուրդները, այդ թվում նաև Իրաքի ու Հորդանանի ժողովուրդները թշնամաբար ընդունեցին Արաբական ֆեդերացիայի ստեղծումը, դրա մեջ իրավացիորեն տեսնելով երկու երկրների ֆեոդալական վերնախավի գործարքը, ուղղված պրոգրեսիվ ուժերի դեմ։ Իրաքում տեղի ունեցան խոշոր ցույցեր և բողոքի միտինգներ։ Ցուցարարները դատապարտում էին Արաբական ֆեդերացիայի ստեղծումը։ Խոշոր ցույց տեղի ունեցավ Բաղդադում 1958 թվականի մարտին, որին մասնակցում էին ոչ միայն աշխատավորները, այլ նաև նախկին մինիստրներ, Իրաքի պառլամենտի անդամներ և խոշոր քաղաքական գործիչներ։ Այդ ցույցի ժամանակ արյունալի ընդհարումներ տեղի ունեցան ցուցարարների և ոստիկանության միջև։ Մեծ հուզումներ եղան նաև Բասրայում, որտեղ իրաքցի հայրենասերները այրեցին մի քանի անգլիա-

կան նավեր։ Բազմաթիվ միտինգներ տեղի ունեցան ուսումնական հաստատություններում։ Բողոքի ալիքը տարածվեց ամբողջ Իրաքում։ Դրան կառավարությունը պատասխանեց տեռորով ու մասսայական ձերբակալություններով։ Ձերբակալում էին բանվորներին, ուսանողներին, քաղաքական պարտիաների լիդերներին և նույնիսկ նախկին մինիստրներին և պառլամենտի դեպուտատներին։ Այսպիսի պայմաններում Իրաքի կառավարությունը որոշեց 1958 թվականի մայիսին անցկացնել պառլամենտի ընտրություններ։ Նորընտիր պառլամենտը պետք է հաստատեր ֆեդերացիայի կոնստիտուցիան։ Օպոզիցիայի գործիչները պառլամենտից պահանջեցին առաջիկա ընտրություններն անցկացնելու համար ստեղծել չեզոք կառավարություն։ Սենատում օպոզիցիայի լիդեր Մուհամմեդ աշ-Շաբիբին հայտարարեց, որ «ժողովուրդը չի պաշտպանում Նուրի Սաիդի կառավարությանը։ Եվ նրանք ովքեր պառլամենտում հանդես են գալիս կառավարության պաշտպանությամբ, միայն իրենք իրենց են ներկայացնում։ Կառավարության քաղաքականությունը երկիրը դեպի կործանում է տանում»[1]։ Իսկ Սենատոր Սամի Բաշաչիմը հայտարարեց, որ Նուրի Սաիդի կառավարությունը «կոմունիզմի դեմ պայքարի» անվան տակ «ժողովրդի վզին է փաթաթում տեռորի ռեժիմ և խեղդում հասարակական ազատությունները։ Կառավարական ռեժիմը պահպանվում է բռնակալության ու ահաբեկման եղանակով»[2]։

Պառլամենտը չբավարարեց օպոզիցիայի պահանջը չեզոք կառավարություն ստեղծելու վերաբերյալ։

Ազգային միասնության ճակատը և բոլոր հայրենասեր ուժերը ժողովրդին կոչ արին բոյկոտի ենթարկել ընտրությունները։ Օպոզիցիայի ներկայացուցիչները հրաժարվեցին ընտրություններին իրենց թեկնածությունները առաջադրել։

1958 թվականի ապրիլի 24-ին Բաղդադի կենտրոնական հրապարակում տեղի ունեցավ մասսայական ցույց, որի ժամանակ ցուցարարները պահանջեցին ոչ միայն Նուրի Սաիդի կառավարության հրաժարականը, այլև առաջ քաշեցին «Կոր-

[1] „Аль-Ахбар", Каир. 1958, 11 апреля.

[2] Նույն տեղում։



ջի միապետությունը» լոզունգը[1]։ Նավթագործ բանվորների խոշոր ելույթ տեղի ունեցավ նաև Մոսուլում։ Կառավարությունը բանվորների դեմ հանեց ոստիկանական ուժեր և զորամասեր։ Սակայն զինվորների և սպաների զգալի մասը հրաժարվեց կրակել բանվորների վրա։

Պառլամենտի ընտրությունները տեղի ունեցան 1958 թվականի մայիսի 5-ին։ Այդ օրը Բաղդադում և երկրի մի շարք վայրերում մտցվեց պաշարողական դրություն։ Զինվորները և ոստիկանները պարեկություն էին կատարում փողոցներում։ Իրաքի ժողովուրդը բոյկոտի ենթարկեց «ընտրությունները»։ Ազգային միասնության ճակատի կոչով այդ օրը Բասրայում, Մոսուլում, Քերբելայում, Կիրկուկում և ուրիշ քաղաքներում տեղի ունեցավ ընդհանուր գործադուլ, իսկ Բաղդադում մասսայական դեմոնստրացիա։ Դեմոնստրանտները տանում էին «Կորչի իմպերիալիզմը և նրա համագործակիցները», «Կորչի Բաղդադի պակտը», «Կորչի Նուրի Սաիդի կառավարությունը» և այլ կոչեր։ Վախենալով ժողովրդական այդ ելույթներից կառավարությունը ԱՄՆ-ի, Անգլիայի և Թուրքիայի դեսպանատների և Նուրի Սաիդի ու Աբդուլ Իլյահի տների մոտ դրեց ուժեղացված զինվորական պահակախմբեր։ Այդ օրերին Բաղդադում ձերբակալվեց մոտ 637, իսկ երկրի մյուս վայրերում 2500 մարդ. ձերբակալություններ կատարվեցին նաև բանակում։ Մայիսի 5-ի «ընտրությունները» ավարտվեցին Նուրի Սաիդի կլիկի «հաղթանակով»։ Պառլամենտի 145 դեպուտատներից 118-ը, ինչպես նշում է «Ալ-Կիֆահ» թերթը, կառավարության կողմից նախօրոք, «կոնկուրենտների բացակայության» պատճառով նշանակվեցին պառլամենտի դեպուտատներ[2]։ Մայիսի 12-ին «նորընտիր» պառլամենտը վավերացրեց Իրաքի և Հորդանանի միջև ֆեդերացիա ստեղծելու համաձայնագիրը, իսկ 13-ին հաստատեց Արաբական ֆեդերացիայի կոնստիտուցիան։ Իրաքի թագավոր Ֆեյսալ II հռչակվեց ֆեդերացիայի ղեկավար։ Ստեղծվեց միասնական ֆեդերատիվ կառավարություն, որի պրեմիեր-մինիստ-

[1] „Аль-Кифах", Бейрут. 1958, 24 апреля.

[2] Նույն տեղում, 5 мая.

րը դարձավ Նուրի Սաիդը։ Բացի ընդհանուր կառավարությունից, պահպանվեցին տեղական՝ Իրաքի և Հորդանանի կառավարությունները։ Սակայն նրանք արտաքին քաղաքականության և պաշտպանության հարցերով իրավունք չունեին զբաղվել։ Դրանք մտնում էին ֆեդերացիայի կառավարության իրավասության մեջ։

Իրաքի կառավարության պրեմիեր-մինիստրը դարձավ Ահմադ Մուխթար Բաբանը։ Բաբանի կառավարությունը եղավ միապետական Իրաքի վերջին կառավարությունը։

Արաբական ֆեդերացիայի ստեղծումից հետո նրա ղեկավարների և անգլո-ամերիկյան իմպերիալիստների մտահոգության գլխավոր առարկան դարձավ այդ ֆեդերացիայի ընդլայնումը և օգտագործումը արաբական ազգային-ազատագրական շարժումների դեմ։ Առաջին հարվածը նրանք փորձեցին հասցնել Լիբանանի ազատասեր ժողովրդին։ Լիբանանում Շամունի ռեժիմի դեմ ապստամբությունը բռնկվել էր 1958 թվականի մայիսին։ Լիբանանի ժողովուրդը դժգոհ էր երկրում հաստատված ոստիկանական ռեժիմից և այն բանից, որ կառավարությունը ընդունել էր «էյզենհաուերի դոկտրինան»։ Շամունն ի վիճակի չեղավ սեփական ուժերով ճնշել ապստամբությունը։ Երկրի շատ մասերում ապստամբները հաստատեցին իրենց տիրապետությունը։ Շամունը հարկադրված եղավ դիմել ԱՄՆ-ին։ ԱՄՆ-ի պետական քարտուղար Ջ. Ֆ. Դալեսը հայտարարեց, որ ամերիկյան կառավարությունը պատրաստ է ռազմական օգնություն ցույց տալ Լիբանանին։

Շամունի կառավարությունը դիմեց նաև Իրաքի կառավարությանը։ 1958 թվականի հունիսին Ֆադիլ Ջամալին ընդունեց Շամունի գաղտնի միսիան։ Միսիան պաշտոնապես ռազմական օգնություն խնդրեց Իրաքից։ Վերջինս համաձայնվեց իր զորքերն ուղարկել Լիբանան։ Այդ պլանը հավանության արժանացավ նաև Լոնդոնում ու Ստամբուլում՝ Աբդուլ Իլլահի և Նուրի Սաիդի բանակցությունների ժամանակ։ Ամերիկյան և անգլիական իմպերիալիստները ցանկանում էին, որ Լիբանանի դեմ ինտերվենցիա նախաձեռնողը լինի որևէ արաբական երկիր։ Այդ ինտերվենցիան իրենց առիթ կտար մի-



ջամտելու Լիբանանի ներքին գործերին և ճնշելու ժողովրդական ապստամբությունը։

ԱՄՆ-ի և Անգլիայի ընտրությունը ընկավ Իրաքի վրա, որին նրանք համարում էին իրենց ամենահուսալի հենարանը Մերձավոր և Միջին Արևելքում։ 1958 թվականի հուլիսի 14-ին Ստամբուլում նշանակվեց Բաղդադի պակտի մեջ մտնող երկրների խորհրդակցություն, որտեղ Լիբանանի դեմ ինտերվենցիա սկսելու «պատվավոր» խնդիրը պետք է պաշտոնապես դրվեր Իրաքի վրա։

Այսպիսով, Իրաքը փաստորեն իմպերիալիստների ձեռքում ծառայում էր որպես գործիք արաբական երկրներում ազգային-ազատագրական շարժումները ճնշելու համար։ Իրաքի կառավարության այդ դավաճանական քայլը լցրեց ժողովրդի համբերության բաժակը։ Ամբողջ երկրում տեղ ունեցան մասսայական ցույցեր, որի ժամանակ Իրաքի բոլոր օպոզիցիոն ուժերը պահանջում էին պաշտպանել Լիբանանի ժողովրդի պայքարը։

Իրաքի կառավարության դավաճանական դիրքը խորը ցասում առաջացրեց արաբական աշխարհում։ Արաբական մամուլը մերկացրեց իմպերիալիստների դավադրությունը և Նուրի Սաիդի հակաարաբական քաղաքականությունը։ Եգիպտական «Աշ-Շաաբ» թերթը գրում էր, որ «արաբական ազգայնականության դեմ կազմակերպվող ամեն կարգի դավադրությունների ու նախահարձակումների աղբյուրը Բաղդադի պակտն է։ Իմպերիալիստական նոր դավադրության նպատակն է պառակտել արաբներին ուրիշ արաբների օգնությամբ և գործածել իրաքյան բանակը Լիբանանի ժողովրդի դեմ»։

Սակայն հուլիսի 14-ին Ստամբուլում նշանակված Բաղդադի պակտի խորհրդակցությունը չկայացավ։

Հուլիսի 13-ին Իրաքի բանակի 20-րդ բրիգադին հրաման տրվեց մեկնել Հորդանան ճնշելու այնտեղ ծավալված ազգային-ազատագրական շարժումը և փրկելու Հուսեյն թագավորի գահը։ 20-րդ բրիգադի հրամանատարը գեներալ Աբդել Քերիմ Կասեմն էր։ Նա միաժամանակ հանդիսանում էր «Ազատ սպաներ» գաղտնի ռազմական կազմակերպության ղեկավարը,

որը ստեղծվել էր տակավին 1956 թվականին։ Այդ կազմակերպության և Ազգային միասնության ճակատի մեջև գոյություն ուներ սերտ կապ։ Նրանք համաձայնեցրին իրենց գործողությունները և մշակեցին միասնական ծրագիր, որի հիմնական պահանջները հանգում էին հետևյալին. տապալել միապետությունը և հռչակել ռեսպուբլիկա, անցկացնել ագրարային ռեֆորմ, վերացնել ֆեոդալիզմի մնացուկները, զարգացնել ազգային էկոնոմիկան և վերացնել իմպերիալիզմի ազդեցությունը, դուրս գալ Բաղդադի պակտից, հաստատել դեմոկրատական ազատություններ, պաշտպանել արաբական միասնությունը և ազգային-ազատագրական շարժումները բոլոր արաբական երկրներում և այլն։

Սակայն, Կասըմը իր բրիգադը շարժեց ոչ թե դեպի Հորդանան, այլ Բաղդադ։ Ազգային միասնության ճակատը և «Ազատ սպաների» կազմակերպությունը հաշվի առնելով այն հանգամանքը, որ Իրաքի ժողովրդի դժգոհությունը հասել է իր գագաթնակետին և որ միապետական-ֆեոդալական ռեժիմը երկրում կորցրել է ամեն մի հենարան, այդ ժամանակը հարմար գտան բացահայտ կերպով հանդես գալու Ֆեյսալ-Նուրի Սաիդի ռեժիմի և օտարերկրյա իմպերիալիզմի տիրապետության դեմ։ 20-րդ բրիգադը Բաղդադ մտավ 1958 թվականի հուլիս 14-ին, առավոտյան ժամը 4-ին։ Զորքերը գրավեցին ռադիոկայանը, հեռախոսը, քաղաքի բոլոր կարևոր կետերը և պաշարեցին թագավորական պալատը։ Նրանք պահանջեցին, որ թագավորը հրաժարվի գահից։ Աբդուլ Իլլահը արքայական պահակախմբին հրամայեց կրակել զորքերի վրա։ Զորքերը ներխուժեցին պալատ և զինաթափ արին պահակախմբին։ Իրաքի թագավոր Ֆեյսալ II և գահաժառանգ Աբդուլ Իլլահը սպանվեցին։ Նուրի Սաիդին սկզբում հաջողվեց կանանց շորերով ծպտված փախչել, սակայն շուտով նրան նույնպես բռնեցին և սպանեցին։ Այն փողոցը, որտեղ սպանվեց Նուրի Սաիդը կոչվեց Ազատության փողոց։ Ժամը 6-ին բանակը լիովին դարձավ դրության տերը։ Ռևոլյուցիան հաղթանակեց։ Միապետությունը տապալվեց և Իրաքի պատմության մեջ առաջին անգամ հաստատվեց ռեսպուբլիկա։

1958 թվականի հուլիսի 14-ի առավոտյան Բաղդադի ռա-



դիոն հաղորդեց Իրաքի բանակի հրամանատարության պաշտոնական հայտարարությունը, որի մեջ ասված էր. «Բանակի և ժողովրդի անկեղծ ու անշահախնդիր ուժերի օգնությամբ ձեռնարկեցինք մեր սիրելի հայրենիքը նենգ բռնակալությունից ազատագրելու գործին։ Այդ բռնակալությունը հաստատված էր իմպերիալիզմի ձեռքով՝ նրա շահերը պաշտպանելու համար։

Բանակը կազմված է ձեզանից և կաշխատի ձեզ համար։ Նա կատարեց ձեր բաղձանքը։ Եղեք միակամ տապալելու համար իմպերիալիստներին և նրանց գործակալներին»[1]։ Այնուհետև հայտարարության մեջ նշվում էր, որ Իրաքի ռեսպուբլիկան կվարի այնպիսի քաղաքականություն, որը կհամապատասխանի արաբական ազգայնականությանը և կհարգի ՄԱԿ-ի սկզբունքներն ու Բանդունգի որոշումները։

Առաջին ռեսպուբլիկական դեկրետը հանդիսացավ կառավարության ստեղծումը Աբդել Քերիմ Կասըմի գլխավորությամբ։ Ստեղծվեց նաև երեք հոգուց բաղկացած Պետական խորհուրդ (Մեջլիս աս-Սիյադե), որի վրա ժամանակավորապես դրվեցին պետական բարձրագույն օրգանի պարտականությունները։

Ռևոլյուցիայի հաղթանակը Իրաքում ծանր հարված էր իմպերիալիստական ուժերին։ ԱՄՆ-ը և Անգլիան, որոնք իրենց ռազմական պլանների իրագործումը կապում էին Իրաքի, Բաղդադի պակտի այդ «ամենահուսալի» անդամի հետ, խորը պարտություն կրեցին։ Ինչպես նշել է Հնդկաստանի պրեմիեր-մինիստր Ջավահարլալ Ներուն, Իրաքի հուլիսի 14-ի ռևոլյուցիան Բաղդադի պակտը վերածեց սատկած ոչխարի։

Իմպերիալիստները հասկանում էին, որ Իրաքի հաղթական ռևոլյուցիան կնպաստի ազգային-ազատագրական պայքարի հետագա ծավալմանը արաբական երկրներում։ Այդ պատճառով էլ նրանք որոշեցին անհապաղ հանդես գալ։ 1958 թվականի հուլիսի 15-ին Լիբանան մտավ ամերիկյան ծովային հետևակը, իսկ հուլիսի 17-ին Հորդանան իջան անգլիական պարաշյուտիստները։ Դա ուղղակի չքողարկված ռազմա-

[1] «Մեր նշանաբանն է հառաջ», Բեյրութ, 1958, 20 հուլիսի։

կան ինտերվենցիա էր արաբական երկրների դեմ, որի նպատակը ոչ միայն ազգային-ազատագրական պայքարի ճնշումն էր Լիբանանում ու Հորդանանում, այլև Իրաքի երիտասարդ ռեսպուբլիկայի վրա հարձակվելու, ռևոլյուցիան ճնշելու և այնտեղ նախկին կարգերը վերականգնելու մի փորձ:

Իրաքի ռեսպուբլիկայի պաշտպանությամբ հանդես եկան բոլոր խաղաղասեր պետությունները: Սովետական կառավարությունը հայտարարեց, որ ինքը անտարբեր չի կարող մնալ իր հարավային սահմանների մոտ կատարվող ագրեսիվ քայլերի նկատմամբ: Նա ԱՄՆ-ի և Անգլիայի կառավարություններից պահանջեց վերջ տալ ռազմական միջամտությանը արաբական երկրների ներքին գործերին և իրենց զորքերը հանել Լիբանանից ու Հորդանանից: 1958 թվականի հուլիսի 24-ին սովետական կառավարությունը զգուշացրեց նաև Թուրքիայի կառավարությանը, որը պատրաստվում էր ռազմական գործողություններ սկսել Իրաքի դեմ: Թուրքիայի կառավարությանն ուղղված սովետական կառավարության հուշագրում ասված էր, որ եթե Թուրքիան ռազմական կոնֆլիկտ սանձի, ապա դա նրա համար ամենածանր հետևանքներ կարող է ունենալ[1]: ՍՍՀՄ Մինիստրների սովետի նախագահ ընկ. Ն. Ս. Խրուշչովը հայտարարեց, որ սովետական կառավարությունն ամեն ինչ կանի, որպեսզի նորածին Իրաքի ռեսպուբլիկան ամրապնդվի, որ նա լինի անկախ, զարգացնի իր էկոնոմիկան և ծաղկի[2]:

Սովետական կառավարության վճռական դիրքը սթափեցուցիչ ազդեցություն ունեցավ իմպերիալիստների համար: Իրաքի ռեսպուբլիկայի պաշտպանությամբ հանդես եկան նաև բոլոր սոցիալիստական երկրները, արաբական երկրները, ինչպես նաև Հնդկաստանը, Ինդոնեզիան և մյուս խաղաղասեր պետությունները: Հանդիպելով այսպիսի վճռական դիմադրության՝ ամերիկյան և անգլիական իմպերիալիստները հարկադրված եղան հրաժարվել Իրաքի ռեսպուբլիկայի վրա հարձակվելու և ռևոլյուցիան ճնշելու պլաններից: Դեռ ավելին,

[1] „Известия", 1958, 26 июля.

[2] „Правда", 1958, 23 июля.



նրանք ստիպված եղան իրենց զորքերը դուրս բերել Լիբանանից և Հորդանանից:

Դա խաղաղասեր ուժերի խոշոր հաղթանակն էր:

1958 թվականի հուլիսի 14-ի ռևոլյուցիան Իրաքի բոլոր ժողովուրդներն ընդունեցին մեծ խանդավառությամբ: Երկրի տարբեր վայրերում՝ Բաղդադում, Բասրայում, Կիրկուկում, Մոսուլում, Սուլեյմանիյայում և այլ տեղերում, տեղի էին ունենում մասսայական ցույցեր, որի ժամանակ իրաքցիները երդվում էին կրծքով պաշտպանել ռևոլյուցիան և ռեսպուբլիկան:

Արաբների և քրդերի հետ միասին հուլիսյան ռևոլյուցիան ողջունեցին նաև Իրաքի հայերը, որոնց լավագույն ներկայացուցիչները երկար տարիներ արաբ և քուրդ առաջադեմ ուժերի հետ ուս-ուսի պայքարում էին իմպերիալիզմի և ներքին ռեակցիայի դեմ: Այժմ, ռևոլյուցիայից հետո, նոր բարենպաստ պայմաններ էին ստեղծվում այդ համագործակցության ու բարեկամության զարգացման համար: «Մեր նշանաբանն է Հառաջ» թերթի Բաղդադի թղթակիցը իր մի հաղորդման մեջ գրում էր, որ ռևոլյուցիան ամրապնդեց ազգային միասնությունը բոլոր քաղաքացիների միջև և ազատության մեջ կեղբայրանան արաբ, քուրդ և հայ քաղաքացիները[1]: Ռեսպուբլիկան և ռևոլյուցիան իմպերիալիստական դավադրություններից պաշտպանելու համար ամբողջ Իրաքում ստեղծվեցին ժողովրդական պաշտպանության ջոկատներ: Այդ շարքերն էին մտնում նաև հայերը: Այդ տեսակետից հետաքրքիր է Իրաքի Հայ երիտասարդաց ընկերակցության հիմնադիր Մարմնի կոչը ուղղված իրաքահայ երիտասարդությանը: Այնտեղ ասված է. «Ո՛վ հայ երիտասարդներ և երիտասարդուհիներ: Իրաքի Հայ Երիտասարդ Ընկերության Հիմնադիր Մարմինը կհրավիրե ձեզ մտնել ժողովրդային պաշտպանության ջոկատներու շարքերուն մեջ, ձեր մասնակցությունը բերելու համար արաբ և քուրդ մեր եղբայրներու կողքին, մեր նորածին հանրապետությունը պաշտպանելու պատվավոր գործին[2]: Կոչի

[1] «Մեր նշանաբանն է Հառաջ», 1958, 2 նոյեմբերի:

[2] Նույն տեղում, 1958, 23 նոյեմբերի:

մեջ այնուհետև ասվում էր, որ իմպերիալիզմն ու նրա գործակալները ձեռնածալ չեն նստած, որ նրանք նյութում են դավադրություններ ու խռովքներ։ Ժողովրդական պաշտպանության ջոկատներին մասնակցելը, նշված էր կոչի մեջ, հանդիսանում է յուրաքանչյուրի ազգային և հայրենասիրական սուրբ պարտականությունը։ Եվ Իրաքի հայ դեմոկրատական ուժերը վճռականորեն կանգնում են արաբ ու քուրդ դեմոկրատական ուժերի կողքին։

1958 թվականի հոկտեմբերի 19-ին Հայ երիտասարդական ընկերակցությունը կազմակերպում է թեյասեղան, որին ներկա էին Իրաքի դեմոկրատական երիտասարդական միության, Իրաքի կանանց իրավունքների պաշտպանության միության և Իրաքի արհմիությունների ներկայացուցիչները։ Այդ հավաքին ներկա էին նաև Իրաքի հայտնի բանաստեղծ և ազատության մեծ մարտիկ Մուհամմեդ Մահդի ալ-Ջավահիրին, բանաստեղծ Աբդ ալ-Վահաբ ալ-Բայաթին, բազմաթիվ ներկայացուցիչներ արաբներից և քրդերից, բանվորներ, մտավորականներ և հասարակական զանազան գործիչներ։ Դա հայ, արաբ և քուրդ բարեկամությունը խորհրդանշող հոյակապ հավաք էր։ Այս երեկույթին արաբերեն լեզվով հանդես է գալիս Նուբար Թեյլերյանը։ Նա նշում է, որ իրենց գլխավոր նպատակն է ամրապնդել հայերի բարեկամությունը արաբների և քրդերի հետ և հասնել այն բանին, որ յուրաքանչյուր հայ Իրաքին օգտակար քաղաքացի լինի։ Նա նշում է, որ անցյալում իրենց հալածում էին և իրենց միությունը արգելված էր «դաշնակ կոչված ոճրագործ գավազանների և իմպերիալիզմի վարձկան թիկնահարների գրպարտության հետևանքով... այսօր օգտվելով մեր ժողովրդական, հեղափոխական և դեմոկրատական կառավարության տված լայն ազատություններից, բոլորանվեր հոգով նվիրված ենք Իրաքի Հանրապետության բարգավաճման ու հզորացման սուրբ գործին և պատրաստ ենք մեր արյունով պաշտպանելու հուլիսի 14-ի հեղափոխությամբ նվաճված ազատությունները, հանուն իրաքցի ժողովրդի ազատագրության, անկախության և աշխարհի խաղաղության»[1]։ Իրաքի դեմոկրատական երիտասարդական միության անունից

[1] «Մեր նշանաբանն է հառաջ», 1958, 23 նոյեմբերի։



հանդես է գալիս Հուսեյն Հարմանին, որը նույնպես շեշտում է արաբ, քուրդ և հայ երիտասարդության համագործակցությունը՝ ի պաշտպանություն մեր նորաստեղծ Հանրապետության և համաշխարհային խաղաղության»[1]։

Իրաքի ռեսպուբլիկական կառավարությունը և դեմոկրատական ուժերը բարձր են գնահատում հայերի հայրենասիրական դիրքը և իրենք էլ իրենց հերթին ձգտում ամրապնդել հայ-արաբ բարեկամությունը, ավելի բարենպաստ պայմաններ ստեղծել Իրաքի հայ գաղութի համար։ Դրա արտահայտություններից մեկն էլ այն էր, որ ռևոլյուցիայից հետո Իրաքի պատմության մեջ առաջին անգամ հայ դեմոկրատ ուժերին հնարավորություն տրվեց բացահայտ կերպով տոնել նոյեմբերի 29-ը, Հայաստանում սովետական կարգերի հաստատման տարեդարձը։ Հանդես գալով այդ տոնահանդեսին Հակոբ Գնանյանը նշում է. «Այսօր, առաջին անգամն է, որ հանրապետության ծաղկյալ իրավակարգի շրջանին, կտոնենք Հայաստանի սովետական հանրապետության հիմնադրության տարեդարձը, նոյեմբերի 29-ը»[2]։ Նա միաժամանակ անդրադառնում է այն եղբայրական օգնության վրա, որ հայերին ցույց տվին Իրաքում, Սիրիայում և Լիբանանում։

Իրաքի հայերի կատարած դերը և ռեսպուբլիկային նկատմամբ նրանց գրաված դիրքը, ըստ արժանվույն է գնահատում Իրաքի զինվորական ատյանի նախագահ, Իրաքի ռեսպուբլիկայի խոշորագույն դեմքերից մեկը, գնդապետ Ֆաղիլ Մահդավին։ 1959 թվականի հունվարի 10-ին հանդես գալով Բաղդադում, հայերի կողմից, ի պատիվ Իրաքի բանակի կազմակերպված հանդիսավորությանը, նա նշեց. «Հայ ժողովուրդը հայրենիքին մեջ, Բ. համաշխարհային պատերազմի ընթացքին, պայքարեցավ ֆաշիզմի դեմ։ Ան երեկ կպայքարեր Աբդուլ Համիդի և Թուրքերու վայրագությանց դեմ։ Հայ ժողովուրդը միշտ պայքարած է բռնատիրությանց դեմ և ահա թե ինչու ներկայիս ևս կանգնած է մեր կողքին՝ մեր պայքարին մեջ։ Ես ուրախ եմ հայտարարելու, որ փորձառությանց մեջ ամենեն ավելի հայերը խանդավառ են մեր հաղթանակներով,

[1] «Մեր նշանաբանն է հառաջ», 1958, 23 նոյեմբերի։
[2] «الاهالي» بغداد، 1.XII.1958

որովհետև ամենեն շատ տառապածները իրենք եղած են և կզգան ցավերը տառապյալներուն»[1]։

Հայերը Իրաքի դեմոկրատ ուժերի կողմից արժանացան այդպիսի գնահատականի շնորհիվ իրենց ազնիվ գործի, ազգային-ազատագրական պայքարին մասնակցելու և բարեկամությունն արաբ ու քուրդ ժողովրդի հետ թանկ գնահատելու համար։

1958 թվականի հուլիսի 14-ին ռևոլյուցիան իր բնույթով բուրժուա-դեմոկրատական, հակաֆեոդալական և հակաիմպերիալիստական էր։ Այն կատարեց ժողովուրդը՝ նրա կողմն անցած բանակի անմիջական նախաձեռնությամբ։

Ռևոլյուցիայի հաղթանակով ֆեոդալ-շեյխերը զրկվեցին իշխանությունից։ Քաղաքական իշխանությունն անցավ ազգային բուրժուազիայի ձեռքը։

Ռևոլյուցիան Իրաքում հաղթանակեց, որովհետև.

1. Ռեակցիոն ռեժիմի և օտարերկրյա իմպերիալիզմի դեմ միասնականորեն հանդես եկան բանվորները և գյուղացիները, ինտելիգենցիան և ազգային հայրենասիրական բուրժուազիան։

2. Իրաքի բանակը անցավ ժողովրդի կողմը։ Դրանով իսկ հակաժողովրդական ուժերը երկրի ներսում զրկվեցին իրենց վերջին հենարանից։

3. Ռևոլյուցիայի հաղթանակին նպաստեց Ազգային միասնության ճակատի ստեղծումը, որի մեջ միավորվեցին Իրաքի օպոզիցիոն ուժերը։ Դրանով իսկ վերացվեց օպոզիցիոն ուժերի անջատվածությունը և Իրաքում ստեղծվեց ազգային-ազատագրական պայքարի մեկ միասնական կենտրոն։

4. Իրաքի ռևոլյուցիան ակտիվ պաշտպանություն գտավ սոցիալիստական լագերի երկրների և հատկապես Սովետական Միության կողմից, ինչպես նաև Ասիայի և Աֆրիկայի մի շարք խաղաղասեր երկրների կողմից։ Այդ երկրների ջանքերի շնորհիվ Իրաքի ռևոլյուցիայի հաղթանակի համար միջազգային մասշտաբով ստեղծվեցին նպաստավոր պայմաններ և ԱՄՆ-ի ու Անգլիայի իմպերիալիստական ուժերը հարկադրված եղան հրաժարվել իրենց ագրեսիվ պլաններից։

[1] «Մեր նշանաբանն է՝ Հառաջ», 1959, 23 հունվարի։



## ԻՐԱՔԸ 1958 ԹՎԱԿԱՆԻ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻՑ ՀԵՏՈ

Միապետական ռեժիմի տապալումից և ազգային բուրժուազիայի իշխանության գլուխ անցնելուց հետո Իրաքում ստեղծվեց նպաստավոր իրադրություն ազգային-ազատագրական շարժման հիմնական խնդիրների լուծման համար։ Այդ խնդիրների լուծումից էր կախված հակաիմպերիալիստական և հակաֆեոդալական պայքարի հետագա թափը, հնարավորությունները ու հեռանկարները։ «Ազգային-ազատագրական ռևոլյուցիան,— ասված է ՍՄԿԿ ծրագրում,— չի ավարտվում քաղաքական անկախության նվաճումով։ Այդ անկախությունը խախուտ կլինի և ֆիկցիայի կվերածվի, եթե ռևոլյուցիան խոր փոփոխությունների չհանգեցնի սոցիալական և տնտեսական կյանքում, չլուծի ազգային վերածննդի կենսական խնդիրները»[1]։ Ազգային ռևոլյուցիաների բախտը ինչպես քաղաքական անկախության ձեռք բերած մյուս երկրներում, այնպես էլ Իրաքում կախված էր այդ կենսական խնդիրների լուծումից։ 1960 թվականին Մոսկվայում տեղի ունեցած կոմունիստական և բանվորական պարտիաների ներկայացուցիչների խորհրդակցությունում ընդունված հայտարարության մեջ նշված է, որ գաղութային լծից թոթափած երկրներում ազգային վերածննդի կենսական խնդիրներն են՝ քաղաքական

[1] Սովետական Միության կոմունիստական պարտիայի ծրագիրը, Երևան, 1961, էջ 55։

ինքնուրույնության ամրապնդումը, ագրարային ռեֆորմի կիրառումը, ֆեոդալիզմի մնացուկների, իմպերիալիզմի տիրապետության տնտեսական արմատների վերացումը, ազգային արդյունաբերության ստեղծումը, բնակչության կենսամակարդակի բարձրացումը, հասարակական կյանքի դեմոկրատականացումը, անկախ խաղաղասիրական արտաքին քաղաքականության իրականացումը և սոցիալիստական երկրների ու մյուս բարեկամ երկրների հետ տնտեսական ու կուլտուրական համագործակցության զարգացումը[1]: Այս խնդիրները հանդիսանում են այն հողը, որի վրա պետք է միավորվեն անկախության ձեռք բռնած երկրների առաջադիմական ուժերը:

Այդ տեսանկյունից մոտենալով Իրաքի՝ ռևոլյուցիայից հետո ընկած ժամանակաշրջանի (1958 հուլիս—1963 փետրվար) գնահատմանը, մենք տեսնում ենք, որ այն որոշակիորեն բաժանվում է երկու էտապի:

Առաջին էտապը ընդգրկում է մոտ մեկ տարի՝ 1958 թվականի հուլիսից մինչև 1959 թվականի կեսերը, երբ Իրաքում ազգային-ազատագրական շարժման վերելքի պայմաններում կիրառվում են մի շարք կարևոր դեմոկրատական միջոցառումներ ռեսպուբլիկական կարգն ամրապնդելու և աշխատավորական մասսաների իրավունքները և դեմոկրատական ազատությունները ընդլայնելու համար: Երկրորդ էտապը սկսվում է 1959 թվականի կեսերից և ավարտվում է 1963 թվականի փետրվարին տեղի ունեցած կոնտրռևոլյուցիոն հեղաշրջումով: Այս շրջանում Իրաքի ռեսպուբլիկայի կառավարության քաղաքականության մեջ տեղի է ունենում փոփոխություն դեպի աջ, կրկին գլուխ է բարձրացնում ռեակցիան, սահմանափակվում են աշխատավորական խավերի քաղաքական ազատությունները և այլն:

Կանգ առնենք այդ էտապների բնութագրման վրա:

Ռևոլյուցիայից անմիջապես հետո ռեսպուբլիկական կառավարությունն ընդունեց մի շարք կարևոր որոշումներ ու դեկրետներ, որոնք ամրապնդեցին Իրաքի ռեսպուբլիկայի ներքին դրությունը: Իրաքը դուրս եկավ Արաբական ֆեդերա-

[1] Տե՛ս «Սովետական Հայաստան», 1960, 7 դեկտեմբերի:



ցիայից: 1958 թվականի հուլիսի 15-ի երեկոյան Կասեմը, ելույթ ունենալով այդ հարցի կապակցությամբ հայտարարեց, որ ֆեդերացիան ռեալ չէր և չէր համապատասխանում երկու ժողովուրդների շահերին, որ նրա նպատակն էր ամրապնդել հնացած թագավորական ռեժիմը, որը ոչինչ չէր արել ժողովրդի համար: Իրաքն իրեն ազատ համարեց ֆինանսական և ռազմական այն պարտականություններից, որ նրա վրա էին դրվում այդ ֆեդերացիայով: Հորդանանում գտնվող բոլոր իրաքյան զորքերը վերադարձան հայրենիք:

Արաբական ֆեդերացիայի լիկվիդացիան ուժեղ հարված էր ԱՄՆ-ի և Անգլիայի իմպերիալիստական պլաններին, որոնք արաբական երկու միապետությունների միավորումով փորձում էին պառակտել արաբական միասնությունը և իրենց համար հուսալի հենարան ստեղծել ընդդեմ արաբական ազգային ազատագրական շարժումների:

1958 թվականի հուլիսի 26-ին վերացվեց թագավորական սահմանադրությունը և ընդունվեց Իրաքի ռեսպուբլիկայի ժամանակավոր սահմանադրությունը: Այդ սահմանադրությամբ Իրաքը հռչակվեց անկախ ու սուվերեն ռեսպուբլիկա: Սահմանադրությունը հավասար իրավունքներ էր խոստանում Իրաքի բոլոր քաղաքացիներին, անկախ նրանց լեզվից, կրոնից և քաղաքական համոզմունքից: Այնտեղ ասված էր, որ իշխանության աղբյուրը ժողովուրդն է և բոլորը հավասար են օրենքի առաջ: Նա իրաքյան ռեսպուբլիկան հռչակեց որպես արաբների և քրդերի ռեսպուբլիկա: Բնորոշ է, որ Իրաքի ժամանակավոր սահմանադրությունը, լինելով բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի արդյունք, մասնավոր սեփականությունը հռչակում էր անձեռնմխելի:

Ռեսպուբլիկական կառավարության հաստատումից հետո երկրում ընդլայնվում են դեմոկրատական ազատությունները: Մինիստրների խորհուրդը անմիջապես ամնիստիա շնորհեց քաղաքական բանտարկյալներին: Աշխուժացավ արհմիութենական կյանքը: Իրաքում ստեղծվեցին բազմաթիվ արհմիություններ, որոնք 1959 թվականին միավորվեցին Իրաքի Արհմիությունների միասնական ֆեդերացիայի մեջ:

1959 թվականի ապրիլի 27-ին Իրաքի Մինիստրների

խորհրդի որոշմամբ մայիսի 1-ը, բանվորների միջազգային համերաշխության օրը, պաշտոնապես հայտարարվեց տոնական օր[1]։

Լայն թափ ստացավ նաև գյուղացիական միությունների ստեղծումը։ 1959 թվականի ապրիլին կազմակերպվեց գյուղացիական միությունների համաիրաքյան ֆեդերացիա[2]։ Բարենպաստ պայմաններ ստեղծվեցին երիտասարդական, ուսանողական և կանանց կազմակերպությունների համար։ Քաղաքական պարտիաները թեև ձևականորեն թույլատրված չէին, սակայն դուրս էին եկել ընդհատակից և լեգալ գործունեություն էին ծավալել, բացի Նուրի Սաիդի ստեղծած «Կոնստիտուցիոն միություն» ռեակցիոն պարտիայից։

Այդ բոլորի հետ միասին ռեսպուբլիկական կառավարությունը ընդունեց մի շարք որոշումներ ժողովրդական մասսաների նյութական դրությունը բարելավելու ուղղությամբ։ Որոշ չափով բարձրացվեց աշխատավարձը։ Որոշում ընդունվեց անցնելու 8 ժամյա աշխատանքային օրվա։ 1958 թվականի սեպտեմբերի 29-ին Մինիստրների խորհուրդը ընդունեց օրենք՝ գործարաններում ու ձեռնարկություններում բանվորների տեխնիկական անվտանգությունն ապահովելու և բանվորների ու ծառայողների պրոֆեսիոնալ հիվանդությունների դեմ պայքարն ուժեղացնելու մասին։

Մեծ նշանակություն ունեցավ հարկային սիստեմի փոփոխությունը։ Մինչև ռևոլյուցիան հիմնական ձևը անուղղակի հարկն էր, որն իր ամբողջ ծանրությամբ ընկած էր աշխատավորական մասսաների ուսերին։ Կապիտալիստները և ֆեոդալ-կալվածատերերը փաստորեն ազատված էին հարկերից։ Ռևոլյուցիայից հետո Իրաքի ռեսպուբլիկական կառավարությունը շեշտը դրեց ուղղակի հարկերի վրա։ Բացի այդ նա մտցրեց նաև ժառանգության հարկ[3]։ Ռևոլյուցիայից հետո

[1] „Рабочее движенке в капиталистических странах (1959—1961)", М., 1961, стр. 562.

[2] Նույն տեղում։

[3] Տե՛ս А. Федченко, Л. Котлов, Ирак на пути национального возрождения, „Мировая экономика и международные отношения", М., 1959, стр. 51.

ընդունված որոշումների մեջ պետք է նշել նաև «ցեղերի վերաբերյալ օրենք»-ի վերացումը։ Այդ օրենքը ցեղի անդամներին կախման մեջ էր դնում ցեղապետերից և նրա նպատակն էր ամրացնել ֆեոդալ-շեյխերի տիրապետությունը գյուղացիության վրա։ Այժմ դրան վերջ էր տրվում։

Սակայն այս շրջանի ամենակարևոր միջոցառումը 1958 թվականի սեպտեմբերի 30-ին ընդունված օրենքն էր Իրաքում ագրարային ռեֆորմ անցկացնելու մասին։ Դա կարևոր էր ոչ միայն այն իմաստով, որ շոշափում էր Իրաքի ազգաբնակչության ճնշող մասի շահերը, այլ նաև նրանով, որ ագրարային ռեֆորմի հետ սերտորեն առնչվում էին Իրաքի տնտեսական և քաղաքական անկախության ու դեմոկրատիայի հետագա բախտի հարցերը։

1958 թվականի սեպտեմբերի 30-ին դիմելով ժողովրդին և նրան հայտնելով ագրարային ռեֆորմի մասին, Կասեմը նշում է. «Ժողովրդի կամքից բխած հուլիսի 14-ի փառապանծ ռևոլյուցիան միաժամանակ քաղաքական և սոցիալական ռևոլյուցիա էր, որի նպատակներից մեկն է իրագործել ագրարային ռեֆորմ։

Ագրարային ռեֆորմը այն բազան է, որի վրա պետք է բարձրանա սոցիալական ռեֆորմը»[1]։ Նա այս օրենքի ընդունումը համարում էր ֆեոդալիզմի վերջ և նոր դարաշրջանի սկիզբ Իրաքում։

Ագրարային ռեֆորմի վերաբերյալ օրենքով Իրաքում սահմանափակվեց խոշոր ֆեոդալական հողատիրությունը։ Սահմանվեց հողատիրության մաքսիմում, յուրաքանչյուր ոք կարող էր ունենալ մինչև 500 հեկտարից ոչ ավելի անջրդի և 250 հեկտարից ոչ ավելի ջրովի հողեր։ Այդ նորմաները գերազանցող ֆեոդալների հողերը բռնագրավվելու և բաժանվելու էին հողազուրկ բազմանդամ գյուղացիական ընտանիքներին։ Սահմանվեցին նաև գյուղացիներին տրվող հողակտորների չափերը. յուրաքանչյուր ընտանիքի տրվելու էր 7,5—15 հեկտար ջրովի կամ 15—30 հեկտար անջրդի հողեր։ Ֆեոդալները

[1] «الجمهورية العراقية. الاصلاح الزراعي»، بغداد، ١٩٦٣، ص ١

բռնագրավված հողերի համար պետք է ստանային փոխհատուցում։ Ըստ որում, մուլքի հողատերերը ստանալու էին լրիվ փոխհատուցում, ամիրիյա թափուին՝ 75 տոկոս, իսկ ամիրիյա լլազմային՝ 50 տոկոս։ Փոխհատուցումը պետք է տային գյուղացիները, որոնք նախօրոք հաստատված գումարը մարելու էին 20 տարվա ընթացքում, որից հետո դառնալու էին իրենց հողակտորների տերը[1]։

Օրենքը սահմանում էր, որ հողակտոր ստացած գյուղացիները պարտադիր կերպով պետք է մտնեին կոոպերատիվների մեջ։

Միաժամանակ ագրարային ռեֆորմի վերաբերյալ օրենքը սահմանում էր վարձակալման պայմանները և չափերը այն գյուղացիների համար, որոնք հող չէին ստանալու և այն վարձակալելու էին կալվածատերերից։ Ռեֆորմի կիրառման ժամկետը սահմանվեց 5 տարի՝ 1958—1963 թվականները։ Այդ ժամանակաշրջանում կալվածատերերից պետք է բռնագրավվեր և գյուղացիներին բաժանվեր 2,25 մլն հեկտար հող։ Համառոտակի սա է ագրարային ռեֆորմի բովանդակությունը։

Ռեֆորմը, չնայած, որ կրում էր մասնակի բնույթ, անշուշտ, ունի առաջադիմական նշանակություն։ Նա նպաստավոր պայմաններ էր ստեղծում բուրժուական հարաբերությունների և ազգային էկոնոմիկայի հետագա զարգացման համար։ Իսկ ազգային էկոնոմիկայի ստեղծումը և զարգացումը Իրաքի առջև կանգնած ամենալուրջ և դժվար խնդիրներից մեկն էր։

Ագրարային ռեֆորմի մյուս դրական կողմն այն էր, որ նա որոշ չափով սահմանափակում էր ֆեոդալ-շեյխերի տնտեսական հզորությունը և քաղաքական ազդեցությունը երկրի ներսում։ Եվ, վերջապես, նա հողազուրկ գյուղացիների մի մասին ապահովում էր հողով՝ որոշ չափով բարելավելով նրանց տնտեսական դրությունը և թուլացնում հողային հարցում գոյություն ունեցող լարվածությունը։

Այդ բոլորի հետ միասին ռեֆորմն ուներ մի շարք լուրջ

[1] **Заки Хайри.** Закон об аграрной реформе в Иракской республике, „Проблемы мира и социализма", № 4, 1959, стр. 57.



թերություններ։ Նախ, նա չէր դնում ֆեոդալների դասակարգի լիկվիդացման հարցը։ Ռեֆորմը սահմանափակում էր միայն նրանց կալվածքների չափերը։

Երկրորդ. ռեֆորմի վերաբերյալ օրենքը բարձր նորմաներ էր սահմանում ֆեոդալների կալվածքների համար՝ 250—500 հեկտար։ Դա նշանակում էր, որ ֆեոդալների դասակարգի տնտեսական հզորության և քաղաքական ազդեցության աղբյուրը պահպանվում էր։

Երրորդ. այսպիսի պայմաններում ագրարային ռեֆորմը հետևողականորեն կիրառելու դեպքում Իրաքի գյուղական բնակչության 50 տոկոսը դարձյալ մնալու էր հողազուրկ։ Իրաքի գյուղացիության մինիմում պահանջները հողային հարցում բավարարելու համար հողային կալվածքների չափը անհրաժեշտ էր սահմանել ոչ թե 250—500 հեկտար, այլ, ինչպես նշում է Զաքի Խայրին, 100 հեկտար։

Չորրորդ. այդ ռեֆորմի թերություններից մեկն էլ այն էր, որ նա փոխհատուցում էր տալիս բոլոր ֆեոդալներին, այդ թվում նաև նրանց, ովքեր համարվում էին ազգային դավաճաններ ու տապալված ռեժիմի կողմնակիցներ և ամենակարևորը, որ այդ փոխհատուցման գումարը վճարելու էին գյուղացիները, այդ թվում նաև աղքատ գյուղացիները։ Դա, անշուշտ, ծանր բեռ էր նրանց ուսերին։

Ագրարային ռեֆորմի այսպիսի սահմանափակ բնույթն ու լուրջ թերությունները բացատրվում էին նրանով, որ այդ ռեֆորմն անցկացնողը բուրժուազիան էր, որն իշխանության գլուխ էր եկել ռևոլյուցիայի հաղթանակից հետո։ Իսկ բուրժուազիան իր սոցիալ-դասակարգային բնույթի պատճառով անընդունակ էր անցկացնել արմատական ագրարային ռեֆորմ և հետևողականորեն լուծել հողային հարցը։

Ռևոլյուցիայի հաղթանակից հետո փոխվեց նաև Իրաքի արտաքին քաղաքականությունը։ Ռեսպուբլիկական կառավարությունը որոշեց վերջ տալ օտարերկրյա իմպերիալիզմի տիրապետությանը Իրաքում և երկիրն ազատել իմպերիալիզմի կախումից։ Նա որոշեց վարել դրական չեզոքության և ռազմական խմբավորումներին չմիանալու քաղաքականություն։ «Իրաքի ռեսպուբլիկան,— նշել է Կասեմը,— խաղաղա-

մեր ռեսպուբլիկա է, անկեղծորեն ցանկանում է բարեկամություն աշխարհի բոլոր ժողովուրդների հետ, պաշտպանում է իր անկախությունը, տերիտորիալ ամբողջականությունը և իր հողը՝ օտար միջամտությունից։ Մեր այս քաղաքականությունը հիմնված է դրական չեզոքության և արևելյան ու արևմտյան լագերներին չմիանալու... կուրսի վրա»[1]։ Իրաքի կառավարությունն այս էտապում քաջ գիտակցում է, որ արտաքին քաղաքականությունը մի կարևոր գործիք է հուլիսյան ռևոլյուցիայի խնդիրների իրագործման համար, երկրի անկախությունն ապահովելու համար։ Այդ տեսակետից միանգամայն իրավացի էր Իրաքի ռեսպուբլիկայի նախկին արտաքին գործերի մինիստր Հաշիմ Ջավադը, նշելով, որ «Իրաքի արտաքին քաղաքականությունը նրա ազգային-ազատագրական քաղաքականության լրացուցիչ մասն է և նա չի կարող իրագործվել առանց մյուս մասերի իրագործման, որոնք իրենց հերթին չեն կարող իրագործվել առանց մեր արտաքին խաղաղասիրական հարաբերությունների՝ հիմնված դրական չեզոքության սկզբունքների վրա»[2]։

Ղեկավարվելով այդ սկզբունքներով Իրաքի կառավարությունը դիմեց մի շարք քայլերի, որոնք թուլացրին նրա կախումը միջազգային իմպերիալիզմից և ամրապնդեցին Իրաքի անկախությունը և միջազգային դրությունը։

1958 թվականի հուլիսի 17-ին Իրաքի Մինիստրների խորհուրդը որոշում ընդունեց վերականգնել դիվանագիտական հարաբերությունները Սովետական Միության հետ, որոնք փաստորեն խզվել էին 1955 թվականին, ինչպես նաև ճանաչել Չինական Ժողովրդական Ռեսպուբլիկան։

Դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին նաև սոցիալիստական մյուս երկրների հետ։ Ընդունելով դրական չեզոքության և ռազմական խմբավորումներին չմասնակցելու քաղաքականությունը, Իրաքի կառավարությունը հրաժարվեց միայն արևմտյան երկրների հետ առևտրական և տըն-

[1] «سياسة الجمهورية العراقية الخارجية»، ص ٣

[2] Նույն տեղում, էջ 4։



տեսական կոնտակտներ հաստատելու միապետական Իրաքի կառավարության քաղաքականությունից և առևտրական ու տնտեսական կապեր հաստատեց սոցիալիզմի լագերի երկրների հետ։ 1958 թվականի օգոստոսին կնքվեց սովետա-իրաքյան առաջին առևտրական համաձայնագիրը։ Իրաքի էկոնոմիկայի զարգացման համար մեծ նշանակություն ունեցավ 1959 թվականի մարտի 16-ին Սովետական Միության և Իրաքի միջև կնքված համաձայնագիրը՝ տնտեսական և տեխնիկական համագործակցության մասին։ Այդ համաձայնագրով Սովետական Միությունը պարտավորվում էր օգնել Իրաքին կառուցելու մետալուրգիական, մեքենաշինական, քիմիական, սննդի և թեթև արդյունաբերական բազմաթիվ ձեռնարկություններ, թվով մոտ 80 օբյեկտ։ Բացի այդ ՍՍՀՄ կառավարությունը Իրաքին տվեց երկարատև վարկ՝ 550 մլն ռուբլի գումարով։ Սովետական Միությունը օգնեց Իրաքին ազգային կադրեր ստեղծելու գործում[1]։

Պայմանագրի կնքումը խանդավառությամբ ընդունվեց Իրաքի հասարակության ճնշող մեծամասնության կողմից։ Իրաքի դեմոկրատական ուժերը դա համարում էին մեծ օգնություն իրենց երկրին այն պահին, երբ նրա համար ստեղծվել էին չափազանց ծանր պայմաններ։ Ազգային-դեմոկրատական պարտիայի օրգան «Ալ-Ահալի»-ն նշում էր, որ այդ պայմանագիրը կնքված է իրավահավասարության սկզբունքների վրա և մեծ ազդեցություն կունենա Իրաքի տնտեսական ապագայի վրա։ Նա հույս էր հայտնում, որ սովետա-իրաքյան պայմանագիրը կբարելավի Իրաքի տնտեսական բալանսը, որը խախտվել էր հին ռեժիմի կողմից իմպերիալիստական պետությունների հետ կնքած զանազան գործարքների հետևանքով[2]։ Իսկ «Իթթիհադ աշ-Շաաբ»-ը գրում էր, որ «Սովետա-իրաքյան համաձայնագիրը կծառայի Իրաքի անկախության և Մերձավոր Արևելքում խաղաղության ամրապնդմանը»[3]։ Սովետա-իրաքյան համաձայնագրի համար Բաղդադի

[1] „СССР и Арабские страны. Документы и материалы", М., 1961, стр. 695–696.

[2] „Аль-Ахали", Багдад, 1959, 18 марта.

[3] „Иттихад аш-Шааб", Багдад, 1959, 18 марта.

«Առ-Ռայ ալ-Ամմ» թերթը «հազար ողջույն էր հղում Սովետական Միությանը։ Նա նշում էր. «Համաձայնագիրը կնքվեց այն պահին, երբ իմպերիալիստական տերությունները իրենց քաղաքականության ուղեծրով ընթացող երկրների հետ փորձում են տնտեսապես խեղդել երիտասարդ Իրաքյան ռեսպուբլիկան»[1]։ Այդ պայմանագիրը մեծ դեր խաղաց Իրաքի ազգային էկոնոմիկայի զարգացման գործում։

Տնտեսական, տեխնիկական և կուլտուրական համաձայնագրեր կնքվեցին նաև Իրաքի և Չինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի, Հունգարիայի և սոցիալիստական մյուս երկրների հետ։

Սոցիալիստական երկրների հետ Իրաքի կնքած պայմանագրերը իրավահավասար էին, փոխադարձաբար շահավետ և չէին պայմանավորված որևէ քաղաքական նախապայմաններով։

Իրաքի անկախությունն ամրապնդելու տեսակետից մեծ նշանակություն ունեցավ Իրաքի կառավարության 1959 թվականի մարտի 24-ի որոշումը՝ Բաղդադի պակտից դուրս գալու մասին։ Թեև մինչ այդ էլ Իրաքը չէր մասնակցում այդ ագրեսիվ խմբավորման աշխատանքներին, սակայն նա ձևականորեն համարվում էր այդ պակտի անդամ։ Այժմ այդ ձևականությանը նույնպես վերջ էր տրվում։ Դա նշանակում էր, որ վերանում էր նաև 1955 թվականի ապրիլին կնքած անգլո-իրաքյան պայմանագիրը։ Անգլիան պաշտոնապես հայտարարեց այդ պայմանագրի դադարեցման մասին և 1959 թվականի մայիսին իր բոլոր զորքերը դուրս հանեց Իրաքից։ Այսպիսով, Իրաքի ժողովրդի մոտ 40-ամյա պայքարը՝ անգլիական զորքերը Իրաքից դուրս հանելու համար, ավարտվեց հաղթանակով։

Բաղդադի պակտից դուրս գալը Իրաքի ժողովուրդն ընդունեց մեծ գոհունակությամբ։ «Ստրկության և քաղաքական ենթակայության շատ դարերից հետո առաջին անգամ,— գրում էր այդ առթիվ Իրաքի կոմունիստական պարտիայի օրգան «Իթթիհադ աշ-Շաաբ»-ը,— Իրաքը դարձավ անկախ պե-

[1] „Ар-Рай аль-Амм", Багдад, 1959, 18 марта.



տություն»[1]։ Իրաքի պրոգրեսիվ ուժերը ընդգծում էին, որ Իրաքի դուրս գալը այդ ռազմական խմբավորումից նշանակում էր ազատվել իմպերիալիստական վերջին շղթաներից, որոնք սահմանափակում էին Իրաքի անկախությունը և սուվերենիտետը։ «Այսօր,— գրում էր «Ալ-Ախբար» թերթը,— Իրաքի թշնամիները զրկվեցին իրենց վերջին կեղտոտ զենքից, որով նրանք մի քանի ամիս էր սպառնում էին Իրաքին։ Թող այժմ նրանք իրենց քաշեն իրենց կեղտոտ լեզուն»[2]։

Իրաքի կառավարության արտաքին քաղաքականության կարևոր քայլերից մեկը հանդիսացավ ԱՄՆ-ի հետ կնքած բոլոր պայմանագրերի վերացումը։ Չեղյալ հայտարարվեցին ԱՄՆ-ից «ռազմական օգնության», «Էյզենհաուերի դոկտրինայի հիման վրա տնտեսական օգնության» ստանալու վերաբերյալ պայմանագրերը։ Հասկանալի է, Իրաքի կառավարությունը չէր կարող այդ քայլին դիմել, եթե չլիներ Սովետական Միության և սոցիալիստական մյուս երկրների անշահախնդիր տնտեսական օգնությունը։

Կասեմի կառավարությունը իշխանության գլուխ գալուց հետո փորձում էր լուծել Իրաքի նավթի հարցը։ Սակայն պետք է նշել, որ նա չէր գնում նավթի ազգայնացման և օտարերկրյա նավթային ընկերությունների վերացման հարցը։ Այդ խնդիրն առաջ չէին քաշում նաև Իրաքի դեմոկրատական ուժերը, գտնելով, որ դա կապված է մեծ բարդությունների հետ և անհրաժեշտ են համապատասխան միջոցներ ու պայմաններ, որոնցից դեռևս զուրկ է Իրաքը։ Կասեմի կառավարությունը հիմնականում ձգտում էր ավելացնել նավթից ստացվող եկամուտների Իրաքի բաժինը։

Իրաքի կոմունիստական պարտիան պահանջում էր, որ կառավարությունը հետևողական քաղաքականություն վարի նավթային ընկերությունների նկատմամբ, ոչ մի զիջում չանի նրանց և ստիպի, որ նրանք հարգեն Իրաքի օրենքները։ Նա առաջադրեց հետևյալ չորս պահանջները. 1 Ավելացնել Իրաքի բաժինը՝ նավթից ստացվող եկամուտներից։ 2. Իրաքը նավ-

[1] „Иттихад аш-Шааб", Багдад, 1959, 25 марта.

[2] „Аль-Ахбар", Багдад, 1959, 25 марта.

թային ընկերությունների հիմնական կապիտալում՝ ոչինչ չունեին։ Կոմունիստական պարտիան պահանջում էր, որ հիմնական կապիտալի 20—25 տոկոսը պատկանի Իրաքին։ 3. Վերացնել ընկերությունների իրավունքները այն շրջանների վրա, որոնք չեն շահագործվում։ 4. Ընկերությունները ենթարկել Իրաքի օրենքներին[1]։ Կոմունիստական պարտիայի այս պահանջներին համաձայնություն էին տալիս աշխատավորական մասսաները, ինչպես նաև երկրի առաջադեմ ուժերը։ Նրանք կառավարությունից պահանջում էին հասնել այդ պահանջների ընդունմանը նավթային ընկերությունների կողմից։

Բանակցությունները Իրաքի կառավարության և օտարերկրյա նավթային ընկերությունների միջև չափազանց ձգձգվեցին։ Նավթային ընկերությունները ամեն կերպ խուսանավում էին, դիմում խորամանկության ու սպառնալիքի։ Իրաքի կառավարությունը իր հերթին նույնպես վճռականորեն հանդես չէր գալիս։ Նա պատրաստ էր զիջելու կոմպրոմիսների։ Միայն երկրի դեմոկրատական ուժերի ճնշման ներքո, վերջապես, կառավարությունը 1961 թվականի դեկտեմբերի 12-ին ընդունեց օրենք նավթի վերաբերյալ։ Այդ օրենքը սահմանափակում էր նավթային ընկերությունների գործունեությունը այն շրջաններով, որ նրանք շահագործում էին։ Նրանց գործունեության գոտին կազմելու էր մոտ 2000 քառ. կմ, մինչդեռ նախկին կոնցեսիայով նրանց իրավունքը տարածվում էր համարյա ամբողջ երկրի տերիտորիայի վրա, մոտ 370.000 քառ. կմ[2]։ Այժմ ամբողջ այդ տերիտորիան Իրաքը կարող էր օգտագործել ըստ իր հայեցողության։ Բացի այդ նախատեսվում էր նոր օրենքների ընդունում և հատկապես Իրաքյան ազգային նավթային ընկերության ստեղծում, որը պետք է մասնակցեր ամեն տեսակի նավթային նախաձեռնության[3]։ Թեև այս օրենքը սահմանափակ բնույթ ուներ և արմատականորեն չէր լուծում նավթի պրոբլեմը, այնուամենայնիվ, նա պրոգրեսիվ նշանակություն ուներ։ Նախ, նա սահմանափակում էր իմպե-

[1] „Проблемы мира и социализма", № 10, 1961, стр. 41.
[2] „Le Commerce du Levant", Beyrouth, 16 Decembre 1961.
[3] Economie et politique", № 92, Paris, Mars, 1962, p. 88.



րիալիստական մոնոպոլիաների գործունեությունը, հետևաբար, և ազդեցության ոլորտը։ Երկրորդ, նպաստավոր պայմաններ էր ստեղծում ազգային նավթարդյունաբերության ստեղծման համար։

Նավթային ընկերությունները և նրանց հետևում կանգնած իմպերիալիստական պետությունները սվիններով դիմադրեցին 1961 թվականի դեկտեմբերի 12-ի օրենքը։ Նրանք փորձում էին ճնշում գործադրել Իրաքի կառավարության վրա, կանգ չառնելով սպառնալիքների և ահաբեկումների առջև։ Նավթի հարցում Կասեմը,—գրում էր «Սկոտսմեն»-ը, ռիսկ է անում կրկնել Մոսադեղի փորձը»[1]։ Նավթային ընկերությունները գտնում էին, որ Իրաքի կառավարությունն իրավունք չունի միակողմանիորեն փոփոխություն մտցնելու կոնցեսիոն պայմանագրերի մեջ և պահանջում էին հարցը հանձնել միջազգային արբիտրաժին։ Նրանց այդ պահանջների պաշտպանությամբ հանդես եկան ԱՄՆ-ի և Անգլիայի կառավարությունները, որոնք 1962 թվականի հունվարին համապատասխան նոտաներ հղեցին Իրաքի կառավարությանը։

ԱՄՆ-ի և Անգլիայի այդ միջամտությունը խորը դժգոհություն առաջացրեց Իրաքի լայն հասարակայնության շրջաններում։ Նրանք պահանջում էին մերժել անգլիական և ամերիկյան իմպերիալիստների ոտնձգությունները և Իրաքի ներքին գործերին միջամտելու փորձերը։ Անդրադառնալով այդ հարցին իրաքյան «Ալ-Բայյան» թերթը գրում էր, «Անգլիական և ամերիկյան կառավարությունների միջամտությունը ոչ մի արդարացում չունի դիվանագիտական սովորությունների տեսակետից և անթույլատրելի է միջազգային իրավունքով, քանի որ տվյալ դեպքում խոսքը գնում է Իրաքի կառավարության և նավթային ընկերությունների փոխհարաբերությունների մասին և այդ բոլորը հանդիսանում է զուտ տնտեսական գործերը։ Այդ պատճառով էլ ոչ մի օտարերկրյա պետություն իրավունք չունի միջամտելու այդ հարցում»[2]։

Առաջին շրջանում Իրաքի կառավարությունը հենվելով ժողովրդական մասսաների վրա և վայելելով դեմոկրատական

[1] „Скотсмен", 1962, 3 января.
[2] „Аль-Байян", Багдад, 1962, 12 января.

բոլոր ուժերի աջակցությունը հաջողությամբ պայքար էր մղում իմպերիալիստական դավադրությունների դեմ։ Օտարերկրյա իմպերիալիստական ուժերը և ներքին ռեակցիան չհաշտվեցին իրենց դիրքերը կորցնելու հետ և ռևոլյուցիայից հետո բացահայտ և ծածուկ դավադրություն էին նյութում ռեսպուբլիկական ռեժիմի դեմ։ Դավադրությունների շարքի մեջ ամենավտանգավորը 1959 թվականի մարտի սկզբներին Մոսուլում բռնկված խռովությունն էր, որը ղեկավարում էր գնդապետ Աբդել Վահաբ Շավվաֆը։ Նա իրեն հռչակեց Իրաքի կառավարության ղեկավար և կոչ արեց բանակին ու ժողովրդին տապալել Աբդել Քերիմ Կասեմի կառավարությունը։ Խռովարարների նպատակն էր կազմել ռեակցիոն կառավարություն, վերացնել ռևոլյուցիայի նվաճումները և երկիրը կրկին դնել Բաղդադի պակտի և արևմտյան իմպերիալիստների լծի ներքո[1]։ Սակայն խռովարարները հաջողություն չունեցան, քանի որ ոչ մի հենարան չունեին ժողովրդի մեջ։ Ռեսպուբլիկային հավատարիմ զորքերին, աշխատավորական մասսաների ամենալայն աջակցությամբ, հաջողվեց ճնշել խռովությունը։ Այդ պայքարում հատկապես մեծ հերոսություն ցուցաբերեցին բանվորները, որոնք անձնազոհ պայքար մղեցին իմպերիալիզմի գործակալների դեմ[2]։ Պայքարի առաջին գծի վրա էին գտնվում կոմունիստները, որոնց դերը շատ մեծ էր աշխատավորական մասսաներին մոբիլիզացնելու և նրանց պայքարը կազմակերպելու գործում։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, առաջին էտապում՝ 1958 թվականի հուլիս—1959 թվականի կեսերին, երբ դեռևս բարձր էր ռևոլյուցիոն շարժման ալիքը, Իրաքի կառավարությունը կիրառում էր ներքին ու արտաքին քաղաքական մի շարք կարևոր միջոցառումներ, որոնք թեև դուրս չէին գալիս բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի շրջանակներից, բայց ամրապնդում էին նորաստեղծ ռեսպուբլիկայի դրությունը։ Այդ միջոցառումները հնարավորություններ էին ստեղծում նրա հետագա տնտեսական ու դեմոկրատական զարգացման

[1] Տե՛ս **Азиз Курди,** Боритесь за жизнь и свободу героев Мосула, „Проблемы мира и социализма", № 2, 1961, стр. 92.

[2] „Аль-Ахбар", Багдад, 1959, 14 марта.



համար և որոշ չափով բարելավում ժողովրդական մասսաների տնտեսական վիճակն ու ընդլայնում նրանց քաղաքական ազատություններն ու իրավունքները։

* * *

1959 թվականի կեսերից Իրաքի կառավարության քաղաքականության մեջ տեղի ունեցավ շեշտակի շրջադարձ դեպի աջ։ Այդ բանը արտահայտվեց ներքին քաղաքականության բոլոր բնագավառներում։ Կառավարող խումբը, որը ավելի ու ավելի էր սկսում հենվել ռեակցիոն շրջանների վրա, հարձակում էր գործում դեմոկրատական ազատությունների վրա։ Հակակոմունիզմը դարձավ Իրաքի կառավարության պաշտոնական քաղաքականությունը։ Նա սկսեց հետապնդել կոմունիստներին ու դեմոկրատներին, պրոֆմիութենական ու գյուղացիական շարժման ակտիվ գործիչներին։ Ռեակցիոն քաղաքականություն որդեգրած կառավարությունն իր առաջին հարվածն ուղղեց բանվոր դասակարգի ու նրա կազմակերպությունների դեմ։ Նա փորձում էր լրիվ իր հսկողության տակ դնել պրոֆմիությունները։ Նրանց շարքերն էին սողոսկում գաղտնի ոստիկանության գործակալները և այնպիսի մարդիկ, որոնք ընդհանուր ոչինչ չունեին բանվորական շարժման հետ։ Կառավարությունը միջամտում էր պրոֆմիութենական կազմակերպությունների ընտրություններին՝ ձգտելով այնտեղից վտարել բանվորական շարժմանը նվիրված գործիչներին։ Ինչպես նշում էր Իրաքի լուսավորության նախկին մինիստր Իսմայիլ Արիֆը, «Կասեմը ուզում էր վերահսկողությունը բոլոր պրոֆմիությունների վրա հանձնել իր մարդկանց»[1]։ Ցանկանալով հասնել իր նպատակին Իրաքի կառավարությունը պրոֆմիութենական ակտիվիստներին հեռացնում էր աշխատանքից և կամ ձերբակալում։ Այս շրջանում ձերբակալվեց մոտ 7 հազար պրոֆմիութենական ակտիվ գործիչ։

Իրաքի պրոֆմիությունների դեմ ռեպրեսիվ միջոցներ կիրառելու և նրանց իրավունքները սահմանափակելու դեմ իրենց բողոքը հայտնեցին Իրաքի դեմոկրատական ուժերը։ Նրանց շահերի պաշտպանությամբ հանդես եկավ նաև պրոֆմիու-

[1] „Аль-Джамахир", Багдад, 1963, 15 февраля.

թյունների համաշխարհային ֆեդերացիան։ Վերջինիս գործադիր կոմիտեն իր 22-րդ նստաշրջանում 1961 թվականի փետրվարի 4-ին որոշում ընդունեց, որը դատապարտում էր Իրաքի կառավարության միջոցառումները ուղղված բանվորական շարժման դեմ։ Նա դիմեց Իրաքի կառավարությանը, պահանջելով վերջ տալ ռեպրեսիաներին, բանտերից ազատել արհմիության գործիչներին և նորմալ պայմաններ ստեղծել իրաքյան արհմիությունների գործունեության համար։ Սակայն Կասեմի կառավարությունը հաշվի չառավ դեմոկրատական ուժերի այդ պահանջը։

Ռեսպուբլիկական կառավարության և ազգային բուրժուազիայի ռեակցիոն քաղաքականության դրսևորումն էր Իրաքի կոմունիստական պարտիային լեգալ գործունեության իրավունք չտալը, չնայած գործունեության ազատության տրվեց, օրինակ, ազգային-դեմոկրատական, Իրաքի Քուրդստանի դեմոկրատական և այլ պարտիաների[1]։ Դրա փոխարեն լեգալ գործունեության իրավունք տրվեց Դաուդ աս-Սայղի օպորտունիստական խմբին։ Այդ քայլի նպատակն էր պառակտում մտցնել կոմունիստների շարքում և թուլացնել Իրաքի ազգային-ազատագրական շարժման առաջատար ուժը։

Չբավարարվելով դրանով Կասեմի ռեժիմը սկսեց հետապնդել կոմունիստներին։ Բավական է նշել, որ այդ ռեժիմի անկման նախօրյակին բանտերում էին գտնվում մոտ 2000 իրաքյան կոմունիստներ[2]։

Ռեակցիան հարձակվեց նաև դեմոկրատական մամուլի վրա։ 1961 թվականի վերջերին փակվեց կոմունիստական պարտիայի օրգան «Իթթիհադ աշ-Շաաբ»-ը։ Նույնով փակվեցին նաև այլ դեմոկրատական թերթեր։ Տարօրինակն այն էր, որ դեմոկրատական թերթերը փակելու համար պատրվակները հիմնվում էին դեռևս Նուրի Սաիդի դիկտատուրայի ժամանակ՝ 1954 թվականի մամուլի վերաբերյալ ընդունված ռեակցիոն օրենքի վրա։ Այդ փաստն ինքնին խոսում է Կասեմի կառավարության նոր քաղաքական կուրսի մասին։

[1] „Положение рабочего класса и рабочее движение в странах Азии и Африки", М., 1962, стр. 22.

[2] «النداء» بيروت, 13.II.1963



Իրաքի փորձը կրկին անգամ հաստատում է այն ճշմարտությունը, որ հակակոմունիզմի քաղաքականությունն ուղղված է ընդհանրապես դեմոկրատիայի դեմ, որ նա հարվածում է ոչ միայն կոմունիստներին ու նրանց համախոհներին, այլև կոմունիզմից հեռու կանգնած դեմոկրատական բոլոր հոսանքներին։

Դրա մասին են վկայում հետևյալ փաստերը։ Իրաքի կառավարությունը թույլատրելով մի շարք պարտիաների լեգալ գործունեությունը, այն սահմանափակեց հիմնականում Բաղդադ քաղաքով։ Սկսելով կոմունիստական մամուլից, այնուհետև նա արգելք դրեց նույնիսկ մի շարք բուրժուական թերթերի վրա, որոնք Կասեմի կարծիքով չափազանց դեմոկրատական էին։ Իրաքյան իշխանությունները ցրեցին դեմոկրատական երիտասարդության ֆեդերացիան և ձերբակալեցին նրա ղեկավարներին։ Նրանք փակեցին իրաքյան կանանց լիգայի բոլոր տեղական կազմակերպությունները և այլն[1]։

Իրաքի կառավարող շրջաններն սկսեցին հետապնդել նաև խաղաղության կողմնակիցներին։ Փաստորեն խաղաղության կողմնակիցների շարժման վրա արգելք դրվեց։ 1961 թվականի մայիսի 8-ին Իրաքի զինվորական նահանգապետ Աբդիի կարգադրությամբ փակեցին Իրաքի խաղաղության կողմնակիցների ազգային խորհրդի բյուրոն և նրա շենքը։ Կարգադրության մեջ ասված էր որ «դրանց կարիքը չկա»[2]։

Այս բոլորը խոսում է այն մասին, որ Իրաքի կառավարող շրջանները վախենում էին ժողովրդական մասսաների շարժումից և դեմոկրատական ուժերի աճից։ Ահա թե ինչու նրանք ռեպրեսիաների և դեմոկրատական ազատությունների սահմանափակումների հետ միասին դիմում էին նաև տեռորի քաղաքականությանը, գնդակահարում աշխատավորների խաղաղ ելույթները, ձերբակալում դեմոկրատական գործիչներին և նրանցից շատերին դատապարտում մահվան։

Իրաքի դեմոկրատական իրավունքների և ազատություն-

[1] Мохаммед Салим. После трех лет иракской революции. „Проблемы мира и социализма", № 10, 1961, стр. 39.

[2] „Аль-Мустакбаль", Багдад, 1961, 9 мая.

ների պաշտպանության կոմիտեի կողմից անլեգալ կերպով հրատարակված «Դադարեցնել տեռորը» գրքույկում բազմաթիվ հետաքրքիր փաստեր են բերվում, որոնք ցույց են տալիս, որ Իրաքի կառավարությունը խոր հրաժարվել էր դեմոկրատիայի սկզբունքներից և վարում էր ռեակցիոն շրջաններին ձեռնտու քաղաքականություն։ Գրքույկում նշվում է, որ 1959 թվականի կեսերից մինչև 1961 թվականի մայիսը ռազմադաշտային դատարանները 112 մահվան վճիռ են ընդունել։ 770 մարդ միասին վերցրած դատապարտվել են 4164 տարվա բանտարկության։ Միայն 1960 թվականին երկրում քաղաքական նկատառումներով ձերբակալվել և բանտարկվել է 22 հազար մարդ[1]։ 1959 թվականի հուլիսից սկսած տեղի է ունեցել բանվորների և ոստիկանական գործակալների 7510 հարձակում արհմիությունների և դեմոկրատական մյուս կազմակերպությունների շենքերի վրա։ Իրաքյան իշխանություններն իրենց ռեակցիոն քաղաքականության մեջ այնքան հեռու գնացին, որ ձերբակալեցին և ռազմական դատարանին հանձնեցին Մոսուլի հերոսներից շատերին, որոնք մասնակցել էին Շավվաֆի խռովության ճնշմանը, այն խռովության, որի նպատակն էր տապալել Կասեմի կառավարությունը և երկրում կրկին հաստատել օտարերկրյա իմպերիալիզմի և ֆեոդալների տիրապետությունը։ Ձերբակալվածների թվում էին կոմունիստներ, դեմոկրատներ, պրոֆմիութենական ու երիտասարդական շարժման ակտիվ գործիչներ, առաջադեմ զինվորականներ և այլն. նրանցից 38 հոգու Իրաքի զինվորական դատարանը 1960 թվականի դեկտեմբերի 16-ին դատապարտեց մահվան[2]։

Դա բողոքի լայն շարժում առաջացրեց Իրաքում և նրա սահմաններից դուրս։ Տասնյակ հազարավոր քաղաքացիներ պետիցիա ուղարկեցին պրեմիեր-մինիստր Կասեմին, պահանջելով վերջ տալ ծաղր ու ծանակին Մոսուլի հերոսների նկատմամբ։

[1] Տե՛ս „Проблемы мира и социализма", № 11, 1961, стр. 95.
[2] Նույն տեղում, № 2, 1961, էջ 93.



Կասեմի կառավարությունը կոպիտ սխալներ թույլ տվեց քրդական հարցում։ Ինչպես նշեցինք, Իրաքը ժամանակավոր սահմանադրությամբ հռչակվեց արաբների և քրդերի հայրենիք, խոսք տրվեց հարգել նրանց դեմոկրատական ազատությունները ու ազգային ավանդությունները։ Սակայն Կասեմի կառավարությունն իր այդ խոստումը չկատարեց։ Նա հետապնդում էր քուրդ դեմոկրատներին և սահմանափակում նրանց ազգային իրավունքները։ Նա հրաժարվեց ճանաչել Իրաքի սահմաններում քրդական ավտոնոմիան, որը հանդիսանում է քրդական ազգային շարժման գլխավոր պահանջը։ Այդ հողի վրա ծագեց կոնֆլիկտ Իրաքի իշխանությունների և քրդական ազգային-ազատագրական շարժման ուժերի միջև։ Կասեմի կառավարությունը փորձեց քրդական հարցը լուծել զենքի միջոցով։ 1961 թվականի սեպտեմբերին Իրաքի կառավարությունը պատերազմական գործողություններ սկսեց քրդերի դեմ։

Այդ եղբայրասպան պատերազմը ոչ մի պաշտպանություն չէր վայելում Իրաքի աշխատավորների մոտ։ Իրաքի առաջադեմ ուժերը, դեմոկրատական կազմակերպություններն ու գործիչները պահանջում էին վերջ տալ այդ պատերազմին և ճանաչել քրդերի արդար պահանջները։ Սակայն Կասեմը չունկնդրեց բանականության ձայնին։ Քրդերի դեմ սկսած պատերազմը, անշուշտ, թուլացրեց Կասեմի ռեժիմի հիմքերը և դարձավ նրա անկման պատճառներից մեկը։

Իրաքի կոմունիստական պարտիայի գլխավոր քարտուղար Սալյամ Ադիլը անդրադառնալով Իրաքի կառավարության քաղաքականության նոր ուղղությանը ՍՄԿԿ XXII համագումարում նշեց, որ Իրաքի «կառավարությունը ոչ միայն ընդառաջ չի գնում ժողովրդի դեմոկրատական պահանջներին, այլ, ընդհակառակը, ձեռնպահ է մնում քայլերի դիմելու՝ դեմոկրատական հիմունքների վրա ազգային ռեժիմ հաստատելու համար և համառորեն կիրառում է ժողովրդի ազատությունների և իրավունքների դեմ ուղղված քաղաքականություն»[1]։

[1] „Правда", 1961, 25 октября.

Իրաքի կառավարությունը ոչ միայն դադարեցրեց պետական ապարատի զտումը պրոիմպերիալիստական և միապետական տարրերից, այլ ընդհակառակը, նրանց, ովքեր համագործակցել էին Նուրի Սաիդի և միապետական ռեժիմի հետ կրկին վերականգնեց աշխատանքի։ Դրա փոխարեն պետական ապարատից հեռացվեցին նրանք, ովքեր հանդես էին գալիս ընդդեմ իմպերիալիզմի և ֆեոդալիզմի։

Կասեմի ռեժիմը գոյություն ունեցավ մոտ 5 տարի։ Դա քիչ ժամանակ չէր։ Սակայն այդ ժամանակաշրջանում Իրաքում ոչ մի անգամ պառլամենտական ընտրություն տեղի չունեցավ, թեև Կասեմը բազմաթիվ անգամ խոստումներ էր տալիս անցկացնել այդպիսի ընտրություններ և երկրում հաստատել պառլամենտական ինստիտուտներ ու պառլամենտական վարչաձև։ Իրականում Կասեմն Իրաքում հաստատեց իր անձնական դիկտատուրան՝ պաշտպանելով արտակարգ օրենքներն ու ռազմական դատարանները։

Նրա և ժողովրդական մասսաների միջև անջրպետը բանի գնում խորանում էր և երկրորդ էտապում նա փաստորեն չէր հենվում ժողովրդական մասսաների ու դեմոկրատական ուժերի վրա։ Դրա փոխարեն նա ավելի ու ավելի էր հենվում բանակի վրա։ Իսկ վերջին շրջանում Կասեմը նույնիսկ բանակին լրիվ կերպով չէր վստահում և հիմնականում հենվում էր գաղտնի ոստիկանության վրա։

Իր կառավարության նոր, հակադեմոկրատական քաղաքականությունը Կասեմը փորձում էր ներկայացնել որպես աջ և ձախ ուժերի միջև հավասարակշռություն պահպանելու քաղաքականություն։ Նա սիրում էր հայտարարել, որ ինքը ամեն տեսակի հոսանքներից և տենդենցներից վեր է կանգնած և որ ինքը պաշտպանում է բարձրագույն օրենքը։

Սակայն վերը բերված փաստերն անհերքելիորեն ապացուցում են, որ նրա քաղաքականությունը ոչ թե «հավասարակշռություն» պահպանելու քաղաքականություն էր, այլ ձախ ուժերին ճնշելու քաղաքականություն։ Նրա քաղաքականությունն երկրորդ էտապում ավելի ու ավելի էր արտահայտում բուրժուազիայի աջ թևի շահերը և հենց այդ թևն էլ հանդիսանում էր տոն տվողը։



Երկրորդ էտապում վատացավ նաև աշխատավորների տնտեսական վիճակը. հարկերը բարձրացան, աճեց գործազրկությունը, իջավ աշխատավարձը։ Օրինակ, որակավորում չունեցող բանվորների (նրանք կազմում են Իրաքի բանվոր դասակարգի մեծ մասը) աշխատավարձը իջավ մոտ 3 անգամ[1]։

Վտանգի տակ դրվեց նաև ագրարային ռեֆորմի կիրառումը։ Ֆեոդալները և պետական ապարատում նստած նրանց մարդիկ կատաղի դիմադրություն էին ցույց տալիս այդ ռեֆորմի կիրառմանը։ Ռեֆորմի իրականացման տեմպերը թուլացան։ Ռեֆորմի առաջին տարում ավելի շատ բան արվեց, քան թե երկրորդ տարում։ Ռեֆորմի առաջին մեկուկես տարվա ընթացքում պետությունը կալվածատերերից վերցրեց 500.000 հեկտար հող, իսկ գյուղացիներին բաժանեց 125.000 հեկտարից էլ պակաս[2]։ Բացի այդ կառավարությունը ֆեոդալ-շեյխերին կատարեց մի շարք զիջումներ. որոշ խոշոր հողատերերի վրա ռեֆորմը չտարածեց, ֆեոդալներն իրավունք ստացան նախկինի պես գյուղացիներին հեռացնել իրենց հողերից, պատժել և այլն։ Կառավարությունը հողատերերին վերադարձրեց նախկինում նրանցից բռնագրավված ջրապոմպային մեխանիզմները[3]։ 1959 թ. հունիսի 10-ին ընդունվեց մի օրենք, որի համաձայն վարձակալ-գյուղացիների բաժինը ջրովի հողերում 40 տոկոսից իջեցվեց 35 տոկոսի, իսկ անջրդի հողերում՝ 50 տոկոսից 45 տոկոսի[4]։ Այսպիսի քաղաքականության հետևանքով ագրարային ռեֆորմն անհնար եղավ կիրառել նշված ժամկետում։ Ինչպես հայտնի է, նա պետք է ավարտվեր 5 տարում՝ 1958 թվականի սեպտեմբերից մինչև 1963 թվականի սեպտեմբերն ընկած ժամանակաշրջանում։ 1963 թվականի հեղաշրջումից հետո Իրաքի ագրարային ռեֆորմի գործերի մինիստրությունը փետրվարի 23-ին պաշտոնապես հայտարարեց, որ մինչև այժմ գյուղացիներին տրվել է

[1] **Сами**, Защищать интересы рабочего класса. „Проблемы мира и социализма", № 12, 1962, стр. 45.

[2] *Նույն տեղում, № 3, 1961, էջ 66։*

[3] „Проблемы мира и социализма", № 3, 1961, стр. 66.

[4] „Аграрные реформы в странах Востока", М., 1961, стр. 197.

բաժանման ենթակա հողերի 4,5 տոկոսը և հող ստացել է դրա իրավունքն ունեցող գյուղացիների 9 տոկոսը միայն։

Իրաքի ժողովրդական մասսաները հանդես էին գալիս Իրաքի կառավարության քաղաքականության դեմ։ Նրանք պետիցիաներ էին ներկայացնում կառավարությանը, կազմակերպում էին ցույցեր ու գործադուլներ՝ ի պաշտպանություն իրենց տնտեսական շահերի և դեմոկրատական իրավունքների։ 1961 թվականին Իրաքի ծխախոտի արդյունաբերության բանվորները երկու անգամ գործադուլ հայտարարեցին։ Նրանք այնուհետև ցույց կազմակերպեցին, որը արյան մեջ խեղդվեց[1]։ Գործարանատերերի կամայականությունների դեմ 1961 թվականի գարնանը գործադուլ հայտարարեցին ցեմենտի և մյուս գործարանների բանվորները։ Առանձնապես ակտիվորեն էին հանդես գալիս երկաթուղային և նավթային արդյունաբերության բանվորները, որոնք 1962 թվականի փետրվար—օգոստոս ամիսներին 10 անգամ դիմեցին գործադուլի։ 1962 թվականի ամռանը ավելի քան երկու շաբաթ Բաղդադի մոտ 7000 բանվորներ բողոքում էին պրոֆմիությունների արգելելու դեմ[2]։

1961 թվականի մարտին արյունալի դեպքեր տեղի ունեցան Բաղդադում։ Բաղդադի հազարավոր աշխատավորներ ցույց կազմակերպեցին, բողոքելով հացերի ավելացման դեմ։ Բաղդադի իշխանությունները այդ խաղաղ ցույցը ճնշեցին զենքով։ Ձերբակալվեցին բազմաթիվ ցուցարարներ։

Բանվորների հետ միասին հանդես էին գալիս գյուղացիները, որոնք պահանջում էին գյուղացիական միությունների ազատություն և ագրարային ռեֆորմի արագ կիրառում, ուսանողությունը, երիտասարդությունը և մյուս հայրենասիրական ուժերը, որոնք առաջադրում էին ռեպրեսիաների և տեռորի դադարեցում, ռազմական արտակարգ դատարանների վերացում, պառլամենտական ընտրությունների անցկացում, մշտական սահմանադրության ընդունում և այլ դեմոկրատական պահանջներ։

Ռեակցիային հակահարված տալու նպատակով աշխա-

[1] „Проблемы мира и социализма, 1962, № 6, стр. 94.

[2] Նույն տեղում, № 12, 1962, стр. 45.



տավորական մասսաների պայքարը կազմակերպելու և դեմոկրատական, հայրենասիրական ուժերը համախմբելու ուղղությամբ մեծ աշխատանք կատարեց Իրաքի կոմունիստական պարտիան։ Երկրորդ էտապում նրա գործունեության համար ստեղծվեցին չափազանց դժվարին պայմաններ։ Նա գործում էր ընդհատակում, կառավարության կողմից վարվող հակակոմունիզմի քաղաքականության ծանր պայմաններում։ Չնայած դրան, նա կարողանում էր պահպանել իր կապերը աշխատավորների հետ և նրանց բացատրել այն խնդիրները, որ երկրորդ էտապում կանգնած էին Իրաքի առաջավոր ուժերի առջև։ Կոմունիստական պարտիան նոր պայմաններում իր տակտիկան որոշելիս ելնում էր այն դրույթից, որ ազգային բուրժուազիան երկակի բնույթ ունի։ Ի նկատի ունենալով այդ հանգամանքը նա վարում էր բուրժուազիայի հետ դաշինքի և պայքարի տակտիկա։ Նա մի կողմից պաշտպանում էր ազգային բուրժուազիայի և Կասեմի կառավարության առաջադեմ քայլերը, գլխավորապես արտաքին քաղաքականության բնագավառում, որն այս էտապում ևս ընդհանուր առմամբ շարունակում էր մնալ հակաիմպերիալիստական, իսկ մյուս կողմից՝ պայքարում էր նրանց ռեակցիոն քաղաքականության դեմ, որը գլխավորապես արտահայտվեց ներքին քաղաքականության բնագավառում։ Կոմունիստական պարտիան գտնում էր, որ ազգային բուրժուազիան չի լուծել ռևոլյուցիայի կողմից առաջադրված քաղաքական, տնտեսական և սոցիալական խնդիրները։ Սակայն նա գտնում էր, որ դա հիմք չի տալիս ասելու, որ ազգային բուրժուազիան դավաճանել է ռևոլյուցիային և անցել իմպերիալիզմի ճամբար։ Խնդիրը հետևյալն էր. միավորել բոլոր դեմոկրատական ուժերը, ստեղծել միասնական ճակատ և ստիպել ազգային բուրժուազիային կատարելու ռևոլյուցիայի կողմից առաջադրված խնդիրները։ 1960 թվականի դեկտեմբերին տեղի ունեցավ Իրաքի կոմունիստական պարտիայի Կենտրոնական կոմիտեի պլենումը։ Պլենումի կողմից ընդունված բանաձևում ասված էր, որ ազգային ճակատի քաղաքականությունը հանդիսանում է փրկության միակ ուղին[1]։ Դրա մեջ պետք է միավոր-

[1] „Проблемы мира и социализма", № 10, 1961, стр. 43

14—14

վերն Իրաքի բոլոր ազգային, հայրենասիրական ուժերը։ Կոմունիստական պարտիան գտնում էր, որ Ազգային ճակատը պետք է պայքարի հանուն խնդիրների կենսագործման համար. ազգային անկախության ամրապնդում, իմպերիալիզմի և ֆեոդալիզմի մնացուկների վերացում, դեմոկրատիայի հաստատում, անկախ արտաքին քաղաքականության կիրառում, սոցիալիստական երկրների հետ համագործակցության զարգացում և այլն։

Սակայն այդպիսի Ազգային ճակատ չստեղծվեց։ Իրաքի ազգային ուժերը, հետապնդելով իրենց նեղ դասակարգային նպատակները և վախենալով հակաիմպերիալիզմի պրոպագանդայից, չպաշտպանեցին կոմունիստական պարտիայի առաջարկը։ Դրա հետևանքով այդ ուժերի պառակտումը շարունակվեց, որից և օգտվեցին ռեակցիոն ուժերը՝ երկրի ներսում և իմպերիալիստական ուժերը՝ երկրից դուրս։

Այսպիսին էր Իրաքում ներքին դրությունը փետրվարյան հեղաշրջումից առաջ։ Այժմ կանգ առնենք այն հարցի վրա, թե ո՞րն էր Իրաքի կառավարության քաղաքականության մեջ դեպի աջ ունեցած այդպիսի կտրուկ փոփոխության պատճառը։

Ռևոլյուցիայից հետո Իրաքի ռեսպուբլիկական կառավարության դրությունը դյուրին չէր, ուժեղ էր կոնտրռևոլյուցիոն ռեստավրացիայի վտանգը։ Սահուն չէր նաև Իրաքի միջազգային դրությունը։ Իրաքի կառավարությունը և ազգային բուրժուազիան հարկադրված էին հենվել ժողովրդական մասսաների վրա և օգտագործել նրանց ռևոլյուցիոն, մասսայական շարժումն ու եռանդը։ Հասկանալի է, որ այդպիսի իրադրության մեջ Իրաքի կառավարությունը չէր կարող չդիմել դեմոկրատական բարեփոխումների, չէր կարող որոշ չափով չբավարարել աշխատավորական մասսաների պահանջները և ակտիվ պայքար չմղել իմպերիալիզմի դեմ։ Հենվելով ժողովրդական մասսաների վրա, վայելելով կոմունիստական պարտիայի և երկրի մյուս դեմոկրատական ուժերի օժանդակությունն ու պաշտպանությունը Իրաքի կառավարությունը կարողացավ ամրապնդել իր ներքին և արտաքին դրությունը։ Կոնտրռևոլյուցիոն և իմպերիալիստական վտանգը համեմատաբար պա-



կասեց։ Սակայն ժողովրդական մասսայական շարժումները և առաջադեմ ուժերի ազդեցությունը շարունակում էր աճել։ Դա սարսափեցրեց ազգային բուրժուազիային։ Ռևոլյուցիայի հետագա զարգացումը չէր մտնում նրա պլանների մեջ։ Դեմոկրատական շարժումների մեջ նա սկսեց տեսնել իր ամենավտանգավոր թշնամուն։ Եվ ազգային բուրժուազիան կտրուկ շրջադարձ կատարեց դեպի աջ։ Նա սկսեց հանդես գալ իր իսկ առաջ քաշած լոզունգների դեմ։ Ինչպես նշում է Մուհամմեդ Սալիմը, «Բուրժուազիան առաջին պլան քաշեց իր հակասությունները ռևոլյուցիոն դասակարգերի և դեմոկրատական ուժերի հետ, հետին պլան մղելով գլխավոր հակասությունը, այսինքն հակասությունը իմպերիալիստների և ներքին ռեակցիոն շրջանների ու նրանց սպասարկուների հետ»[1]։ Ազգային բուրժուազիան ու հատկապես նրա աջ թևը (առևտրական-կոմպրադորական և բուրժուազիայի այն շերտը, որ կապված է հողի հետ) սկսեց դիմել կոմպրոմիսների՝ ֆեոդալների և իմպերիալիստների հետ։

Իրաքի ազգային բուրժուազիան կազմված է երեք հիմնական խմբերից՝ առևտրական-կոմպրադորական, հողային և արդյունաբերական։ Դրանց մեջ ամենաթույլը արդյունաբերականն է և կառավարության քաղաքականությունը երկրորդ էտապում հիմնականում աջ թևի՝ առաջին երկու խմբերի քաղաքականությունն էր։ Ազգային բուրժուազիայի երեք խմբերն էլ միակարծիք էին դեմոկրատական ազատությունները ճնշելու և ժողովրդական շարժումների առաջն առնելու հարցում։ Սակայն աջ թևի ձգտումը՝ դիմել կոմպրոմիսների իմպերիալիստական ուժերի և ֆեոդալների հետ, վախեցրեց արդյունաբերական բուրժուազիային։ Վերջինս լավ էր հասկանում, որ աջ թևի այդ քաղաքականությունը վտանգի տակ էր դնում երկրի տնտեսական ու քաղաքական անկախությունը, որն, ինչ խոսք, չէր համապատասխանում արդյունաբերական բուրժուազիայի շահերին։

Այստեղից էլ այն հակասությունները ազգային բուրժուազիայի տարբեր շերտերի միջև, որի արտահայտությունը հան-

[1] **Мохаммед Салим**, После трех лет иракской революции, „Проблемы мира и социализма", № 10, 1961, стр. 38.

դիտացավ բուրժուական ազգային-դեմոկրատական պարտիայի պառակտումը երկու մասի։

Այսպիսով, Հուլիսի 14-ի ռևոլյուցիան չլուծեց Իրաքի առջև ծառացած սոցիալական, տնտեսական և քաղաքական խնդիրները։ «Ռևոլյուցիան իր խնդիրները չկատարեց, ընդհակառակը, բուրժուազիայի հակադեմոկրատական քաղաքականության հետևանքով նա նահանջեց»[1]։

* * *

1963 թվականի փետրվարի 8-ին Իրաքում տեղի ունեցավ կոնտրռևոլյուցիոն հեղաշրջում։ Կասեմի ռեժիմը տապալվեց և ինքը Կասեմն էլ գնդակահարվեց։ Դրանով 1958 թվականի ռևոլյուցիայից հետո Իրաքի քաղաքական զարգացման մեջ սկսվեց նոր, երրորդ շրջանը։

Հեղաշրջումը անցկացնող խմբավորումն իրեն անվանում էր «Ռևոլյուցիայի ազգային խորհուրդ», որի կազմի մեջ մտնում էին երիտասարդ սպաներ, բաաս պարտիայի անդամներ և իրաքյան ռեակցիայի մյուս շերտերի ներկայացուցիչներ։ Այդ խորհուրդը ռեսպուբլիկայի պրեզիդենտ նշանակեց Աբդել Սալյամ Արեֆին, այն մարդուն, որը 1958 թվականի դեկտեմբերին պետական հեղաշրջում կատարելու փորձի համար դատապարտվել էր մահվան, սակայն հետագայում ներում ստացել Կասեմից։ Պրեմիեր-մինիստր նշանակվեց գնդապետ Ահմեդ Հասան ալ-Բաքրը։ Կառավարության մեջ մինիստրական տեղերի մեծ մասը պատկանում էր բաաս պարտիային, որը և հանդիսանում էր այդ կոնտրռևոլյուցիոն դավադրության կազմակերպողն ու ղեկավար ուժը։ Կառավարության մեջ մտան նաև «միասնության եղբայրներ», «արաբ նացիոնալիստներ» կազմակերպությունների անդամներ, ինչպես նաև անկախներ[2]։

Իրաքի «Ռևոլյուցիայի ազգային խորհուրդը» իր № 1 կոմյունիկեում, 1963 թվականի փետրվարի 8-ին ժողովրդին հայտարարելով, որ Աբդել Քերիմ Կասեմի ռեժիմին վերջ է

[1] Мохаммед Салим, После трех лет иракской революции, „Проблемы мира и социализма", № 10, 1961, стр. 40.

[2] «الثورة», 13.II.1963



տրված, նշում էր, որ հեղաշրջում կատարողների նպատակն է «1958 թվականի հուլիսի 14-ի ռևոլյուցիայի իսկական նպատակների իրագործումը»։ Բաասականները որպես հիմնական լոզունգներ հայտնեցին. «միասնություն, ազատություն և սոցիալիզմ»։

Այժմ տեսնենք, թե բաասականների խոսքերը որքանով են համապատասխանում գործերին։

Կասեմը, որը շրջապատված էր պաշտպանության մինիստրության շենքում, զգալով, որ արդեն տանուլ է տվել, հեռախոսով դիմում է Արեֆին, խնդրելով, որ իր կյանքը ապահովվի։ Արեֆը նրան պատասխանում է. «Իսկ դու գթացի՞ր Ֆեյսալ Բ. Թագավորի կյանքը»[1]։ Դեռ ավելին. հեղաշրջման օրերին Արեֆը զինվորներ ուղարկեց Ֆեյսալ Թագավորի գերեզմանին, որոնք, ի նշան հարգանքի, նրա գերեզմանի վրա խոնարհեցին ռեսպուբլիկայի դրոշները[2]։ Այսպիսով, կոնտրռևոլյուցիոներները փաստորեն իրենց հովանավորության տակ վերցրին միապետին և միապետական ռեժիմը, որը տապալվել էր 1958 թվականի հուլիսի 14-ին։ Պարզ է, թե այս քայլը, որքանով է համապատասխանում 1958 թվականի հուլիսի 14-ի ռևոլյուցիայի սկզբունքներին, ռևոլյուցիա, որը տապալեց միապետական ռեժիմը և ստեղծեց ռեսպուբլիկա։ Այժմ բաասականները այդ ռեսպուբլիկայի դրոշը խոնարհում էին միապետի գերեզմանի վրա։

Հեղաշրջումից հետո իշխանության գլուխ եկած մարդկանց առաջին քայլը եղավ արյունոտ տեռորի սանձազերծումը ամբողջ երկրով մեկ։ Տեռորը, դեմոկրատներին հալածելն ու մահապատժի ենթարկելը բարձրացվեց պետական քաղաքականության մակարդակի։ Առանձնապես ծանր կացություն ստեղծվեց կոմունիստների համար։ Հեղաշրջման օրը, 1963 թվականի փետրվարի 8-ին, Բաղդադի ռադիոն, որն անմիջապես անցել էր խռովարարների ձեռքը, իր առաջին հաղորդումներից մեկում կոչ էր անում փնտրել ու ամենուրեք ոչնչացնել կոմունիստներին. «Ժողովրդի բոլոր զավակներին

[1] «الثورة», 14.II.1963

[2] Նույն տեղում, 13 փետրվարի։

կոչ ենք անում օգնել ոստիկանությանը հայտնաբերելու այս ոճրագործներին (կոմունիստներին—Ն. Հ.) ու ոչնչացնել նրանց»[1]։

Հանցագործ ու քրեական տարրերից, տարբեր երանգի ռեակցիոներներից ստեղծվեց, այսպես կոչված, «ազգային գվարդիա», որը կոմունիստներին և մյուս դեմոկրատներին ու հայրենասերներին սպանում էր ուղղակի փողոցում, մտնում տները, ծեծում նրանց, չխնայելով ո՛չ ծերերին և ո՛չ կանանց ու երեխաներին։ Նրանք ոչնչացրին այն կոմունիստներից շատերին, որոնք բանտարկված էին Կասեմի կողմից և հակաժողովրդական հեղաշրջման օրերին դեռևս գտնվում էին բանտային խուցերում։ Չբավարարվելով դրանով, նրանք ձերբակալեցին Իրաքի կոմունիստական պարտիայի մի շարք ղեկավարների, այդ թվում կոմունիստական պարտիայի առաջին քարտուղար Հուսեյն Ահմեդ ար-Ռադիին (Սալյամ Ադիլ) և նրա զինակիցներին՝ Մուհամեդ Հուսեյն Աբու ալ-Իսին և Հասան Ուվեյնիին։ 1963 թվականի փետրվարի 24-ին անմարդկային չարչարանքներից հետո, առանց դատ ու դատաստանի, նրանք սպանվեցին։ Կոմունիստներին հալածելու քաղաքականությունը և տեռորը երկրի ներսում ընդունեց անհավար չափեր։ Բաասականները հետապնդում ու հալածում էին բոլոր դեմոկրատներին, բոլոր նրանց ովքեր կողմնակից էին ազատության և մարդու իրավունքների հարգմանը։ Նրանք սպանեցին Իրաքի խաղաղության կողմնակիցների ղեկավար, խաղաղության համաշխարհային խորհրդի անդամ Թաուֆիկ Մունիրին, խաղաղության շարժման ակտիվ գործիչ, լենինյան մրցանակի լաուրեատ Ազիզ Շերիֆին և այլն։ Հրաման արձակվեց բռնագրավել մի քանի նախկին մինիստրների, քաղաքական ու հասարակական գործիչների բոլոր ունեցվածքը, այդ թվում նախկին մինիստրներ Հաշիմ Ջավադի, Իբրահիմ Կուբբայի, Մուհամեդ Շաիվլաֆի, Իրաքի գեներալ-նահանգապետ Ահմեդ Սալեհ ալ-Աբդիի, Կասեմի եղբայր Համիդ Կասեմի, Թահա աշ-Շեյխի, Մահդավիի, Մաջիդ Ամինի և շատ ուրիշների ունեցվածքը։ Փակվեցին բոլոր դեմոկրատական թերթերը։

[1] «الثورة», 9.II.1963



Այս բոլորը համոզիչ կերպով վկայում է, որ բաասի հռչակած լոզունգները՝ «միասնություն, ազատություն և սոցիալիզմ» դատարկ լոզունգներ են, առաջ քաշված՝ ժողովրդական մասսաներին մոլորեցնելու նպատակով։

Բաասականների արյունոտ գործողությունները խորը վրդովմունք առաջացրին համաշխարհային հասարակայնության մեջ։ Աշխարհի առաջադեմ մարդկությունը պահանջում էր դադարեցնել տեռորը Իրաքում։ 1963 թվականի փետրվարի 17-ին Իրաքում տիրող դրության վերաբերյալ հայտարարությամբ հանդես եկավ ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեն։ Այդ հայտարարության մեջ ասվում էր. «Սովետական Միության կոմունիստները, սովետական բոլոր մարդիկ... ամբողջ համաշխարհային առաջադիմական հասարակայնության հետ միասին ցասումով բողոքում են Իրաքում գործադրվող չարդարացված մասսայական բռնությունների դեմ»[1]։ ՍՄԿԿ Կենտկոմը միաժամանակ զգուշացնում էր, որ հակակոմունիզմի քաղաքականությունը շատ ծանր հետևանքներ կարող ունենալ Իրաքի համար. «Պատմությունն արդեն բազմիցս հաստատել է, որ նրանք, ովքեր հանդես են գալիս հակակոմունիզմի դիրքերից, անխուսափելիորեն ոտնահարում են ամբողջ ժողովրդի սուրբ իրավունքները, հարվածներ են հասցնում իրենց երկրի ինչպես դեմոկրատական ու հայրենասիրական բոլոր ուժերին, ծառայում են ռեակցիայի գործին և թուլացնում են ազգի միասնությունը՝ իմպերիալիզմի ոտնձգություններից ազգի շահերը պաշտպանելու գործում»[2]։

Խռովարարները համակրանք չգտան Իրաքի ժողովրդական մասսաների կողմից։ Եվ դա հասկանալի է, «Իրաքի ժողովուրդը,— գրում է «Արարատ» թերթը,— ընդհանրապես խանդավառ չէ նոր վարչակարգով։ Ժողովուրդը կասկածում, որ նոր վարչակարգը գործադրի իր տված խոստումները, մասնավորապես դեմոկրատական ազատությունները ապահովելու մեջ»[3]։ Ֆրանսիական «Մոնդ» թերթը անդրադառնալով այդ հարցին, նույնպես նշում էր, որ փետրվարյան հեղաշրջումը

[1] «Սովետական Հայաստան», 1963, 17 փետրվարի։
[2] Նույն տեղում։
[3] «Արարատ», Բեյրութ, 1963, 15 փետրվարի։

խանդավառություն առաջացրեց ժողովրդի մոտ։ Որպես կա-րևոր փաստ, Թերթը ուշադրություն էր դարձնում այն հանգա-մանքի վրա, որ Իրաքում տեղի չունեցավ ոչ մի, թեկուզ հապ-ճեպ կազմակերպված ժողովրդական ցույց, որը պաշտպաներ Իրաքի նոր տերերին»[1]։ Մինչդեռ 1958 թվականի հուլիսի 14-ի ռևոլյուցիան Իրաքի ժողովուրդը ցնծությամբ դիմավորեց և պատրաստ էր զենքը ձեռքին պաշտպանել ներքին և արտա-քին թշնամի ուժերից։

Իրաքի հայրենասեր ուժերը չընկրկեցին տեռորի այդ քա-ղաքականության առջև։ Իրաքի շատ վայրերում կոմունիստնե-րը, դեմոկրատական մյուս ուժերը և Կասեմին հավա-տարիմ մնացած զինվորական զորամասերը զինված դիմա-դրություն էին ցույց տալիս։ «Ալ-Ախբար» թերթը գրում էր, որ Բաղդադում զորքերի և ժողովրդական մասսաների միջև տեղի են ունեցել փողոցային ահռելի մարտեր»[2]։ Մարտերը հատկապես համառ ու երկարատև էին Քաղիմիե թաղամա-սում։ Հայրենասիրական ուժերը այդպիսի դիմադրություն էին ցույց տալիս նաև Բասրայում, Ամարայում և երկրի այլ վայ-րերում[3]։

Կոմունիստական պարտիան ամեն ինչ անում էր ռեակ-ցիային հակահարված տալու, մասսաների դիմադրությունը կազմակերպելու համար։ Գտնվելով ռազմական տեռորի պայ-մաններում, նրան, այնուամենայնիվ, հաջողվեց գաղտնի թերթ հրատարակել և տարածել երկրում։ Թերթը Իրաքի ժողովր-դին կոչ էր անում շարունակել պայքարը ընդդեմ ֆաշիզմի, հանուն Իրաքի անկախության, ազատության և դեմոկրա-տիայի[4]։

Սակայն ուժերը շատ անհավասար էին և կոնտրռևոլյու-ցիան Իրաքում հաղթանակեց։

Ինչպե՞ս եղավ, որ 1958 թվականի հուլիսի 14-ի ռևոլյու-ցիայից հետո, ռևոլյուցիա, որն ուներ բուրժուա-դեմոկրատա-

[1] „Монд", Париж, 1963, 15 февраля.

[2] «الأخبار», 17.II.1963

[3] «Մեր նշանաբանն է հառաջ», Բեյրութ, 1963, 24 փետրվարի։

[4] Նույն տեղում։



կան, հակաիմպերիալիստական և հակաֆեոդալական բնույթ, որը տապալեց միապետությունը և երկրում հաստատեց ռես-պուբլիկա, 5 տարի անց կատարվեց ռեակցիոն հեղաշրջում։ Որո՞նք էին այդ հեղաշրջման և ռեակցիոներների հաղթության պատճառները։

Պատճառներից մեկը, անշուշտ, Կասեմի կառավարու-թյան այն քաղաքականությունն էր, որը կազմում է երկրորդ ճառայի հիմնական բովանդակությունը։ Ինչպես նշվեց, 1959 թվականի կեսերից Կասեմի կառավարությունը և ազգային բուրժուազիան չեչտակի շրջադարձ կատարեցին դեպի աջ։ Նրանք առաջին պլանի վրա քաշեցին իրենց հակասություննե-րը դեմոկրատական ուժերի հետ, «մոռացության» մատնելով գլխավոր հակասությունը, հակասությունը իմպերիալիզմի և տապալված ուժերի հետ։ Դրա ուղղակի արդյունքը եղավ դե-մոկրատական ուժերի ճնշումը և, հետևաբար, թուլացումը։ Ազգային բուրժուազիան և հատկապես նրա աջ թևը, որի քա-ղաքականությունն էր վարում Կասեմի կառավարությունը, ճակատագրական սխալ թույլ տվեցին, ենթադրելով, որ դրսի՝ այսինքն իմպերիալիստական և ներսի՝ ռեակցիոն ուժերը, այլևս իրենց տիրապետությանը վտանգ չեն ներկայացնում։ Դեռ ավելին։ Նրանք կարծում էին, ինչպես իրավացիորեն նշում է Ամին Սալիմովը, որ իրենց սպառնացող հիմնական վտանգը գալիս է ռևոլյուցիոն, ձախ ուժերից[1]։ Ելնելով դրա-նից Կասեմի կառավարությունը սկսեց հենվել աջ ուժերի վրա և նրանց օգտագործել ձախերի, այլ կերպ ասած կոմունիստա-կան, ազգային դեմոկրատական, Քրդստանի դեմոկրատական պարտիաների, բանվորական և գյուղացիական շարժման ակ-տիվիստների և այլ առաջադեմ ուժերի դեմ։ Դա հանգեցրեց այն բանին, որ ազգային բուրժուազիան և Կասեմի կառավա-րությունը իրենցից վանեցին ժողովրդական և դեմոկրատական ուժերին, մեծացրին անջրպետն իրենց ու այդ ուժերի միջև, չը-գիտակցելով, որ դրանով թուլացնում են իրենց դիրքերը, սա-սանում այն բազան, որի վրա նրանք հենվում էին։ Այդպիսի քաղաքականությունը լայն հնարավորություններ էր ստեղծում նախկինում տապալված ուժերին և նրանց մոտ ապստամբու-

[1] „Международная жизнь", № 9, 1963, стр. 63.

թյան անցած ռեակցիոններներին ու միայն դավադրություն կազմակերպելու, այլև այն իրականացնելու համար։ Հակադեմոկրատական քաղաքականությամբ մեկուսացնելով իրեն և զրկվելով ժողովրդի վստահությունից ու աջակցությունից Կասեմը ներքին ռեակցիային փաստորեն հնարավորություն ավեց օտարերկրյա իմպերիալիստների աջակցությամբ կատարել պետական հեղաշրջում։

Հուլիսի 14-ի ռևոլյուցիայի հաղթանակը և այդ ռևոլյուցիայից հետո առաջին շրջանում ձեռք բերած հաջողությունները պայմանավորված էին նրանով, որ Իրաքում կազմակերպվեց հակաիմպերիալիստական լայն ճակատ։ Ստեղծվել և գործում էր Ազգային միասնության ճակատը, որի մեջ միավորվել էին կոմունիստական, ազգային-դեմոկրատական, ալ-իսթիկլյալ և բաաս պարտիաները, այլ կերպ ասած համարյա բոլոր դասակարգերի ներկայացուցիչները։ Հայտնի է, որ ռևոլյուցիայից հետո իշխանությունն անցավ բուրժուազիայի ձեռքը, որը չթողեց, որ աշխատավորական մասսաների ներկայացուցիչները մասնակցեն երկրի կառավարմանը։ Դա, անշուշտ, որոշ չափով թուլացրեց այդ ճակատի հիմքերը։ Սակայն միասնական ճակատի գոյությանը վճռական հարված հասցրին բաասականները, ինչպես նաև ալ-իսթիկլյալ պարտիան։ Ներկայացնելով ազգային բուրժուազիայի տարբեր շերտերի շահերը և պաշտպանելով ամենաաջ նացիոնալիստական թևին, նրանք, և հատկապես բաաս պարտիան, իրենց գործունեությամբ սկսեցին քայքայել միասնական ճակատը։ Բաաս պարտիան ռևոլյուցիայից անմիջապես հետո պահանջում էր, որ Կասեմի կառավարությունը վարի բացահայտ հակադեմոկրատական քաղաքականություն և սկսի հետապնդել կոմունիստներին և մյուս առաջադեմ ուժերին։ Կասեմը սկզբնական շրջանում չհամաձայնվեց տանել այդպիսի քաղաքականություն։ Այս հողի վրա ծագեց կոնֆլիկտ և փաստորեն այդ աջ ուժերը մահացու հարված հասցրին Ազգային միասնության ճակատին։ Հետագայում բաաս և ալ-իսթիկլյալ պարտիաների ներկայացուցիչները դուրս եկան նաև կառավարության կազմից։ Բաասը բացահայտորեն անցավ ռեակցիայի ճամբար։



Կոմունիստական պարտիան քաջ գիտակցում էր, որ միասնական ճակատի բացակայությունը թուլացնում է հակաիմպերիալիստական ուժերը և ձեռնտու է ռեակցիոններներին։ Նա քիչ ջանք չգործադրեց հակաիմպերիալիստական և հակաֆեոդալական ուժերը միավորելու և միասնական ճակատ ստեղծելու համար։ Սակայն նրա ջանքերն ապարդյուն անցան։ Ձախ ուժերը, որոնք գրավում էին հակաիմպերիալիստական դիրք և կողմնակից էին դեմոկրատական ռեֆորմների կիրառման, խուսափում էին կոմունիստների հետ համագործակցելուց։ Այդ պատճառով էլ նրանց չհաջողվեց միավորվել։ Նրանց պայքարն ընթանում էր անջատ-անջատ, որն, անշուշտ, ձեռնտու էր իմպերիալիստական, կոնտրռևոլյուցիոն ուժերին։ Դեմոկրատական ուժերի ցաք ու ցրիվ լինելը և միասնական հակաիմպերիալիստական ճակատի բացակայությունը հանդիսացավ հակաժողովրդական հեղաշրջման հաջողության մյուս պատճառը։

Եվ, վերջապես, այդ կոնտրռևոլյուցիոն հեղաշրջման կազմակերպման գործում մեծ դեր խաղացին օտարերկրյա իմպերիալիստական ուժերը։ Նրանք երբեք չհաշտվեցին ռևոլյուցիայի հաղթանակի և այն բանի հետ, որ Իրաքի կառավարությունը վարում էր հակաիմպերիալիստական քաղաքականություն։ Այդ ուժերը Իրաքի ներսում ունեին իրենց բնական դաշնակիցները հանձին տապալված ուժերի՝ ռեակցիոն ֆեոդալների ու շեյխերի, նախկին բարձրաստիճան չինովնիկների և այլն։ Այդ ուժերը ռևոլյուցիայից հետո ընկած 5 տարիների ընթացքում կազմակերպեցին բազմաթիվ դավադրություններ։ Քանի դեռ դեմոկրատական ուժերը միավորված էին և Կասեմի կառավարությունը վարում էր ընդհանուր առմամբ պրոգրեսիվ քաղաքականություն, այդ դավադրությունները մեծ վտանգ չէին ներկայացնում։ Սակայն Կասեմի կառավարության քաղաքականության մեջ տեղի ունեցած փոփոխությունից հետո, այդ դավադրություններն արդեն լուրջ սպառնալիք էին ներկայացնում։ Ուշադրություն հրավիրելով այդ հանգամանքի վրա, Իրաքի կոմունիստական պարտիան 1962 թվականի հուլիսի 8-ի իր հայտարարության մեջ նշում էր. «Հող է նախապատրաստվում իմպերիալիստական դավա-

դրությունների համար, իմպերիալիստական տիրապետության վերականգնումն իրականացնելու նպատակով, որը կործանարար հետևանքներ կունենա ազգային անկախության և ռևոլյուցիոն նվաճումների համար»[1]։ Իսկ 1963 թվականի հունվարի 3-ի իր հոշի մեջ կոմունիստական պարտիան մատնացույց էր անում, որ դավադիրներն առանձնապես ակտիվ են 19-րդ գումարտակում և Բաղդադի մոտ գտնվող ռազմական ճամբարում։ Եվ իրոք, հեղաշրջման ժամանակ դավադիրների կողմից առաջինը հանդես եկավ այդ գումարտակը։

Ներքին ռեակցիոն ուժերի և օտարերկրյա իմպերիալիստական պետությունների միջև եղած կապը հայտնի էր նաև Կասեմին։ Նա հեղաշրջումից ընդամենը մեկ շաբաթ առաջ՝ փետրվարի 1-ին ունեցած պրես-կոնֆերանսում բացահայտորեն մեղադրեց ԱՄՆ-ին հակակառավարական դավադրության կազմակերպման և իր գործակալներին զենք ու դրամ բաժանելու մեջ[2]։ Սակայն նա գործնական միջոցներ ձեռք չառավ, առաջվա պես կարծելով, որ իրեն ոչինչ վտանգ չի սպառնում։

Իմպերիալիստական պետությունների՝ կոնտրռևոլյուցիոն հեղաշրջման նախապատրաստմանը մասնակցելու մասին են վկայում նաև հետևյալ փաստերը։ Բաղդադում, հեղաշրջումից առաջ, իրաքյան իշխանությունները ձերբակալեցին ամերիկյան դեսպանության մի աշխատակցի, որը դավադիրներին զենք ու փող էր բաժանում։ «ՆՅՈւ-Յորք Թայմս» թերթը հաղորդում է, որ հեղաշրջումից երկու ամիս առաջ գաղտնի համաձայնագիր էր կնքվել ամերիկյան նավթային ընկերությունների ներկայացուցիչ Ֆիշերի և դավադիրների ներկայացուցիչ՝ Նաջիբ Թալիբի միջև։ Այդ նույն թերթը նշում էր, որ հեղաշրջումը ԱՄՆ-ի վրա նստեց մոտ 35 մլն դոլլար։ Նախապատրաստվող դավադրությանը անտեղյակ չէին նաև անգլիական իմպերիալիստները։ Հայտնի է, որ դավադրության իրականացման գործում մեծ դեր խաղաց ավիացիան, որը տեղադրված էր Հաբբանիայում։ Դա նախկին անգլիական ռազմա-օդային բազան էր, որը թեև վերադարձվել էր Իրաքին, սակայն այն-

¹ „Проблемы мира и социализма", № 4, 1963, стр. 38.
² Նույն տեղում, стр. 39.



տեղ շարունակում էին մնալ անգլիական ռազմական «մասնագետները», որոնք պետք է ապահովեին նորմալ աշխատանքը բազայում։ Հասկանալի է, որ առանց նրանց գիտության և համաձայնության ռմբակոծիչները չէին կարող օդ բարձրանալ և ուղղվել դեպի Բաղդադ։

Եվ, վերջապես, կոնտրռևոլյուցիոներների և օտարերկրյա իմպերիալիստների միջև եղած կապի մասին է խոսում հեղաշրջումից հետո ստեղծված բաասականների կառավարության վերաբերմունքը դեպի Իրաքում գործող օտարերկրյա նավթային ընկերությունները։ «Ռևոլյուցիայի ազգային խորհրդի» առաջին կոմյունիկեում ուղղակի ասվում էր, որ նա «Իրաքում նավթային կոնցեսիաներ ունեցող ընկերություններին տալիս է լրիվ ապահովություն Իրաքի նավթային հարստությունների օգտագործման գործում»։ Այդ նույն տեսակետը կրկին հաստատեց արտաքին գործերի մինիստր Թալիբ Շաբիբը, որը պրես-կոնֆերանսում հայտարարեց. «Ողջունում ենք օտար ընկերություններին։ Կառավարությունը հարգելու է բոլոր օտար նավթային ընկերությունների հետ կնքված համաձայնությունները»[3]։ Բացի այդ բաասականները չեղյալ հայտարարեցին Կասեմի կառավարության կողմից զուտ իրաքյան նավթային ընկերություն կազմելու նախագիծը։

Այսպիսով, այն հապճեպությունը, որ բաասականները ցուցաբերեցին հրապարակորեն իրենց դիրքը որոշելու նավթային ընկերությունների հանդեպ և հարգելու նրանց իրավունքները խոսում է նրանց և իմպերիալիզմի միջև եղած գաղտնի կապի մասին։ Ահա այս բոլորը միասին վերցրած հանգեցրին Կասեմի ռեժիմի անկմանը և կոնտրռևոլյուցիոն, ռեակցիոն ուժերի հաղթանակին։

³ «[illegible]», 14.II.1963

## ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Դժվարին ու ծանր ուղի է անցել ազգային-ազատագրական շարժումն Իրաքում։ Նա ունեցել էր իր մակընթացությունները ու տեղատվությունները, իր հաղթությունները ու պարտությունները։ Սակայն բոլոր պարագաներում էլ Իրաքի աշխատավորական մասսաները, դեմոկրատական ու հայրենասիրական ուժերը աննկուն պայքար են մղել Իրաքում տիրապետող ռեակցիոն կարգերի, միապետական ռեժիմի և օտարերկրյա իմպերիալիզմի տիրապետության դեմ՝ նպատակ ունենալով հասնել Իրաքի ազգային-քաղաքական ու տնտեսական վերածննդին։

Հայրենասիրական և հակաիմպերիալիստական բոլոր ուժերի համառ պայքարը վերջ ի վերջո հանգեցրեց միապետական ռեժիմի տապալմանը և օտարերկրյա իմպերիալիզմի խոշոր պարտությանը Իրաքում։ Այսպես, 1958 թվականի հուլիսի 14-ին հաղթանակեց բուրժուա-դեմոկրատական, հակաիմպերիալիստական և հակաֆեոդալական ռևոլյուցիան։ Իշխանությունն անցավ ազգային բուրժուազիայի ձեռքը։ Սակայն նա չարդարացրեց իր վրա դրված հույսերը։ Իրաքի ազգային բուրժուազիան և հատկապես նրա աջ թևը, որը հանդիսանում էր տոն տվողը և Իրաքի կառավարության քաղաքականության որոշողը, չլուծեց հուլիսյան ռևոլյուցիայի առաջադրած քաղաքական, սոցիալական ու տնտեսական խնդիր-



ները։ 1959 թվականի կեսերից սկսած ռևոլյուցիան ոչ միայն չի խորանում և զարգանում, այլ, ընդհակառակը, նահանջում է և 1963 թվականի փետրվարի 8-ին Իրաքում տեղի է ունենում կոնտրռևոլյուցիոն հեղաշրջում։ Երկրում հաստատվում է հակադեմոկրատական ռեժիմ, որն ուղղված է աշխատավորական մասսաների և որոշ չափով նաև ազգային բուրժուազիայի ավելի դեմոկրատ խավերի դեմ։ Հեղաշրջումը կատարեցին Իրաքի ռեակցիոն ուժերը, վայելելով իմպերիալիստական տերությունների աջակցությունն ու համակրանքը։

Իրաքի հետպատերազմյան շրջանի ազգային-ազատագրական պայքարի պատմության ուսումնասիրությունը համոզիչ կերպով ցույց է տալիս, որ իմպերիալիստական և տապալված ռեակցիոն ուժերը երբեք չեն հաշտվում իրենց պարտության փաստի հետ։ Նրանք ամեն միջոցի դիմում են նորաստեղծ դեմոկրատական ռեժիմի հիմքերը խարխլելու, դեմոկրատական ուժերին մահացու հարված հասցնելու և կրկին իրենց տիրապետությունը վերահաստատելու համար։

Իրաքի փորձը ուսուցանում է, որ թե՛ ռևոլյուցիայից առաջ և թե՛ ռևոլյուցիայից հետո խիստ անհրաժեշտ է միասնական ճակատի գոյությունը։ Այդ ճակատի բացակայությունից, հակաիմպերիալիստական ուժերի ջլատումից օգտվում են իմպերիալիստական ու ռեակցիոն ուժերը, որոնք իրենց պլանների կենսագործման համար միասնական ճակատով են հանդես գալիս ազգային դեմոկրատական ուժերի դեմ։

Իրաքի փորձը հաստատում է այն ճշմարտությունը, որ ազգային բուրժուազիան իր երկակի բնույթի պատճառով տատանումներ է ցույց տալիս։ Այդ տատանումների հաղթահարումը մեծ չափով կախված է բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ամրությունից։ «Բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշինքի կայունությունից է զգալի չափով կախված հակաիմպերիալիստական և հակաֆեոդալական պայքարում ազգային բուրժուազիայի մասնակցության սահմանը» նշված է ՍՄԿԿ ծրագրում[1]։ Դժբախտաբար Իրաքի դեմոկրատական ուժերը չմիավորվեցին և բանվոր դասակար-

[1] «ՍՄԿԿ Ծրագիրը», էջ 85։

գի ու գյուղացիության դաշինքն էլ այն աստիճանի ամուր չէր, որ հնարավորություն տար վճռականորեն ազդել դեպքերի վրա և վերջ տալ բուրժուազիայի ու Կասեմի կառավարության տատանումներին, կանխել կոնտրռևոլյուցիոն հեղաշրջումը։

Այնուամենայնիվ, վստահորեն կարելի է ասել, որ Իրաքի ժողովրդի և իսկական դեմոկրատիայի կողմնակիցների պայքարը վերջ կտա տեռորի ու ճնշումների դիկտատուրային և երկիրը դուրս կբերի այն ծանր կացությունից, որի մեջ նա ընկավ 1963 թվականի կոնտրռևոլյուցիոն հեղաշրջման հետևանքով։

## ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Աբդ ալ-Վահաբ ալ-Բայաթի—184
Աբդ Թամիր—89
Աբդել Սալյամ Արեֆ—212, 213
Աբդել Վահաբ Շավվաֆ—200, 204
Աբդուլ Իլյահ—13, 84, 119, 141, 177, 178, 180
Աբդուլ Կանի ալ-Դալլի—26—28
Աբդուլ Համիդ—185
Աբդուլ Մահմուդ—162
Աբդուլ Ֆաթթահ—87
Ադամս Դ.—9, 24, 26, 27, 39, 60, 74
Ազիզ ալ-Հաջ—19, 165
Ազիզ Շերիֆ—87, 214
Ազիզ Քուրդի—220
Ալի Ջարկա—18, 19
Ալի Մահմուդ ալ-Շեյխ Ալի—35
Ահմեդ Հասան ալ-Բաքր—212
Ահմեդ Մուխթար Բաբան—178
Ահմեդ Սալեհ ալ-Աբդի—203, 214
Ապրաշյան Հովհ.—118, 120, 122
Ամին Սալիմով—217

Բարզանի Մուստաֆա—111, 112
Բևին—116, 118

Գավուգճյան Մ.—94
Գիբսոն—34, 132
Գևաճյան Հ.—185
Գորելիկով Ս.—21
Գուննել—73

Դալես Ջ. Ֆ.—178
Դանցիգ Բ.—20, 21, 33, 73
Դաուդ աս-Սայղ—202

Զարևկին Ս.—51
Զաքի Բասիմ—89, 114, 115, 123, 124
Զաքի Խայրի—59, 192, 193

Էյզենհաուեր—13, 14, 169—172, 174, 178, 197

Թահիր Շաքիր—221
Թահա աշ-Շեյխ—214
Թարիխ Մուհամմեդ—114
Թաուֆիկ Մունիր—19, 20, 116, 139, 214
Թրուարիկ Ջոն—130

Իբրահիմ Կուբբա—214
Իբրահիմ Շամսին—114, 115
Իսմայիլ Արեֆ—201

Լաքյոր Վ.—91
Լենին Վ. Ի.—6
Լիթթլ Թ.—14
Լյուիս Բ.—14, 15
Լոնգրիգ Ս.—7, 8, 13, 14

Խալեդ Բեկդաշ—122
Խալիլ Տոսսահ—11, 141
Խրուշչով Ն. Ս.—162

Կազուրի Մաջիդ—17, 18, 119
Կասըմ Աբդել Քերիմ, 7, 37, 41, 145, 179, 181, 189, 191, 193, 197, 199—206, 209, 212—214, 216—221, 224
Կասըմ Համիդ—214
Կասըմ Հասան—17
Կարակոուս—12, 13, 102, 160
Կյուլպենկյան Գ.—32
Կոսայով Լ.—190

Հայյամ Ջաֆար—17, 18, 58, 69
Հասան Զայիլի—171
Հասան Ռուֆեյնի—214
Հաշիմի—65
Հաշիմ Ջավադ—170, 194, 214
Հումբարձում Արշակ—14, 35
Հուսեյն—179
Հուսեյն Հորմանի—185
Հուսեյն Մահմուդ ալ-Ճաբիրի—87, 89, 109, 123, 124
Հուսեյն Ջամիլ—17
Հուրանի Ա.—92—94

Մայիր Սաիֆ—89
Մահդի Կուբբա—86
Մահմուդ ալ-Հարիր—68, 108
Մաջիդ Ամին—214
Մաջիդ Մուստաֆա—77
Մարուն Փ.—14
Մարգի—130
Մենդերես—155
Մոսադեղ—130, 150
Մուլլա Շարիֆ—89
Մուհամմեդ ալ-Սադր—122
Մուհամմեդ աշ-Շաբիբ—149, 176
Մուհամմեդ Հադիդ—25, 86
Մուհամմեդ Հուսեյն Աբու ալ-Իս—214
Մուհամմեդ Մահդի ալ-Ջավահիրի—145, 184
Մուհամմեդ Նուրեդդին—144—146
Մուհամմեդ Սալիմ—203, 211, 212
Մուհամմեդ Շավվաֆ—214
Մուստաֆա Ալիս—96
Մուստաֆա Ումարի—110, 142, 143

Յուսուֆ Խաթթար ալ-Հելու—169
Յուսուֆ Սալման Յուսուֆ (Ֆահդ), —28, 29, 44, 85, 87—90, 114, 115, 123, 124

Նաջիբ Ռուբի—220
Նիհադ Կերզար—97
Նուրի Սաիդ—17, 18, 87, 97, 99, 103, 116, 118, 121—123, 130—134, 137, 143, 152—158, 160—163, 165—168, 171, 173, 174, 176—180, 190, 202, 206

Շարանգեր—154
Շամուն—178
Շաքիր ալ-Վադի—82
Շեվքեթ—86

Պելլերյան Ն.—184

Ջավահարլալ Ներու—181
Ջելալ Բայար—161
Ջեմալ Մադֆաի—14

Սադիք Յաղուդ—123, 124
Սադիք Շանշալ—86
Սալեհ Ջաբր—116, 118, 119, 121, 122
Սալյամ Ադիլ—173, 205, 214
Սամարրա Ֆանի—88, 137
Սամի—207
Սամի Բաշայիմ—176
Սամի Նադիր—89
Սեիդ ալ-Ֆարուկ—162
Սեյիմ Նաամա—109
Սմիթս—110
Ստոուրս Ֆ.—7, 8, 13, 14
Սուլեյման Հիքմեթ—65
Սուվեյդի—130



Վուց—113

Տուգանովա Ա.—22, 136

Ուորբիներ Գ.—9—11, 48, 64, 65

Քամիլ Կոպտանջի—86
Քամիլ Ջադըրջի—86
Քրիստյի Մ.—61

Ֆադիլ Մահդավի—185
Ֆադիլ Ջամալի—116, 156, 157, 178
Ֆարման Վաիր—13, 17, 83, 100, 101, 118, 152, 170
Ֆեդչենկո Ա.—190
Ֆեյսալ 2-րդ—113, 146, 167, 168, 177, 180, 213
Ֆեննյան Կ.—60, 61

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Ներածություն . . . . . . . . . . . . . . 3
Իրաքի սոցիալ-տնտեսական վիճակը 1945—1958 թթ. . . . . . 23
Ազգային-ազատագրական պայքարը Իրաքում 1945—1958 թթ. . . 101
Իրաքը 1958 թվականի հեղափոխությունից հետո . . . . . . 157
Եզրափակում . . . . . . . . . . . . . . 222
Անվանացանկ . . . . . . . . . . . . . . 225



Նիկոլայ Հովհաննեսի Հովհաննիսյան
**НИКОЛАЙ ОГАНЕСОВИЧ ОГАНЕСЯН**


**Ազգային ազատագրական պայքարը Իրաքում
1945—1963**


Տպագրվում է
ՀՍՍՀ ԳԱ արևելագիտության սեկտորի գիտական խորհրդի
հանձնարարությամբ

Պատ. խմբագիր՝ Հ. Ա. Նալբանդյան
Հրատ. խմբագիր՝ Ռ. Ն. Մանոյան
Նկարչական ձևավորումը՝ Ն. Կ. Ղուկասյանի
Տեխ. խմբագիր՝ Հ. Հ. Գևոյան
Սրբագրիչ՝ Ս. Կ. Զաքարյան

ՎՖ 06605, Հրատ. № 2360, ՀՀԹ 877, պատվեր 44, տպաքանակ 1000

Հանձնված է արտադրության 12/XII—1963 թ., ստորագրված է տպագրության 29/IV—1964 թ.: Տպագր. 14,25 մամ., հրատ. 10,22 մամ.: Թուղթ՝ 84×108 1/32:
Գինը՝ 80 կոպ.:

Հայկ. ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր Մամուլի պետական կոմիտեի պոլիգրաֆարդյունաբերության վարչության № 1 տպարան, Երևան, Ալավերդյան փող. № 65: